

Ալեն Ալեքսանդեր Միլս

Վինի-Թուխը և Քոլորը-Քոլորը

Վիպակ

Ռուսերենից թարգմանեց Վահագն Գրիգորյանը

Նկարիչ՝ Ռուբեն Գրիգորյան

«Արևիկ»

1988

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.....	4
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....	9
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.....	13
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ.....	16
ԳԼՈՒԽ ՅԻՆԳԵՐՐՈՐԴ.....	19
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.....	24
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ.....	30
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ.....	37
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ.....	44
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ.....	50
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԱԵԿԵՐՈՐԴ.....	56
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ.....	62
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵԹԵՐՈՐԴ.....	68
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ.....	74
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅԻՆԳԵՐՈՐԴ.....	80
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ.....	86
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ.....	92
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ.....	97

ՆԱԽԱԲԱՆ

Վինի-Թուխը Զրիստոֆեր Ռոբինի սիրելի արջուկն էր, իսկ Զրիստոֆեր Ռոբինը իր հայրիկի՝ անգլիացի գրող Ա. Ա. Միլնի սիրելի տղան: Եվ ահա մի անգամ Զրիստոֆեր Ռոբինը խնդրեց հայրիկին Վինի-Թուխի համար հեքիաթ պատմել: Հայրիկը, իհարկե, պատմեց, բայց պատմեց նրանց արկածների մասին, որոնք տեղի էին ունեցել Հրաշալի Անտառում, և որոնք, չգիտես ինչու, Զրիստոֆեր Ռոբինը մոռացել էր: Այդ հետաքրքիր արկածներն այնքան շատ էին, որ մի մեծ գիրք դարձան, և երեխաները շուտով ճանաչեցին ոչ միայն Զրիստոֆեր Ռոբինին ու Վինի-Թուխին, այլև նրանց մյուս ընկերներին՝ մատնաչափիկ խոզուկ Դեչիկին, ծեր իշուկ Իա-Իային, իմաստուն Բուին, ճագարին, անհանգիստ Վագրին, ինչպես նաև մայրիկ Կենգուին և նրա ուրախ որդուն՝ ճատիկ Ռուին:

Այսօր Վինի-Թուխին և նրա անբաժան ընկերներին գիտեն ու սիրում են աշխարհի շատ երկրների միլիոնավոր երեխաներ: Եվ մենք ցանկացանք, որ դուք էլ բարեկամանաք նրանց հետ: Բայց չկարծեք, որ նրանց համար հեշտ էր մեզ մոտ գալ: Նրանք ապրում են հեռավոր Անգլիայում, իսկ դուք աշխարհագրությունից երևի գիտեք, որ Անգլիան իսկապես շատ-շատ հեռու է Հայաստանից: Բայց երբ ես պատմեցի, թե որքան լավ ու բարի երեխաներ են ապրում մեզ մոտ, նրանք ուրախությամբ համաձայնեցին ճանապարհ ընկնել: Իսկ խիզախ Դեչիկը (թե ինչու է նա խիզախ, դուք այդ հետո կիմանաք) ասաց, որ լավ բարեկամների մոտ գնալու համար ինքը չի վախենում նույնիսկ երկար ճանապարհից, իսկ քանի որ Զրիստոֆեր Ռոբինն էլ է գալու, ապա ինքն ընդհանրապես ոչ մի բանից չի վախենում: Իսկ Վինի-Թուխը հարցրեց, թե արդյոք ճի՞շտ է, որ մեզ մոտ ավելի տաք է, քան Անգլիայում, և մեղուները մեղր են պատրաստում կլոր տարին: Բայց ես չէի հասցրել պատասխանել, երբ նա շտապեց բացատրել, որ ինքը ոչ թե իր մասին է մտածում, այլ մեղուների, որովհետև շատ տխուր բան է, եթե անձրև է գալիս, և մեղուները չեն կարողանում մեղր պատրաստել, իսկ անձամբ ինքը շատ ուրախ է, որ նոր բարեկամներ է գտնելու:

Մի խոսքով, նրանք առանց ժամանակ կորցնելու ճանապարհ ընկան և արդեն այստեղ են: Նրանց հանդիպելու համար բավական է, որ շրջեք այս էջը: Իսկ շրջելով այս էջը, ես համոզված եմ, դուք կգտնեք իսկական բարեկամների, որոնց ընդմիշտ կսիրեք:

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԳԼՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Որտեղ մենք ծանոթանում ենք Վինի-Թուխի և մի քանի մեղուների հետ

Ահա և Վինի-Թուխը:

Ինչպես տեսնում եք, նա գլխիվայր իջնում է սանդուղքով իր բարեկամ Զրիստոֆեր Ռոբինի հետևից, սեփական ծոծրակով հաշվելով աստիճանները. թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ: Սանդուղքից իջնելու ուրիշ ձև նա առայժմ չգիտե: Երբեմն նրան, իհարկե, թվում է, որ ինքը կգտներ ուրիշ ձև, եթե միայն կարողանար գոնե մեկ րոպե վերջ տալ թխկթխկացնելուն և ինչպես պետքն է կենտրոնանալ: Բայց ավաղ՝ հենց կենտրոնանալու համար է, որ նա ժամանակ չունի:

Բայց ինչ որ է, նա արդեն իջել է և կարող է ծանոթանալ ձեզ հետ:

– Վինի-Թուխ: Շատ հաճելի է:

Ձեզ, հավանաբար զարմացնում է արջուկի տարօրինակ անունը: Բայց զարմանալու ոչինչ չկա: Այդ անսովոր անունը արջուկին տվել է Զրիստոֆեր Ռոբինը: Նա շատ էր սիրում կենդանաբանական այգու Վինի անունով արջին, և երբ այդ բարի ու խելոք արջն ինչ-որ տեղ գնաց ու այլևս չվերադարձավ, Զրիստոֆեր Ռոբինը, նրա հիշատակը պահելու համար, այդպես կոչեց իր արջուկին: Եվ քանի որ արջուկը թուխ գույն ուներ, ապա նրան անվանեց Վինի-Թուխ:

Մի խոսքով, այժմ արջուկին անվանում են Վինի-Թուխ, և դուք գիտեք թե ինչու:

Երեկոյան Վինի-Թուխը սիրում է խաղալ իսկ երբեմն էլ, հատկապես, երբ հայրիկը տանն է, նա շատ ավելի սիրում է սուսիկ-փուսիկ նստել կրակի մոտ և որևէ հետաքրքիր հեքիաթ լսել:

Այդ երեկո...

– **Չայրիկ հեքիաթ չես պատմելո՞ւ, – հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:**

– **Ի՞նչ հեքիաթ, – հարցրեց հայրիկը:**

– **Վինի-Թուխի համար: Նա շա՛տ է խնդրում:**

– **Գուցե և պատմեմ, – ասաց հայրիկը: – Իսկ նա ինչպիսի՞ հեքիաթ է ուզում և ո՞ւմ մասին:**

– **Չետաքրքիր հեքիաթ և իր մասին, իհարկե: Չէ՞ որ դու գիտես, թե նա ինչպիսի արջուկ է:**

– **Չասկանում եմ, – ասաց հայրիկը:**

– **Խնդրում եմ, հայրիկ, պատմի՛ր:**

– **Կփորձեմ, – ասաց հայրիկը:**

Եվ նա փորձեց:

Վաղուց, շա՛տ վաղուց, կարծեմ անցյալ ուրբաթ, Վինի-Թուխը մեն-մենակ ապրում էր Անտառում՝ Սանդերս անվան տակ:

– **Ի՞նչ է նշանակում «ապրում էր անվան տակ», – անմիջապես հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:**

– Դա նշանակում է, որ դռան վերևում ամրացված տախտակի վրա ոսկյա տառերով գրված էր՝ «Միստր Սանդերս», իսկ Թուխը ապրում էր այդտեղ:

– Երևի ինքն էլ այդ չէր հասկանում, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

– Հիմա հո հասկացավ, – թավ ձայնով փնթփնթաց ինչ-որ մեկը:

– Այդ դեպքում ես կշարունակեմ, – ասաց հայրիկը:

Մի անգամ, անտառում զբոսնելիս, Թուխը բացատ դուրս եկավ: Բացատում բարձր, շատ բարձր կաղնի էր աճել, իսկ հիմա կաղնու կատարին ինչ-որ մեկը բարձրաձայն բզզում էր. զզզզզզզ:

Վիկի-Թուխը նստեց ծառի տակ, գլուխը թաթերի մեջ առավ ու սկսեց մտածել:

Սկզբում նա այսպես մտածեց. «Այս զզզզզզ-ն անապաման մի բան նշանակում է: Ոչ ոք զուր տեղը չի բզզում: Ծառը բզզալ չի կարող: Նշանակում է, ինչ-որ մեկն այնտեղ բզզում է: Իսկ ինչո՞ւ պիտի բզզաս, եթե մեղու չես: Այսպես է, որ կա՛:»

Հետո նա էլի մտածեց ու ասաց ինքն իրեն.

«Իսկ ինչի՞ համար եմ մեղուները: Նրա համար, որ մեղր սարքեն: Այնպես է, որ կա՛:»

Այստեղ նա ուտքի ելավ ու ասաց.

– Իսկ ինչի՞ համար է մեղրը. նրա համար, որ ես ուտեմ: Իմ կարծիքով, այսպես է, որ կա՛:

Եվ այս ասելով, նա մազլցեց ծառը:

Նա մազլցում էր, մազլցում էր ու մազլցում և ճանապարհին քթի տակ երգում էր այս երգը, որ տեղնուտեղը ինքն էր հորինել: Ահա սա.

Թե արջուկները լինեին մեղու,
Նրանց մտքով երբեք չէր անցնի,
Եվ տունը այսքան բարձր ու հեռու
Նրանք երբեք չէին կառուցի:

Նա մի քիչ էլ մազլցեց... Էլի մի քիչ... Էլի բուլրոպիկ-բուլրոպիկ մի քիչ... Այստեղ արդեն նա հեաց և մի նոր բառատող - հեհեհեհ երգեց.

Եվ այդ ժամանակ, եթե, իհարկե,
Մեղուները լինեին արջուկ,
Արջուկների շատ պետքն էր, ի՞նչ է,
Գալ ու մազլցել այսպիսի բարձունք:

Մեր մեջ ասած, Թուխը կարգին հոգնել էր, դրա համար էլ Հեհեհեհեհ այսքան խղճուկ ստացվեց: Բայց շատ քիչ էր մնացել, բուլրոպիկ-բուլրոպիկ քիչ: Մտում էր հասնել այս ճյուղին և...

Թ Ը Բ Ա՛ Խ Կ:

– Մայրի՛կ, – բացականչեց Թուխը, մի երեք մետր ցած ընկնելով և քիթը խփելով մի հաստ ճյուղի:

– Վա՛խ: Ախր ինչո՞ւ ես... – քրթմնջաց նա, ևս մի հինգ մետր ցած սուրավով:

– Ախր ես ոչ մի վատ բան չէի ուզում անել... – փորձեց բացատրել նա՝ դիպչելով հաջորդ ճյուղին և օդում լարախաղացի պես գլուխկոնծի տալով:

– Եվ այս բոլորը նրա պատճառով, – վերջապես խոստովանեց նա, երբ մի երեք անգամ ևս գլուխկոնծի տվեց, ինչպես պետքն է ծանոթացավ ցածի ճյուղերի հետ և սահուն վայրեջք կատարեց մասրենու փշոտ թփերի մեջ, – այս բոլորը նրա համար, որ ես շա՛տ եմ մեղր սիրում: Մայրի՛կ...

Թուխը մի կերպ դուրս պրծավ մասրենու թփերի միջից, քթից հանեց փշերը և նորից մտքի մեջ ընկավ:

Եվ առաջին հերթին նա մտածեց Զրիստոֆեր Ռոբինի մասին:

– Իմ մասի՞ն, – հուզվունքից դողացող ձայնով հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:

– Զո մասին:

Զրիստոֆեր Ռոբինը ոչինչ չասաց, բայց նրա աչքերը ավելի ու ավելի էին մեծանում, իսկ այտերը շառագունում էին ու շառագունում:

Եվ այսպես, Վիկի-Թուխը գնաց իր բարեկամի՝ Զրիստոֆեր Ռոբինի մոտ, որն ապրում էր նույն անտառում, կանաչ դուռ ունեցող տնակում:

– Բարի լո՛ւյս, Զրիստոֆեր Ռոբին, – ասաց Վիկի-Թուխը:

– Բարի լո՛ւյս, Վիկի-Թուխ, – ասաց տղան:

- Յետաքրքիր է իմանալ, դու պատահաբար փուչիկ չես ունենա՞:
- Փուչի՞կ:
- Այո, գալիս էի քեզ մոտ ու մտածում. «Տեսնես Զրիստոֆեր Ռոբինը պատահաբար փուչիկ չի՞ ունենա»:
- Պարզապես հետաքրքիր է իմանալ:
- Ինչի՞դ է պետք փուչիկը:
- Վինի-Թուխը նայեց շուրջը և, համոզվելով, որ իրենց ոչ ոք չի լսում, թաթը մոտեցրեց բերանին ու շնչաց.
- Մեղը:
- Ի-ի՞նչ:
- Մեղը, – կրկնեց Թուխը:
- Հենց նախորդ օրը երեկոյան Զրիստոֆեր Ռոբինը հյուր էր գնացել իր բարեկամի՝ Դեչիկի մոտ, և այնտեղ բոլոր հյուրերին փուչիկներ էին նվիրել: Զրիստոֆեր Ռոբինին բաժին էր ընկել մի մեծ, շատ մեծ, կանաչ փուչիկ, իսկ ճագարի Ազգականներից ու Ծանոթներից մեկի համար մի շատ մեծ, պարզապես հսկայական կապույտ փուչիկ էին պատրաստել: Բայց այդ Ազգականն ու Ծանոթը փուչիկը չվերցրեց, որովհետև դեռևս այնքան փոքր էր, որ նրան երեկոյթի չէին բերել, և Զրիստոֆեր Ռոբինը ստիպված եղավ երկու փուչիկն էլ ինքը վերցնել՝ թե կանաչը, թե կապույտը:
- Երկուսից ո՞րն է քեզ դուր գալիս, – հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:
- Թուխը գլուխն առավ թաթերի մեջ ու սկսեց մտածել:
- Դժվար գործ է, – ասաց նա: – Եթե ուզում ես մեղր ձեռք գցել, ապա շատ կարևոր է, որ մեղուները քեզ չնկատեն: Եվ ահա, նշանակում է, եթե փուչիկը լինի կանաչ, նրանք կմտածեն, որ դա տերև է, և քեզ չեն նկատի: Իսկ եթե փուչիկը լինի կապույտ, նրանք, երևի, մտածեն, որ դա պարզապես երկնքի կտոր է, և դարձյալ քեզ չեն նկատի: Ամբողջ հարցն այն է, թե որին ավելի շուտ կհավատան:
- Եվ դու կարծում ես փուչիկի տակ նրանք քեզ չեն նկատի՞:
- Գուցե նկատեն, իսկ գուցե ոչ, – ասաց Վինի-Թուխը: – Ո՞նց իմանաս թե ինչ կանցնի մեղուների մտքով: – Նա մի քիչ մտածեց ու ավելացրեց. – Ես այնպես կձևացնեմ, թե իբր փոքրիկ թուխ ամպիկ եմ: Այդ դեպքում նրանք երևի գլխի չընկնեն:
- Այդ դեպքում ավելի լավ է կապույտ փուչիկը վերցնես, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:
- Բարեկամներն այդպես էլ արեցին: Թուխը վերցրեց կապույտ փուչիկը, Զրիստոֆեր Ռոբինը իր հրացանը, և երկուսով ճանապարհ ընկան:
- Վինի-Թուխը նախ և առաջ մոտեցավ մի ծանոթ ջրափոսի և ինչպես պետքն է թավալվեց ցեխաջրում, որպեսզի բոլորովին-բոլորովին սևանա, նմանվի իսկական ամպիկի: Հետո սկսեցին փուչիկը լցնել օդով, և երբ փուչիկն այնքան ուռեց, որ թվում էր՝ հիմա-հիմա կպայթի, Զրիստոֆեր Ռոբինը հանկարծ բաց թողեց թելը: Եվ հենց որ նա թելը բաց թողեց, Վինի-Թուխը փուչիկի հետ սլացավ երկինք ու կախվեց օդում, ճիշտ և ճիշտ մեղուների ծառի դիմաց, միայն մի քիչ հեռու:
- Ուռաաա՛, – բացականչեց Զրիստոֆեր Ռոբինը:
- Հը՛, ո՞նց է, – երկնքից կանչեց Վինի-Թուխը: – Հիմա ես ո՞ւմ նման եմ:
- Դու նման ես արջի, որը թռչում է փուչիկից կախված:
- Իսկ փոքրիկ սև ամպիկի նման չե՞մ, – անհանգստացավ Թուխը:
- Այնքան էլ չէ:
- Դե լավ, ոչինչ, այստեղից երևի նման եմ: Եվ հետո, ո՞նց իմանաս, թե ինչ կանցնի մեղուների մտքով:
- Դժբախտաբար քամի չկար, և Թուխը բոլորովին անշարժ կախվել էր օդում: Նա կարող էր մեղրի հոտն առնել, կարող էր տեսնել մեղրը, բայց մեղրին հասնել, ավա՛րդ, ոչ մի կերպ չէր կարող:
- Մի քիչ համբերելուց հետո Թուխը նորից խոսեց:
- Զրիստոֆեր Ռոբին՛, – շշուկով կանչեց նա:
- Ի՞նչ:
- Ինձ թվում է, մեղուներն ինչ-որ բան են **կ ա ս կ ա ծ ու մ**:
- Ի՞նչ:
- Չգիտեմ: Բայց ինձ թվում է, որ նրանք իրենց **կ ա ս կ ա ծ ե լ ի** են պահում:
- Գուցե նրանք մտածում են, թե դու ուզում ես գողանա՞լ իրենց մեղրը:
- Գուցե: Ո՞նց իմանաս, թե ինչ կանցնի մեղուների մտքով:

Նորից լռություն տիրեց, և մի քիչ հետո նորից լսվեց Թուխի ձայնը.

– Քրիստոֆեր Ռոբին:

– Ի՞նչ:

– Դու տանը հովանոց չունե՞ս:

– Կարծեմ ունեմ:

– Որ այդպես է, շատ եմ խնդրում, գնա տուն, բեր հովանոցդ և այստեղ գլխիդ պահած հետ ու առաջ քայլիր: Շարունակ նայիր ինձ ու ասա. «Ա՛յ-ա՛յ-ա՛յ, կարծես թե անձրև է գալու»: Ես կարծում եմ որ այդ ժամանակ մեղուները մեզ կհավատան:

Քրիստոֆեր Ռոբինը, իհարկե, մտքում ծիծաղեց ու ասաց. «Ախ, դու իմ հիմա՛ր արջուկ», բայց բարձրաձայն նա այդ բանը չասաց, որովհետև շատ էր սիրում Թուխին:

Նա գնաց տուն և բերեց հովանոցը:

– Վերջապե՛ս, – բացականչեց Թուխը, երբ Քրիստոֆեր Ռոբինը վերադարձավ: – Արդեն սկսել էի անհանգստանալ: Ես նկատեցի, որ մեղուներն իրենց արդեն բոլորովին **կ ա ս կ ա ծ ե լ ի** են պահում:

– Հովանոցը բացե՛մ, թե պետք չի:

– Բաց արա, անպայման բաց արա: Բայց սպասիր մի րոպե, պետք է հաստատ գործ բռնել: Ամենից կարևորը մեղուների թագուհուն խաբելն է: Դու նրան տեսնո՞ւմ ես:

– Չէ:

– Դե լավ, ոչինչ, նա երևի քեզ տեսնում է: Իսկ հիմա բաց արա հովանոցը և գլխիդ պահած այստեղ հետ ու առաջ քայլիր: Շարունակ նայիր ինձ ու ասա. «Ա՛յ-ա՛յ-ա՛յ, կարծես թե անձրև է գալու», իսկ ես կերգեմ Ամպիկի երգը, որը, երևի, երգում են բոլոր ամպիկները երկնքում... Դե, սկսի՛ր:

Քրիստոֆեր Ռոբինը սկսեց ծառի տակ հետ ու առաջ քայլել և ասել, որ կարծես թե անձրև է գալու, իսկ Վինի-Թուխը երգեց այս երգը.

Ես Ամպիկ եմ, Ամպիկ, Ամպիկ,
Ոչ թե փոքրիկ թուխ արջուկ,
Ա՛խ, ինչ լավ է լինել Ամպիկ
Ու սավառնել երկնքում:

Ա՛խ, երկնքում կապույտ-կապո՛ւյտ
Եվ հարմար է, և խաղաղ,
Դրա համար Ամպիկների
Երգը թեթև է, ուրախ:

Բայց մեղուները, որքան էլ տարօրինակ է, փոխանակ հավատալու Ամպիկին, ավելի ու ավելի կասկածելի էին բզզում: Մի քանիսը նույնիսկ դուրս թռան բնից ու սկսեցին պտտվել Ամպիկի շուրջը, երբ սա երկրորդ քառատողն էր երգում: Իսկ ամենակասկածոտներից մեկը, երևի ստուգելու համար, նույնիսկ մի քանի վայրկյան Ամպիկի քթին նստեց:

– Քրիստոֆե՛ր, հե՛յ, Ռոբին, – գոռաց Ամպիկը:

– Ի՞նչ:

– Ես մտածեցի, մտածեցի ու վերջապես գլխի ընկա: Սրանք ճիշտ մեղուներ չեն:

– Ի՞նչ ես ասում:

– Այո՛, այո՛, բոլորովին սխալ մեղուներ են: Եվ նրանք, երևի սխալ մեղր են սարքում: Ճի՞շտ է:

– Ի՞նչ ես ասում:

– Այո՛: Այնպես որ, երևի, ես ավելի լավ է ցած իջնեմ:

– Իջիր, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Բայց ինչպե՞ս:

Հենց այդ մասին էր, որ Վինի-Թուխը դեռ չէր մտածել: Նա մտածեց, որ եթե բաց թողնի պարանը, կընկնի: Այդ հեռանկարը նրան դուր չէկավ: Այդ ժամանակ նա ինչպես պետք է էլի մտածեց և ապա ասաց.

– Քրիստոֆեր Ռոբին, դու պետք է հրացանով խփես փուչիկին: Հրացանը մո՞տո՞ղ է:

– Պարզ է, որ մոտս է, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Բայց եթե ես կրակեմ, ախր փուչիկը կծակվի:

– Իսկ եթե չկրակես, ես կծակծկվեմ, – ասաց Թուխը:

Քրիստոֆեր Ռոբինը, իհարկե, անմիջապես հասկացավ, թե ինչ պետք է անել: Նա խնամքով նշան բռնեց ու կրակեց:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – լաց եղավ Թուխը:

– Մի՞թե վրիպեցի, – հարցրեց Քրիստոֆեր Ռոբինը:

– Չի կարելի ասել, թե չվրիպեցիր, – ասաց Թուխը, – բայց փուչիկին, իհարկե, չդիպար:

– Ներիր, խնդրում եմ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը և նորից կրակեց:

Այս անգամ նա չվրիպեց: Օդն սկսեց կամաց-կամաց դուրս գալ փուչիկից, և Վինի-Թուխը բարեհաջող վայրեջք կատարեց:

Միայն թե այդքան ժամանակ թելից կախված լինելու պատճառով նրա թաթերը բոլորովին փայտացել էին: Մի ամբողջ շաբաթ Թուխը չէր կարողանում առջևի թաթերը շարժել, և դրանք այդպես էլ մնացել էին վեր տնկված: Եվ եթե նրա քթին ճանճ էր նստում, Թուխը ստիպված էր լինում այդ աներեսին փչելով քշել՝ «Թո՛ւխս, Թո՛ւխս»:

Եվ գուցե, թեև ես դրանում համոզված չեմ, գուցե հենց այդ դեպքից հետո էլ Քրիստոֆեր Ռոբինը նրան Թուխ անվանեց:

– Վե՛րջ, – հարցրեց Քրիստոֆեր Ռոբինը:

– Այս հեքիաթը վերջացավ: Բայց ուրիշներն էլ կան:

– Թուխի և իմ մասի՞ն:

– Նաև ճագարի, Դնչիկի, ինչպես նաև մյուսների մասին: Մի՞թե չես հիշում:

– Հիշելը՝ հիշում եմ, բայց երբ ուզում եմ վերհիշել, մոռանում եմ:

– Օրինակ՝ մի անգամ Թուխը և Դնչիկը որոշեցին բռնել Փղածիուն...

– Եվ բռնեցի՞ն:

– Ոչ:

– Որտեղի՞ց բռնեին: Ախր, Թուխը բոլորովին անխելքի մեկն է: Իսկ ես բռնեցի՞:

– Դե, կպատմեմ՝ կիմանաս:

Քրիստոֆեր Ռոբինը գլխով արեց:

– Հասկանո՞ւմ ես, հայրիկ, ես հիշում եմ, իսկ Թուխը մոռացել է, և նրա համար շատ-շատ հետաքրքիր կլինի մի անգամ էլ լսել: Չե՞ որ դա իսկական հեքիաթ կլինի:

– Ես էլ եմ այդպես կարծում:

Քրիստոֆեր Ռոբինը խոր հառաչեց, բռնեց Արջուկի հետևի թաթից ու նրան իր հետևից քարշ տալով, գնաց դեպի դուռը: Շեմքում նա շրջվեց ու ասաց.

– Երբ ես նրա վրա կրակեցի, հո շատ չցավե՞ց:

– Բոլորովին, – ասաց հայրիկը:

Տղան գլխով արեց ու դուրս եկավ, և քիչ անց հայրիկը լսեց, թե ինչպես է Վինի-Թուխը բարձրանում սանդուղքով. թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Որտեղ Վիկի-Թուխը հյուր է գնում և ընկնում անելանելի վիճակի մեջ

Մի սովորական օր, քթի տակ մի նոր երգ քրթմնջալով՝ Վիկի-Թուխը (ի միջի այլոց, կարճության համար երբեմն նրան անվանում էին պարզապես Թուխ) ուռած-փքված զբոսնում էր Անտառում:

Իսկ փքվելու պատճառ նա ուներ, որովհետև այդ երգ-քրթմնջիկը ինքն էր հորինել այսօր առավոտյան, երբ, ինչպես միշտ, հայելու առջև լիցքային վարժություններ էր կատարում: Պետք է ասեմ, որ Վիկի-Թուխը շատ էր ուզում նիհարել, ուստի ջանասիրաբար մարմնամարզությամբ էր զբաղվում: Նա բարձրանում էր հետևի թաթերի ծայրերին, ամբողջ մարմնով ձգվում էր ու միաժամանակ երգում.

– Տարա-տարա-տարա-րա՛:

Իսկ հետո, երբ կռանում էր, փորձելով առջևի թաթերը գետնին հասցնել (իհարկե, ապարոյուն), այսպես էր երգում:

– Տարա-տարա-տարա-վա՛յ, օգնեցե՛ք, տրամ-պա-պա՛:

Ահա այսպես ծնվեց այդ երգ-քրթմնջիկը: Նախաճաշից հետո Վիկին շարունակ երգը կրկնում էր քթի տակ, քրթմնջում էր ու քրթմնջում, մինչև որ անգիր արեց: Այդ Զրթմնջիկի բառերը մոտավորապես այսպիսին էին.

Տարա-տարա-տարա-րա՛,
Տրամ-պամ-պամ-տիրամ-պամ-պա՛:
Տիրի-տիրի-տիրի-րի՛,
Տրամ-պամ-պամ-տիրիրիմ-պիմ-պի՛:

Եվ ահա քրթմնջալով քթի տակ այս Զրթմնջիկը և մտածելով, իսկ Վիկի-Թուխը մտածում էր այն մասին, թե ինչ կլիներ, եթե նա՝ Թուխը, չլիներ Վիկի-Թուխ, այլ բոլորովին-բոլորովին մեկ ուրիշը, նա անսկատելիորեն հասավ գառիվեր լանջին, որտեղ ավագի մեջ մի լայն անցք էր երևում:

– Օհո՛ – ասաց Թուխը: – Տրամ-պամ-պամ-տիրիրամ-պամ-պա՛: Եթե ես ինչ-որ բան հասկանում եմ, ապա անցքը բույն է, իսկ բույնը՝ ճագար, իսկ ճագարը՝ լավ ընկեր, իսկ լավ ընկերը դա այն ընկերն է, որն ինձ որևէ բանով կհյուրասիրի և հաճույթով կլսի իմ Զրթմնջիկը: Ա՛յ քեզ բախտ:

Եվ Թուխը կռացավ, գլուխը մտցրեց անցքի մեջ ու գոռաց.

– Յէ՛յ: Ո՞վ կա տանը:

Պատասխանի փոխարեն ներսից լսվեց թփթփոց, որից հետո դարձյալ լռություն տիրեց:

– Ես հարցնում եմ «Յէ՛յ: Ո՞վ կա տանը»: – Բարձր-բարձր կրկնեց Թուփը:

– Ոչ ոք, – պատասխանեց ինչ-որ մեկի ձայնը: – Եվ կարիք էլ չկա այդպես ոռնալու, – ավելացրեց ձայնը, – առաջին անգամ էլ հիանալի հասկացա:

– Ներեցեք, – ասաց Վինի-Թուփը: – Իսկապե՞ս տանը ոչ ոք, ոչ ոք չկա:

– Ոչ ոք, ոչ ոք չկա, – պատասխանեց ձայնը:

Վինի-Թուփը գլուխը դուրս հանեց անցքից ու մտքի մեջ ընկավ:

Նա մտածեց այսպես. «Չի կարող պատահել, որ ներսում ոչ ոք, ոչ ոք չլինի: Այնուամենայնիվ ինչ-որ մեկը այնտեղ կա. չէ՞ որ ինչ-որ մեկը պիտի լիներ, որ ասեր՝ «Ոչ ոք, ոչ ոք չկա»:

Եվ զարմանալի չէ, որ նա նորից կռացավ, գլուխը նորից մտցրեց անցքի մեջ ու ասաց.

– Լսիր, ճագար, այդ դու չե՞ս:

– Ոչ, ես չեմ, – ասաց ճագարը իսկապես փոխված ձայնով:

– Ձայնը նույնպես քոնը չի՞:

– Իմ կարծիքով՝ ոչ, – ասաց ճագարը: – Իմ կարծիքով, սա բոլորովին նման չէ իմ ձայնին: Եվ նման էլ չպիտի լինի:

– Ահա թե ի՞նչ, – ասաց Թուփը:

Նա գլուխը նորից դուրս հանեց և նորից մտքի մեջ ընկավ: Իսկ հետո նորից գլուխը ներս խոթեց անցքից ու ասաց.

– Բարի եղեք, ասացեք ինձ, ինչո՞րում եմ, որտե՞ղ է ճագարը:

– Նա հյուր է գնացել իր բարեկամ Վինի-Թուփին: Եթե չգիտես, իմացիր, որ նրանք աննման բարեկամներ են: Այստեղ Վինի-Թուփը զարմանքից «ախ» քաշեց:

– Բայց ախր, այդ է՛ս եմ, – ասաց նա:

– Ի՞նչ է նշանակում «ես եմ»: «Ես եմ»-ները տարբեր են լինում:

– Այս «ես եմ»-ը նշանակում է, որ այդ ես եմ Վինի-Թուփը:

Այս անգամ զարմացավ ճագարը: Վինի-Թուփից էլ շատ զարմացավ:

– Իսկ դու չե՞ս սխալվում, – հարցրեց նա, – համոզվա՞ծ ես:

– Իհարկե՛, իհարկե՛, համոզված եմ, – ասաց Վինի-Թուփը:

– Դե լավ, որ այդպես է, ներս արի:

Եվ Թուփը ներս սողաց: Նա խցկվում էր, խցկվում, խցկվում և վերջապես հայտնվեց բնի մեջ:

– Դու միանգամայն իրավացի էիր, – ասաց ճագարը, ոտքից գլուխ ուշադիր գննելով նրան: – Իսկապես դու ես: Ողջո՛ւյն, ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ:

– Իսկ դու ո՞ւմ տեղն էիր ինձ դրել:

– Դե, ով ասես կարող է լինել: Դու էլ լավ գիտես, որ այստեղ, Անտառում, ամեն մեկին չի կարելի տուն թողնել: Չգուշությունը երբեք չի վնասում: Դե լավ, ժամանակը չէ՞ արդյոք, որ մի բան ուտենք:

Վինի-Թուփը երբեք դեմ չէր մի բան ուտելուն, հատկապես առավոտյան ժամը տասնմեկին, երբ նախաճաշը վաղուց արդեն ավարտվել էր, իսկ ճաշը չէր էլ մտածում սկսվել: Եվ իհարկե, նա շատ ուրախացավ, տեսնելով, որ ճագարը բաժակներ ու ափսեներ է դնում սեղանին: Իսկ երբ ճագարը հարցրեց. «Չացի վրա ի՞նչ քսեմ մեղր, թե խտացրած կաթ», Թուփը հիացմունքով վրա տվեց. «Եվ մեկից, և մյուսից», իսկ քիչ հետո սթափվելով, որպեսզի շատ աչքածակ չերևա, շտապեց ավելացնել. «Իսկ հաց կարելի է բոլորովին չտալ»:

Դրանից հետո Վինի-Թուփը լռեց ու երկար ժամանակ չէր խոսում, որովհետև նրա բերանը սաստիկ կարևոր գործով էր զբաղված:

Իսկ էլ ավելի հետո, քաղցր-քաղցր ձայնով ինչ-որ բան մոմռացնելով, իսկ Վինի-Թուփի ձայնը իսկապես ասես մեղրից լիներ, նա վեր կացավ սեղանից, սրտանց սեղմեց ճագարի թաթիկն ու ասաց, որ արդեն իր գնալու ժամանակն է:

– Արդե՛ն, – քաղաքավարությամբ հարցրեց ճագարը:

Դժվար է երաշխավորել, որ ճագարը չմտածեց. «Այնքան էլ քաղաքավարի բան չէ կշտանալուն պես հրաժեշտ տալը»: Բայց բարձրաձայն ոչինչ չասաց, որովհետև շատ խելացի ճագար էր:

Բարձրաձայն նա ասաց.

– Արդե՞ն:

– Դե, – կմկմաց Թուխը, – ես կարող եմ մի քիչ էլ մնալ, եթե միայն դու... եթե քեզ մոտ... – կմկմում էր նա և չգիտես ինչու աչքը չէր հեռացնում պահարանից:

– Ճիշտն ասած, ես էլ էի պատրաստվում գնալ զբոսանքի, – ասաց ճագարը:

– Ա-ա՛, որ այդպես է ես էլ գնամ: Մնաս բարո՛ւվ:

– Գնաս բարո՛ւվ, եթե քեզ էլ ուրիշ ոչինչ պետք չէ:

– Իսկ որևէ բան դեռ մնացե՞լ է, – հարցրեց Թուխը, կրկին աշխուժանալով:

Ճագարը բացուխուխ արեց բոլոր կաթսաները, նայեց բոլոր ամանների մեջ և հոգոց հանելով ասաց.

– Ափսո՛ւս, ոչինչ չի մնացել:

– Ես այդպես էլ գիտեի, – գլուխն օրորելով, կարեկցեց Թուխը: – Դե, մնաս բարով, ես գնացի:

Եվ նա սկսեց բնից դուրս սողալ: Առջևի թաթերով ամբողջ ուժով նա իրեն քաշում էր առաջ, ինչքան ուժ ուներ իրեն առաջ էր հրում հետևի թաթերով... և որոշ ժամանակ անց երևաց նրա քիթը: Հետո երևացին ականջները... ապա՝ առջևի թաթերը... հետո՝ ուսերը... իսկ հետո...

Իսկ հետո Վինի-Թուխը գոռաց.

– Վա՛յ, օգնեցե՛ք: Ավելի լավ է հետ սողամ:

Ավելի հետո նա գոռաց.

– Վա՛յ, փրկեցե՛ք: Չէ՛, ավելի լավ է առաջ սողամ:

Եվ, վերջապես, նա ոռնաց ամբողջ կոկորդով.

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ: Փրկեցե՛ք-օգնեցե՛ք: Ոչ առաջ եմ գնում, ոչ հետ:

Ճագարը, եթե հիշում եք, մտադիր էր զբոսանքի գնալ: Բայց տեսնելով, որ շքամուտքը անդառնալի փակվել է, դուրս եկավ հետնամուտքից և, շրջանցելով բույնը, մոտեցավ Թուխին, ավելի ճիշտ նրա այն կեսին, որ երևում էր:

– Ի՞նչ է պատահել, – հարցրեց նա, – մնացել ես անցքի մե՞ջ:

– Ո-ո՛հ, պարզապես հանգստանում եմ, – աշխատելով անհոգ երևալ, պատասխանեց Թուխը: – Պարզապես հանգստանում եմ, մտածում եմ և երգում իմ քեֆին...

– Հապա մի տուր թաթդ, – խիստ ծայրով ասաց ճագարը:

Վինի-Թուխը տվեց թաթը, և ճագարն սկսեց քաշել:

Նա քաշում էր ու քաշում, ձգում էր ու ձգում, մինչև որ Վինի-Թուխը գոռաց.

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, ցավում է:

– Հիմա ամեն ինչ պարզ է, – ասաց ճագարը, – դու չես կարող դուրս գալ, որովհետև դեմ ես արել:

– Որովհետև, – բարկացավ Թուխը, – որովհետև բնիդ մուտքը չափազանց նեղ է:

– Ոչ, պատճառն այն է, որ ինչ-որ մեկը աչքածակություն էր անում, – խիստ ասաց ճագարը: – Ինձ ամբողջ ժամանակ թվում էր, թեև քաղաքավարությունից դրդված ոչինչ չէի ասում, թե ինչ-որ մեկը չափազանց շատ է ուտում: Եվ ես հաստատ համոզված եմ, որ այդ «ինչ-որ մեկը» ես չեի: Ուրիշ ճար չկա, ստիպված եմ գնալ Զրիստոֆեր Ռոբինի հետևից: Գուցե նա օգնի:

Զրիստոֆեր Ռոբինը՝ Վինի-Թուխի և ճագարի մտերիմ բարեկամը, ապրում էր, ինչպես գիտեք, կանաչ դուռ ունեցող տնակում, Անտառի մյուս ծայրում: Բայց նա անմիջապես օգնության եկավ և տեսնելով Վինի-Թուխի առջևի կեսը, այնպիսի քնքնությամբ ասաց՝ «Ա՛խ, դու իմ հիմա՛ր արջուկ», որ բոլորն էլ թեթևություն զգացին:

– Իսկ ես հենց նոր մտածում էի, – քիթը վեր քաշելով ասաց Թուխը, – որ խեղճ ճագարին այլևս երբեք-երբեք չի վիճակվի տուն մտնել շքամուտքից... Եթե այդպես լիներ, ես շատ կտխրեի:

– Ես նույնպես, – ասաց ճագարը:

– Չի վիճակվի տուն մտնել շքամուտքի՞ց, – կրկնեց Զրիստոֆեր Ռոբինը: – Իսկ ինչո՞ւ: Կարծում եմ, որ կվիճակվի...

– Այ դա լավ է, – թեթևացած շունչ քաշեց ճագարը:

– Թերևս ստիպված լինենք բնի մեջ հրել, եթե չկարողացանք դուրս քաշել, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

Այստեղ ճագարը մտահոգ քորեց ականջի հետևն ու ասաց, որ եթե Վինի-Թուխին հետ հրեն ապա նա ընդմիշտ կմնա ներսում: Եվ չնայած ինքը՝ ճագարը, անսահման ուրախ է, որ Թուխին շարունակ իր կողքին կտեսնի, բայց այնուամենայնիվ, ինչ ուզում ես ասա, ոմանց վայել չէ գետնի երեսին ապրել, իսկ ոմանց էլ՝ գետնի տակ, և...

– Զո կարծիքով, ես երբեք-երբեք դուրս չե՞մ գա այստեղից, – խեղճացած հարցրեց Թուխը:
– Իմ կարծիքով, քանի որ կիսով չափ դուրս ես եկել, ապա ավիտու է, որ մնաս ճանապարհի կեսին, – ասաց ճագարը:

Քրիստոֆեր Ռոբինը զլխով արեց:

– Միայն մի ելք կա, – ասաց նա, – հարկավոր է սպասել, մինչև դու նորից նիհարես:

– Իսկ շատ պիտի սպասե՞մ, – վախեցած հարցրեց Թուխը:

– Մոտ մի շաբաթ:

– Վա՛յ, ես մի շաբաթ ո՞նց ցցվեմ այստեղ:

– Ցցվելուց հեշտ բան չկա քեզ համար, իմ հիմար արջուկ: Քեզ այստեղից դուրս հանելն է դժվար:

– Մի տխրի, մենք քեզ համար գրքեր կկարդանք, – ուրախ բացականչեց ճագարը: – Միայն թե ծյուն չգա...

Հա, մի բան էլ ասեմ, – ավելացրեց նա, – դու, բարեկամս, զբաղեցրել ես համարյա ամբողջ սենյակս... Եթե թույլ տաս, ես քո հետևի թաթերից սրբիչներ կկախեմ: Ինչո՞ւ իզուր տեղը ցցվեմ, երբ դրանցից հրաշալի կախիչներ դուրս կգան սրբիչի համար:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, մի ամբողջ շաբաթ, – տխուր ասաց Թուխը: – Իսկ ո՞նց եմ ճաշելու:

– Դու, սիրելիս, չես ճաշելու, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – որովհետև ինչքան շուտ նիհարես, այնքան լավ: Իսկ բարձաձայն ընթերցանություն մենք քեզ խոստանում ենք:

Վինի-Թուխը ուզում էր հառաչել, բայց չկարողացավ. շատ ամուր էր դեմ առել: Նա մի կաթիլ արցունք թափեց ու ասաց.

– Գոնե հեշտ մարտողական գրքեր կարդացեք, որոնք կմխիթարեն ու հույս կներշնչեն անելանելի վիճակում գտնվող դժբախտ արջուկիս...

Եվ ահա մի ամբողջ շաբաթ Քրիստոֆեր Ռոբինը հենց մի այդպիսի հեշտ-մարտողական, այսինքն՝ հասկանալի ու հետաքրքիր գիրք էր կարդում Վինի-Թուխի Հյուսիսային Կեսի մոտ, իսկ ճագարը լվացված սպիտակեղենը կախ էր տալիս Հարավային Կեսից... Իսկ Թուխը բարակում էր, բարակում էր ու բարակում:

Իսկ երբ շաբաթը վերջացավ, Քրիստոֆեր Ռոբինը ասաց.

– Ժամանակն է:

Նա բռնեց Թուխի առջևի թաթերից, ճագարը բռնեց Քրիստոֆեր Ռոբինից, իսկ ճագարի բոլոր Ազգականներն ու Ծանոթները (սրանք չափազանց շատ էին) բռնեցին ճագարից և ամբողջ ուժով սկսեցին քաշել:

Սկզբում Վինի-Թուխը ասում էր.

– Վա՛յ:

Հետո մեկ ուրիշ բառ էր ասում.

– Վա՛խ:

Իսկ ավելի հետո նա բոլորովին-բոլորովին անսպասելի ասաց.

– Կլո՛ւի, – ճիշտ և ճիշտ շշի բերանից դուրս թռչող խցանի նման:

Այստեղ թե Քրիստոֆեր Ռոբինը, թե ճագարը, թե ճագարի բոլոր Ազգականներն ու Ծանոթները, մի խոսքով, բոլորը միասին գլուխկոնծի տվեցին:

Իսկ այդ կույտի վերևում հայտնվեց ազատված Վինի-Թուխը:

Վինի-Թուխը ի նշան երախտագիտության՝ ուռած-փրկված տեսքով գլուխ տվեց իր բարեկամներին, իսկ հետո նույն փքված տեսքով գնաց զբոսնելու Անտառում, չմոռանալով ճանապարհին երգել իր երգը: Իսկ Քրիստոֆեր Ռոբինը նայեց նրա հետևից ու քնքշանքով շշնջաց.

– Ա՛խ, դու իմ հիմա՛ր արջուկ:



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Որտեղ Թուխը և Դնչիկը որսի են դուրս գալիս և քիչ է մնում բռնեն Բորոյին

Վիկի-Թուխի լավագույն ընկերը՝ Դնչիկ անունով փոքրիկ խոզուկը, ապրում էր մի մեծ, շատ-մեծ տան մեջ, մի մեծ, շատ-մեծ ծառի փչակում: Ծառը անտառի կենտրոնում էր, տունը՝ ծառի կենտրոնում, իսկ Դնչիկն ապրում էր ճիշտ տան կենտրոնում: Իսկ տան կողքին ոչ մեծ սյուն կար, սյան վրա՝ մի կոտրված տախտակ, և նա, ով գոնե մի քիչ կարդալ գիտեր, տախտակի վրա կարող էր կարդալ հետևյալ մակագրությունը.

ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆՁԱՆՑ Մ.

Իսկ շարունակությունը ի վիճակի չէր կարդալու ոչ ոք, նույնիսկ նա, ով շատ լավ էր կարդում:

Մի անգամ Զրիստոֆեր Ռոբինը հարցրեց Դնչիկին, թե ի՞նչ է գրված տախտակի վրա: Դնչիկն անմիջապես պատասխանեց, որ այնտեղ գրված է իր պապիկի անունը, և որ այդ մակագրված տախտակը ընտանեկան մասունք է, այսինքն՝ իրենց տոհմի հիշատակը:

Զրիստոֆեր Ռոբինն ասաց, որ այդպիսի անուն՝ Կողմսակիանձանց Մ., չի կարող լինել, իսկ Դնչիկը պատասխանեց, թե ո՛չ, կարող է, չէ՞ որ պապիկին այդպես են անվանել: Եվ «Մ»-ն պարզապես կրճատում է, իսկ պապիկի լրիվ անունը եղել է Կողմսակիանձանց Մաթս, իսկ դա էլ Մաթսունեյլ Կողմսակիանձանց անվան կրճատ ձևն է:

— Իմ պապիկը երկու անուն ուներ, — բացատրեց նա, — հատկապես այն դեպքի համար, եթե հանկարծ մեկնումեկը ինչ-որ տեղ կորցներ:

— Մեծ բան է: Ես էլ երկու անուն ունեմ, — ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

— Ահա, տեսնո՞ւմ ես, — ասաց Դնչիկը: — Ուրեմն, ես ճի՛շտ եմ:

Հիանալի ծմեռային օր էր: Դնչիկը դռան առջևի ձյունն էր ավլում, երբ բարձրացրեց գլուխը և տեսավ Վիկի-Թուխին: Թուխը քայլում էր դանդաղ, ուշադրությամբ ոտքերի տակ նայելով և այնպես էր խորասուզվել մտքերի մեջ, որ երբ Դնչիկը ձայն տվեց, նա մինչև անգամ կանգ չառավ:

— Հե՛յ, Թո՛ւխ, — կանչեց Դնչիկը: — Ողջո՛ւյն, Թուխ: Այդ ի՞նչ ես անում:

— Որս եմ անում, — պատասխանեց Թուխը:

— Ո՞րս ես անում: Ի՞նչ որս:

— Հետապնդում եմ մեկին, — խորհրդավոր պատասխանեց Թուխը:

Դնչիկը մոտ վազեց:

– Հետապնդում ես: Ո՞ւմ:

– Ես էլ շարունակ այդ հարցն եմ ինձ տալիս, – ասաց Թուխը: – Ամբողջն հարցն էլ դա է՝ ո՞ւմ:

– Իսկ ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս կպատասխանես այդ հարցին:

– Ստիպված եմ սպասել, մինչև կհանդիպեմ, – ասաց Վինի-Թուխը: – Այստեղ նայի՛ր – նա մատնացույց արեց ուղիղ իր ոտքերի առջև: – Ի՞նչ ես տեսնում:

– Հետքեր, – ասաց Ղեչիկը: – Թաթերի հետքեր: – Հուզմունքից Ղեչիկը մինչև անգամ ճղճաց: – Թո՛ւխ: Դու կարծում ես... որ սա... սարսափելի Բոբո՞ն է:

– Կարող է պատահել, – ասաց Թուխը: – Երբեմն կարծես թե նա է, երբեմն էլ կարծես թե՛ չէ: Հետքերով դժվար է որոշել:

Եվ նա վճռական առաջ քայլեց, իսկ Ղեչիկը մեկ-երկու րոպե հապաղելուց հետո վազեց նրա հետևից:

Հանկարծ Թուխը կանգ առավ ու կռացավ:

– Ի՞նչ պատահեց, – հարցրեց Ղեչիկը:

– Շատ տարօրինակ բան, – ասաց Թուխը: Հիմա կարծես գազանները երկուսն են: Ահա սրան՝ Անհայտ մեկին, մոտեցել է մյուսը՝ Անհայտ մեկը, և հիմա նրանք միասին են զբոսնում: Գիտես ի՞նչ, Ղեչիկ, լավ կլինի, որ գաս ինձ հետ, մեկ էլ տեսար՝ սրանք Չար Գազաններ են:

Ղեչիկը խիզախորեն քորեց ականջի հետևն ու ասաց, որ մինչև ուրբաթ ինքը բոլորովին ազատ է և հաճույքով կընկերակցի Թուխին, հատկապես, եթե այնտեղ իսկական Բոբո կա:

– Դու ուզում ես ասել՝ եթե երկու իսկական Բոբո կա, – ճշտեց Թուխը, իսկ Ղեչիկն ասաց, որ իր համար միևնույն է, քանի որ մինչև ուրբաթ ինքը ոչ մի անելիք չունի:

Եվ նրանք առաջ գնացին:

Հետքերը պտտվում էին լաստենիների փոքրիկ պուրակի շուրջը... և, նշանակում է, երկու Բոբոները, եթե այդ նրանք էին, նույնպես պուրակի շուրջն էին պտտվում և, հասկանալի է, Թուխն ու Ղեչիկը նույնպես պետք է պուրակի շուրջը պտտվեին:

Ճանապարհին Ղեչիկը Թուխին հետաքրքրական դեպքեր էր պատմում իր պապիկ Կողմնակիհանձանց Մ.-ի կյանքից: Օրինակ, ինչպես էր պապիկը բուժում իր հողացավը որսից վերադառնալիս կամ թե ինչպես նա օր ծերության սկսեց շնչարգելությամբ տառապել, և նման հետաքրքրաշարժ բաներ:

Իսկ Թուխը մտածում էր, թե տեսնես ինչպիսին է եղել այդ պապիկը: Եվ նա սկսեց մտածել, որ հիմա իրենք հետապնդում են երկու Պապիկների և, հետաքրքիր է, եթե բռնեն այդ Պապիկներին, չի՞ կարելի արոյոք նրանցից մեկին տուն տանել ու պահել, և, հետաքրքիր է, ի՞նչ կասի այդ մասին Քրիստոֆեր Ռոբինը:

Իսկ հետքերը պտտվում ու պտտվում էին պուրակի շուրջը...

Հանկարծ Թուխը զարմանքից քար կտրեց տեղում:

– Նայի՛ր, – շշուկով գոռաց նա ու մատնացույց արեց ձյունը:

– Ո՞ւր, – նույնպես շշուկով գոռաց Ղեչիկը և սարսափից վեր ցատկեց: Բայց, որպեսզի ցույց տա, որ վեր է թռել ոչ թե վախից, այլ հենց այնպես, նա տեղնուտեղը մեկ-երկու անգամ էլ վեր-վեր արեց, ասես պարզապես ցանկանում էր ցատկոտել:

– Նոր հետքեր, – ասաց Թուխը: – Հայտնվել է երրորդ գազանը:

– Թո՛ւխ, – ճղճաց Ղեչիկը, – դու կարծում ես, որ դա՞ էլ է Բոբո:

– Չէ, չեմ կարծում, – ասաց Թուխը, – որովհետև այս հետքերը տարբերվում են... Այստեղով, հավանորեն, անցել են երկու Բոբո, և մեկ, ասենք... ասենք՝ Բեբո... Կամ էլ հակառակը, երկու Բեբո և մեկ, ասենք... ասենք՝ Բոբո... Ոչինչ չես կարող անել, պետք է գնալ նրանց հետևից:

Եվ նրանք քայլեցին առաջ արդեն փոքր-ինչ հուզված, որովհետև այդ երեք Անհայտ Գազանները կարող էին Շատ Չար Գազաններ լինել: Եվ Ղեչիկը սարսափելի ուզում էր, որ իր սիրելի պապիկ Կողմնակիհանձանց Մ.-ն հիմա իր կողքին լիներ և ոչ թե անհայտ մի տեղում: Իսկ Թուխը մտածում էր, որ վատ չէր լինի, եթե իրենք հանկարծ, բոլորովին-բոլորովին պատահաբար հիմա Քրիստոֆեր Ռոբինին հանդիպեին, որովհետև ինքը Թուխը շատ է սիրում նրան:

Եվ այստեղ միանգամայն անսպասելիորեն Թուխը կանգ առավ երրորդ անգամ և լիզեց քթի ծայրը, որովհետև հանկարծ զգաց, որ սարսափելի շոգ է: Հիմա նրանց առջև չորս գազանների հետքեր էին երևում:

– Ղեչիկ, նայի՛ր, նայի՛ր: Տեսնո՞ւմ ես: Մի Բոբո էլ է ավելացել: Հիմա նրանք դարձել են երեք Բոբո և մի Բեբո...

Այո, ամեն ինչից երևում էր, որ Թուխը չի սխալվում: Չետքերը, ճիշտ է, փոքր ինչ խառնվում ու խաչաձևում էին միմյանց, բայց միանգամայն անկասկած էր, որ դրանք չորս զույգ թաթերի հետքեր են:

– Գիտե՞ս ինչ, – ասաց Դնչիկը, իր հերթին լիզեց քթի ծայրը և համոզվեց, որ դա շատ քիչ է օգնում: – Գիտե՞ս ինչ: Իմ կարծիքով, ես ինչ-որ բան հիշեցի: Այո, այո: Ես հիշեցի մի գործի մասին, որը երեկ մոռացել եմ անել, իսկ վաղը ուշ կլինի... մի խոսքով, ես պետք է անմիջապես տուն գնամ և անեմ այդ գործը:

– Ճաշից հետո կանենք այդ գործը, – ասաց Թուխը, – ես քեզ կօգնեմ:

– Չասկանում ես, դա այնպիսի գործ է, որ չի կարելի ճաշից հետո անել, – շտապեց ասել Դնչիկը: – Դա հատուկ առավոտյան գործ է: Պետք է անել անապայման առավոտյան և ամենից լավ է ժամը... Դու չգիտե՞ս ժամը քանիսն է...

– Տասներկուսը, – ասաց Թուխը, նայելով արևին:

– Ահա, տեսնում ես, այդ գործը պետք է անել տասներկուսից մինչև տասներկուսն անց հինգ րոպե: Այնպես որ ինձանից չնեղանաս, ես գնա... Վա՛յ, մայրիկ: Ո՞վ կա այնտեղ:

Թուխը նայեց երկնքին, իսկ հետո, կրկին լսելով ինչ-որ մեկի սուլոցը, նայեց մեծ կաղնուն և ճյուղի վրա ինչ-որ մեկին տեսավ:

– Ախր սա Զրիստոֆեր Ռոբինն է, – ասաց նա:

– Ա-ա՛, այդ դեպքում ամեն ինչ կարգին է, – ասաց Դնչիկը, – նրա հետ դու կարող ես ոչ մի բանից չվախենալ: Ցտեսություն:

Եվ նա մի շնչով սլացավ տուն՝ շատ գոհ, որ ազատվեց սոսկալի վտանգից:

Զրիստոֆեր Ռոբինը առանց շտապելու իջավ ծառից:

– Իմ հիմա՛ր արջուկ, – ասաց նա, – դու այստեղ ինչո՞վ ես զբաղված: Սկզբում դու մենակ երկու անգամ պտտվեցիր այս պուրակի շուրջը, հետո քեզ մոտեցավ Դնչիկը, և դուք սկսեցիք երկուսով պտտվել... Հիմա, իմ կարծիքով, դուք պատրաստվում էիք չորրորդ պտույտը կատարել ձեր իսկ սեփական ոտնահետքերով...

– Մի րոպե, – թաթը տնկելով ասաց Թուխը:

Նա նստեց ու մտքի մեջ ընկավ՝ խորը-խորը: Չետո նա իր թաթը դրեց մի հետքի վրա... Չետո նա երկու անգամ քորեց ականջի հետևն ու ոտքի ելավ:

– Այո-ո՛ – ասաց նա: – Հիմա ամեն ինչ հասկացա, – ավելացրեց նա: – Ես նույնիսկ չգիտեի, որ այդքան հիմար ու անխելք եմ, – ասաց Վինի-Թուխը: – Ես աշխարհի ամենաբթամիտ արջուկն եմ:

– Ինչե՛ր ես ասում: Դու աշխարհի ամենալավ արջուկն ես, – մխիթարեց Զրիստոֆեր Ռոբինը:

– Ճշմարի՞տ, – հարցրեց Թուխը: Նա նկատելիորեն մխիթարվեց: Իսկ հետո հանկարծ բոլորովին պայծառացավ: – Ինչ ուզում ես ասա, բայց արդեն ճաշելու ժամանակն է, – ասաց նա:

Եվ տուն գնաց՝ ճաշելու:



ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Որտեղ Իա-Իան կորցնում է պոչը, իսկ Թուխը գտնում է

Մոխրագույն ծեր իշուկ Իա-Իան մեն-մենակ կանգնել էր Անտառի անկյունում, որտեղ միայն տատասկափշեր էին աճում: Առջևի ոտքերը լայն դրած, գլուխը թեքած կողքի, նա մտածում էր Լուրջ Բաների մասին: Երբեմն նա տխուր մտածում էր. «Ինչո՞ւ»: Երբեմն էլ. «Ի՞նչ պատճառով»: Իսկ երբեմն էլ մտածում էր մինչև անգամ այսպես. «Ի՞նչ հետևություն այստեղից»: Եվ զարմանալի չէ, որ ժամանակ առ ժամանակ նա ընդհանրապես դադարում էր հասկանալ, թե վերջապես ինչի մասին է ինքը մտածում:

Ահա թե ինչու, լսելով Վինի-Թուխի ծանր ոտնաձայները, Իան ուրախացավ, որ կարող է գոնե մի բան չմտածել և պարզապես բարևել մեկին:

– Ինչպե՞ս է ինքնազգացողությունդ, – սովորականի նման ծուլորեն հարցրեց նա:

– Իսկ քոնը ինչպե՞ս է, – հարցրեց Վինի-Թուխը:

Իան օրորեց գլուխը:

– Ոչ այնքան այնպես, – ասաց նա: – Կամ էլ նույնիսկ բոլորովին ոչ այնպես: Ինձ թվում է, որ արդեն շատ վաղուց ինձ չեմ զգացել այնպես:

– Ա՛յ-ա՛յ-ա՛յ, – ասաց Թուխը, – շատ ցավալի է: Ապա մի թող քեզ նայեմ:

Իան մնաց կանգնած, դարձյալ ամենավիատ տեսքով նայելով գետնին, իսկ Թուխը պտտվեց նրա շուրջը:

– Իա, – զարմացած հարցրեց նա, – ի՞նչ է պատահել պոչիդ:

– Դու կարծես թե իրավացի ես:

– Իհարկե, իրավացի՛ եմ, – ասաց Թուխը:

– Սա միանգամայն բնական է, – տխուր ասաց Իա-Իան: – Զիմա ամեն ինչ պարզ է: Չարմանալու կարիք չկա:

– Դու երևի պոչդ մոռացել ես ինչ-որ տեղ, – ենթադրեց Թուխը:

– Ավելի ճիշտ, ինչ-որ մեկը թոցրել է... – ասաց Իա-Իան: – Ուրիշ էլ ի՞նչ կարելի է սպասել, – ավելացրեց նա երկարատև ընդմիջումից հետո:

Թուխն զգում էր, որ ինքը պետք է մի ինչ-որ օգտակար բան ասի, բայց գլխի չի ընկնում, թե ինչ: Եվ նա որոշեց փոխարենը մի որևէ օգտակար բան **ա ն է լ**:

– Իա-իա, – հանդիսավորությամբ ասաց նա, – ես՝ Վինի-Թուխս, խոստանում եմ գտնել քո պոչը:

– Շնորհակալություն, Թո՛ւխ, – ասաց Իան: – Դու իսկական ընկեր ես: Նման չես ոմանց:

Եվ Վինի-Թուխը գևաց որոնելու պոչը:

Գարնանային հրաշալի առավոտ էր: Փոքրիկ թափանցիկ ամպիկները ուրախ խաղում էին կապույտ երկնքում: Նրանք մերթ լողում էին դեպի արևը, ասես ուզում էին ծածկել նրան, մերթ էլ շտապ-շտապ հետ էին փախչում, որպեսզի մյուսներն էլ կարողանային խաղալ ու չարածճիություններ անել:

Իսկ արևն ուրախ շողում էր, ոչ մի ուշադրություն չդարձնելով նրանց վրա, և սոճին, որ կլոր տարին հագից չէր հանել իր ասեղնավոր զգեստը, հին ու մաշված էր թվում նոր ու կանաչ ժանյակներով զուգված կեչու կողքին: Վինին քայլում էր սոճիների ու եղևնիների մոտով, քայլում էր գիհեպտուղով ու կռատուկով պատված լանջերով, քայլում էր առվակների ու գետակների զառիթափ ավերով, քայլում էր քարակույտերի ու թփուտների միջով, և ահա, հոգևած ու քաղված, նա վերջապես հասավ Թավուտ Անտառը, որովհետև հենց այստեղ, Թավուտ անտառում էր ապրում Բուն:

«Եթե կա ինչ-որ մեկը, որ ինչ-որ բան գիտե ինչ-որ բանի մասին, – ինքն իրեն ասում էր արջուկը, – ապա դա, անկասկած, բուն է: Կամ էլ ես Վինի-Թուխը չեմ, – ասաց նա: Բայց ես նա եմ, – ավելացրեց Թուխը: – Նշանակում է՝ ամեն ինչ կարգին է»:

Բուն ապրում էր «Շագանակներ» սբանչելի դոյակում: Այո, դա տուն չէր, այլ իսկական դոյակ: Համենայն դեպս, այդպես էր թվում արջուկին, որովհետև դոյակի դռան վրա թե կոճակով զանգ կար, և թե պարանով զանգ: Կոճակով զանգի տակ գրված էր.

ԽՆԹՈՒՄ ԵՄ ՍԵՆՄԵԼ ԵԹԵ ՉԷՆ ԲԱՑՈՒՄ

Իսկ պարանով զանգի տակ գրված էր.

ԽՆԹՈՒՄ ԵՄ ԶԱՇԵԼ ԵԹԵ ՉԷՆ ԲԱՑՈՒՄ

Երկու հայտարարությունն էլ գրել էր Զրիստոֆեր Ռոբինը, որովհետև ամբողջ Անտառում միայն նա գրել գիտեր: Նույնիսկ Բուն, թեև նա շատ-շատ խելոք էր և կարողանում էր կարդալ ու մինչև անգամ ստորագրել իր անունը՝ Փու, նույնիսկ նա ի վիճակի չէր ճիշտ գրել այդքան դժվար բառերը:

Վինի-Թուխը երկու հայտարարությունն էլ ուշադրությամբ կարդաց, սկզբում ձախից աջ, իսկ հետո, որպեսզի որևէ բան հանկարծ բան չթողնի՝ աջից ձախ:

Ապա, համոզված լինելու համար, նա սեղմեց կոճակը, քաշեց պարանը, բախեց դուռն ու ամբողջ կոկորդով մեկ գոռաց.

– Բու, բա՛ց արա դուռը: Ա՛րջն է եկել:

Դուռը բացվեց, և շեմքում երևաց Բուն:

– Ողջո՛ւյն, Թո՛ւխ, – ասաց նա: – Ի՞նչ նորություններ կան:

– Տխուր և սարսափելի, – ասաց Թուխը, – որովհետև Իա-Իան, իմ հին բարեկամը, կորցրել է պոչը և հիմա շատ է վշտացած: Բարի եղիր, ասա խնդրում եմ, ինչպե՞ս կարող եմ գտնել:

– Դե, – ասաց Բուն, – սովորական արարողությունը նման դեպքերում ներքոհիշյալն է...

– Ի՞նչ է նշանակում Ներկով Հիշել, – ասաց Թուխը: – Դու մի մոռացիր, որ իմ գլխում թեփ է, և երկար բառերը ինձ միայն գլխացավ են պատճառում:

– Դա նշանակում է այն, ինչ պետք է անել:

– Քանի դեռ դա է նշանակում, ես դեմ չեմ, – խոնարհաբար ասաց Թուխը:

– Անհրաժեշտ է հետևյալը անել. նախ և առաջ, հրապարակիր մամուլում: Հայտնի չի, թե քո բարեկամը, երբ...

– Առողջությո՛ւն, – ասաց Թուխը, բարձրացնելով թաթը: – Ասում ես, ի՞նչ պետք է անենք այդ ամենը այդ մա... ինչպե՞ս ասացիր: Դու փոշտացիր, երբ պատրաստվում էիր ասել:

– Ես չեմ փոշտացել:

– Ոչ, Բու, փոշտացի՛ր:

– Ներիր, խնդրում եմ, Թուխ, բայց ես չեմ փոշտացել: Ինչպե՞ս կարելի է փոշտալ և չիմանալ, որ փոշտացել ես:

– Բայց նաև հնարավոր չի իմանալ, թե ինչ-որ մեկը փոշտացել է, եթե ոչ ոք չի փոշտացել:

– Ես ասում էի՝ հայտնի չի...

– Ահա՛, նորից: Առողջությո՛ւն, – տխուր ասաց Թուխը:

– Հայտնի չի՞, – շատ բարձր և հատ-հատ ասաց Բուն, – թե քո բարեկամը որտեղ է կորցրել պոչը: Ուստի, հայտարարություն տուր թերթում և պարզև խոստացիր: Հարկավոր է գրել, որ մենք մի ինչ-որ շատ լավ բան կտանք նրան, ով կգտնի Իայի պոչը:

– Հասկանում եմ, հասկանում, – գլուխը շարժեց Թուխը: – Ի միջի այլոց, այդ «շատ լավ բանի» մասին, – կիսաթուն շարունակեց նա, – սովորաբար այս ժամին ես դեմ չեմ որևէ բան ուտելու... – Եվ նա աչքը զցեց սենյակի անկյունում կանգնած պահարանին: – Ասենք, մի գդալ խտացրած կաթ կամ էլ մի ուրիշ բան, օրինակ, մի ումպ մեղր...

– Դե, ուրեմն, – ասաց Բուն, – մենք հայտարարություն կգրենք և կփակցնենք Անտառով մեկ:

«Մի փոքրիկ գդալ մեղր, – ինքն իրեն քթամնջում էր արջուկը, – մի շատ փոքրիկ գդալ մեղր»:

Իսկ Բուն խոսում էր ու խոսում, արտասանում էր սոսկայի երկար բառեր, և այդ բառերը գնալով ավելի ու ավելի երկար էին դառնում... Վերջապես նա վերադարձավ այնտեղ, որտեղից սկսել էր, և սկսեց բացատրել, որ այդ հայտարարությունը պետք է գրի Քրիստոֆեր Ռոբինը:

– Իմ դռան վրայի հայտարարությունները նույնպես նա է գրել: Դու դրանք տեսե՞լ ես, Թուխ:

Թուխն արդեն վաղուց հերթով մեկ «այո», մեկ «ոչ» էր պատասխանում այն ամենին, ինչ ասում էր Բուն: Եվ բանի որ վերջին անգամ նա ասել էր՝ «այո, այո, իհարկե», ապա այս անգամ ասաց. «Ոչ, ոչ, երբե՛ք», թեև գաղափար անգամ չունեիր, թե ինչի մասին է խոսքը:

– Ինչպես, չե՞ս տեսել, – խիստ զարմացած հարցրեց ուն: – Գնանք ցույց տամ:

Նրանք դուրս եկան, և Թուխը քնկոտ աչքերով նայեց կոճակով զանգին, նրա տակ փակցված հայտարարությանը, ապա պարանով զանգին, հետո նրա աչքն ընկավ պարանին: Եվ որքան շատ էր նա այդ պարանին նայում, այնքան ավելի էր նրան թվում, թե ինչ-որ տեղ նման բան արդեն տեսել է: Ինչ-որ մի բոլորովին այլ տեղ, ինչ-որ շատ վաղուց:

– Գեղեցիկ պարան է, այնպես չե՞, – հարցրեց Բուն:

Թուխը գլխով արեց:

– Այս պարանն ինձ ինչ-որ բան է հիշեցնում, – ասաց նա, – բայց չեմ կարողանում հիշել, թե ինչ: Որտեղի՞ց ես ճարել:

– Մի անգամ անցնում էի անտառով, տեսա կախված էր թփից, սկզբում մտածեցի, թե այնտեղ ինչ-որ մեկն ապրում է, և քաշեցի, բայց զանգի ձայն չսսվեց, իսկ հետո ես ավելի ուժեղ քաշեցի, և պոկվեց: Քանի որ այդ պարանը, իմ կարծիքով, ոչ ոքի պետք չէր, բերեցի տուն և...

– Բու, – հանդիսավոր ասաց Թուխը, – այս պարանը ինչ-որ մեկին շատ պետք է:

– Ո՞ւմ:

– Իային: Իմ թանկագին բարեկամ Իային: Նա... նա շատ էր սիրում այս պարանը:

– Սիրո՞ւմ էր:

– Կապված էր նրան, – տխուր ասաց Վինի-Թուխը:

Եվ այս խոսքերով նա պարանը հանեց կեռից ու տարավ տվեց տիրոջը՝ Իային, իսկ երբ Քրիստոֆեր Ռոբինը պոչն ամրացրեց նախկին տեղում, այսինքն՝ այնտեղ, որտեղ սովորաբար լինում են բոլոր պոչերը, Իա-Իան սկսեց սլանալ Անտառով մեկ և այնպիսի հիացմունքով էր թափահարում պոչը, որ ինչ-որ բան ոտից գլուխ խուտուտ ածեց Թուխին, և նա ստիպված եղավ անմիջապես վազել տուն ու մի բան ուտել:

Իսկ կես ժամ հետո նա շրթունքները լիզելով, հպարտ երգեց.

Ո՞վ գտավ պոչը,

Վինի-Թուխը՝ ես:

Ուղիղ հինգ անց կես

(Բայց իրականում հազիվ մեկը լիներ)

Ես գտա պոչը:



ԳԼՈՒԽ ՅԻՆԳԵՐՐՈՐԴ

Որտեղ Դնչիկը հանդիպում է Փղաձիուն

Մի անգամ, երբ Զրիստոֆեր Ռոբինը, Վինի-Թուխը և Դնչիկը նստած խաղաղ գրուցում էին, Զրիստոֆեր Ռոբինը, իբրև թե ի միջի այլոց, ասաց.

– Դնչիկ, գիտես, ես այսօր տեսա Փղաձիուն:

– Իսկ ի՞նչ էր նա անում, – հարցրեց Դնչիկը:

Կարելի էր կարծել, թե նա բոլորովին չգարմացավ:

– Պարապ-սարապ թափառում էր, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: Իմ կարծիքով, նա ինձ չնկատեց:

– Մեկին էլ ես տեսա, – ասաց Դնչիկը: – Իմ կարծիքով, նա էր: Բայց գուցե և ոչ:

– Ես էլ եմ տեսել, – ասաց Թուխը և տարակուսած մտածեց. «Տեսնես ո՞վ է Փղաձին»:

– Նրանց հաճախ չես հանդիպի, – անփութորեն ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

– Հատկապես հիմա, – ասաց Դնչիկը:

– Հատկապես տարվա այս ժամանակ, – ասաց Թուխը,

Հետո նրանք մի քիչ էլ խոսեցին դեսից դենից, և շուտով Դնչիկի ու Թուխի գնալու ժամանակը եկավ: Նրանք միասին գնացին: Սկզբում, քանի դեռ նրանք քարշ էին գալիս Թավուտ Անտառի եզրով ձգվող արահետով, երկուսն էլ լուռ էին, բայց երբ հասան գետակին և միմյանց օգնում էին քարից քար թռչելով մյուս ափն անցնել, իսկ հետո կողք կողքի քայլում էին թփուտների միջով անցնող կածանով, նրանց միջև Չափազանց Խելացի Խոսակցություն սկսվեց: Դնչիկն ասում էր. «Հասկանում ես, Թուխ, թե ի՞նչ ես ուզում ասել»: Իսկ Թուխը պատասխանում. «Ես ինքս էլ, Դնչիկ, այդպես եմ մտածում»: Դնչիկն ասում էր. «Բայց մյուս կողմից, Թուխ, մենք չպետք է մոռանանք»: Իսկ Թուխը պատասխանում էր. «Միանգամայն ճիշտ է, Դնչիկ: Չեմ հասկանում, ինչպե՞ս եմ աչքաթող արել այդ հանգամանքը»:

Եվ ահա, երբ նրանք հասել էին Վեց Սոճիների մոտ, Թուխը նայեց չորս կողմ և, համոզվելով, որ իրենց ոչ ոք չի լսում, ասաց.

– Դնչիկ, ես որոշել եմ բռնել Փղաձիուն:

Եվ Թուխը մի քանի անգամ ուռած-փքված տմտմբացրեց գլուխը: Նա սպասում էր, որ Դնչիկը կասի. «Դե լա՛վ», կամ էլ՝ «Ի՞նչ ես ասում», և կամ նույնիսկ՝ «Թո՛ւխ, չի կարող պատահել», մի խոսքով, որևէ օգտակար դիտողություն կանի, բայց Դնչիկը ոչինչ չասաց.

Մեր մեջ ասած, Դնչիկը վշտացել էր, որ այդ հրաշալի միտքը առաջինը իր գլխում չի ծնվել:

– Ես մտածում եմ բռնել նրան, – ասաց Թուխը և փոքր-ինչ լռելուց հետո ավելացրեց, – ծուղակով: Եվ դա պետք է Շատ Խորամանկ Ծուղակ լինի, այնպես որ, Դեչիկ, դու պետք է օգնես ինձ:

– Թո՛ւխ, – ասաց Դեչիկը, անմիջապես մխիթարվելով և իրեն զգալով միանգամայն երջանիկ, – Ես, իհարկե, կօգնեմ քեզ: – Հետո ասաց. – Իսկ ո՞նց պիտի անենք:

Թուխը ասաց.

– Ամբողջ հարցն էլ հենց դա է՝ ինչպե՞ս:

Նրանք նստեցին, որպեսզի քննարկեն իրենց անելիքը:

Առաջին բանը որ անցավ Թուխի մտքով՝ փորել Շատ Խորը Փոս: Փղածին զբոսնելու կգա, կընկնի այդ փոսի մեջ, և...

– Ինչո՞ւ, – հարցրեց Դեչիկը:

– Ի՞նչը՝ ինչո՞ւ, – ասաց Թուխը:

– Ինչո՞ւ ևա կընկնի փոսը:

Թուխը թաթով տրորեց քիթը և ասաց, որ, հավանաբար, Փղածին դուրս կգա զբոսանքի քթի տակ մի երգ կմոմռա և երկինք կնայի, որպեսզի տեսնի, արդյոք անձրև չի՞ գալու, և ահա չի նկատի Շատ Խորը Փոսը, մինչև որ կընկնի մեջը, իսկ այդ ժամանակ արդեն ուշ կլինի:

Դեչիկն ասաց, որ դա, իհարկե, շատ լավ Ծուղակ է, բայց ինչ կստացվի, եթե անձրևն արդեն սկսված լինի:

Թուխը նորից քորեց քիթն ու ասաց, որ այդ մասին ինքը չի մտածել: Բայց տեղնուտեղը նորից պայծառացավ ու ասաց, որ, եթե անձրևն արդեն սկսված լինի, Փղածին երևի կնայի երկնքին, որպեսզի տեսնի, արդյո՞ք շուտ է անձրևը կտրվելու, և ահա դարձյալ չի նկատի Շատ Խորը Փոսը, մինչև որ կընկնի մեջը: Իսկ այդ ժամանակ արդեն ուշ կլինի:

Դեչիկն ասաց, որ հիմա ամեն ինչ պարզ է, և որ, իր կարծիքով, դա շատ-շատ Խորամանկ Ծուղակ է:

Դեչիկն ասաց, որ իր կարծիքով, պետք է փոսը փորել հենց Փղածի ու քթի տակ, անմիջապես այն բանից առաջ, երբ ևա ընկնելու կլինի այնտեղ:

– Բայց այդ ժամանակ ևա կտեսնի, որ մենք փորում ենք, – ասաց Թուխը:

– Չի՞ տեսնի: Ախր ևա երկնքին է նայելու...

– Իսկ եթե հանկարծ պատահաբար ցած նայի՞, – ասաց Թուխը: – Այդ ժամանակ ամեն ինչ կհասկանա...

Նա երկար մտորում էր, իսկ հետո տխուր ասաց.

– Այո, այնքան էլ հեշտ չի, ինչքան ես էի կարծում: Երևի դրա համար էլ Փղածիեր այդքան քիչ են հանդիպում:

– Երևի, – համաձայնեց Դեչիկը:

Նրանք հառաչելով ոտքի ելան, իսկ հետո, միմյանց վրայից մի քանի փշեր դուրս քաշելով, նորից նստեցին, և ամբողջ ժամանակ Թուխը ինքն իրեն ասում էր. «Ա՛խ, եթե ես միայն մտածել իմանայի»: Հոգու խորքում Վինին համոզված էր, որ Փղածիուն կարելի է բռնել, միայն հարկավոր է, որ որսորդի գլխում իսկական խելք լինի և ոչ թե թեփ...

– Ենթադրենք, – ասաց ևա Դեչիկին, – դու ուզում ես բռնել ինձ: Ի՞նչ կանես:

– Ես, – ասաց Դեչիկը, – ես այսպես կանեմ. ծուղակ կսարքեի և Ծուղակում խայծ կդնեի՝ մի կճուճ մեղր: Դու հոտը կառնեիր, կգայիր նրա հետևից և...

– Այո, ես կգայի նրա հետևից, – հուզված ասաց Թուխը, – միայն թե շատ զգույշ, որպեսզի չընկնեմ, և ես կվերցնեի այդ կճուճը և նախ կլիզեի եզրերը, իբր թե այնտեղ այլևս մեղր չի մնացել, իսկ հետո կքաշվեի մի կողմ ու մի քիչ կմտածեի նրա մասին, իսկ հետո կվերադառնայի և կսկսեի լիզել հենց կճուճի մեջտեղից, իսկ հետո...

– Դե լավ, հանգստացիր, հանգստացի՛ր: Կարևորն այն է, որ դու ծուղակը կընկնեիր, և ես կբռնեի քեզ: Այսպես ուրեմն, նշանակում է, առաջին հերթին պետք է իմանալ, թե ի՞նչ են սիրում Փղածիերը: Իմ կարծիքով, կաղին: Ե՛հ շտ է: Հիմա կաղին շատ կա... Հե՛յ, Թո՛ւխ, ուշքի եկ:

Թուխը, որ մեղրի մասին երազելով բոլորովին ձեռքից գնացել էր, ուշքի եկավ և նույնիսկ վեր թռավ տեղից ու հայտարարեց, թե մեղրը շատ անգամ ավելի հրապուրիչ խայծ է, քան կաղինը: Դեչիկն այլ կարծիքի էր, և նրանք քիչ էր մնում վեճ սկսեին, բայց Դեչիկը ժամանակին գլխի ընկավ, որ եթե ծուղակում կաղին դնեն, ապա կաղինը պետք է հավաքի ինքը՝ Դեչիկը, իսկ եթե այնտեղ մեղր դնեն, ապա մեղրը կբերի Թուխը: Դրա համար էլ ևա ասաց. «Շատ լավ, ուրեմն՝ մե՛ղր», և ճիշտ այն պահին, երբ Թուխն էլ իր հերթին այդ մասին էր մտածել, և պատրաստվում էր ասել. «Շատ լավ, ուրեմն՝ կաղի՛ն»:

– Ուրեմն՝ մեղր, – համոզվելու համար կրկնեց Դնչիկը: – Ես փորում եմ Փոսը, իսկ դու գնում ես մեղր բերելու:
– Շատ լավ, – ասաց Թուխը և գնաց տուն:

Տուն հասնելով, նա բարձրացավ աթոռին և պահարանի վերին դարակից մի մեծ, շատ մեծ կճուճ մեղր հանեց: Կճուճի վրա գրված էր՝ «Մեխըր», բայց որպեսզի վերջնականապես համոզվի, Վինի-Թուխը բարձրացրեց թղթյա կափարիչը և նայեց կճուճի մեջ: Իսկապես որ բերնեբերան լի էր մեղրով:

– Բայց դժվար էր երաշխավորել, – ասաց Թուխը: – Հիշում եմ, մորեղբայրս պատմում էր, որ ինքը մի անգամ ճիշտ և ճիշտ այս գույնի պանիր է տեսել:

Եվ Վինին դուռը մտցրեց կճուճի մեջ ու ինչպես պետքն է լիզեց:

– Այո, – ասաց նա, – սա մեղր է: Չի կարելի կասկածել: Մի լիքը կճուճ մեղր: Իհարկե, եթե մեկնումեկը հատակին պանիր չի դրել, հենց այնպես, կատակի համար: Գուցե ավելի լավ է մի քիչ էլ փորձեմ... Մեկ էլ տեսար... Մեկ էլ տեսար Փղաձիերը պանիր չեն սիրում... ինձ նման... Ա՛խ: – Եվ նա խորը շունչ քաշեց: – Չէ՛, չեմ սխալվել: Մինչև վերջ մաքուր մեղր է:

Հաստատ համոզվելով, որ կճուճում եղածը մեղր էր, Թուխը կճուճը թևի տակ դրեց ու բռնեց Ծուղակի ճանապարհը: Դնչիկը, դուրս նայելով Շատ խորը Փոսից, հարցրեց. «Բերեցի՞ր»: Եվ Թուխը ասաց. «Այո, միայն թե լիքը չի»: Դնչիկը նայեց կճուճի մեջ ու հարցրեց. «Սա է մնացե՞լ»: Եվ Թուխը ասաց. «Այո», և դա ճիշտ էր:

Դնչիկը կճուճը դրեց Փոսի հատակին, դուրս եկավ, և նրանք գնացին տուն:

– Կհանդիպենք առավոտյան ժամը վեցին, Դնչիկ: – Ասաց Թուխն իր տան մոտ: – Դու պարան չե՞ս ունենա:

– Չէ: Իսկ ինչի՞դ է պետք պարանը:

– Որ նրանց տուն տանենք:

– Աա՛... իսկ ես կարծում էի, թե Փղաձիերը գալիս են սուլոցի վրա:

– Ոմանք գալիս են, իսկ ոմանք՝ չէ: Փղաձիերի համար չի կարելի երաշխավորել: Դե, բարի գիշեր:

– Բարի գիշեր:

– Դնչիկը վազեց տուն, որի մոտ «Կողմնակի Անձանց Մ.» մակարգրությամբ տախտակ կար, իսկ Թուխը պառկեց քնելու:

Մի քանի ժամ անց, երբ գիշերն արդեն կամաց-կամաց հեռանում էր, Թուխը հանկարծ արթնացավ մի ինչ-որ ճմլող զգացումից: Այդպիսի ճմլող զգացում նա առաջներում էի էր ունեցել, և գիտեր, թե դա ինչ է նշանակում. նա ուտել է ուզում:

Նա քնաթաթախ քայլեց դեպի պահարանը, բարձրացավ աթոռին... և վերին թարեքը դատարկ գտավ:

«Տարօրինակ է, – մտածեց նա, – ես գիտեմ, որ այնտեղ մի կճուճ մեղր պիտի ունենամ: Մի լիքը կճուճ, բերնեբերան լի մեղրով, և նույնիսկ վրան էլ գրված՝ «Մեխըր», որպեսզի չսխալվեմ: Տարօրինակ է, շատ տարօրինակ»:

Եվ մտորելով թե ուր կարող է կորչել կճուճը նա սկսեց սենյակում հետ ու առաջ քայլել ինքն իրեն քրթմնջալով այս երգ-քրթմնջիկը.

Ո՞ւր կարող էր մեղրս կորչել,
Ունե՞ի ես մի լի կճուճ:
Նա չէր կարող տևից փախչել,
Թե որ փախչի՝ էլ ի՞նչ կճուճ:

Գետում լողալ նա չէր կարող
(Ոչ պոչ ունի, ոչ էլ լողակ),
Ուզենար էլ, նա չէր կարող
Թաղվել, պահվել խոր հողի տակ:

Նա չէր կարող փախչել անտառ,
Չէր էլ կարող թռչել երկինք...
Չէր կարող: Բայց չքվեց անդարձ,
Ա՛յ թեզ հրաշք, ա՛յ թեզ գաղտնիք:

Նա քրթմնջաց այս երգը երեք անգամ և հանկարծ ամեն ինչ հիշեց. Չէ՞ որ ինքը կճուճը դրել է Փղաձիերի համար պատրաստված խորամանկ Ծուղակում:

– Ա՛յ-ա՛յ-ա՛յ, – ասաց Թուխը: – Ահա թե ինչ է ստացվում, երբ չափից դուրս հոգատար ես լինում Փղաձիերի հանդեպ:

Եվ նա կրկին անկողին մտավ: Բայց որքան շատ էր աշխատում քնել, այնքան ավելի քիչ էր այդ նրան հաջողվում: Փորձեց մտքում հաշվել, երբեմն դա շատ լավ միջոց է, բայց դա էլ չօգնեց: Փորձեց հաշվել Փղաձիերին, բայց դրանից դրուժությունը միայն ավելի լրջացավ, որովհետև յուրաքանչյուր Փղաձին, որին նա հաշվում էր, անմիջապես նետվում էր Թուխի մեղրի կճուճի վրա և տեղնուտեղը մաքրագարդում: Մի քանի րոպե Թուխը պառկած լռեցյալն տառապում էր, բայց երբ հինգ հարյուր ութսուներորդ Փղաձին ժանիքները լիզելով գոմռաց. «Շատ լավ մեղր էր, թերևս ավելի լավը երբեք չէի կերել», Թուխն այլևս չդիմացավ: Նա ցած թռավ մահճակալից, նետվեց դուրս և կարճ ճանապարհով սլացավ Վեց Սոճիների ուղղությամբ:

Արևը դեռևս անկողնուց չէր ելել, բայց երկինքը Թավուտ Անտառի վրա թեթևակի լուսավորվել էր, կարծես ասելով, որ արևն արթնանում է և քիչ հետո դուրս կգա վերմակի տակից: Լուսադեմի մուժում Սոճիները տխուր ու մենակ էին թվում: Շատ խորը Փոսը էլ ավելի խորն էր թվում, քան կար իրականում, իսկ մեղրի կճուճը ստվերի նման թափանցիկ էր: Բայց երբ Թուխը մոտեցավ, քիթը նրան հուշեց, որ այնտեղ, իհարկե, մեղր կա, և Թուխի լեզուն դուրս եկավ ու լիզեց շրթունքները:

Դնչիկը նույնպես արթնացել էր: Արթնանալուն պես նա ասաց. «Վա՛յ»: Յետո, քաջալերելով իրեն, հայտարարեց. «Ի՞նչ անենք... Կպատահի՞»: Բայց այնուամենայնիվ նրա ծնկները դողում էին, որովհետև ականջներում մի սարսափելի բառ էր որոտում. ՓՂԱՁԻ՛:

Ինչպիսի՞ն է նա՝ այդ Փղաձին:

Մի՞թե չար է:

Արդյո՞ք սուլոցի վրա մոտ գալիս է: Իսկ եթե գալիս է, ապա ի՞նչ նպատակով...

Սիրո՞ւմ է նա խոզուկներին, թե ոչ:

Եվ ինչպե՞ս է սիրում:

Եթե նա խոզուկներ ուտում է, ապա գուցե այնուամենայնիվ ձեռք չի՞ տա այն խոզուկին որը Կողմակիանձանց Մ. անունով պապիկ ունի:

Խեղճ Դնչիկը չգիտեր, թե ինչպես պատասխանի այս բոլոր հարցերին: Իսկ նա շատ շուտով կյանքում առաջին անգամ պետք է հանդիպեր իսկական Փղաձիուն:

Միզուցե ավելի լավ է ձևացնի, թե գլուխը ցավում է, և չգնա՞ Վեց Սոճիների կողմը: Իսկ եթե հանկարծ պարզվի, որ դրսում շատ լավ եղանակ է, Ծուղակում էլ ոչ մի Փղաձի չկա, և ինքը՝ Դնչիկը, ամբողջ առավոտ զուր տեղն է թավալ եկել անկողնո՞ւմ:

Ի՞նչ անել:

Եվ այստեղ նրա գլխում մի բավականին խորամանկ միտք ծնվեց: Հիմա թաքուն կգնա Վեց Սոճիների մոտ, շատ զգույշ, որպեսզի չնկատվի, կնայի՞ Ծուղակում Փղաձի կա, թե ոչ: Եթե կա, ապա ինքը՝ Դնչիկը, կվերադառնա ու անկողին կմտնի, իսկ եթե չկա, ապա Դնչիկը, իհարկե, չի պառկի...

Եվ Դնչիկը գնաց: Սկզբում նա մտածում էր, որ Ծուղակում, իհարկե, ոչ մի Փղաձի էլ չի լինի. հետո սկսեց մտածել, որ ոչ, հավանական է, կլինի. իսկ երբ արդեն մոտենում էր Ծուղակին, նա դրանում միանգամայն համոզված էր, որովհետև լսեց, թե ինչպես է նա ոռնում ամբողջ կոկորդով մեկ:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – ասաց Դնչիկը: Նա միայն մի ցանկություն էր զգում՝ փախչել: Բայց ո՞նց փախչեր: Քանի որ այդքան մոտիկ էր, ապա վատ չէր լինի, եթե գոնե մի անգամ աչքի պոչով նայեր կենդանի Փղաձիուն: Եվ ահա նա զգուշորեն կողքանց դեպի Փոսը սողաց և նայեց...

Իսկ Վինի-Թուխին ոչ մի կերպ չէր հաջողվում գլուխը հանել մեղրի կճուճից: Ինչքան շատ էր նա ցնցում գլուխը, կճուճն այնքան ավելի ամուր էր նստում:

Թուխը գոռում էր. «Մայրի՛կ»: Գոռում էր. «Օգնեցե՛ք»: Երբեմն էլ պարզապես գոռում էր. «Վայ-վայ-վա՛յ», բայց դա էլ չէր օգնում: Նա փորձում էր կճուճը որևէ բանի խփել, բայց քանի որ չէր տեսնում, թե ինչին է խփում, ապա դա էլ չէր օգնում: Նա փորձում էր դուրս գալ Ծուղակից, բայց քանի որ կճուճից բացի ոչինչ չէր տեսնում (այն էլ ոչ լրիվ), դա էլ չէր ստացվում:

Լրիվ ուժասպառ լինելով՝ նա բարձրացրեց գլուխը (կճուճի հետ միասին) և աղիողորմ ու հուսահատ ոռնաց...

Յենց այդ պահին էլ Դնչիկը Փոսի մեջ նայեց:

– Օգնեցե՛ք, փրկեցե՛ք, – գոռաց Դնչիկը: – Փղածի՛ն, սարսափելի Փղածին: Եվ այնքան արագ, որ միայն կրունկներն էին փայլատակում, սլացավ հեռու, շարունակելով ճղճղալ: – Փրկեցե՛ք: Փղափելի Սարսածի՛ն: Օգնեցե՛ք: Ձիանելի Փղասա՛րսը: Փղեցե՛ք: Ձիեցե՛ք: Օգնափելի, Փրկափելի, Փիափի՛ղը:

Նա ճղում ու ճղճղում էր այնքան ժամանակ, մինչև որ հասավ ու բախեց Զրիստոֆեր Ռոբինի տնակի դուռը:

– Ի՞նչ է պատահել, Դնչիկ, – շալվարը հագնելով հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:

– Օգգգնաձձի, – սարսափից ու արագ վազքից շնչակտուր կակազեց Դնչիկը: – Ձիա... Փղա... Փղածի՛ն:

– Ո՞րտեղ:

– Այնտեղ, – տոտիկով ցույց տվեց Դնչիկը:

– Ի՞նչ տեսք ունի:

– Սարսափելի՛: Ահա այսպիսի՛ գլխով: Ոնց որ... Ոնց որ... ինչ ասեմ: Ոնց որ՝ կճո՛ւճ:

– Ես պետք է անպայման տեսնեմ նրան, – կոշիկները հագնելով, ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Գնացի՛նք: Զրիստոֆեր Ռոբինի կողքին Դնչիկը, իհարկե, ոչ մի բանից չէր վախենում, և նրանք գնացին:

– Լսո՞ւմ ես: Այդ նա՛ է, – երբ մոտեցել էին, սարսափահար ասաց Դնչիկը:

– Ինչ-որ բան լսում եմ, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

Նրանք թրխկոց էին լսում: Այդ դժբախտ Վինին էր վերջապես դեմ ամել մի հաստ արմատի և խփելով՝ փորձում էր կոտրել կճուճը:

– Կանգ առ, էլ չի կարելի մոտենալ, – ճղճղաց Դնչիկը, ամուր սեղմելով Զրիստոֆեր Ռոբինի ձեռքը: – Վա՛յ, ինչ սարսափելի է:


Իսկ Զրիստոֆեր Ռոբինը հանկարծ սկսեց ծիծաղել: Նա ծիծաղում էր ու ծիծաղում... ծիծաղում էր ու ծիծաղում... Եվ մինչև նա ծիծաղում էր, Փղածիու գլուխը ինչպես որ պետքն էր դիպավ արմատին: Թրղիկ՝ կճուճը հազար կտոր եղավ, և, ո՛վ գարմանք՝ երևաց Վինի-Թուխի գլուխը:

Միայն այստեղ Դնչիկը հասկացավ վերջապես, թե որքան հիմար Դնչիկ է ինքը: Նա այնպես ամաչեց, այնպես կարմրեց, որ գլխապատռա սլացավ տուն ու գլխացավով անկողին ընկավ: Եվ այդ առավոտ նա գրեթե հաստատ որոշեց փախչել տնից ու դառնալ նավաստի:

Իսկ Զրիստոֆեր Ռոբինը և Թուխը գնացին նախաճաշելու:

– Արջո՛ւկ, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Ես քեզ շատ եմ սիրում:

– Ես էլ քեզ եմ սիրում, – ասաց Վինի-Թուխը:



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Որտեղ Իա-Իան նշում է իր ճննդյան օրը, իսկ Դնչիկը քիչ է մնում Լուսին թռչի

Իա-Իան՝ մոխրագույն ծեր իշուկը, կանգնել էր գետակի ափին և ամենավիատ տեսքով ջրի մեջ իր արտացոլումն էր դիտում:

– Սրտամաշ տեսարան է, – վերջապես ասաց նա, – սրտամաշ տեսարան:

Նա շրջվեց և գետի հոսանքով դանդաղ դեպի ցած գնաց: Մի քսան մետր գնալուց հետո նա ծանծաղուտով անցավ գետը և առաջվա նման դանդաղ քարշ տալով ոտքերը, մյուս ափով հետ գնաց: Ճիշտ այն տեղի դիմաց, ուր կանգնած էր քիչ առաջ, Իան կանգ առավ և նորից ջրի մեջ նայեց:

– Այսպես էլ գիտեի, – հառաչեց նա: – Այս կողմից էլ մի բան չի: Բայց ո՞ւմ պետքն է: Ոչ ոք չի հետաքրքրվում: Սրտամաշ տեսարան է:

Այդ պահին նրա ետևում մի ճյուղ կոտրվեց, և թփերի միջից երևաց Վինի-Թուխը:

– Բարի լո՛ւյս, Իա, – ասաց Թուխը:

– Լույս բարի, արջուկ Թուխ, – վիատ պատասխանեց Իան: – Եթե միայն սա բարի առավոտ է: Անձամբ ես խիստ կասկածում եմ:

– Ինչո՞ւ: Բա՞ն է պատահել:

– Ոչինչ, արջուկ Թուխ, առանձնապես ոչինչ: Բոլորը չէ, որ կարող են: Ոմանց էլ չի վիճակվում: Այստեղ ոչնչով չես օգնի:

– Ի՞նչը բոլորը չէ, որ կարող են, – հարցրեց Թուխը, քիթը տրորելով:

– Ուրախանալ: Երգել, պարել և ուրիշ նման բաներ: Ընկուզենու թփուտների տակ:

– Աաա՛, հասկանում եմ... – ասաց Թուխը: Եվ խոր մտածելուց հետո հարցրեց. – Ո՞ր ընկուզենու թփուտների տակ:

– Որի տակ ընկուզենու ջրդեղած են, – ընկճված պատասխանեց Իան: – Խմբապար, ուրախություն և նման բաներ: Ես չեմ տրտնջում, բայց այդպես է:

Թուխը նստեց մի մեծ քարի և փորձեց որևէ բան հասկանալ: Հանելուկի նման էր ստացվում, իսկ դա Թուխի թույլ կողմն էր, որովհետև նրա գլխում թեփից բացի ուրիշ բան չկար: Եվ համենայնդեպս նա երգեց այս հանելուկային երգը.

ԿԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ

– Չարցս կարճ է ու հասարակ, –
Ռնգեղջյուրը ասաց, –
Ո՞ր ծայրից անեմ կատակ,
Որ լինի դիպուկ, արագ: –
Այս հարցին ոչ ոք, ավա՛ղ,
Չպատասխանեց ոչ ուշ, ոչ վաղ:

- Այ, ինչ եմ ասել, – ասաց Իա-Իան: – Երգի՛ր, երգի՛ր: Փիսիկը նստել մի մուգ անկյունում, հոնքերը կիտել ու լաց է լինում: Ուրախացիր ու զվարճացիր:
- Ես ուրախանում եմ, – ասաց Թուխը:
- Ոմանց դա հաջողվում է, – ասաց Իա-Իան:
- Վերջապես ի՞նչ է պատահել, – հարցրեց Թուխը:
- Իսկ մի՞թե ինչ-որ բան է պատահել:
- Ոչ, բայց դու այնքան տխուր տեսք ունես:
- Տխո՞ւր: Այդ ինչո՞ւ ես պիտի տխուր լինեմ: Չէ՞ որ այսօր ծննդյանս օրն է: Տարվա ամենալավ օրը:
- Զո՞ւն ծննդյան օ՞րը, – ապշած հարցրեց Թուխը:
- Իհարկե: Մի՞թե չի զգացվում: Չապա մի նվերներիս նայիր: – Իա-Իան առջևի սմբակով չորս կողմը ցույց տվեց: – Նայիր այս ծննդյան կարկանդակին: Թուխը նայեց. սկզբում դեպի աջ, հետո՝ ձախ:
- Մի՞թե չես տեսնում:
- Չէ, – ասաց Թուխը:
- Ես նույնպես, – ասաց Իա-Իան: – Սա կատակ էր, – բացատրեց նա: – Չա-հա՛: Թուխը բոլորովին շփոթված բորեց ծոծրակը:
- Այսօր իսկապե՞ս քո ծննդյան օրն է, – հարցրեց նա:
- Իհարկե:
- Այ քեզ բա՛ն: Դե, Իա, շնորհավորում եմ և քեզ շատ-շատ երջանկություն եմ ցանկանում այսօր:
- Ես էլ եմ քեզ շնորհավորում և շատ-շատ երջանկություն եմ ցանկանում քեզ այսօր, արջուկ Թուխ:
- Բայց այսօր իմ ծննդյան օրը չի:
- Ոչ, քոնը չի, այլ իմը:
- Բայց դու ասում ես՝ «շատ-շատ երջանկություն եմ քեզ ցանկանում այսօր»:
- Չետո ի՞նչ: Դու ուզում ես իմ ծննդյան օրը դժբախտ լինե՞լ:
- Ա՛, հասկանում եմ, – ասաց Թուխը:
- Բավական չէ, – հագիվ լացը զսպած ասաց Իա-Իան, – բավական չէ, որ ես այսքան դժբախտ եմ՝ առանց նվերների, առանց ծննդյան կարկանդակի, բոլորի կողմից մոռացված ու լքված, եթե մյուսները նույնպես դժբախտ լինեն...
- Վինի Թուխն այլևս չդիմացավ:
- Սպասիր ինձ այստեղ, – գոռաց նա և ինչքան որ ոտքերում ուժ կար, սլացավ տուն: Նա զգաց, որ պարտավոր է անմիջապես խեղճ իշուկին որևէ նվեր տալ, իսկ հետո միշտ էլ ժամանակ կունենաս մտածելու Իսկական Նվերի մասին:
- Իր տան շենքում նա քիչ մնաց դիպչեր Դնչիկին, որ ցատկում էր դռան մոտ, փորձելով հասնել զանգի կոճակին:
- Ողջո՞ւյն, Դնչի՛կ, – ասաց Վինի-Թուխը:
- Ողջո՞ւյն, Թուխ, – ասաց Դնչիկը:
- Ինչո՞վ ես զբաղված:
- Փորձում եմ զանգահարել, – բացատրեց Դնչիկը: – Անցնում էի այստեղով...
- Թող օգնեմ քեզ, – իր ծառայությունն առաջարկեց Թուխը: Նա մոտեցավ դռանն ու սեղմեց կոճակը: – Ես քիչ առաջ տեսա Իային, – ասաց նա: – Խեղճ Իշուկը սոսկալի հուզված է, որովհետև այսօր նրա ծննդյան օրն

Է, իսկ նրան բոլորը մոռացել են, և նա քիթը կախել է, և ես... Այս ինչ բան է, ոչ ոք չի բացում, քնել են, ի՞նչ է: – Եվ Թուխը նորից զանգահարեց:

– Թո՛ւխ, – ասաց Դևչիկը: – Ախր սա քո՛ տունն է:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – ասաց Թուխը: – Իսկապե՛ս որ: Դե, ներս գնանք:

Թուխը առաջին հերթին մոտեցավ պահարանին, որպեսզի համոզվի, որ ունի ոչ շատ մեծ, միանգամայն համապատասխան կճուճով մեղր: Կճուճն իր տեղում էր, և Թուխը կճուճը իջեցրեց թարեթից:

– Ես սա Իային եմ նվիրելու, – բացատրեց նա: – Իսկ դու ի՞նչ ես մտածում նվիրել:

– Գուցե ե՞ս էլ կճուճը նվիրեմ, – հարցրեց Դևչիկը, – Թող լինի մեր երկուսի կողմից:

– Ո՛չ, – ասաց Թուխը, – լավ բան մտածիր:

– Դե լավ, որ այդպես է, ես Իային փուչիկ կնվիրեմ: Տոներից դեռ մի հատ մնացել է: Յե՛նց հիմա կգնամ կբերեմ:

– Ա՛յ, լավ մտածեցիր: Ախր Իային ուրախացնել է պետք: Իսկ փուչիկը ում ասես կուրախացնի: Ոչ ոք չի կարող տխրել, եթե փուչիկ ունի:

Եվ այսպես, Դևչիկը տուն վազեց, իսկ Թուխը վերցրեց կճուճն ու քայլեց դեպի գետակը:

Շոգ օր էր, ճանապարհը՝ երկար, և Թուխը դեռ ճանապարհի կեսն չէր անցել, երբ ինչ-որ բան սկսեց տարօրինակ կերպով խուտուտ տալ սկզբում քթի մեջ, ապա կոկորդում, հետո կրծքի տակ և այդպես աստիճանաբար մինչև կրունկները հասավ: Թվում էր ինչ-որ մեկը ներսից ասում է. «Գիտե՞ս, Թուխ, հիմա ճիշտ ժամանակն է, որ դու մի փոքր...»

– Ա՛յ, ա՛յ, ա՛յ, – ասաց Թուխը, – իսկ ես չգիտեի, որ արդեն այսքան ուշ է:

Նա նստեց գետնին ու բացեց կճուճի կափարիչը:

– Ի՞նչ լավ եղավ, որ վերցրի հետո, – ասաց նա: – Այսպիսի շոգ օր շատ քիչ արջեր գլխի կընկնեին իրենց հետ կազդուրվելու համար որևէ բան վերցնել...

– Իսկ հիմա հիշենք, – վերջին անգամ լիզելով կճուճի հատակը, ասաց նա, – հիշենք, թե ուր էի ես պատրաստվում գնալ: Ախ հա՛, Իայի մոտ:

Եվ Թուխն առանց շտապելու ոտքի ելավ: Չազիվ էր ոտքի ելել, երբ հանկարծ ամեն ինչ հիշեց. կերել էր Նվե՛րը:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – ասաց Թուխը: – Չիմա ի՞նչ պիտի անեմ: Չե՞ որ պետք է Իային որևէ բան նվիրեմ:

Սկզբում նա պարզապես չգիտեր ինչպես վարվի: Չետո մտածեց:

«Այնուամենայնիվ սա շատ լավ կճուճ է, թեև մեջը մեղր չկա: Եթե այս կճուճը ոնց որ պետք է լվանամ և որևէ մեկին խնդրեմ վրան գրի. «Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ», Իան կարող է սրա մեջ պահել այն ամենը, ինչ ցանկանա: Սա օգտակար իր կլինի»:

Եվ քանի որ այդ ժամանակ նա հեռու չէր Բուի տնից, իսկ Անտառում ամենքն էլ համոզված էին, որ Բուն հիանալի գրել գիտե, նա որոշեց Բուին հյուր գնալ:

– Բարի լույս, Բու, – ասաց Թուխը:

– Լույս բարի, Թուխ, – ասաց Բուն:

– Շնորհավորում եմ քեզ Իա-Իայի ծննդյան օրվա առթիվ, – ասաց Թուխը:

– Ահա թե ի՞նչ, – զարմացավ Բուն:

– Դե իհարկե՛: Իսկ դու ի՞նչ ես նրան նվիրելու:

– Իսկ դո՞ւ:

– Ես նրան օգտակար Կճուճ նվեր կտամ: Սրա մեջ ինչ ուզենաս կարելի է պահել, – ասաց Թուխը: – Ես ուզում եմ քեզ խնդրել...

– Սա՞, – հարցրեց Բուն, Թուխի թաթերից վերցնելով կճուճը:

– Այո, և ուզում եմ խնդրել քեզ...

– Այստեղ մի ժամանակ մեղր է եղել, – ասաց Բուն:

– Դրա մեջ ինչ ասես կարելի է պահել, – լրջորեն ասաց Թուխը: – Սա շա՛տ, շատ օգտակար իր է: Եվ ես ուզում էի խնդրել քեզ...

– Դու լավ կանեիր գրեիր վրան. «Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ»:

– Ես հենց դա եմ ուզում խնդրել, – վերջապես կարողացավ բացատրել Թուխը: – Որովհետև ուղղագրությունից ես մի փոքր կաղում եմ: Ընդհանուր առմամբ լավ ուղղագրություն է, միայն չգիտես ինչու կաղում է, և տառերը չեն հասցնում ժամանակին իրենց տեղերը շարվել: Դու կգրես՝ «Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ»: Շատ եմ խնդում:

– Փառավոր կճուճ է, – ասաց Բուն, բոլոր կողմերից զննելով այն: – Գուցե ես նույնպես քո կճուճը նվիրեմ: Թող լինի մեր երկուսի կողմից:

– Ոչ, ասաց Թուխը, – այդ մեկը դու վատ ես մտածել: Ավելի լավ է տուր լվանամ, իսկ դու հետո գրես վրան: Մինչև Թուխը կվար ու կչորացնեք կճուճը, Բուն թթուտում էր մատիտի ծայրն ու մտածում էր ինչպես է գրվում «Շնորհավորում եմ» բառը:

– Թուխ, դու կարողանում ես կարդալ, – անհանգստացած հարցրեց նա: – Օրինակ, իմ դռան վրա հայտարարություն կա փակցված, թե ինչպես զանգահարել. դա Զրիստոֆեր Ռոբինսն է գրել: Դու կարո՞ղ ես կարդալ:

– Զրիստոֆեր Ռոբինսն ինձ ասաց թե ինչ է գրել և դրանից հետո ես կարողացա կարդալ:

– Հիանալի՜ է: Ես էլ կասեմ, թե ինչ եմ գրել կճուճի վրա, և դու կկարողանաս կարդալ:

Եվ Բուն սկսեց գրել... Ահա թե ինչ նա գրեց.

«Շնո հրո վրո նծա դնա օրեվա աթիվ ըթիվ»:

Թուխը հիացմունքով նայում էր այդ մակագրությանը:

– Ես այստեղ գրել եմ. Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ», – անփութորեն նկատեց Բուն:

– Այ դա մակագրություն է, – հարգանքով նկատեց Թուխը:

– Իսկ եթե լրիվ ես ուզում իմանալ, ապա այստեղ ես գրել եմ. «Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ, ցանկանում եմ շատ-շատ երջանկություն: Քո Թուխ:» Գրաֆիտի ծախսումը բոլորովին հաշվի չեմ առել:

– Ի՞նչ, – հարցրեց Թուխը:

– Գիտե՞ս ինչքան մատիտ ծախսվեց, – բացատրեց Բուն:

– Դե, իհարկե, – ասաց Թուխը:

Իսկ Դնչիկը վաղուց տուն էր հասել և հիմա Իա-Իայի փուչիկը կրծքին սեղմած, որպեսզի հանկարծ քամին չտանի, սլանում էր ինչքան որ ուժ կար ոտքերում: Դնչիկը շատ էր շտապում, որպեսզի Թուխից շուտ տեղ հասնի. նա ուզում էր առաջինը նվերը տանել իշուկին, որպեսզի Իան կարծեր, թե Դնչիկը ինքնուրույն և ոչ թե ուրիշի օգնությամբ է հիշել իր ծննդյան տարեդարձը: Նա այնքան էր շտապում և այնքան էր տարված Իա-Իային ուրախացնելու մտքով, որ ամենևին չէր նայում ոտքերի տակ... Եվ հանկարծ նրա ոտքն ընկավ մկան բնի մեջ, և Դնչիկն ամբողջ թափով քթի վրա գետնին փռվեց.

Բ ՈՒՄ

Դնչիկը փռվեց գետնին և երկար ժամանակ չէր հասկանում, թե ինչ է կատարվել: Սկզբում նա մտածեց, որ ամբողջ աշխարհը հոդս է ցնդել: Հետո մտածեց, որ, միգուցե, միայն իրենց սիրելի Անտառը: Ել ավելի հետո՝ որ, միգուցե, միայն ինքը՝ Դնչիկը, և հիմա մեն-մենակ պառկած է ինչ-որ տեղ Լուսնի վրա և այլևս երբեք-երբեք չի տեսնելու ոչ Թուխին, ոչ Զրիստոֆեր Ռոբինսին, ոչ Իային... Եվ միայն այստեղ նրա մտքով անցավ, որ նույնիսկ Լուսնի վրա էլ պարտադիր չէ ամբողջ ժամանակ քթի վրա պառկել: Եվ զգուշորեն վեր կացավ ու շուրջը նայեց:

Նա դեռևս Անտառում էր:

«Շատ հետաքրքիր է, – մտածեց նա: – Հետաքրքիր է, ի՞նչ պայթյուն էր: Ես չէի կարող ընկնելիս այսքան աղմուկ բարձրացնել: Եվ որտե՞ղ է, հետաքրքիր է, իմ փուչիկը: և որտեղի՞ց, հետաքրքիր է, լույս ընկավ այս փալաքը»:

Այս փալաքը հենց նրա փուչիկն էր:

– Վա՛յ, մայրի՛կ, – ճղճղաց Դնչիկը: – Վա՛յ, մայրիկ, մայրիկ ջան, մայրիկ ջան: Հիմա ես ի՞նչ անեմ: Հո հետ չե՞մ գնալու: Ուրիշ փուչիկ էլ չունեմ... Հը՞, գուցե Իան փուչիկ այնքան էլ շատ չի՞ սիրում:

Եվ նա շարունակեց ճանապարհը: Անկեղծ ասած, նա այլևս նախկին թեթևությամբ չէր վազում, բայց էլի շատ շուտով հասավ այնտեղ, որտեղ կանգնած էր Իան և դարձյալ ջրի մեր իր արտացոլումն էր դիտում:

– Բարի լույս, Իա, – դեռևս հեռվից գոռաց Դնչիկը:

– Բարի լույս, փոքրի՛կ Դնչիկ, – ասաց Իա-Իան: – Եթե, իհարկե, սա բարի առավոտ է, – ավելացրեց նա, – ինչում ես խիստ կասկածում եմ: Բայց դա կարևոր չէ:

– Շնորհավորում եմ քեզ ծննդյանդ օրվա առթիվ, – մոտ գալով ասաց Դնչիկը:

Իան թողեց իր զբաղմունքն ու աչքերը չռեց Դնչիկի վրա:

– Հապա, հապա կրկնի՛ր, – ասաց նա:

– Շնորհավորում եմ...

– Մի ընդհանրացրե՛ք...

Դժվարությամբ կանգնելով երեք ոտքերի վրա՝ Իան չորրորդ ոտքը մոտեցրեց ականջին:

– Սա ես երեկ սովորեցի, – բացատրեց նա, երրորդ անգամ ցած ընկնելով: – Շատ հեշտ է և, որ գլխավորն է, այսպես ավելի լավ եմ լսում: Դե ահա ամեն ինչ կարգին է: Ուրեմն, ի՞նչ էիր ասում, կրկնիր, – ասաց նա, սմբակի օգնությամբ ականջն առաջ հրելով:

– Շնորհավորում եմ ձեր նշանակալից օրվա առթիվ, – կրկնեց Դևիդը:

– Ի՞նչ:

– Իհարկե, բեզ:

– Իմ ծննդյան օրվա առթի՞վ:

– Այո:

– Ուրեմն, սա իսկական ծննդյան օր է դառնում:

– Իհարկե, Իա, և ես բեզ նվեր եմ բերել:

Իա-Իան մեծ դժվարությամբ աջ ոտքը ցած դրեց և ոչ պակաս դժվարությամբ բարձրացրեց ձախը:

– Ես ուզում եմ մյուս ականջով էլ լսել, – բացատրեց նա: – Հիմա ասա:

– Նը-վեր, – շատ բարձր կրկնեց Դևիդը:

– Ի՞նչ:

– Բեզ:

– Ծննդյանս օրվա առթի՞վ:

– Իհարկե: Ես բեզ փուչիկ եմ բերել:

– Փուչի՞կ, – հարցրեց Իա-Իան: – Դու ասացիր՝ փուչի՞կ: Դրանք այն մեծ, գեղեցիկ ու վառվռուն բանե՞րն են, որ փչում, օդով են լցնում: Երգ ու պար, թռի-վռի ու տրամ-պամ-պամ՞:

– Այո: Միայն թե... հասկանում ես... ես շատ եմ ցավում... հասկանում ես... երբ վազում էի, որ շուտ բեզ նվեր բերեմ, ընկա:

– Դու, հավանաբար շատ արագ ես վազել: Հույս ունեմ, ոչ մի տեղի չի ցավում, փոքրիկ Դևիդ:

– Ոչ, շնորհակալություն, բայց նա... նա... փուչիկը, Իա, պայթեց:

Տիրեց երկարատև լռություն:

– Ի՞մ փուչիկը, – վերջապես հարցրեց Իա-Իան:

Դևիդը գլխով արեց:

– Իմ ծննդյան տոնի նվե՞րը:

– Այո, Իա, – ֆսֆսացնելով քիթը, ասաց Դևիդը: – Ահա այն: Շնորհավորում եմ բեզ ծննդյան օրվա առթիվ:

Եվ նա Իային տվեց ռետինե փալասը:

– Սա՞ է, – հարցրեց Իան խիստ զարմացած:

Դևիդը գլխով արեց:

– Իմ նվե՞րը:

– Դևիդը նորից գլխով արեց:

– Փուչի՞կը:

– Այո:

– Շնորհակալություն, Դևիդ, – ասաց Իան: – Ներիր, խնդրում եմ, շարունակեց նա, – բայց ես կուզենայի իմանալ, թե ի՞նչ գույնի էր, երբ... երբ դեռ փուչիկ էր:

– Կարմիր:

«Մի տես, Է՛, կարմիր... Իմ սիրած գույնը», – մտքում ասած Իան:

– Իսկ ի՞նչ մեծության էր:

– Համարյա իմ չափ:

– Այո՞: Մի տես, Է՛, համարյա քո չափ... Իմ սիրած չափը, – քթի տակ տխուր ասաց Իան: – Այդպե՛ս, այդպե՛ս:

Դևիդն իրեն շատ վատ էր զգում և պարզապես չէր իմանում, թե ինչ ասի: Նա մի զլուխ բացում էր բերանը, պատրաստվելով ինչ-որ բան ասել, բայց տեղնուտեղը որոշում էր, որ հենց այդ մեկը չարժի ասել: Եվ հանկարծ, նրա բախտից, ինչ-որ մեկը գետակի մյուս ափից ձայն տվեց: Դա Թուխն էր:

– Շատ-շատ երջանկություն եմ ցանկանում, – գոռում էր Թուխը, հավանաբար մոռացած, որ դա արդեն ասել է:

– Շնորհակալություն, Թո՛ւխ, ես արդեն երջանկացել եմ, – ընկճված պատասխանեց Իան:

– Ես քեզ նվեր եմ բերել, – ուրախ շարունակեց Թուխը:

– Ես նվեր ունեմ, – պատասխանեց Իան:

Մինչ այդ Թուխն անցավ գետակը ու մոտեցավ Իային: Դնչիկը քիչ հեռու նստած, քիթն էր ֆսֆսացնում:

– Ահա, – հայտարարեց Թուխը: – Սա Շատ Օգտակար Կճուճ է: Իսկ վրան գիտես ի՞նչ է գրված. «Շնորհավորում եմ ծննդյան օրվա առթիվ, ցանկանում եմ շատ-շատ երջանկություն: Զո Թուխ»: Ահա ինչքան բան է գրված: Սրա մեջ ինչ ասես կարելի է պահել: Վերցրո՛ւ:

Կճուճը տեսնելով, Իան աշխուժացավ:

– Այ թե ի՞նչ եմ ասել, – գոռաց նա, – իմ փուչիկը կմտնի այս կճուճի մեջ:

– Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, Իա, – ասաց Թուխը: – Փուչիկները կճուճի մեջ չեն մտնում: Նրանք շատ մեծ են: Դու չգիտես նրանց հետ վարվել: Այսպես պետք է անել. բռնիր թելից և...

– Այդ ուրիշների փուչիկները չեն մտնում, իսկ իմը մտնում է, – հպարտությամբ ասաց Իա-Իան: – Նայիր, Դնչի՛կ:

Դնչիկը տխուր շրջվեց, իսկ Իա-Իան ատամներով բռնեց իր նախկին փուչիկն ու զգուշորեն դրեց կճուճի մեջ, ապա հանեց այնտեղից ու դրեց գետնին, իսկ հետո կրկին վերցրեց և զգուշորեն դրեց կճուճի մեջ:

– Դուրս է գալի՛ս, – գոռաց Թուխը: – Ուզում եմ ասել՝ մտնո՛ւմ է:

– Մտնո՛ւմ է, – գոռաց Դնչիկը: – Եվ դո՛ւրս է գալիս:

– Ա՛յ թե մտնում է, – գոռաց Իա-Իան: – Մտնում և դուրս է գալիս: Սքանչելի՛ է:

– Շատ ուրախ եմ, – ասաց Թուխը, – որ գլխի ընկա քեզ այնպիսի Իր նվիրել, որը կարելի է դնել Օգտակար Կճուճի մեջ:

Բայց Իա-Իան ոչինչ չէր լսում: Պարզապես ժամանակ չունեիր: Նա իր փուչիկը մերթ դնում էր կճուճի մեջ, մերթ հանում էր այնտեղից, և ամեն ինչից զգացվում էր, որ նա միանգամայն երջանիկ է:



ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Որտեղ անտառում հայտնվում են Կենգուև և Ճատիկ Ռուև, իսկ Դեչիկը լողանք է ընդունում

Ոչ ոք չգիտեր, թե որտեղից են եկել մայրիկ Կենգուև և Ճատիկ Ռուև, և ինչպես են հայտնվել Անտառում: Թուխը հարցրեց Քրիստոֆեր Ռոբինին. «Ո՞նց են նրանք այստեղ ընկել»: Իսկ Քրիստոֆեր Ռոբինը պատասխանեց. «Սովորական ճանապարհով: Հասկանո՞ւմ ես, թե դա ինչ է նշանակում»: Թուխը, որ ոչինչ չէր հասկացել, ասաց. «Ըհը՛»: Հետո երկու անգամ տմբտմբացրեց գլուխն ու ասաց. «Սովորական ճանապարհով: Ըհը՛: Ըհը՛»: Եվ գնաց իր ընկերոջ՝ Դեչիկի մոտ, իմանալու նրա կարծիքը: Դեչիկի մոտ հյուր էր եկել ճագարը, և ահա՝ նրանք երեքով սկսեցին քննարկել այդ հարցը:

– Ինձ ինչը դուր չի գալիս, – ասաց ճագարը, – ահա ապրում ենք մենք այստեղ՝ դու, Թուխ, և դու, Խոճկոր, և ես, ու մեկ էլ հանկարծ...

– Նաև՛ Իան, – ասաց Թուխը:

– Նաև Իան, ու մեկ էլ հանկարծ, ոչ այս, ոչ այն...

– Նաև Բուև, – ասաց Թուխը:

– Նաև Բուև, ու մեկ էլ հանկարծ, ոչ այս, ոչ այն...

– Այո, այո, նաև Իան, – ասաց Թուխը, – քիչ էր մնում ես նրան մոռանայի:

– Ահա ապրում ենք մենք այստեղ, – շատ դանդաղ ու բարձր ասաց ճագարը, – մենք բոլորս, ու մեկ էլ հանկարծ ոչ այս, ոչ այն, մի գեղեցիկ օր արթնանում ենք և ի՞նչ ենք տեսնում: Մենք տեսնում ենք մի ինչ-որ անծանոթ կենդանի: Կենդանի, որի մասին անցյալում մենք երբեք ոչինչ չենք լսել: Մի կենդանի, որ իր երեխաներին գրպանում է պահում: Մի պահ ենթադրենք, որ ես էլ սկսեի երեխաներիս գրպանում պահել: Քանի՞ գրպան էր ինձ անհրաժեշտ:

– Տասնվեց, – ասաց Դեչիկը:

– Տասնյոթ կարծեմ... Այո՛, այո՛, – ասաց ճագարը, – և մեկն էլ թաշկինակի համար, ընդամենը տասնյոթ: Տասնութ գրպան մի կոստյումի վրա: Ես պարզապես կիսելագարվեի:

Այստեղ երեքն էլ լռեցին ու սկսեցին մտածել գրպանների մասին:

Վերջապես Թուխը, որ մի քանի րոպե շարունակ սոսկալի կնճռոտում էր ճակատը, ասաց.

– Իմ կարծիքով, տասնհինգ:

– Ի՞նչ, – հարցրեց ճագարը:

– Տասնհինգ պետք է լինեն:

– Ովքե՞ր:

– Զո երեխաները:

– Իսկ ի՞նչ է պատահել նրանց:

Թուխը տրորեց քիթն ու ասաց, որ իրեն թվացել է, թե ճագարն իր երեխաների մասին էր խոսում:

– Մի՞թե, – անփութորեն ասաց ճագարը:

– Այո, դու ասացիր...

– Դե լավ, Թուխ, թողնենք այդ, – անհամբերությամբ նկատեց Դնչիկը: – Հարցը սա է. ինչպե՞ս վարվենք Կենգուի հետ:

– Ա՛, հասկացա, – ասաց Թուխը:

– Ահա թե ինչ պետք է անենք, – ասաց ճագարը: – Մենք կգողանանք ճստիկ Ռուին ու կթաքցնենք, իսկ հետո, երբ Կենգուն հարցնի. «Որտե՞ղ է իմ ճստիկ Ռուն», մենք կասենք. «ՀԸ՛Մ»

– ՀԸ՛Մ, – որոշելով մարզվել, ասաց Թուխը: – ՀԸ՛Մ: ՀԸ՛Մ:

– Իմ կարծիքով, – քիչ հետո նկատեց նա, – առանց ճստիկ Ռուին գողանալու էլ մենք կարող ենք ասել «ՀԸ՛Մ»:

– Թուխ, – մեծամտորեն ասաց ճագարը, – իսկապես որ քո գլխում թեփ է լցված:

– Գիտեմ, – համեստորեն պատասխանեց Թուխը:

– Մենք այնպես կասենք «ՀԸ՛Մ», որպեսզի Կենգուն հասկանա, որ մենք գիտենք ճստիկ Ռուի տեղը: Այդ «ՀԸՄ»-ը կնշանակի. «Մենք քեզ կասենք, թե որտեղ ենք թաքցրել ճստիկ Ռուին, եթե խոստանաս, որ կգնաս մեր Անտառից ու այլևս չես վերադառնաս»: Իսկ հիմա լռեք, ես պիտի մտածեմ:

– Թուխը քաշվեց մի անկյուն և սկսեց սովորել այդպիսի «ՀԸ՛Մ» ասել: Երբեմն նրան թվում էր, որ ինքը կարողանում է ասել այնպիսի «ՀԸ՛Մ», ինչպիսին ճագարն էր ուզում, երբեմն էլ թվում էր, որ ոչ:

«Գաղտնիքը երևի փորձառության մեջ է, – մտածում էր նա: – Հետաքրքիր է, տեսնես Կենգուն էլ ստիպված կլինի՞ նույնքան մարզվել, որպեսզի հասկանա մեզ»:

– Ես մի բան եմ ուզում հարցնել, – քաշվելով ասաց Դնչիկը: – Ես խոսել եմ Քրիստոֆեր Ռոբինի հետ, և նա ինձ ասաց, որ Կենգուն համարվում է, այսպես ասած, Ամենակատաղի Գազաններից Մեկը: Ընդհանրապես ես չեմ վախենում սովորական կատաղի գազաններից, բայց հայտնի է, որ երբ Մեկ Ամենակատաղի Գազանը զրկվում է իր երեխայից, նա դառնում է նույնքան կատաղի, որքան Երկու Ամենակատաղի Գազանը: Եվ այդ դեպքում «ՀԸ՛Մ» ասելը, թերևս, հիմարություն է:

– Դնչիկ, – թթուելով մատիտի ծայրը, ասաց ճագարը, – դու սուսկալի վախկոտ ես:

Դնչիկը ֆսֆսացրեց քիթը:

– Դժվար է քաջ լինել, – ասաց նա, – երբ ընդամենը Շատ Փոքրիկ Արարած ես:

Ճագարը, որ արդեն սկսել էր գրել, բարձրացրեց գլուխն ու ասաց.

– Հենց դրա համար, որ դու Շատ Փոքրիկ Արարած ես, խիստ օգտակար ես լինելու մեր առաջիկա արկածի ժամանակ:

Դնչիկի ուրախությունը, որ ինքն օ գ տ ա կ ա ղ է լինելու, այնքան մեծ էր, որ նա մինչև անգամ մոռացավ իր վախը: Իսկ երբ ճագարն ասաց, որ Կենգունները կատաղի են լինում միայն ձմռան ամիսներին, իսկ տարվա մնացած ժամանակ բարեհոգի են, Դնչիկը հագիվ էր կարողանում նստել տեղում, այնքան որ շտապում էր օգտակար լինել:

– Իսկ ե՞ս – հարցրեց Թուխը: – Ուրեմն ես օգտակար չեմ լինելու՞:

– Մի տխրի, – շտապեց նրան մխիթարել մեծահոգի Դնչիկը: – Դու էլ երևի մի ուրիշ անգամ...

– Առանց Վինի-Թուխի, – մատիտը սրելով, հանդիսավորությամբ ասաց ճագարը, – մեր մտահղացումը գլուխ չի գա:

Դնչիկն ամեն կերպ աշխատեց թաքցնել իր հիասթափությունը, իսկ Թուխը նորից համեստորեն մի անկյուն քաշվեց: Բայց մտքում նա հպարտությամբ ասում էր. «Առանց ինձ ամեն ինչ անհնար է: Ա՛յ քեզ արջ»:

– Իսկ հիմա լսե՞ք ինձ, – ասաց ճագարը մատիտը ցած դնելով:

Թուխն ու Դնչիկը նստեցին ու պատրաստվեցին լսել: Նրանք նույնիսկ բացել էին բերանները:

Ահա թե ինչ կարողաց ճագարը.

ՃՍՏԻԿ ՌՈՒԻՆ ԱՌԵՎԱՆԳԵԼՈՒ ՊԼԱՆ

1. **Նախ և առաջ:** Կենգուն բոլորիցս արագ է վազում, նույնիսկ ինձնից արագ:

2. **Նորից նախ և առաջ:** Կենգուն երբեք-երբեք աչքը չի կտրում ճստիկ Ռուից, եթե վերջինս նրա գրպանում չէ, ու գրպանը մինչև վերջին կոճակը կոճկված չէ:
3. **Նշանակում է,** եթե մենք ուզում ենք առևանգել ճստիկ Ռուին, ապա պետք է ժամանակ շահենք, որովհետև Կենգուն բոլորիցս արագ է վազում, նույնիսկ ինձնից արագ (տե՛ս կետ 1):
4. **Գաղափար:** Եթե Ռուն դուրս ցատկի Կենգուի գրպանից, իսկ Դնչիկը ներս ցատկի, Կենգուի գրպանը, ապա Կենգուն տարբերությունը չի նկատի, որովհետև Դնչիկը Շատ Փոքրիկ Արարած է:
5. Ինչպես և ճստիկ Ռուն:
6. Բայց Կենգուն անապայման պետք է ուրիշ կողմ նայի, որպեսզի չնկատի, որ Դնչիկը ցատկում է իր գրպանը:
7. Տե՛ս կետ 2:
8. **Եվս մի գաղափար:** Եթե Թուխը սկսի Կենգուի հետ խոսել մեծ ոգևորությամբ, նա, երևի շրջվի:
9. Եվ այդ ժամանակ ես կկարողանամ փախցնել ճստիկ Ռուին:
10. Շատ արագ:
11. Եվ Կենգուն սկզբում ոչինչ չի նկատի, այլ կնկատի միայն հետո:

Ճագարը հպարտությամբ բարձրաձայն կարդաց այս բոլորը, և դրանից հետո երկար ժամանակ ոչ ոք ոչինչ չէր ասում: Վերջապես Դնչիկը, որ ամբողջ ժամանակ մերթ բացում, մերթ փակում էր բերանը, ընդ որում ոչ մի հնչյուն չարձակելով, կարողացավ չափազանց խռպոտ ձայնով ասել.

- Իսկ հետո՞:
- Էլ ի՞նչ հետո:
- Երբ Կենգուն կնկատի, որ ես Ռուն չեմ:
- Այդ ժամանակ մենք կասենք. «Յ Ը Մ»:
- Երեքո՞վ:
- Այո:
- Ճի՞շտ:
- Ի՞նչն է քեզ անհանգստացնում, Դնչիկ:
- Ոչինչ, – ասաց Դնչիկը: – Եթե երեքով ենք ասելու «Յ Ը Մ», ապա ամեն ինչ կարգին է: Եթե երեքով ենք ասելու «Յ Ը Մ», ապա ես դեմ չեմ: Բայց ես չեի ուզենա մենակ ասել «Յ Ը Մ»: Մեկ էլ տեսար այդ «Յ Ը Մ»-ը շատ վատ ստացվեց... Իմիջիայլոց, – շարունակեց նա, – դու լրիվ համոզվա՞ծ ես, ինչ ասում էիր ձմռան ամիսների մասին:
- Ի՞նչ ձմռան ամիսներ:
- Որ միայն ձմռան ամիսներին են կատաղի լինում:
- Ա՛խ, այո: Դե, իհարկե, ամեն ինչ ճիշտ է: Իսկ դու, Թուխ, հասկացե՞լ ես, թե ինչ ես անելու:
- Չէ, – ասաց արջուկ Թուխը, – ոչ բոլորովին: Իսկ ի՞նչ պիտի անեմ:
- Պիտի շարունակ խոսես ու խոսես Կենգուի հետ, որպեսզի նա ոչինչ չնկատի:
- Իսկ ինչի՞ մասին:
- Ինչի մասին ուզում ես:
- Գուցե նրա համար բանաստեղծություն արտասանեմ:
- Դա հենց այն է, ինչ պետք է մեզ, – ասաց ճագարը: – Հիանալի է: Դե, գնացի՞նք:

Եվ նրանք գնացին գտնելու Կենգուին:

Կենգուն և Ռուն հետճաշա հանգիստը անց էին կացնում ավազով լցված մեծ փոսի մոտ: Ճստիկ Ռուն ցատկ-բարձրության, երկարության և նույնիսկ ցատկ-խորության մարզումներ էր կատարում, սովորում էր ընկնել մկան բների մեջ և դուրս սողալ այնտեղից, իսկ Կենգուն հուզվում էր ու թոպեն մեկ կրկնում. «Դե, սիրելիս, մեկ անգամ էլ թռի՞ր ու տուն գնանք»: Հենց այդ պահին էլ բլուրի վրա երևաց ոչ այլ ոք, քան Թուխը:

- Բարի օր, Կենգո՛ւ, – ասաց նա:
- Բարի օր, Թո՛ւխ:
- Տես, թե ոնց եմ ցատկո՞ւմ, – ծվծվաց ճստիկ Ռուն և ընկավ հերթական մկան բնի մեջ:
- Ողջո՞ւյն, Ռու, ճստի՛կ:
- Մենք արդեն պատրաստվում էինք տուն գնալ... – ասաց Կենգուն: – Բարի օր, ճագար: Բարի օր, Դնչիկ:

ճագարը և Դնչիկը, որ այդ նույն պահին հայտնվեցին բլուրի մյուս կողմից, նույնպես ասացին «բարի օր» և «ողջույն, Ռու», իսկ ճաստիկ Ռուն հրավիրեց դիտելու, թե ինչպես է ինքը ցատկում...

Նրանք կանգնել ու դիտում էին, իսկ Կենգուն նայում էր ու նայում աչքերը չորս արած:

– Լսիր, Կենգու, – ասաց Թուխը, երբ ճագարը երկրորդ անգամ աչքով էր արել նրան, – հետաքրքիր է, դու բանաստեղծություն սիրո՞ւմ ես:

– Այնքան էլ չէ, – ասաց Կենգուն,

– Ափսո՛ւ, – ասաց Թուխը:

– Ռու, թանկագինս, մի վերջին անգամ էլ ցատկիր և գնանք, արդեն ուշ է:

Որոշ ժամանակ լռություն տիրեց: Ճաստիկ Ռուն ցատկեց հերթական մկան բնի մեջ:

– Դե, սկսի՛ր, սկսի՛ր, – բարձրաձայն փշշացրեց ճագարը, թաթով բերանը ծածկած:

Իմիջիայլոց, բանաստեղծությունների մասին, – շարունակեց Թուխը: – Քիչ առաջ ճանապարհին մի փոքրիկ բանաստեղծություն հորինեցի: Մոտավորապես այսպիսին: Ըըը... Մի րոպե...

– Այս բանաստեղծությունը թե՛ դուր կգա, – ասաց ճագարը:

– Դու անպայման կհավանես, – ծվծաց Դնչիկը:

– Միայն թե շատ-շատ ուշադիր լսիր, – ասաց ճագարը:

– Տես, ոչինչ բաց չթողնես, – ճղճղաց Դնչիկը:

– Այո, այո – ասաց Կենգուն: Բայց, ավա՛ղ, նա աչքը չէր հեռացնում ճաստիկ Ռուից:

– Դե, ինչպե՞ս էր քո բանաստեղծությունը, Թուխ, – հարցրեց ճագարը:

– Թուխը հազաց թաթի մեջ ու սկսեց

ԹԵՓՈՎ ԹՅՎԱԾ ԳԼՈՒԽ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՋՈՒԿԻ ՀՈՐԻՆԱԾ ՏՈՂԵՐ

Մոտ օրերս ոնց պատահեց,
Հյուր գնացի բարեկամիս
Ու ոնց եղավ, սիրտս ուզեց,
Ասել խոսել Դեսից Դենից:

Եվ պատմեցի, թե երբ ու Ով,
Եվ թե Ինչու, նաև Ինչից,
Ինչով, Որտեղ, Ինչ պատճառով
Եվ դեպի Ուր ու Որտեղից:

Ոնց էր Առաջ ու ոնց Հետո,
Եվ թե Ինչու եղավ Այդպես,
Իսկ եթե Ոչ, ապա Այո,
Ով Ում, Ինչ Ինչ, նաև Ինչպես:

Իսկ երբ բառ էր ինձ պակասում,
Ասում էի մեկ՝ «Վախ», մեկ՝ «Վայ»
«Այսպես ասած», «Առողջություն»
Իսկ երբեմն էլ՝ «Այ-այ-այ-այ»:

Երբ իմ խոսքը ավարտեցի,
Հարցրին. – Վե՛րջ: Միայն այդքա՞ն:
Մի ամբողջ ժամ դու խոսեցիր,
Չպատմելով ոչ այս, ո՛չ այն...

Այդ ժամանակ...

– Շահ՛տ, շատ լավն է, – ասաց Կենգուն, առանց հետաքրքրվելու թե ինչ եղավ այդ ժ ա մ ա ն ա կ : – Դե, վերջին, ամենավերջին անգամ ցատկիր, Ռո՛ւ, թանկագինս, և տուն գնանք:

Ճագարը արմունկով հրեց Թուխին:

– Իմիջիայլոց, բանաստեղծությունների մասին, – իսկույն ասաց Թուխը: – Դու երբևիցե ուշադրություն դարձրե՞լ ես այն ծառին, այ՛ն այնտեղ:

– Ո՞րտեղ... – ասաց Կենգուն: – Դե, փոքրիկս, բավական է:

– Այ այնտեղ, – ասաց Թուխը, մատը տնկելով հակառակ կողմը:

– Ոչ... – ասաց Կենգուն: – Ռու, թանկագինս, ցատկիր գրպանս ու տուն գնանք:

– Չէ, դու անպայման նայիր այդ ծառին, – ասաց ճագարը: – Ռու, ուզո՞ւմ ես քեզ բարձրացնեմ: – Եվ նա գրկեց Ռուին:

– Եվ այն մյուս ծառին ծիտիկ է նստած, – ասաց Թուխը: – Բայց գուցե դա ծո՞ւկ է:

– Ոչ, ծիտիկ է, – ասաց ճագարը, – եթե միայն, իհարկե, ձուկ չէ:

– Ձուկ չի՞, ծիտի՛կ է, – ճղճղած Դնչիկը:

– Այո, այո, այդպես էլ կա, – ասաց ճագարը:

– Չետաքրքիր է, դա սարյա՞կ է, թե՞ կեռնեխ, – ասաց Թուխը:

– Չարցն էլ հենց դա է, – ասաց ճագարը: – Սարյա՞կ է, թե: կեռնեխ:

Եվ այստեղ վերջապես Կենգուն շրջվեց:

Չենց որ շրջվեց, ճագարը հրամայեց բարձրաձայն.

– Ռո՛ւ, անցիր տե՛ղդ:

Ռուի փոխարեն Կենգուի գրպանը թռավ Դնչիկը, իսկ ճագարը Ռուին ամուր գրկած սլացավ հեռու:

– Այս ո՞ւր անհետացավ ճագարը, – հարցրեց Կենգուն, շրջվելով: – Դե, թանկագին փոքրիկս, ամեն ինչ կարգի՞ն է:

Կենգուի գրպանի խորքից Դնչիկն ինչ-որ բան ծվծվաց, ճիշտ և ճիշտ Ռուի նման:

– Ճագարը ստիպված եղավ գնալ, – ասաց Թուխը, – նա, երևի, հիշեց, որ շատ անհետաձգելի գործ ունի: Չանկարծ:

– Իսկ Դնչի՞կը:

– Երևի Դնչիկը նույնպես ինչ-որ բան հիշեց: Չանկարծ:

– Դե լավ, մենք գնացինք, – ասաց Կենգուն: – Չաջողություն եմ ցանկանում, Թո՛ւխ:

Մի բանի հսկայական ցատկեր, և նա անհետացավ:

Թուխը նայեց նրա հետևից:

«Երանի թե ես էլ կարողանայի այդպես ցատկել, – մտածեց նա: – Ինչո՞ւ ոմանք կարողանում են, իսկ ոմանք ոչ: Շատ, շատ ցավալի է»:

Կենգուն, իսկապես, հիանալի էր ցատկում, բայց Դնչիկը, մեր մեջ ասած, շատ կուզենար, որ նա չկարողանար ցատկել: Երբեմն, Անտառում կատարած հեռավոր զբոսանքներից տուն վերադառնալիս, Դնչիկը երագում էր ծիտիկ դառնալ ու թռչել, բայց հիմա, երբ նա կենգուի խոր գրպանում պատեպատ էր դիպչում, նրա գլխում այսպիսի մտքեր էին ցատկոտում.

կոչվում է չեմ

սա թռչել, երբեք համաձայնի

«Եթե ապա սովորել,

երբե՛ք»:

– Ըրըրըրը՛, – ասում էր նա, թռչելով վեր, իսկ ցած ընկնելիս ասում էր. – Չը՛...

Եվ նա ստիպված եղավ ամբողջ ճանապարհին կրկնել՝ «Ըրըրըրը՛ – հը՛», «Ըրըրըրը՛ – հը՛»- մինչև որ Կենգուն տուն հասավ:

Տուն հասնելուն պես Կենգուն բացեց գրպանը և իհարկե, անմիջապես հասկացավ, թե ինչ է կատարվել: Սկզբում նա շատ վախեցավ, բայց հետո մտածեց, որ անհանգստանալու կարիք չկա, որովհետև համոզված էր, որ Քրիստոֆեր Ռոբինը ոչ մեկին թույլ չի տա նեղացնել իր ճստիկին:

«Դե լավ, – մտքում ասաց նա, – տեսնեմ, թե ով ում գլխին օյին կխաղա»:

– Դե, Ռո՛ւ, թանկագի՛նս, – ասաց նա, գրպանից հանելով խոճկորին, – քնելուդ ժամանակն է:
– Զը՛մ, – ասաց Դնչիկը, աշխատելով որքան հնարավոր է լավ արտասանել այդ բառը: Բայց, ավա՛րդ, այդպիսի սոսկալի ճանապարհորդությունից հետո «հըմ»-ը այնքան էլ հաջող չստացվեց, և երևի դրա համար էլ Կենգուն չհասկացավ, թե ինչ է նշանակում:
– Բայց նախ կլողանաս, – ուրախ-ուրախ ասաց Կենգուն:
– Զը՛մ, – անհանգիստ կրկնեց Դնչիկը, հայացքով որոնելով մյուսներին:
Բայց մյուսները չէին երևում: Ճագարը տանը նստած խաղում էր ճստիկ Ռուկի հետ, զգալով, որ քանի գնում, այնքան ավելի շատ է սիրում նրան, իսկ Թուխը, որ որոշել էր Կենգու դառնալ, ավագով լցված փոսի մեջ դեռևս ցատկել էր սովորում:
– Զգիտեմ, – մտախոհ ասաց Կենգուն, – գուցե այսօր դու սառը ջրո՞վ լողանաս: Ի՞նչ ես կարծում, Ռու, թանկագի՛նս:
Դնչիկը, որ երբեք էլ առանձնապես լողանալ չէր սիրել ոչ տաք, ոչ էլ սառը ջրով վրդովմունքից դողաց և հուսահատ քաջությամբ ասաց.
– Կենգու: Ես տեսնում եմ, որ արդեն անկեղծ խոսելու ժամանակն է:
– Ի՛նչ ծիծաղելին ես, Ռու, – ասաց Կենգուն, տաշտի մեջ ջուր լցնելով:
– Ես Ռուն չեմ, – բարձր ասաց Դնչիկը: – Ես Դնչի՛կն եմ:
– Այո, թանկագի՛նս, այո, – քնքշանքով ասաց Կենգուն: – Ոչ ոք հետո չի վիճում... Ի՛նչ էլ խելացին է, կարողանում է Դնչիկի ձայնով խոսել, – քթամնջաց նա, թարեքից մի մեծ կտոր դեղին օճառ վերցնելով: – Դե, էլ ինչ նոր բան կհնարե՞ս:
– Դու ինչ է, չե՞ս տեսնում, – գոռաց Դնչիկը: – Աչք չունես ի՛նչ է: Լա՛վ նայիր:
– Ես նայում եմ, իմ փոքրի՛կ Ռու, – բավականին խստորեն ասաց Կենգուն: – Իսկ դու հիշո՞ւմ ես ես ինչ էի քեզ ասում ծամածռությունների մասին: Եթե դու էլի նման ծամածռություններ անես, ապա երբ մեծանաս, կնմանվես Դնչիկին և շատ-շատ կափսոսաս: Իսկ հիմա մտիր տաշտը և մի՛ ստիպիր որ նորից կրկնեմ: Եվ Դնչիկը ուշքի չէր եկել, երբ հայտնվեց տաշտի մեջ, իսկ Կենգուն սկսեց ամբողջ ուժով տրորել նրան մեծ ու փրչոտ ճիլոպով:
– Վա՛յ, – ճչում էր Դնչիկը, – բաց թող ինձ: Ես Դնչիկն եմ:
– Բերանդ փակիր, թանկագի՛նս, թե չէ օճառ կլցվի, – ասաց Կենգուն: – Տեսա՞ր, որ ասում էի:
– Դու... դու այդ դիտմամբ արեցի՛ր, – բլթբլթացրեց Դնչիկը, երբ վերջապես նորից կարողացավ խոսել...
Բայց այս անգամ էլ նրա բերանում հայտնվեց ճիլոպը:
– Այ այդպես, թանկագի՛նս, լռիր, – ասաց Կենգուն:
Քիչ հետո Կենգուն Դնչիկին հանեց տաշտից ու փաթաթեց խավոտ սրբիչի մեջ:
– Իսկ հիմա, – ասաց Կենգուն, – պառկելուց առաջ դեղ կխմես:
– Ի՞-ի-ինչ դդեղ, – կմկմաց Դնչիկը:
– Ձկան չուղ, թանկագի՛նս, որպեսզի մեծ ու ուժեղ դառնաս: Թե չէ կմնաս Դնչիկի նման փոքրիկ ու թույլ:
Այդ պահին ինչ-որ մեկը թակեց դուռը:
– Մտե՛ք – ասաց Կենգուն:
Եվ ներս մտավ Քրիստոֆեր Ռոբինը:
– Քրիստոֆեր Ռոբին, Քրիստոֆեր Ռոբին, – հեկեկաց Դնչիկը: – Ասա Կենգուին թե ես ով եմ: Նա ասում է, թե ես Ռուն եմ, ճի՞շտ է:
Քրիստոֆեր Ռոբինը ուշադիր զննեց նրան ու գլուխն օրորեց:
– Իհարկե, դու Ռուն չես, – ասաց նա, – որովհետև Ռուին ես քիչ առաջ տեսա ճագարի տանը: Նրանք այնտեղ խաղում են:
– Այ քեզ բա՛ն, – ասաց Կենգուն: – Մի տե՛ս, է: Եվ ոնց կարող էի այդպես սխալվել:
– Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, – ասաց Դնչիկը: – Ի՛նչ էի ասում: Ես Դնչիկն եմ:
Քրիստոֆեր Ռոբինը նորից օրորեց գլուխը:
– Չէ, դու Դնչիկը չես, – ասաց նա: – Ես Դնչիկին շատ լավ եմ ճանաչում: Նա բոլորովին ուրիշ գույն ունի:
«Դա նրանից է, որ ես հենց նոր լողացա», – ուզում էր ասել Դնչիկը, բայց հասցրեց գլխի ընկնել, որ այդ բանը, թերևս, չարժի ասել: Բայց նա հագիվ էր բերանը բացել, պատրաստվելով ասել ուրիշ բան, երբ կենգուն

առանց ժամանակ կորցնելու մի մեծ գդալ դեղ լցրեց նրա բերանը, թփթփացնելով մեջքին ու ասաց, որ ձկան յուղը շա՛տ, շատ համեղ է, միայն պետք է ինչպես հարկն է ընտելանալ դրան:

– Ես գիտեի, որ սա Դնչիկը չէ, – քիչ հետո ասաց Կենգուն: – Չետաքրքիր է, ո՞վ կարող է լինել:

– Գուցե Թուխի ազգականների՞ց է, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Ասենք եղբորորդին կամ մորեղբայրը:

– Չավանորեն, հավանորեն, – համաձայնեց Կենգուն: – Միայն թե նրան պետք է որևէ անուն տալ:

– Կարող ենք նրան Թուխիկ անվանել, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Օրինակ, Չենրի Թուխիկ: Կրճատ ձևով:

Բայց հազիվ էր նոր անուն ստացել, երբ Չենրի Թուխիկը դուրս պրծավ Կենգուի գրկից ու ցած թռավ: Նրա բախտից Զրիստոֆեր Ռոբինը դուռը բաց էր թողել:

Իր ամբողջ կյանքում Չենրի Թուխիկ-Դնչիկը երբեք այդքան արագ չէր վազել, ինչպես հիմա: Նա սլանում էր մի վայրկյան անգամ կանգ չառնելով: Միայն իր տնից մի հարյուր քայլի վրա նա դադարեցրեց վազքն ու թավալ տվեց գետնին, որպեսզի վերստանա իր սեփական գույնը, իր սիրելի, հարմար ու սովորական գույնը...

Ահա այսպես Կենգուն և ճստիկ Ռուն մնացին Անտառում: Չիմա ամեն երեքշաբթի ճստիկ Ռուն ամբողջ օրով հյուր է գնում իր նոր բարեկամի՝ ճագարի մոտ, Կենգուն ամբողջ օրը իր նոր բարեկամին՝ Թուխին, ցատկել է սովորեցնում, իսկ Դնչիկը երեքշաբթին անց է կացնում իր հին բարեկամի՝ Զրիստոֆեր Ռոբինի հետ:

Եվ բոլորն էլ չափազանց ուրախ են:



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Որտեղ Քրիստոֆեր Ռոբինը «Արշավախում» է կապմակերպում դեպի Հյուսիսային Բևեռ

Վինի-Թուխը ծուլորեն քարշ էր գալիս Անտառում, պատրաստվելով այցելել իր բարեկամ Քրիստոֆեր Ռոբինին, իմանալու, արդյոք նա չի մոռացել, որ աշխարհում արջեր գոյություն ունեն: Առավոտյան նախաճաշի ժամանակ (իսկ նախաճաշը շատ համեստ էր՝ մեղրահացի վրա քսված մի քիչ մարմելադ), Թուխի գլխում հանկարծ մի նոր երգ (Աղմուկիկ) հնչեց: Երգն այսպես էր սկսվում. «Ինչ լավ է արջ լինելը, ուռա՛: Այս տողը հորինելուց հետո նա քորեց գլուխն ու մտքի մեջ ընկավ. «Սկիզբը պարզապես սքանչելի է, բայց որտեղի՞ց գտնեմ երկրորդ տողը»:

Նա փորձեց «ուռան» կրկնել երկու, նույնիսկ երեք անգամ, բայց դա, չգիտես ինչու, չէր օգնում: «Գուցե լավ կլինի, – մտածեց նա, – երգեմ «Ինչ լավ է արջ լինելը, օհո՛»: Եվ նա երգեց «օհո»: Բայց, ավաղ, գործը դարձյալ առաջ չէր գնում: «Դե լավ, – ասաց նա, – առաջին տողը ես կերգեմ երկու անգամ և գուցե, եթե շատ արագ երգեմ, ինքս էլ այդ չնկատելով, հասնեմ երրորդ ու չորրորդ տողերին, և այդ ժամանակ շատ լավ Աղմուկիկ կստացվի: Հապա մի փորձեմ»:

Ինչ լավ է արջ լինելը, ուռա՛,
 Ինչ լավ է արջ լինելը, ուռա՛:
 Ինձ չի վախենա...
 (Ո՛չ, չի վախեցնի:)
 Ինձ չի վախեցնի ոչ ցուրտ, ոչ էլ տոթ,
 Եթե թաթերս լինեն միշտ մեղրո՛տ:
 Ինձ չի վախեցնի...
 (Ո՛չ, չեմ վախենա:)
 Կտանեմ ամեն մի աղետ,
 Միայն թաթերս լինեն մեղրի հետ:
 Ուռա՛, Վինի-Թուխ:
 Ուռա՛, Վինի-Թուխ:
 Ժամերը կթռչեն ծիտիկի նման,
 Եվ ճաշի ժամը կգա անպայման:

Նրան այս երգը (Աղմուկիկը), չգիտես ինչու, այնքան դուր եկավ, որ երգում էր ամբողջ ճանապարհին: «Բայց եթե շարունակեմ այսպես անընդհատ երգել, — հանկարծ մտածեց նա, — կգա ճաշելու ժամը, և այդ դեպքում վերջին տողը սխալ կլինի»: Դրա համար էլ նա իր երգը սկսեց մոմռացնել առանց բառերի:

Քրիստոֆեր Ռոբինը նստած էր իր տան շեմին ու Երկարաճիտ Կոշիկներն էր հագնում: Հագիվ էր Թուխը տեսել Երկարաճիտ Կոշիկները, երբ անմիջապես հասկացավ, որ Արկած է սպասվում: Նա դնչից թափ տվեց մեղրի մնացորդները և ինչքան կարող էր ձգվեց, որպեսզի ցույց տա, որ ինքը պատրաստ է ամեն ինչի:

— Բարի լույս, Քրիստոֆեր Ռոբին, — կանչեց նա:

— Ողջույն, Թո՛ւխ: Ոչ մի կերպ չեմ կարողանում այս Կոշիկը հագնել:

— Դա վատ նշան է, — ասաց Թուխը:

— Դու, խնդրում եմ, հենվիր մեջքիս, թե չէ մեկ էլ տեսար այնքան ուժեղ քաշեցի, որ գլուխկոնծի կտամ:

Թուխը նստեց և ամուր, ինչքան ուժ ուներ, թաթերը հենեց գետնին, իսկ ինքը ինչքան ուժ ուներ հենվեց Քրիստոֆեր Ռոբինի մեջքին, իսկ Քրիստոֆեր Ռոբինը ինչքան ուժ ուներ հենվեց Թուխի մեջքին և սկսեց քաշել իր Կոշիկը, մինչև որ հագավ:

— Ահա, այսպես, — ասաց Թուխը: — Իսկ հիմա ի՞նչ ենք անելու:

— Արշավախումբ ենք կազմակերպում, — ասաց Քրիստոֆեր Ռոբինը, ոտքի կանգնելով ու թափ տալով իրեն:

— Շնորհակալություն, Թո՛ւխ:

— Արշավախո՞ւմ, — հետաքրքրությամբ հարցրեց Թուխը: — Ոչ մի անգամ ոչ մեկին չեմ տեսել: Իսկ նա որտե՞ղ է, այդ արշավախումբը:

— Արշավախումբ, իմ հիմա՛ր արջուկ: Ոչ թե «խումբ», այլ «խումբ»:

— Ա-ա՛, — ասաց Թուխը, — հասկանում եմ:

Մեր մեջ ասած, նա ոչինչ չէր հասկացել:

— Մենք պետք է փնտրենք ու հայտնագործենք Հյուսիսային Բևեռը:

— Ա-ա՛, — նորից ասաց Թուխը: — Իսկ ի՞նչ բան է Հյուսիսային Բևեռը, — հարցրեց նա:

— Մի այնպիսի բան է, որ հայտնագործում են, — անփութորեն պատասխանեց Քրիստոֆեր Ռոբինը, որ ինքն էլ այնքան լավ չգիտեր, թե դա ինչ բան է:

— Ա-ա՛, հասկանում եմ, — ասաց Թուխը: — Իսկ արջերը օգնո՞ւմ են նրան հայտնագործել:

— Իհարկե օգնում են: Ճագարը, Կենգուռն, մյուսները նույնպես: Ախր սա արշավախումբ է: Գիտես ի՞նչ է նշանակում արշավախումբ, բոլորը գնում են իրար հետևից, իծաշարով... Դու լավ կանես հայտնես մյուսներին որ հավաքվեն, մինչև մաքրեմ հրացանս: Հետո չպետք է մոռանանք պարեն վերցնել:

— Պարերը ո՞նց վերցնենք:

— Ոչ թե պարեր, այլ ուտելու բան:

— Ա-ա՛ — ուրախ ասաց Թուխը: — Իսկ ինձ թվաց, դու ինչ-որ պարերի մասին ես խոսում: Որ այդպես է գնամ բոլորին ասեմ:

Եվ նա ճանապարհ ընկավ:

Առաջինը նա հանդիպեց ճագարին:

— Բարև, ճագար, — ասաց Թուխը: — Այդ դո՞ւ ես:

— Արի խաղանք, իբր այդ ես չեմ, — ասաց ճագարը: — Տեսնենք ինչ կստացվի:

— Ես քեզ հանձնարարություն պիտի տամ:

— Լավ, կհայտնեմ ճագարին:

— Մենք Քրիստոֆեր Ռոբինի հետ արշավախումբ ենք կազմակերպում:

— Ճագարն անպայման կմասնակցի:

— Ճագար, խնդրում եմ, ես ժամանակ չունեմ, — ասաց Թուխը: — Գլխավորը, որ մենք չպետք է մոռանանք, դա պար... պար... Մի խոսքով, չպետք է մոռանանք ուտելու բան վերցնել: Թե չէ մեկ էլ տեսար սովածացանք:

Հիմա ես կգնամ Դնչիկի մոտ, իսկ դու հայտնիր Կենգուռին, լա՛վ:

Նա հրաժեշտ տվեց ճագարին ու վազեց Դնչիկի տան ուղղությամբ:

Դնչիկը գետնին նստած՝ երեքնուկի թերթիկներով գուշակում էր. սիրում է, չի սիրում, սիրում է, չի սիրում:

Դուրս եկավ, որ չի սիրում, և նա հիմա փորձում էր հիշել, թե ում համար էր գուշակում, հուսալով որ դա Թուխը չէ: Հենց այդ պահին էլ երևաց Վինի-Թուխը:

– Յէ՛յ, Դնչի՛կ, – հուզված ասաց Թուխը: – Մենք արշավախում ենք կազմակերպում, բոլորս: Եվ չպետք է մոռանանք վերցնել պար... Ուտելու բան: Մենք պետք է ինչ-որ բան հայտնագործենք:

– Ի՞նչ, – վախեցած հարցրեց Դնչիկը:

– Չգիտեմ, ինչ-որ բան:

– Չար բա՛ն:

– Զրիստոֆեր Ռոբինը չարության մասին ոչինչ չասաց: Նա միայն ասաց, որ այնտեղ «խումբ» կա:

– Կուղբից ես չեմ վախենում, – շատ լուրջ ասաց Դնչիկը: – Ես վախենում եմ միայն գայլերից, բայց եթե Զրիստոֆեր Ռոբինը գալիս է մեզ հետ, այդ դեպքում ես ընդհանրապես ոչ մի բանից չեմ վախենում:

Շատ չանցած բոլորը հավաքվեցին, և արշավախումբը պատրաստ էր: Առջևից գնում էր Զրիստոֆեր Ռոբինը, ապա ճագարը, նրա հետևից՝ Դնչիկն ու Թուխը, հետո Կենգուն՝ ճստիկ Ռոկի հետ, և Բուն, ապա Իան, իսկ ամենավերջում երկար շղթա կազմած գալիս էին ճագարի բոլոր Ազգականներն ու ճանոթները:

– Ես նրանց չեմ հրավիրել, – անփութորեն բացատրում էր ճագարը, – պարզապես իրենք են եկել: Նրանք միշտ այդպես են: Նրանք մեզ չեն խանգարի, կարող են գալ վերջից, Իայից հետո:

– Ես կուզենայի ասել, – ասաց Իան, – որ դա նյարդերիս վրա ազդում է: Ես ընդհանրապես մտադիր էլ չէի մասնակցել այս արագախումբին... կամ էլ, ինչպես Թուխն ասաց: Ինձ միայն պարտքի զգացումն է բերել: Այնուհանդերձ ես այստեղ եմ և եթե պետք է վերջից քայլեմ այս արագախումբի... հուսով եմ, հասկանում եք, թե ինչի մասին է խոսքս, ապա թող ես էլ լինեմ վերջում: Բայց եթե ամեն անգամ, երբ ուզենամ նստել ու հանգստանալ, ստիպված պիտի լինեմ ինձ համար տեղ մաքրել այս ողջ խաժամուժից՝ ճագարի Ազգականներից ու ճանոթներից, ապա սա կլինի ոչ թե արագախումբ կամ ինչպես դա անվանում են, այլ պարզապես իրարանցում ու քաշքշուկ: Ահա թե ինչ ես կուզենայի ասել:

– Ես հասկանում եմ, թե ինչ նկատի ունի Իան, – ասաց Բուն: – Եթե հարցնեք ինձ...

– Ես երբեք չեմ հարցնում, – ասաց Իան: – Ես, ընդհակառակը, բացատրում եմ բոլորին: Ուզում եք Հյուսիսային Բևեռ փնտրեք, ուզում եք պահմտոցի խաղացեք: Ես առարկություն չունեմ: Այդ պահին շարասյան առջևից լսվեց Զրիստոֆեր Ռոբինի ձայնը.

– Առա՛ջ, առա՛ջ:

– Առա՛ջ, – գոռացին Թուխն ու Դնչիկը:

– Առա՛ջ, – գոռաց Բուն:

– Շարվեցի՛նք, – ասաց ճագարը: – Ես պետք է վազեմ: – Եվ նա սլացավ շարասյան գլուխը՝ Զրիստոֆեր Ռոբինի մոտ:

Այսպես սկսվեց արշավը դեպի Բևեռ: Ճանապարհին բոլորը շատախոսում էին դեսից դենից: Միայն Թուխն էր լուռ, նա երգ էր հորինում:

– Ահա, և առաջին քառատողը, – ասաց նա Դնչիկին, երբ քառատողը պատրաստ էր:

– Ինչի՞ առաջին քառատողը:

– Իմ երգի:

– Ո՞ր երգի:

– Հենց այս մեկի:

– Ո՞ր մեկի:

– Եթե լսես, կիմանաս:

– Իսկ դու որտեղի՞ց գիտես, որ ես չեմ լսում:

Այս անգամ Թուխը չիմացավ ինչ պատասխանի, ուստի սկսեց երգել.

Մենք կազմել ենք ԱՐՇԱՎԱԽՈՒՄ,
Եվ ելել ենք արշավի՝
Դնչիկը, Բուն, Կենգուն և Ռուն
Եվ ողջ ցեղը ճագարի:

ԱՐՇԱՎԱԽՈՒՄԸ կքայլի
Ամբողջ օրը Անտառում,
ԱՐՇԱՎԱԽՈՒՄԸ Բևեռի

Ճանապարհներն է փնտրում:

ԱՐՇԱՎԱԽՈՒՄՈՒՄ բոլորը
Շատ կուզեին իմանալ,
Թե ինչ բան է այդ Բևեռը,
Եվ ինչով են ուտում այն:

- Սը՛սս, – շրջվելով դեպի Թուխը, ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Մենք մոտենում ենք վտանգավոր վայրի:
- Սը՛սս, – արագ շրջվելով դեպի խոզուկը, ասաց Թուխը:
- Սը՛սս, – ասաց Դնչիկը Կենգուին:
- Սը՛սս, – ասաց Կենգուն Բուին, իսկ ճատիկ Ռուն մի քանի անգամ ինքն իրեն «սըսս» ասաց:
- Սը՛սս, – շրջվելով դեպի Իան, ասաց Բուն:
- Սո՛ւս, – սարսափելի ձայնով ասաց Իան ճագարի բոլոր Ազգականներին ու Ծանոթներին, և նրանք սկսեցին շտապ-շտապ մեկը մյուսին «սըսս» ասել, մինչև որ հասան ամենավերջինին: Իսկ ամենավերջինը՝ ամենափոքրիկ Ազգականն ու Ծանոթը, կարծելով, որ ամբողջ արշավախումբը իրեն «սըսս» է ասում, այնպես վախեցավ, որ անմիջապես թաղվեց հողի մեջ ու երկու օր գլխիվայր նստեց այնտեղ, մինչև որ համոզվեց, որ վտանգը վերջնականապես անցել է: Հետո նա շտապեց տուն:
- Արշավախումբը մոտեցավ գետակին, որն ուրախ պատվում և գլուխկոնծի էր տալիս բարձր, քարակոփ ափերի մեջ, և Քրիստոֆեր Ռոբինը անմիջապես գնահատեց իրադրությունը:
- Դարանակալելու համար սա շատ հարմար տեղ է, – ասաց նա:
- Ի՞նչն է թփակալել, – Դնչիկի ականջին շնչաց Թուխը: – Գուցե մորի՞ն:
- Իմ սիրելի Թո՛ւխ, – հովանավորող տեսքով ասաց Բուն, – մի՞թե դու չգիտես նույնիսկ, թե ի՞նչ է նշանակում դարանակալ:
- Բու, – խիստ նայելով նրան, ասաց Դնչիկը, – Թուխը փսփսում էր ինձ հետ, և դու շատ ես...
- Դարանակալելը, – ասաց Բուն, – դա անակնկալի պես մի բան է:
- Երբեմն մորին նույնպես, – ասաց Թուխը:
- Դարանակալելը, ինչպես ես պատրաստվում էի բացատրել Թուխին, – ասաց Դնչիկը, – դա անակնկալի պես բան է:
- Երբ քեզ հանկարծակիի եմ բերում, դա կոչվում է դարանակալել, – ասաց Բուն:
- Դարանակալել, Թուխ, կոչվում է այն, երբ քեզ հանկարծակիի են բերում, – բացատրեց Դնչիկը:
- Թուխը, որ արդեն գիտեր, թե ինչ բան է դարանակալելը, ասաց, որ մի անգամ մորու թուփն իրեն հանկարծակիի բերեց, երբ ինքը՝ Թուխը, ընկնում էր ծառից, և դրանից հետո մի ամբողջ շաբաթ փշեր էր հանում իր վրայից:
- Ոչ ոք մորու մասին չի խոսել, – բավականին զայրացած ասաց Բուն:
- Ո՞նց թե, ես եմ խոսել, – զարմացավ Թուխը:
- Նրանք զգուշորեն քայլում էին ափով, ճանապարհ փնտրելով ժայռերի ու քարերի միջով, և շուտով հասան այնտեղ, ուր ափը լայն էր և աննկատելիորեն կանաչ ու հարթ մարգագետին էր դառնում, որտեղ իսկույն ուզում էիր նստել ու հանգստանալ: Եվ հենց նրանք հասան այդտեղ, Քրիստոֆեր Ռոբինը հրամայեց՝ «Կանգ առ», և բոլորը նստեցին հանգստանալու:
- Իմ կարծիքով, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – մենք պետք է ուտենք մեր ամբողջ պարենը, որպեսզի հեշտ լինի առաջ շարժվել:
- Ուտենք մեր ամբողջ ի՞նչը, – հարցրեց Թուխը:
- Ամբողջը, ինչ որ բերել ենք, – ասաց Դնչիկը գործի անցնելով:
- Լավ միտք է, – ասաց Թուխը և նույնպես գործի անցավ:
- Բոլորը, ինձնից բացի, – ասաց Իան: – Ինչպես մի՞շտ: – Նա տխուր շուրջը նայեց. – Հետաքրքիր է, որևէ մեկը պատահաբար տատասկափշի վրա չի՞ նստել:
- Կարծես թե ես եմ նստել, – ասաց Թուխը: – Վա՛յ: – Նա վեր թռավ: – Այո, ես էի նստել: Ես զգում էի:
- Շնորհակալություն, Թուխ: Եթե դա քեզ այլևս հարկավոր չի, ապա, խնդրում եմ... – Եվ Իան անցավ Թուխի տեղն ու սկսեց ուտել:

– Իմիջիայլոց, տատասկափուշը ամենևին էլ չի շահում դրանից, երբ նրա վրա նստում են, – խոսեց Իան, մի պահ պտտվելով իր ճաշից: – Նա կորցնում է թարմությունը: Չի շահեցրեք այդ, բարեկամներս: Չի խանգարի, որ մի փոքր ուշադրություն ցուցաբերեք ընկերոջ նկատմամբ: Չարկավոր է երբեմն էլ ուրիշների մասին մտածել, այ թե ինչ եմ ուզում ասել:

Յենց որ Զրիստոֆեր Ռոբինը իր նախաճաշն ավարտեց, ինչ-որ բան շնչաց ճագարի ականջին, իսկ ճագարը ասաց՝ «Այո, այո, իհարկե», և նրանք առանձնացան:

– Չուզեցի բոլորի ներկայությամբ խոսել, – սկսեց Զրիստոֆեր Ռոբինը:

– Չասկանալի է, – ասաց ճագարը, հպարտությունից փքվելով:

– Բանն այն է... ուզում եմ ասել... դե չէ, երևի դու էլ չգիտես... Չետաքթիր է, ի՞նչ տեսք ունի այդ Չյուսիսային Բևեռը:

– Դե, – բեղերը ցցելով, ասաց ճագարը, – հարկավոր էր ավելի շուտ հարցնել:

– Ես առաջ գիտեի, բայց կարծես մոռացել եմ, – անփութորեն ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

– Տարօրինակ զուգադիպություն է, – ասաց ճագարը, – կարծես թե ես էլ եմ մոռացել, թեև առաջ, իհարկե, գիտեի:

– Իմ կարծիքով, այնտեղով անցնում է հողազևի առանցքը: Այն, երևի հողի մեջ է խրված: Ճի՞շտ է:

– Իհարկե, այնտեղ կա առանցք, և, իհարկե, այն խրված է հողի մեջ, որովհետև խրելու ուրիշ տեղ չկա, բացի այդ, առանցքը հենց այդպես էլ կոչվում է՝ «հողի»:

– Ես էլ եմ այդպես կարծում:

– Չարցը դա չի, – ասաց ճագարը: Չարցը սա է, որտե՞ղ է այդ առանցքը:

– Դա մենք շուտով կիմանանք, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

Նրանք մոտեցան արշավախմբի մյուս անդամներին: Դնչիկը պառկել էր խոտերին և անուշ խոմփացնում էր. Ռուն լվացվում էր գետակում, և Կենգուն հպարտությամբ բացատրում էր բոլորին ու յուրաքանչյուրին առանձին-առանձին, որ Ռուն կյանքում առաջին անգամ ինքնուրույն է լվացվում, իսկ Բուն Կենգունին հետաքրքիր պատմություն էր պատմում, որ լիքն էր երկար բառերով՝ «Չանրագիտարան», «Բուսաբանություն» և այլն, թեև Կենգուն մտադիր էլ չէր լսել նրան:

– Չեմ խրախուսում այդ հագար ու մի տեսակ լվացումները, – փնթփնթում էր Իան, – հատկապես ականջների հետևը լվանալու այդ նոր սովորությունը: Իսկ դո՞ւ, Թուխ:

– Դե, – ասաց Թուխը, – իմ կարծիքով...

Բայց երբեք էլ չենք իմանա Թուխի կարծիքը, որովհետև այդ պահին լսվեց ճողփյուն, ապա Ռուի ծվծվոցն ու Կենգուի վախեցած ճիչը:

– Ռուն ընկավ ջո՛ւրը – գոռաց ճագարը:

– Ահա լվացվելու վերջը, – ասաց Իան-Իան:

Զրիստոֆեր Ռոբինն ու Թուխը օգնության նետվեցին:

– Տեսեք, թե ոնց եմ լողում, – ծվծվում էր Ռուն: Նա արդեն գետակի կենտրոնում էր, և հոսանքը նրան արագ բշում էր դեպի ամբարտակի ջրվեժը:

– Ռու, թանկագինս, դու ո՞րջ ես, – ճչում էր Կենգուն:

– Այո, – պատասխանում էր Ռուն: – Տես, թե ոնց եմ լող... Բըլթ, բըլթ, բըլթ... – Եվ նա կրկին ջրի երես դուրս եկավ արդեն ավելի ներքևում:

Ամեն մեկը, ով ինչպես կարող էր, աշխատում էր օգնել:

Քնից լրիվ արթնացած Դնչիկը թռչկոտում էր տեղում ու ճչում. «Վայ, վայ». Բուն բացատրում էր, որ անսպասելիորեն ջրում հայտնվելու դեպքում ամենից կարևոր է գլուխը ջրից դուրս պահել. Կենգուն վիթխարի ցատկերով սլանում էր ափի երկարությամբ, չմոռանալով հարցնել. «Ռու, թանկագինս, դու իսկապես ո՞րջ ես», իսկ Ռուն պատասխանում էր. «Տես, թե ոնց եմ լողում... Բըլթ, բըլթ...». Իան նստեց ափին, այնտեղ որտեղից Ռուն ընկել էր, ու պոչը ջրի մեջ կախեց: Մեջքը մյուսներին արած, նա կրկնում էր. «Եվ ահա այս ամենը լվացվելու պատճառով. բայց դու միայն բռնիր պոչիցս, Ռու, և ամեն ինչ կարգին կլինի»: Իսկ Զրիստոֆեր Ռոբինն ու ճագարը հետ ու առաջ վազում, կանչելով մյուսներին:

– Ռու, դիմացիր, մենք գալիս ենք, – գոռում էր Զրիստոֆեր Ռոբինը:

– Չե՛յ, դուք, մի բան արեք, ինչ էք կանգնել, – հրամայում էր ճագարը:

Եվ միայն Թուխը օգտակար բան արեց: Նա մի երկար ձող վերցրեց ու կամուրջի պես զգեց գետի վրա: Կենդուն անմիջապես ցատկեց մյուս ափը, բռնեց մյուս ծայրից, և նրանք երկուսով ձողը իջեցրին ջրի մոտ: Եվ քիչ հետո Ռուն, որ շարունակում էր ուրախ բլթթթաջնել. «Տեսե՞ք, թե ոնց եմ լողում», բռնեց ձողից ու ափ ելավ:

Մինչ Կենդուն չորացնում էր նրան, Ռուն հրճվանքով ծղրտում էր.

– Դուք տեսա՞ք, թե ես ո՞նց էի լողում: Թո՛ւխ, դու տեսա՞ր, թե ես ոնց էի լողում: Ա՛յ, սա լողալ էր: Ճագա՛ր, դու տեսա՞ր, թե ես ինչ էի անում: Ես լողո՞ւմ էի: Քրիստոֆեր Ռոբին՛ն, դու տեսա՞ր, թե ես ոնց էի...

Բայց Քրիստոֆեր Ռոբինը չէր լսում, նա նայում էր Թուխին:

– Թուխ, – ասաց նա, – որտեղի՞ց ես գտել այդ առանցքը:

Թուխը նայեց փայտե ձողին, որը դեռ չէր զգել ձեռքից:

– Պարզապես գտել եմ, – ասաց նա: – Մի՞թե սա առանցք է: Ես կարծում էի, որ սա պարզապես փայտե ձող է և կարող է պետք գալ: Սա այնտեղ ընկած էր, ես էլ վերցրի:

– Թուխ, – հանդիսավոր ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – մեր արշավը ավարտված է: Դա Զողազնդի առանցքն է: Մենք գտել ենք Զյուսիսային Բևեռը:

– Ա՛խ, իսկապե՞ս, – ասաց Թուխը:

Երբ բոլորը հավաքվեցին մարգագետնում, Իան դեռ նստած էր, պոչը ջրի մեջ կախած:

– Թող ձեզից մեկնումեկը շտապեցնի Ռուին, – ասաց նա: – Պոչս սառել է: Ես չեմ գանգատվում, ես պարզապես արձանագրում եմ փաստը: Իմ պոչը սառել է:

– Ես այստեղ եմ, – ծղրտաց Ռուն:

– Ահա թե ի՞նչ:

– Դու տեսա՞ր, թե ես ոնց էի լողում:

Իան պոչը հանեց ջրից ու թափահարեց:

– Ես այսպես էլ կարծում էի, – ասաց նա: – Ոչինչ չի զգում: Փայտացել է: Ահա թե ուր հասանք: Նա փայտացել է: Ի՞նչ արած, եթե դա ոչ ոքի չի անհանգստացնում, նշանակում է, այդպես էլ պետք է լինի՛:

– Իմ խեղճ իշուկ: Ես հիմա կչորացնեմ պոչդ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: Նա հանեց թաշկինակը և սկսեց չորացնել Իայի պոչը:

– Շնորհակալություն, Քրիստոֆեր Ռոբին: Դու այստեղ միակն ես, որ պոչից բան է հասկանում: Մնացածներն ընդունակ չեն մտածելու: Ահա թե որն է նրանց դժբախտությունը: Նրանք երևակայություն չունեն: Պոչը նրանց համար պոչ չի, այլ ողնաշարի հավելյալ մաս:

– Մի տխրիր, Իա, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, ամբողջ ուժով շփելով նրա պոչը: – Զիմա լա՛վ ես զգում:

– Այո, թերևս: Այսպես նա իրեն պոչ է զգում: Չգում է, որ պատկանում է տիրոջը: Եթե դու հասկանում ես, թե ինչ եմ ուզում ասել:

– Ողջույն, Իա, – ասաց Թուխը, առանցքը թաթերի մեջ մոտ գալով:

Շնորհակալություն, Թուխ: Շնորհակալություն ուշադրության համար: Ես կարծում եմ, որ մեկ-երկու օրից կկարողանամ ինչպես պետքն է տիրապետել նրան:

– Ինչի՞ն տիրապետել, – հարցրեց Թուխը:

– Նրան, ինչի մասին խոսում էինք:

– Բայց ես ոչ մի բանի մասին չեմ խոսել, – տարակուսած ասաց Թուխը:

– Նշանակում է ես նորից սխալվեցի: Իսկ ինձ թվում էր, դու ասացիր, որ քեզ շատ է վշտացնում պոչիս պատմությունը, և հարցրեցիր, թե ինչո՞վ կարող ես ինձ օգնել:

– Չէ, – անկեղծորեն խոստովանեց Թուխը: – Այդ ես չեմ եղել: Երևի, մեկ ուրիշն է ասել:

– Դե ինչ արած, այդ դեպքում, երբ հանդիպես նրան, շնորհակալություն հայտնիր իմ կողմից:

Թուխը շփոթված Քրիստոֆեր Ռոբինին նայեց:

– Թուխը գտել է Զյուսիսային Բևեռը, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Զոյակապ է, չէ՞: Ահա Զողազնդի առանցքը:

Թուխը համեստորեն կախեց աչքերը:

– Սա՞ է, – հարցրեց Իան:

– Այո, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը:

– Ուրեմն, մենք այս ձո՞ղն էինք փնտրում:

– Այո, – ասաց Թուխը:

– Հըմ, – ասաց Իա-Իան: – Դե, ինչ արած: Համենայն դեպս, այսօր անձրև չեկավ, – ավելացրեց Նա:

Նրանք առանցքը տնկեցին գետնին, իսկ Քրիստոֆեր Ռոբինը նրա վրա մի տախտակ ամրացրեց, հետևյալ մակագրությամբ.

**ՀՅՈՒՄԻՍԱԱՅԻՆ ԲԵՎԵՌ
ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵԼ Է ԹՈՒԽՆԸ
ԹՈ՛ՒՆԸ ԳՏԱՎ**

Հետո բոլորը գնացին իրենց տները: Եվ, իմ կարծիքով, թեև ես դրանում այնքան էլ համոզված չեմ, ճստիկ Ռուն ստիպված եղավ տաք լոգանք ընդունել և անմիջապես պառկել քնելու: Իսկ Թուխն այնքան հպարտ էր իր սխրանքով, որ հարկադրված էր հիմնավորապես լցնել փորը:



ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Որտեղ Դնչիկը ամբողջությամբ շրջապատված է ջրով:

Անձրևը գալիս էր, գալիս ու գալիս: Դնչիկը ասաց ինքը իրեն, որ երբեք իր ողջ կյանքում, իսկ նա չափազանց մեծ էր՝ գուցե երեք, իսկ գուցե նույնիսկ չորս տարեկան, որ երբեք միանգամից այսքան անձրև չի տեսել: Իսկ անձրևը գալիս էր, գալիս էր ու գալիս: Առավոտից մինչև երեկո: Օր-օրի հետևից:

«Այ, եթե, — մտածում էր Դնչիկը, նայելով պատուհանից, — ես հյուր լինեի Թուխի կամ Քրիստոֆեր Ռոբինի, կամ թեկուզ ճագարի մոտ, երբ անձրևը սկսվեց, հիմա ինչքա՛ն ուրախ ժամանակ կանցկացնեի: Թե չէ՛ նստիր մեն-մենակ ու մտածիր, թե երբ է անձրևը կտրվելու»:

Եվ նա պատկերացրեց, որ հյուր է Թուխի տանը և ասում է նրան. «Դու երբևիցե տեսե՞լ ես այսպիսի անձրև», իսկ Թուխը պատասխանում է. «Նույնիսկ սարսափելի է մտածել»: Կամ ինքը՝ Դնչիկը ասում է. «Չետաքթիր է, հո չի ողողել Քրիստոֆեր Ռոբինի տան ճանապարհը», իսկ Թուխը պատասխանում է. «Իսկ խեղճ ծերունկ ճագարը երևի փախել է տնից»:

Այսպիսի գրույցը, ինչ խոսք, մեծ բավականություն է:

Եվ իսկապես, ումն է պետք այդպիսի քրիեղեղը, եթե կողքիդ չկա մեկը, որի հետ կարողանաս խոսել:

Իսկ որ շատ հետաքրքիր էր, ոչ մի կասկած չէր կարող լինել: Փոքրիկ չորացած առվակները, որոնցով Դնչիկն այնքան հաճախ քայլում էր, դարձել էին առու. առուները, որոնց մեջ նա երբեմն չփչփացնում էր շալվարը բարձրացրած, վերածվել էին գետակների. իսկ գետակը, որի ափերին բարեկամներն ուրախ խաղեր էին կազմակերպում, դուրս էր եկել իր մահճից՝ հունից (այսպես են անվանում գետակի անկողինը), և այնքան լայն էր տարածվել, որ Դնչիկն սկսել էր անհանգստանալ՝ արդյոք չի հասնի և իր սեփական մահճին (այսինքն՝ իր անկողնուն):

«Այդ մի քիչ սարսափելի է լինել Շատ Փոքրիկ Արարած՝ ամբողջովին շրջապատված ջրով, — ասաց նա ինքն իրեն: — Քրիստոֆեր Ռոբինը և Թուխը կարող են փրկվել ծառը բարձրանալով, Կենգուռն մեծ-մեծ ցատկերով հեռու կալանա և նույնիսկ կփրկվի, ճագարը կարող է փրկվել, թաքնվելով գետնի տակ, Բուն կարող է թռչել, իսկ Իան կարող է փրկվել... ըըը... եթե սկսի բարձր գոռալ, մինչև որ գան ու փրկեն նրան: Իսկ ես նստած եմ այստեղ, բոլոր կողմերից շրջապատված ջրով և բոլորովին-բոլորովին ոչինչ չեմ կարող անել»:

Անձրևը շարունակում էր թափվել, և օրեցօր ջուրը քիչ-քիչ բարձրանում էր, և ահա համարյա հասավ պատուհանին, իսկ Դնչիկը դեռ ոչինչ չէր արել:

Եվ հանկարծ նա հիշեց մի պատմություն, որը նրան Քրիստոֆեր Ռոբինն էր պատմել, պատմություն անմարդաբնակ կղզի ընկած մարդու մասին, որն ինչ-որ բան էր գրել թղթի կտորի վրա, դրել շշի մեջ, իսկ շիշը

ծովը գցել, և Ղևշիկը մտածեց, որ եթե ինչ-որ բան գրի թղթի կտորի վրա, դևի շիջ մեջ, իսկ շիջը ջուրը գցի, ապա գուցե ինչ-որ մեկը գա ու իրեն փրկի:

Նա տակնուվրա արեց ամբողջ տունը, ավելի ճիշտ, այն բոլորը, ինչ դեռ չոր էր մնացել, և, վերջապես, գտավ մի չոր մատիտ, չոր թղթի մի կտոր, չոր շիջ ու չոր խցան և թղթի մի երեսին գրեց.

Օգնեցե՛ք

Ղևշիկին (այդ ես եմ)

Իսկ մյուս երեսին գրեց.

Այդ ես եմ, Ղևշիկը
օգնեցե՛ք, փրկեցե՛ք

Յետո՛ւ նա թուղթը շիջ մեջ դրեց, որքան կարող էր ամուր փակեց բերանը, որքան կարող էր կախվեց պատուհանից, բայց այնքան, որ հանկարծ չընկնի, և որքան կարող էր շիջը շարտեց հեռու:

– Չլո՛մփ, – ասաց շիջը և օրորվեց ալիքների վրա:

Ղևշիկը հետևում էր, թե ինչպես է շիջը լողում, մինչև որ նրա աչքերը սկսեցին ցավել, և նրան մեկ թվում էր, որ դա շիջ է, մեկ էլ թվում էր, որ պարզապես ալիքի ծփանք է, և, վերջապես, նա հասկացավ, որ այլևս երբեք չի տեսնելու իր շիջը և, որ ինքն արել է այն ամենը, ինչ կարող էր անել իր փրկության համար:

«Նշանակում է, հիմա արդեն մեկ ուրիշը պետք է ինչ-որ բան անի: Ես հույս ունեմ, որ նա այդ արագ կանի, որովհետև հակառակ դեպքում ես հարկադրված կլինեմ լողալ, իսկ ես լողալ չգիտեմ»: Այստեղ նա շատ խորը հառաչեց ու ասաց.

– Կուզենայի հիմա Թուփն այստեղ լիներ, երկուսով շատ ավելի ուրախ է:

Երբ անձրևը սկսվեց, Վինի-Թուփը քնած էր: Անձրևը գալիս էր ու գալիս, իսկ նա քնում էր, ու քնում: Նախորդ օրը նա շատ էր հոգնել: Եթե հիշում եք, նա գտել էր Յուսիսային Բևեռը և այնքան էր հպարտանում դրանով, որ Քրիստոֆեր Ռոբինին հարցրեց, չկա՞ն արդյոք ուրիշ Բևեռներ, որոնք գլխում թեփ ունեցող Արջը կարող է հայտնագործել:

«Կա նաև Յարավային Բևեռ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – և, իմ կարծիքով, ինչ-որ տեղ պետք է լինեն նաև Արևելյան Բևեռն ու Արևմտյան Բևեռը, թեև մարդիկ նրանց մասին, չգիտես ինչու, չեն սիրում խոսել»:

Այդ լուրը չափազանց հուզեց Թուփին, և նա առաջարկեց առանց ժամանակ կորցնելու Արշավախումբ կազմակերպել դեպի Արևելյան Բևեռ: Բայց Քրիստոֆեր Ռոբինը ինչ-որ գործ ուներ Կենգուի հետ, այնպես որ Թուփը մենակ գնաց գտնելու Արևելյան Բևեռը: Յայտնագործեց նա այդ Բևեռը, թե ոչ, մոռացել էմ, բայց նա տուն վերադարձավ այնքան հոգնած, որ քնեց ընթրիքի ամենալավ պահին, սեղան նստելուց ընդամենը ինչ-որ կես ժամ հետո: Եվ ահա Թուփը քնել էր ու մտադիր էլ չէր արթնանալ: Վերջապես նա երագ տեսավ, որ ինքը՝ Թուփը, Արևելյան Բևեռում է, և որ դա շատ ցուրտ Բևեռ է, ամբողջովին ծածկված ամենասառը տեսակի ձյունով ու սառույցով: Թուփը մեղվի փեթակ գտավ և պառնեց քնելու, բայց փեթակում հետևի թաթերի համար տեղ չկար, ու ստիպված եղավ դրանք դրսում թողնել: Եվ հանկարծ, որտեղից որտեղ եկան Արևելյան Բևեռում ապրող Վայրի Բոբոները և սկսեցին Թուփի թաթերի բուրդը պոկոտել, որպեսզի փափուկ բներ պատրաստեն իրենց ձագերի համար, և որքան բուրդը պակասում էր, ոտքերն այնքան շատ էին սառչում: Եվ վերջապես Թուփը գոռալով արթնացավ ու տեսավ, որ նստած է այժմին, իսկ ոտքերը ջրի մեջ են և չորս կողմը նույնպես ջուր է:

Նա մոտեցավ դռանն ու դուրս նայեց...

– Դրությունը լուրջ է, – ասաց Թուփը, – պետք է փրկվել:

Նա գրկեց մեղրի ամենամեծ կճուճը և փրկվեց, բարձրանալով մի հաստ, շատ հաստ ճյուղի վրա, որը ջրից շատ բարձր էր:

Յետո՛ւ նա ցած իջավ ու այս անգամ փրկվեց մեկ այլ կճուճի հետ:

Երբ բոլոր փրկարար գործողությունները ավարտվեցին, ճյուղի վրա նստած էր Թուփը և ոտքերն էր ճոճում, իսկ նրա կողքին շարված էին մեղրի տասը կճուճներ:

Յաջորդ օրը ճյուղին նստած էր Թուփը և ոտքերն էր ճոճում, իսկ նրա կողքին շարված էին մեղրի չորս կճուճներ:

Երրորդ օրը ճյուղին նստած էր Թուփը և ոտքերն էր ճոճում, իսկ նրա կողքին մեղրի միայն մի կճուճ կար:

Չորրորդ օրը Թուփը նստած էր ճյուղի վրա բոլորովին մեն-մենակ:

Յենց այդ առավոտյան էլ Դնչիկի շիշը լողաց Թուխի մոտով:

Կոկորդով մեկ «Մե՛ղր, մե՛ղր» գոռալով՝ Թուխը ջուրը նետվեց, հասավ շշին ու կրծքին սեղմած՝ քաջաբար վերադարձավ ծառի մոտ և կրկին մագլցեց ճյուղին:

– Ափսո՛ւ, ափսո՛ւ, – ասաց Թուխը, շիշը բացելուց հետո, – իզուր թրջվեցի... Սա ի՞նչ բան է, այս թուղթն ի՞նչ գործ ունի շշի մեջ:

Նա թուղթը հանեց ու պահեց աչքերի առաջ:

– Սա Գուրուբոյուն է, – ասաց նա, – այո-այո-այո՛: Եվ երևի շատ կարևոր, քանի որ ուղղված է ինձ: Գուրուբոյուն ինձ համար, իսկ ես չեմ կարող իմանալ, թե ինչ է այնտեղ գրված: Հարկավոր է գտնել Քրիստոֆեր Ռոբինին կամ Բուին, կամ էլ Դնչիկին, մի խոսքով, մեկնումեկին, որ կարողանում է կարդալ այս բոլոր բառերը, և նա ինձ կասի, թե ինչ է գրված այստեղ: Ափսոս լողալ չգիտեմ, շա՛տ ափսոս:

Եվ հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց, որը ես գլուխը թեփ լցրած Արջի համար շատ լավն են համարում: Թուխը ասաց ինքն իրեն.

«Եթե շիշը կարողանում է լողալ, ուրեմն, կճուճն էլ կլողա, իսկ եթե կճուճը լողաց, ես կարող եմ նստել նրա վրա, եթե իհարկե, դա լինի շատ մեծ կճուճ»:

Նա վերցրեց ամենամեծ կճուճը և բերանը ամուր կապեց:

– Բոլոր նավերը անուն ունեն, – ասաց նա, – ուրեմն, իմ նավը նույնպես անուն պետք է ունենա: Իմ նավը կանվանեմ «Լողացող Արջ»:

Այս ասելով, նա իր նավը զգեց ջրի մեջ, իսկ ինքը թռավ վրան:

Որոշ ժամանակ Թուխն ու «Լողացող Արջը» ոչ մի կերպ համաձայնության չէին գալիս, թե իրենցից ով պետք է վերևում լինի, և ով ներքևում: Բայց ի վերջո համաձայնվեցին՝ «Լողացող Արջը» մնաց ներքևում, իսկ նրան հեծած Թուխը աշխուժորեն թիավարում էր ոտքերով:

Քրիստոֆեր Ռոբինն ապրում էր Անտառի ամենաբարձր մասում: Անձրևը թափվում էր, թափվում ու թափվում, բայց ջուրը չէր կարողանում մոտենալ նրա տանը: Քրիստոֆեր Ռոբինը, թերևս, հաճույթով կնայեր ներքևում բացված այդ տեսարանին, բայց անձրևն այնքան ուժեղ էր, որ նա գրեթե ամբողջ ժամանակ նստած էր տանը և մտածում էր ամենատարբեր բաների մասին: Ամեն առավոտ նա դուրս էր գալիս (իհարկե անձրևանոցով) և մի փայտիկ էր խրում այնտեղ, ուր հասել էր ջուրը, իսկ հաջորդ առավոտյան փայտիկն արդեն ծածկված էր լինում ջրով, այնպես որ նա ստիպված էր լինում նոր փայտիկ տնկել, իսկ տան ճանապարհը կարճանում էր ու կարճանում: Հինգերորդ օրվա առավոտյան նա հասկացավ, որ կյանքում առաջին անգամ ապրում է իսկական կղզու վրա: Դա, իհարկե, չափազանց հրաշալի բան էր:

Յենց նույն առավոտյան էլ թռավ եկավ Բուին, իմանալու, թե ինչպես է ապրում իր բարեկամ Քրիստոֆեր Ռոբինը:

– Լսիր, Բու, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – իսկական հրաշք է: Ես ապրում եմ կղզու վրա:

– Մթնոլորտային պայմանները վերջին օրերին իրոք ոչ անբարենպաստ էին, – ասաց Բուին:

– Ի՞նչ, ի՞նչ:

– Անձրև էր գալիս, – բացատրեց Բուին:

– Այո, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – գալիս էր:

– Կարարման մակարդակն աննախընթաց չափով բարձր է:

– Ո՞վ:

– Ասում եմ՝ չորս կողմը լիքը ջուր է, – բացատրեց Բուին:

– Այո, – համաձայնեց Քրիստոֆեր Ռոբինը, – ջուրը շատ է:

– Սակայն հեռանկարները բավականին նպաստավոր են: Կանխատեսումները ցույց են տալիս...

– Դու Թուխին տեսե՞լ ես:

– Ոչ: Կանխատեսումները...

– Հույս ունեմ, որ նա ողջ և առողջ է, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Ես մի քիչ անհանգստանում եմ նրա համար: Հետաքրքիր է, Դնչիկը նրա մո՞տ է, թե՞ ոչ: Ի՞նչ ես կարծում, Բու, ամեն ինչ կարգի՞ն է:

– Կարծում եմ, որ կարգին է: Հասկանում ես, կանխատեսումները...

– Գիտես ի՞նչ, Բու, գնա իմացիր, ինչ վիճակում են նրանք: Թուխի գլխում թեփ է, մեկ էլ տեսար որևէ հիմարություն արեց, իսկ ես նրան շատ եմ սիրում: Հասկանո՞ւմ ես:

– Շատ լավ, – ասաց Բուին: – Ես ուղևորվում եմ: Իսկույնս եթե կվերադառնամ: – Եվ նա թռավ:

Շատ չանցած վերադարձավ:

– Թուխն այնտեղ չի, – ասաց նա:

– Այնտեղ չի՞:

– Եղել է: Նա նստած է եղել ճյուղի վրա, ինը կճուճների հետ: Բայց հիմա այլևս այնտեղ չէ:

– Թուխ, սիրելիս, – գոռաց Զրիստոֆեր Ռոբինը, – որտե՞ղ ես դու:

– Այստե՞ղ եմ, – նրա հետևից պատասխանեց ինչ-որ մեկի փնթփնթան ձայնը:

– Թո՛ւխ:

– Եվ նրանք իրար գիրկ նետվեցին:

– Ինչպե՞ս այստեղ ընկար, Թո՛ւխ, – հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը, երբ նորից կարողացավ խոսել:

– Նավով, – հպարտ պատասխանեց Թուխը: – Ես շփ միջոցով մի շատ կարևոր Գուրություն ստացա, բայց քանի որ աչքիս մեջ ջուր էր թռել ես չկարողացա կարդալ, իմ նավով բերեցի քեզ:

Այս փթույն խոսքերից հետո նա գրությունը հանձնեց Զրիստոֆեր Ռոբինին:

– Սա հո Ռեչիկից է, – բացականչեց Զրիստոֆեր Ռոբինը, գրությունը կարդալուց հետո:

– Իսկ Թուխի մասին այդտեղ ոչինչ չի՞ գրված, – Զրիստոֆեր Ռոբինի ուսի վրայից նայելով, հարցրեց Թուխը: Զրիստոֆեր Ռոբինը բարձրաձայն կարդաց գրությունը:

– Իսկ ես կարծում էի Գուրությունը ինձ է ուղղված, – ասաց Թուխը փոքր-ինչ ափսոսանքով:

– Պետք է փրկել Ռեչիկին: Կարծում էի քեզ հետ կլինի, Թուխ: Բու, դու նրան կարո՞ղ ես շալակել:

– Չեմ կարծում, – երկար մտորումներից հետո պատասխանեց Բուն: – Կասկածելի է, որ մեջքի մկանային համակարգը ի վիճակի լինի...

– Որ այդպես է, թռիչք նրա մոտ ու ասա, որ օգնությունը մոտենում է, իսկ ես ու Թուխը մինչ այդ կմտածենք, թե ինչպես կարելի է նրան փրկել և հենց կարողացանք, կգանք: Միայն թե, Բու, աստծու սիրուն, մի խոսիր, թռիչք շուտ:

Ու դեռևս մտածելով այն մասին, ինչ ինքն էր ուզում ասել, Բուն թռավ:

– Դե, Թուխ, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը, – որտե՞ղ է քո նավը:

– Պետք է ասեմ, – ճանապարհին բացատրում էր Թուխը Զրիստոֆեր Ռոբինին, – որ դա այնքան էլ սովորական նավ չի: Երբեմն դա նավ է, իսկ երբեմն էլ դժբախտ պատահարի պես մի բան: Նայած թե...

– Նայած թե ի՞նչ:

– Նայած թե որտեղ եմ ես՝ վերևում, թե ներքևում: Նրա վրա, թե նրա տակ:

– Իսկ որտե՞ղ է:

– Ահա, – ասաց Թուխը, մատնացույց անելով «Լողացող Արջը»:

Այո, դա այն նավը չէր, որ Զրիստոֆեր Ռոբինը պատրաստվում էր տեսնել:

Եվ որքան շատ էր նա նայում «Լողացող Արջին», այնքան ավելի շատ էր մտածում, թե ինչպիսի քաջ ու խելացի արջ է Վինի-Թուխը, և որքան շատ էր նա այդ մասին մտածում, այնքան ավելի համեստորեն էր Թուխը գետնին նայում, փորձելով ցույց չտալ, որ դա ինքն է:

– Սա շատ փոքր է երկուսիս համար, – տխուր ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

– Երեքիս համար, Ռեչիկին էլ հաշված:

– Ուրեմն, շատ ավելի փոքր է: Վինի-Թո՛ւխ, ասա, ի՞նչ անենք:

Եվ այստեղ այդ արջուկը՝ Վինի-Թուխը, Դ. Բ. (Ռեչիկի Բարեկամը), Ճ. Ը. (Ճագարի Ընկերը), Բ. Յ. (Բևեռը հայտնագործողը), Ի. Մ. և Պ. Գ. (Իա-Իային Մխիթարողը և Պոչը Գտնողը), մի խոսքով, մեր Վինի-Թուխը, մի այնպիսի իմաստուն բան ասաց, որ Զրիստոֆեր Ռոբինը կարողացավ միայն աչքերը չռել ու բացուխուսի անել բերանը, չհասկանալով, մի՞ թե սա զուխը թեփ լցրած այն նույն Արջն է, որին ինքը գիտե ու սիրում է այնքան վաղուց:

– Մենք կնավարկենք քո հովանոցով, – ասաց Թուխը:

– Ի՞նչ:

– Մենք կնավարկենք քո հովանոցով, – ասաց Թուխը:

– Ի՞նչ:

– Մենք կնավարկենք քո հովանոցով, – ասաց Թուխը:

– Թո՛ւխ:

Այո, Զրիստոֆեր Ռոբինը հանկարծ հասկացավ, որ դա հնարավոր է: Նա բացեց իր անձրևանոցը և իջեցրեց ջրի վրա: Անձրևանոցը լողաց, բայց սաստիկ ճոճվում էր: Թուխը նստեց նրա մեջ: Նա արդեն ուզում էր ասել, որ ամեն ինչ կարգին է, երբ զգաց, որ ոչ ամենը, և կարճատև լողանք ընդունելուց հետո, իր նոր նավը հետևից քաշելով, ծանծաղուտով վերադարձավ Զրիստոֆեր Ռոբինի մոտ: Այս անգամ նստեցին երկուսով և հովանոցն այլևս չճոճվեց:

– Այս նավը մենք կանվանենք «Թուխի Իմաստություն», – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

Եվ «Թուխի Իմաստությունը» առազաստները բացած լողաց դեպի հարավ-արևելք, ժամանակ առ ժամանակ սահուն պատվելով իր շուրջը:

Պատկերացրեք, թե որքան ուրախացավ Դևիլը, երբ վերջապես տեսավ նավը: Տարիներ հետո էլ նա սիրում էր մտածել, որ շատ մեծ վտանգի մեջ էր այդ սարսափելի ջրհեղեղի ժամանակ, բայց միակ վտանգը իրեն սպառնում էր բանտարկության վերջին կես ժամում, երբ Բուն ճյուղին թառած, բարոյապես իրեն ոգևորելու համար, մի երկար պատմություն էր սկսել իր Մորաթրոջ մասին, որը մի անգամ սխալմամբ սագի ձու էր ածել, և այդ պատմությունը ձգվում էր ու ձգվում (ճիշտ այս նախադասության նման), մինչև որ Դևիլը, որ Բուն լսելու համար նայում էր պատուհանից և, հույսը կորցրած, որ իրեն կփրկեն, սկսել էր նիրհել և, բնականաբար, կամաց-կամաց ցած էր սահում, բայց, բարեբախտաբար, ճիշտ այն պահին, երբ արդեն միայն հետևի կճղակներից էր կախվել, Բուն բարձր գոռաց՝ ներկայացնելով Մորաթրոջ սարսափը, և նրա ճիչը, երբ նա (Մորաթրոյը) տեսել էր, որ ձուն իսկապես սագի է, և Դևիլն արթնացավ, հասցրեց իրեն ներս գցել ու ասել. «Մխ, ի՞նչ հետաքրքիր է: Ի՞նչ ես ասում», մի խոսքով, դուք կարող եք պատկերացնել նրա ուրախությունը, երբ նա տեսավ «Թուխի Իմաստություն» նավը (Նավապետ – Զ. Ռոբին, 1-ին օգնական – Վ. Թուխ), որ գալիս էր փրկելու իրեն, իսկ Զ. Ռոբինը և Վ. Թուխը իրենց հերթին...

Բայց պատմությունն այստեղ փաստորեն ավարտվում է, իսկ ես այնպես եմ հոգնել վերջին նախադասությունից, որ նույնպես դեմ չեի լինի վերջացնել, բայց ոչ մի կերպ չեմ կարող չպատմել, թե ինչ եղավ հետո:

Որովհետև հետո, երբ չորս կողմը չորացավ, և Անտառի բոլոր առվակները նորից փոքրիկ ու լավ դարձան, և խաղաղ ու քնկոտ ջրափոսերի ջուրը կարոտով վերհիշում էր այն սխրանքները, որ ինքն էր արել, Զրիստոֆեր Ռոբինը իր բարեկամ Վինի-Թուխի պատվին և այն Փառավոր Գործի պատվին, որ նա՝ Վինի-Թուխն էր արել, Յանդիսավոր Երեկո կազմակերպեց:

Սքանչելի երեկո էր: Անտառում մի երկար, շատ երկար սեղան էին բացել, և մի Նախագահական տեղում սեղանի ծայրին, նստել էր Զրիստոֆեր Ռոբինը, իսկ մյուս Նախագահական տեղում՝ սեղանի մյուս ծայրին, նստել էի ինքը՝ Վինի-Թուխը, իսկ մնացած տեղերում նստած էին Յուրերը. Դևիլը, Ճագարը, Կենգուրու և Ռուն, Բուն և Իան: Իսկ շուրջը խոտերի վրա տեղավորվել էին Ճագարի Ազգականներն ու Ծանոթները՝ բոլոր տեսակների ու չափերի (սկսած նրանցից, որոնք պատահաբար երբեմն ոտքի տակ էին ընկնում, և վերջացրած նրանցով, որոնք երբեմն, նույնպես պատահաբար, ձեր աչքն էին ընկնում), և սպասում էին, որ Յուրերից մեկնումեկը կխոսի իրենց հետ կամ ինչ-որ բան վայր կզցի, կամ թեկուզ կհարցնի, թե ժամը քանիսն է:

Եվ, իհարկե, բոլորն էլ փառավորապես հյուրասիրվեցին, իսկ Զրիստոֆեր Ռոբինը վերջում Գովասանական ճառ ասաց նրա պատվին, ով Մեծ Գործ էր կատարել, և ասաց, որ նրա համար՝ այդ գործը կատարողի համար, Մեծ Նվեր է պատրաստել:

Բայց քանի որ նա չասաց, թե ով է կատարել այդ Փառավոր Գործը, մտածելով, որ առանց այդ էլ բոլորը գիտեն, ապա Իա-Իան այդ ամբողջ Յանդիսավոր Արարողությունը վերագրեց իրեն: Իր սխալը խեղճ իշուկը հասկացավ միայն այն ժամանակ, երբ Նվերը (մեծ, շատ գեղեցիկ տուփը) հանձնվեց նրան, ով իսկապես կատարել էր այդ Գործը, այսինքն՝ Վինի-Թուխին:

Վինի-Թուխն ընդունեց Նվերը և ասաց «շնորհակալություն», իսկ մնացածները խմբվել էին նրա շուրջը և իրար հերթ չտալով բացակասչում էին.

– Շուտ բաց արա՛:

– Ի՞նչ կա մեջը:

– Իսկ ես գիտեմ, թե մեջն ինչ կա՛:

Իսկ երբ Վինի-Թուխը բացեց տուփը (թեև նա շտապում էր, բայց չկտրեց ժապավենը, այլ արձակեց՝ մեկ էլ տեսար, մի օր պետք եկավ), բոլորը ախ քաշեցին, իսկ ինքը՝ Թուխը, ուրախությունից քիչ էր մնում գետին ընկներ:

Որովհետև պարզվեց, որ դա գունավոր մատիտների սթանչեյի տուփ է:

Տուփի մեջ փոքրիկ Մեքենա կար մատիտները սրելու համար և Կարմիր Ռետին կար, որը շատ լավ ջնջում է այն բոլորը, ինչ դուք սխալ եք գրել, հետո Քանոն կար, և Կապույտ Մատիտներ, և Կարմիր Մատիտներ, և Նույնիսկ Կանաչ ու Կարմրա-Կապույտ Մատիտներ, ինչպիսիք մեծերի մոտ են լինում:

Եվ այդ բոլորը Թուխինն էր:

Իմ կարծիքով, նա միանգամայն արժանի էր դրան:

Իսկ դուք ի՞նչ եք կարծում:



ՎԼՈՒՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

որտեղ Թուխի սոճուտում տուն են կառուցում Իա-Իայի համար

Մի անգամ, երբ Վինի-Թուխը բոլորովին անգործ էր, մտածեց, որ լավ կլիներ, եթե այնուամենայնիվ, զբաղվեր մի բանով: Եվ ահա նա որոշեց գնալ Դնչիկի մոտ ու տեսնել, թե ինչով է զբաղված Դնչիկը: Ձյուն էր գալիս, և Վինի-Թուխը քարշ էր գալիս անտառային սպիտակ արահետով ու մտածում, որ Դնչիկը հիմա կրակի մոտ ոտքերն է տաքացնում: Բայց որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ տեսավ, որ Դնչիկի տան դուռը բաց է, և որքան շատ էր ներս նայում, այնքան համոզվում էր, որ Դնչիկը տանը չէ:

– Նա գնացել է տնից, – տխուր ասաց Թուխը, – ահա թե ինչ է եղել: Ահա թե ինչու նա տանը չի: Հիմա մենակ պիտի զբոսնեմ ու ինքս որոշեմ ամեն ինչ: Ափսո՛ս-ափսո՛ս:

Բայց նախքան գնալը նա որոշեց համոզվելու համար, այնուամենայնիվ, բարձր-բարձր թռկել դուռը... Եվ սպասելով, որ Դնչիկը չի պատասխանի, նա թռչկոտում էր տեղում, որպեսզի տաքանա, երբ հանկարծ նրա գլխում Աղմուկ հնչեց, և դա Վինի-Թուխին թվաց լավ Աղմուկ, որը, թերևս, ձեզնից շատերին նույնպես դուր գա:

Քայլում եմ ե՛ս
(Տիրլիմ-բոմ-բո՛մ),
Եվ ձյունը ինձ
(Տիրլիմ-բոմ-բո՛մ)
Չի վախեցնում
Ծածկում է նա իմ հետքե՛րը:
Բայց ասացե՛ք
(Տիրլիմ-բոմ-բո՛մ),
Բայց ասացե՛ք,
(Տիրլիմ-բոմ-բո՛մ)
Ինչի՞ց է, որ
Սառչում են իմ ոտքե՛րը:

– Հիմա ես ահա թե ինչ կանեմ, – ասաց Թուխը: – Կանեմ այսպես. պարզապես նախ տուն կգնամ և կնայեմ, թե ժամը քանիսն է, և զուգե տաք վզնոց վերցնեմ, իսկ հետո այցելեմ Իային ու երգեմ նրան այս Աղմուկիկը:

Վինին վազեց տուն և ճանապարհին այնպես էր զբաղված իր Աղմուկիկով, որը Իային երգելուց առաջ հարկավոր էր մի լավ հղկել, որ երբ հանկարծ իր առջև տեսավ Դնչիկին՝ նստած իր ամենափափուկ բազկաթոռում, կարողացավ միայն գլուխը քորել և ընկնել մտորումների մեջ. արդյոք ո՞ւմ տանն է ինքը գտնվում:

– Վա՛յ, Դնչի՛կ, – վերջապես ասաց նա, – իսկ ես կարծում էի դու տանը չես:

– Ոչ, – ասաց Դնչիկը, – այդ դո՛ւ տանը չէիր:

– Թերևս դու ճիշտ ես, – ասաց Թուխը, – համենայն դեպս մեզնից մեկը տանը չէ:

Եվ նայեց ժամացույցին, որ արդեն երրորդ շաբաթն էր, ինչ ցույց էր տալիս տասնմեկին հինգ րոպե պակաս:

– Ուռա՛, ուռա՛, արդեն համարյա տասնմեկն է, – բացականչեց Թուխը: – Իսկական ժամանակն է մի բան ուտելու:

Եվ Վինի-Թուխը մոտեցավ պահարանին:

– Իսկ հետո մենք կգնանք զբոսնելու և Իային կերգենք իմ Աղմուկիկը, – ավելացրեց նա:

– Ի՞նչ աղմուկիկ:

– Դե, այն երգը, որ մենք պետք է երգենք Իայի մոտ, – բացատրեց նա:

Կես ժամ անց, երբ Թուխն ու Դնչիկը ճանապարհ ընկան, ժամացույցի սլաքները դեռևս տասնմեկից հինգ րոպե պակաս էին ցույց տալիս: Քամին հանգստացել էր, և դեսուդեն ընկնելուց հոգևած ձյունը դանդաղ ցած էր իջնում, և յուրաքանչյուր փաթիլ ինքն էր իր համար հանգստանալու տեղ գտնում: Երբեմն այդ տեղը Վինի-Թուխի քիթն էր լինում, երբեմն ոչ, և շուտով Դնչիկի պարանոցի շուրջը սպիտակ վզնոց գոյացավ, իսկ ականջների հետևում այնքան ձյուն էր հավաքվել, ինչպես երբեք:

– Թուխ, – վերջապես ասաց նա թեթևակի կակազելով, որովհետև չէր ուզում, որ Թուխը մտածի, թե ինքն անձնատուր է լինում: – Ես գիտես ինչ եմ մտածում. իսկ ի՞նչ կլինի, եթե մենք հիմա գնանք տուն և ինչպես պետքն է սովորենք քո երգը, իսկ Իային մեկ ուրիշ անգամ կերգենք: Վաղը...կամ... կամ, ասենք, մեկ ուրիշ անգամ, երբ պատահաբար կհանդիպենք նրան:

– Դա շատ լավ միտք է, Դնչիկ, – ասաց Թուխը: – Մենք հիմա կսկսենք կրկնել այդ Աղմուկիկը, բայց չարժե տանը կրկնել, որովհետև սա հատուկ ճանապարհային Աղմուկիկ է Ձյունոտ եղանակի համար, և պետք է երգել ճանապարհին, երբ ձյուն է գալիս:

– Անպայմա՞ն, – վախեցած հարցրեց Դնչիկը:

– Հիմա լսիր և կհամոզվես, – ասաց Թուխը, – այսպես է սկսվում. «Քայլում եմ ես, տիրլիմ-բոբ-բո՛ւ...»

– Տիրլիմ ի՞նչ:

– Բոմ-բոմ, – ասաց Թուխը: – Դրանք ես ավելացրել եմ, որպեսզի Աղմուկիկը աղմկոտ լինի: «Եվ ձյունը ինձ, տիրլիմ-բոմ-բո՛ւ, չի վախեցնում...»

– Դու նոր չասացի՞ր. «Քայլում եմ»:

– Այո, բայց «Քայլում եմ»-ը առաջ էր:

– Տիրլիմ-բոմ-բոմից առա՞ջ:

– Դա ուրիշ տիրլիմ-բոմ-բոմ էր, – ասաց Թուխը, փոքր ինչ շփոթված:

Եվ նորից երգեց.

Քայլում ենք, տե՛ս

(Տիրլիմ-բոմ-բո՛ւ),

Եվ ձյունը մեզ

(Տիրլիմ-բոմ-բո՛ւ),

Չի վախեցնում՝

Ծածկում է մեր հետքե՛րը:

Բայց ասացե՛ք

(Տիրլիմ-բոմ-բո՛ւ),

Բայց ասացե՛ք,

(Տիրլիմ-բոմ-բո՛ւ):

Ինչի՞ց է, որ

Սառչում են մեր ոտքե՛րը:

Նա Աղմուկիկը երգեց նոր ձևով, սկզբից մինչև վերջ, և, թերևս, այսպես ավելի լավն էր, և վերջացնելով, Թուխը լռեց ու սպասում էր, որ Դնչիկը կասի, թե սա լավագույն ճանապարհային Աղմուկիկն է Ձյունոտ եղանակի համար, որ երբևիցե ինքը լսել է:

Երկարատև ու լուրջ մտորումներից հետո Դնչիկն ասաց իր կարծիքը:

– Թուխ, – ասաց նա մտածկոտ, – իմ կարծիքով, ոչ այնքան ոտքերն են սառչում, որքան ականջները:

Այդ ժամանակ նրանք արդեն մոտեցել էին Վհատ Վայրին, որտեղ Իան էր ապրում, և, բանի որ Դնչիկի ականջների հետևում դարձյալ շատ ձյուն կար, իսկ դա նրան սկսել էր ձանձրացնել, նրանք մտան մի փոքրիկ սոճուտ և նստեցին այն շրջապատող ցանկապատի վրա:

Հիմա այլևս ձյունը նրանց վրա չէր թափվում, բայց դարձյալ շատ ցուրտ էր, և, որպեսզի չսառչեն, նրանք վեց անգամ սկզբից մինչև վերջ երգեցին Թուխի Աղմուկիկը (Դնչիկը կատարում էր բոլոր տիրիլիմ-բոմ-բոմները, իսկ Թուխը՝ մնացածը), ընդ որում, երկուսն էլ որտեղ պետք էր փայտիկներով թխկթխկացնում էին ցանկապատին: Շուտով նրանք այնքան տաքացան, որ կարող էին շարունակել խոսակցությունը:

– Ես հենց նոր մտածում էի, – ասաց Թուխը, – և մտածում էի ահա թե ինչ. ես մտածում էի Իայի մասին:

– Իսկ ի՞նչ էիր մտածում Իայի մասին:

– Մտածում էի, որ խեղճ Իան ապրելու տեղ չունի:

– Չունի՞, չունի՞, – համաձայնեց Դնչիկը:

– Դու տուն ունես, Դնչիկ, ես էլ տուն ունեմ, և դրանք շատ լավ տներ են: Քրիստոֆեր Ռոբինսն էլ տուն ունի, Բուն էլ, Կենգուն էլ, ճագարը նույնպես տներ ունի, և նույնիսկ ճագարի Ազգականներն ու Ծանոթները տուն կամ դրա նման մի բան ունեն, իսկ խեղճ Իան ոչինչ չունի: Եվ ես ահա թե ինչ եմ մտածել. արի նրա համար տուն սարքենք:

– Դա լավ միտք է, Թուխ, – ասաց Դնչիկը: – Իսկ որտե՞ղ սարքենք տունը:

– Հենց այստեղ, – ասաց Թուխը, – այս սոճուտում: Այստեղ բամբի չկա, և ես մտածեցի այդ մասին: Այս վայրը մենք կարող ենք անվանել «Թուխի Սոճուտ», և Թուխի Սոճուտում Իայի համար մենք կկառուցենք ԻԱՅԻ ՏՈՒՆԸ:

– Վա՛յ, սոճուտի մյուս կողմում ես փայտե ձողիկների կիտուկ եմ տեսել, – բացականչեց Դնչիկը: – Չէ, մի մեծ կույտ: Համարյա սարի չա՛փ:

– Շնորհակալություն, Դնչի՛կ: Այն, ինչ դու ասացիր, մեզ շատ կօգնի, և դրա համար արժեք այս տեղը Թուխաղնչիկի սոճուտ անվանել, եթե Թուխի Սոճուտը ավելի լավ չինչեր:

Նրանք իջան ցանկապատից և գնացին ձողիկները բերելու:

Քրիստոֆեր Ռոբինսն ամբողջ առավոտը անց էր կացրել սենյակում, ճանապարհորդելով դեպի Աֆրիկա ու հետ, և հենց նոր էր իջել նավից ու մտածում էր. «Տեսնես ինչպիսի՞ եղանակ է դրսում», երբ նրա դուռը թակեց ոչ այլ ոք, քան ինքը՝ Իան:

– Բարև, Իա, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, բացելով դուռը և բակ դուրս գալով: – Ինչպե՞ս ես քեզ գգում:

– Շարունակ ձյուն է գալիս, – մռայլ պատասխանեց Իան:

– Գալիս է, այո՛:

– Եվ սառնամանիք է:

– Այո:

– Այո, – ասաց Իան: – Սակայն, – ավելացրեց նա, փոքր-ինչ զվարթացած, – վերջին ժամանակները մեզ մոտ երկրաշարժ չի եղել:

– Ի՞նչ է պատահել, Իա:

– Ոչինչ, Քրիստոֆեր Ռոբին, առանձնապես ոչինչ: Դու իհարկե, չես տեսել այս կողմերում տուն կամ դրա նման մի բան:

– Ի՞նչ տուն:

– Սովորական տուն:

– Իսկ ո՞վ է այնտեղ ապրում:

– Ես եմ ապրում: Համենայն դեպս, կարծում էի, թե ապրում եմ: Բայց, հավանաբար, ես այնտեղ չեմ ապրում: Ինչ արած, վերջ ի վերջո, բոլորը չէ, որ տուն պետք է ունենան:

– Իա, ես չգիտեի: Ես միշտ կարծել եմ...

– Չգիտեմ բանն ինչ է, Զրիստոֆեր Ռոբին, բայց այս ամբողջ ծյան պատճառով, էլ չեմ ասում սառցալույաների ու այլնի մասին, հիմա առավոտյան ժամը երեքին դաշտում այնքան էլ շոգ չի, ինչպես կարծում են ոմանք: Չի կարելի ասել, թե տոթից խեղդվում եմ, եթե հասկանում ես, թե ինչ նկատի ունեմ: Այո, տոթից գանգատվել չի լինում: Ոչ մի կերպ: Անկեղծ ասած, Զրիստոֆեր Ռոբին, մեր մեջ ասած, միանգամայն գաղտնի, եթե ոչ մեկին չես ասի՝ այնտեղ ցուրտ է:

– Իա՛, սիրելի՛ս:

– Եվ ես ասացի ինձ՝ ախր մյուսները կվշտանան, եթե դու սառչես: Գիշտ է, նրանցից և ոչ մեկը խելք չունի, բոլորի գլխում էլ թեփ է, և այդ թեփն էլ երևի սխալմամբ է նրանց գլուխն ընկել, ու նրանք ի վիճակի չեն մտածելու, բայց եթե ձյունը նույն թափով գա ևս մի վեց շաբաթ, նույնիսկ նրանցից որևէ մեկը կարող է մտածել. «Հիմա, առավոտյան ժամը երեքին, Իան, թերևս, չի շոգում»: Եվ հետո նա կցանկանա ստուգել՝ շոգո՞ւմ եմ ես, թե՞ ոչ: Իսկ ավելի հետո նա ստիպված կլինի շատ վշտանալ:

– Ինչե՛ր ես ասում, Իա՛, – բացականչեց Զրիստոֆեր Ռոբինը, որ արդեն տխրել էր:

– Ես նկատի չունեմ քեզ, Զրիստոֆեր Ռոբին: Դու այդպիսին չես: Մի խոսքով, ինչ եմ ուզում ասել. ես ինձ համար տուն կառուցեցի փոքրիկ Սոճուտի մոտ:

– Իսկապե՞ս կառուցել ես: Դա հրաշալի՛ է:

– Իսկական հրաշք, – շարունակեց Իան վիատ ձայնով, – ինձ թվում է հետևյալը: Առավոտյան, երբ գնում էի, տունս իր տեղում էր, իսկ երբ վերադարձա, այլևս չկար: Ընդհանուր առմամբ, լիովին հասկանալի է, չէ որ վերջ ի վերջո դա ընդամենը եղել է Իայի տունը: Բայց պետք է խոստովանեմ, որ այնուամենայնիվ ես փոքր-ինչ տարակուսած եմ:

Զրիստոֆեր Ռոբինը զարմանալու ժամանակ չունեիր: Նա արդեն տուն էր մտել և հագել էր տաք գլխարկը, տաք կոշիկները և տաք վերարկուն:

– Հիմա կգնանք ու ամեն ինչ կպարզենք, – ասաց նա:

– Երբեմն, – ասաց Իան, – երբ մարդիկ վերցնում են ինչ-որ մեկի տունը, այնտեղ մանր-մուկ բաներ են լինում, որ իրենց հարկավոր չի և հաճույքով վերադարձնում են նախկին տիրոջը, եթե հասկանում ես, թե ինչ եմ ուզում ասել: Եվ ահա ես մտածում եմ, որ եթե մենք...

– Գնանք, գնանք, – շարունակեց Զրիստոֆեր Ռոբինը:

Նրանք քայլում էին շատ արագ, ուստի շատ արագ էլ հասան սոճուտի այն կողմը, որտեղ Իայի տունը չկար:

– Խնդրեմ, հիացիր, – ասաց Իան: – Գոնե մի փայտիկ էլ չեն թողել: Բայց, իհարկե, ես չեմ գանգատվում. չե՞ որ մնացել է այս ամբողջ ձյունը, որը ինչ ուզենամ կարող եմ անել:

Բայց Զրիստոֆեր Ռոբինը չէր լսում Իային: Նա ականջ էր դնում ինչ-որ բանի:

– Ոչինչ չե՞ս լսում, – հարցրեց նա Իային:

– Իսկ ի՞նչ կա: Որևէ մեկը ծիծաղում է:

– Լսի՛ր:

Նրանք ականջ դրեցին... Եվ լսեցին մի փնթփնթան, թավ ձայն, որ երգում էր, թե իրենք քայլում են, և ձյունը իրենց բոլորովին-բոլորովին չի վախեցնում, իսկ ինչ-որ մի բարակ ձայն հասցնում էր ժամանակին տիրիւմ-բոմ-բոմ ասել:

– Դա Թո՛ւխն է, – ուրախացավ Զրիստոֆեր Ռոբինը:

– Հավանաբար, – ասաց Իան:

– Եվ Դնչի՛կը, – հուզված ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

– Հնարավոր է, – ասաց Իան: – Ինչ հիմա մեզ իսկապես պետք է, դա լավ խուզարկուն է:

Երգի բառերը հանկարծ փոխվեցին:

– Այ քեզ լավ տո՛ւն, – երգում էր թավ ձայնը:

– Տիրիւմ-բոմ-բո՛մ, – երգում էր ծվծվան ձայնիկը:

– Աննման տո՛ւն...

– Տիրիւմ-բոմ-բո՛մ...

– Ինքս էլ այստեղ կապրե՛ի...

– Տիրիւմ-բոմ-բո՛մ:

– Թո՛ւխ, – ձայն տվեց Զրիստոֆեր Ռոբինը:

Երգիչները լռեցին:

– Դա Զրիստոֆեր Ռոբինն է, – հիացմունքով ասաց Թուխը:

– Նա մյուս կողմում է: Այնտեղ, որտեղից մենք վերցրինք ձողերը, – ասաց Դնչիկը:

– Վազենք, – ասաց Թուխը:

Նրանք թռան ցանկապատից և վազքով շրջանցեցին Սոճուտը. Թուխը ամբողջ ժամանակ ողջույնի բացակասչություններ էր արձակում:

– Չէ՛յ, Իան էլ է այստե՛ղ, – ասաց Թուխը, երբ մի քանի անգամ ողջագուրվել էր Զրիստոֆեր Ռոբինի հետ: Նա արմունկով հրեց Դնչիկին, իսկ Դնչիկը արմունկով հրեց Նրան, և նրանք մտածեցին, թե ինչ հաճելի անակնկալ է սա: – Ողջո՛ւյն, Իա՛:

– Նույնն էլ քեզ եմ ցանկանում, արջուկ Թուխ, իսկ հինգշաբթի օրերին՝ կրկնակի անգամ, – վիատ պատասխանեց Իան:

Թուխը չհասցրեց հարցնել. «Ինչո՞ւ հինգշաբթի օրերին», որովհետև Զրիստոֆեր Ռոբինը արդեն Իայի կորած տան տխուր պատմությունն էր անում: Թուխն ու Դնչիկը լսում էին, և զարմանքից նրանց աչքերը լայնանում էին ու լայնանում:

– Ասում ես որտե՛ղ էր տունը, – հարցրեց Թուխը:

– Չենց այստեղ, – ասաց Իան:

– Փայտե ձողերից էր կառուցվա՞ծ:

– Այո:

– Օ՛յ, – ասաց Դնչիկը:

– Ի՞նչ, – հարցրեց Իան:

– Ես պարզապես ասացի «Օ՛յ», – կմկմաց Դնչիկը, և որպեսզի չզգան, որ ինքը շփոթվել է, մեկ-երկու անգամ որքան կարող էր անհոգ տիրիմ-բոմ-բոմ արեց:

– Իսկ դու համոզվա՞ծ ես, որ դա տուն էր, – հարցրեց Թուխը: – Ուզում եմ ասել, համոզվա՞ծ ես որ տունդ հենց այստեղ էր:

– Իհարկե, համոզված եմ, – ասաց Իան և ինքն իրեն փնթփնթաց. «Ոմանց գլխում խելքի կտոր անգամ չկա»:

– Բանն ի՞նչ է, Թո՛ւխ, – հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը:

– Բայց... – ասաց Թուխը: – Բանն այն է... – ասաց Նա: – Մի խոսքով, բանն այն է... – ասաց Թուխը: –

Չասկանում ես... – ասաց Թուխը: – Ինչպես ասեմ... – ասաց Թուխը, և այստեղ միայն երևի նա վերջապես գլխի ընկավ, որ այնքան էլ լավ չի բացատրում և նորից արմունկով հրեց Դնչիկին:

– Ինչպես ասեմ, – շտապեց ասել Դնչիկը: – Ավելի տաք է, – բավականին երկար մտածելուց հետո ավելացրեց Նա:

– Ի՞նչն է տաք:

– Սոճուտի մյուս կողմում, որտեղ Իայի տունն է:

– Իմ տո՛ւնը, – հարցրեց Իան: – Իմ տունը այստե՛ղ էր:

– Ոչ, – համոզված ասաց Դնչիկը, – մյուս կողմում է:

– Որովհետև այնտեղ տաք է, – ասաց Թուխը:

– Բայց ես ուզում եմ իմանալ...

– Ավելի լավ է զնանք նայենք, – շատ սովորական ասաց Դնչիկը, առաջարկելով հետևել իրեն:

Նրանք շրջանցեցին Սոճուտը, և այս կողմում կանգնած էր Իայի տունը՝ կոկիկ ու հարմարավետ:

– Ահա, – ասաց Դնչիկը:

– Ներսից էլ ոչնչով վատ չէ, – հպարտությամբ ասաց Թուխը:

Իան մտավ ներս ու նորից դուրս եկավ:

– Տարօրինակ երևույթ է, – ասաց Նա: – Սա իմ տունն է, և ես անձամբ կառուցել էի այնտեղ, որտեղ ասում էի, այնպես որ, երևի, քամին է նրան այստեղ բերել: Չավանորեն քամին թռցրել է Սոճուտի վրայով ու բերել իջեցրել է այստեղ: Եվ նա կանգուն է ու անվնաս: Տեղ-տեղ, թերևս, նույնիսկ լավացել է:

– Շատ ավելի, ավելի լավացել է, – միաբերան ասացին Թուխն ու Դնչիկը:

– Չիմա տեսնում եք, թե ինչեր կարելի է անել չծուլանալու դեպքում, – ասաց Իան: – Չասկանո՞ւմ ես, Թո՛ւխ, հասկանո՞ւմ ես, Դնչի՛կ: Չնարամտություն է պետք, մեկ էլ՝ Բարեխիղճ Աշխատանք: Պա՛րզ է: Տունը, այ, այսպե՛ս կկառուցեն, – հպարտ ավարտեց Նա:

Բոլորը հրաժեշտ տվեցին երջանիկ տանտիրոջը, և Զրիստոֆեր Ռոբինը գնաց ճաշելու Դնչիկի ու Թուխի հետ: Ճանապարհին բարեկամները պատմեցին նրան, թե ինչպիսի Սարսափելի Սխալ են թույլ տվել, և երբ Զրիստոֆեր Ռոբինը վերջացրեց ծիծաղելը, նրանք երեքով երգեցին Ճանապարհային Աղմուկիկը Ձյունոտ Եղանակի համար, և երգում էին ամբողջ ճանապարհին, ընդ որում, Դնչիկը, որի ձայնը մի քիչ կտրված էր, միայն տիրիմ-բոմ-բոմ էր ասում:

«Իհարկե, թվում է, տիրիմ-բոմ-բոմ անելը հասարակ բան է, – ինքն իրեն մխիթարում էր Դնչիկը, – բայց բոլորը չէ, որ կարող են այդ անել»:



ՎԼՈՒՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Որտեղ անտառ է գալիս Վագրը և նախաճաշում է

Կեսգիշերին Վինի-Թուխը հանկարծ արթնացավ ու ականջները սրեց: Հետո անկողնուց վեր կացավ, վառեց մոմը և մոտեցավ պահարանին՝ ստուգելու, արդյոք որևէ մեկը չի՞ փորձում ներս մտնել: Բայց պահարանում ոչ ոք չկար, և նա լրիվ հանգստացած մոմը մարեց ու կրկին անկողին մտավ: Եվ այստեղ նա նորից Կասկածելի Ձայն լսեց, այն նույն ձայնը, որ նրան արթնացրել էր:

– Այդ դո՛ւ ես, Դեչի՛կ, – հարցրեց Թուխը:

Բայց Դեչիկը չէր:

– Ներս արի, Զրիստոֆեր Ռոբին՛, – ասաց Թուխը: Բայց Զրիստոֆեր Ռոբինը ներս չեկավ:

– Վաղը կպատմես, Իա, – քնկոտ ձայնով ասաց Թուխը:

Բայց ձայնը չէր կտրվում:

– ՌՌՌՌՌ, – ասում էր Հայտնի ՉԷ Ով, և Թուխը հանկարծ զգաց, որ ինքը բուլոբուլին չի ուզում քնել:

«Ի՞նչ կարող է լինել, – մտածեց նա: – Մեր Անտառում շատ ձայներ կան, բայց սա ինչ-որ շատ տարօրինակ ձայն է: Սա ոչ երգեցողություն է, ոչ ֆսֆսոց, ոչ էլ նույնիսկ խռմփոց... Նույնիսկ բանաստեղծության նման էլ չէ: Սա ինչ-որ շատ անձանոթ աղմուկ է, և աղմկում է մի անձանոթ գազան: Իսկ ամենից կարևորն այն է, որ նա աղմկում է իմ դռան մոտ: Երևի պետք է վեր կենալ ու խնդրել նրան, որ վերջ տա»:

Վինին վեր կացավ անկողնուց և դուռը բացեց:

– Ողջո՛ւյն, – ասաց նա, դիմելով Հայտնի ՉԷ ԹԵ Ով:

– Ողջո՛ւյն, – պատասխանեց Հայտնի ՉԷ ԹԵ Ով:

– Այ քեզ բա՛ն, – ասաց Թուխը: – Ողջո՛ւյն:

– Ողջո՛ւյն:

– Ա՛խ, այդ դո՛ւ ես, – ասաց Թուխը: – Ողջո՛ւյն:

– Ողջո՛ւյն, – պատասխանեց օտար Գազանը, տարակուսելով, թե միևնույն էր և շարունակվելու ողջույնների փոխանակությունը:

Թուխն էլ հենց այն է, պատրաստվում էր չորրորդ անգամ ասել՝ «Ողջույն», բայց մտածեց, որ թերևս չարժե և դրա փոխարեն հարցրեց.

– Ո՞վ ես դու:

– Ես եմ, – պատասխանեց Ձայնը:

– Մի՞ թե, – ասաց Թուխը: – Լավ, նե՛րս արի:

Հայտնի ՉԷ ԹԵ Ովը ներս եկավ, և մոմի լույսի տակ Թուխն ու նա աչքերը իրար վրա չռեցին:

– Ես Թուխն եմ, – ասաց Վինի-Թուխը:

– Իսկ ես՝ Վագրը, – ասաց Վագրը:

– Իսկապե՞ս, – ասաց Թուխը: (Չէ՞ որ նա դեռ երբեք այդպիսի գազան չէր տեսել): – Իսկ Զրիստոֆեր Ռոբինը գիտե՞ քո մասին:

– Իհարկե՛, գիտե՛, – ասաց Վագրը:

– Դե, – ասաց Թուխը, – հիմա կեսգիշեր է, իսկ դա ամենահարմար ժամանակն է քնելու համար: Իսկ առավոտյան նախաճաշին մենք մեղր ունենք: Վագրերը մեղր սիրո՞ւմ են:

– Նրանք ամեն ինչ են սիրում, – ուրախ ասաց Վագրը:

– Ուրեմն, բանի որ նրանք սիրում են հատակին քնել, ես նորից անկողնում կպառնեմ, – ասաց Թուխը, – իսկ վաղը կգրադվենք մեր գործերով: Բարի գիշեր:

Եվ նա անկողին մտավ ու շուտով քնեց:

Առավոտյան, երբ Վինի-Թուխն արթնացավ, Վագրը արդեն նստած էր հայելու առաջ և իրեն էր դիտում:

– Բարի լույս, – ասաց Թուխը:

– Բարի լույս, – պատասխանեց Վագրը: – Այստեղ ինչ-որ մեկը կա, ճիշտ և ճիշտ ինձ նման: Իսկ ես կարծում էի, միայն ես եմ այսպիսին:

Թուխը իջավ մահճակալից և սկսեց բացատրել, թե ինչ բան է հայելին: Բայց նա հազիվ էր ամենահետաքրքիր տեղին հասել, երբ Վագրը ասաց.

– Մի րոպե՛: Ների՛ր, ինդրում եմ, բայց այնտեղ ինչ-որ մեկը սեղանիդ վրա է բարձրանում... ՌՌՌՌՌ, – գրմռաց նա, բռնեց սփռոցի ծայրից, քաշեց հատակին, երեք տակ փաթաթվեց նրա մեջ, գլորվեց մինչև սենյակի անկյունը և հուսահատ պայթարից հետո սփռոցի տակից հանեց գլուխն ու զվարթ հարցրեց. – Դե, ո՞վ հաղթեց: Ե՞ս:

– Դա իմ սփռոցն է, – ասաց Թուխը, սփռոցը բարձրացնելով հատակից:

– Երբեք մտքովս չէր անցնի, որ սրան այդպես են անվանում, – ասաց Վագրը:

– Սա փռում են սեղանին, իսկ հետո վրան ափսեներ են շարում:

– Իսկ դա ինչո՞ւ էր ուզում կծել ինձ, երբ ես չէի նայում:

– Չեմ կարծում, թե ուզում էր կծել:

– Ուզում էր, – ասաց Վագրը, – բայց դա ո՞վ է, որ չափվի ինձ հետ:

Թուխը սփռոցը փռեց սեղանին, սփռոցի վրա մի մեծ կճուճ մեղր դրեց, և նրանք նստեցին նախաճաշելու:

Հենց որ նստեցին, Վագրը բերանը մեղրով լցրեց... և գլուխը ծռած նայեց առաստաղին: Հետո չփչփոց լսվեց, զարմացած չփչփոց, և մտահոգ չփչփոց, և վերջապես մի չփչփոց, որ նշանակում էր. «Հետաքրքիր է, այս ի՞նչ են մեզ հրամցրել»:

Իսկ հետո վճռական ձայնով ասաց.

– Վագրերը մեղր չեն սիրում:

– Ա՛յ,ա՛յ-ա՛յ, – ասաց Թուխը, աշխատելով ձևացնել, թե խիստ վշտացել է: – Իսկ ես կարծում էի Վագրերը ամեն ինչ սիրում են:

– Ամեն ինչ, բացի մեղրից:

Մեր մեջ ասած, Վինի-Թուխը կարգին ուրախացել էր, ուստի շտապեց հայտնել Վագրին, որ հենց ինքը Թուխը նախաճաշը վերջացնի, միասին հյուր կգնան Դնչիկին, և Դնչիկը երևի իրենց կաղին կհյուրասիրի:

– Շնորհակալություն, Թուխ, – ասաց Վագրը, – որովհետև Վագրերը ամենից շատ հենց կաղին են սիրում:

Եվ ահա նախաճաշից հետո նրանք հյուր գնացին Դնչիկին: Ճանապարհին Թուխը բացատրում էր, որ Դնչիկը Շատ Փոքր Արարած է և չի սիրում, երբ ուտում են իր վրա, այնպես որ ինքը Թուխը ինդրում է Վագրին առաջին ծանոթության ժամանակ գոնե քիչ ուտնել, իսկ Վագրը, որ ամբողջ ճանապարհին մեկ թաթնվում էր ծառերի հետևում, մեկ հանկարծ դուրս թռչում դարանից, փորձելով բռնել Թուխի ստվերը, երբ նա չէր նայում, պատասխանում էր, որ Վագրերը ուտում են մինչև նախաճաշը, բայց հենց որ մի քիչ կաղին ուտեն, դառնում են խաղաղ ու Հարգալից: Այսպես աննկատ նրանք շուտով հասան Դնչիկի տանն ու բախեցին դուռը:

– Բարև, Թու՛խ, – ասաց Դնչիկը:

– Բարև, Դնչի՛կ: Սա Վագրն է:

– Ի-ի-իսկապե՞ս, – հարցրեց Դնչիկը և աթոռի հետ միասին անցավ սեղանի մյուս կողմը: – Ես չգիտեի, որ Վագրերն այդքան մե՛ծ են լինում:

– Չայ-հա՛յ, դու դեռ մեծերին չես տեսել, – ասաց Վազրը:

– Վազրերը կաղին են սիրում, – ասաց Թուխը, – դրա համար էլ քեզ մոտ եկանք: Որովհետև խեղճ Վազրը մինչև հիմա դեռ չի նախաճաշել:

Դնչիկը Վազրի առաջ մի զամբյուղ կաղին դրեց ու ասաց. « Չյուրասիրվե՞ք, ինդրեմ», իսկ ինքը ամուր սեղմվեց Թուխին, իրեն ավելի քաջ զգաց, ու նույնիսկ համարձակվեց ասել. «Ուրեմն, դո՞ւ ես Վազրը: Ա՛յ-ա՛յ-ա՛յ», ընդ որում, համարյա ուրախ ծայնով:

Բայց Վազրը չպատասխանեց, որովհետև նրա բերանը լցված էր կաղինով... Նա բավականին երկար բարձրածայն ծամում ու խրթխրթացնում էր, իսկ հետո ասաց.

– Միրո մի մի րերո՛:

– Իսկ երբ Թուխն ու Դնչիկը հարցրեցին. «Ի՞նչ, ի՞նչ», նա ասաց.

– Միրո մի պե պապե՛, – ու դուրս վազեց:

Չամարյա նույն պահին էլ նա հետ եկավ ու համոզված հայտարարեց.

– Վազրերը կաղին չեն սիրում:

– Իսկ դու ասում էիր, նրանք ամեն ինչ սիրում են, բացի մեղրից:

– Ամեն ինչ, մեղրից ու կաղինից բացի՛, – բացատրեց Վազրը:

Թուխը ասաց. «Ա-ա՛, հասկանալի է», իսկ Դնչիկը, որ մի քիչ էլ ուրախ էր, որ Վազրերը կաղին չեն սիրում, հարցրեց.

– Իսկ տատասկափուշ սիրո՞ւմ են:

– Տատասկափո՞ւշ, – ասաց Վազրը, – իհարկե՛, Վազրերը աշխարհում ամենից շատ հենց տատասկափուշ են սիրում:

– Ուրեմն, գնանք Իայի մոտ, – առաջարկեց Դնչիկը:

Եվ երեքով ճանապարհ ընկան: Նրանք գնում էին, գնում ու գնում և վերջապես հասան այնտեղ, ուր ապրում էր Իան:

– Բարև, Իա, – ասաց Թուխը: – Սա Վազրն է:

– Ո՞րը, սա՞, – հարցրեց Իան:

– Սա՛, – միաբերան բացատրեցին Դնչիկն ու Թուխը, իսկ Վազրը մինչև ականջները լայն ժպտաց ու ոչինչ չասաց:

Իան երկու անգամ պտտվեց Վազրի շուրջը՝ սկզբում մի կողմից, հետո՝ մյուս:

– Ասացի՞ք ինչպե՞ս է սա կոչվում, – իր գննումները վերջացնելուց հետո հարցրեց նա:

– Վազր:

– Չը՛մ, – ասաց Իան:

– Նա քիչ առաջ է եկել, – բացատրեց Դնչիկը:

– Չը՛մ, – կրկնեց Իան:

Որոշ ժամանակ նա մտորում էր, ապա հարցրեց.

– Իսկ ե՞րբ է գնալու:

Թուխը սկսեց Իային բացատրել, որ Վազրը Քրիստոֆեր Ռոբինի լավ բարեկամն է ու այսուհետև ընդմիջտ ապրելու է Անտառում, իսկ Դնչիկը բացատրում էր Վազրին, որ Իայի ասածներից նա չպետք է նեղանա, որովհետև նա, այսինքն, Իան, միշտ է այդպես մռայլ, իսկ Իա-Իան բացատրում էր Դնչիկին, որ ընդհակառակը, այսօր իր տրամադրությունը արտասովոր բարձր է, իսկ Վազրը բացատրեց բոլորին ու ամեն մեկին առանձին, որ ինքը մինչև հիմա չի նախաճաշել:

– Վա՛յ, այդպես էլ գիտեի, որ կմոռանամ, – վերջապես ասաց Թուխը: – Վազրերը միայն տատասկափուշ են ուտում, դրա համար էլ եկել ենք քեզ մոտ:

– Շնորհակալություն, Թուխ, զգացված եմ քո ուշադրությունից:

– Օ՛յ, Իա, չէի ուզում ասել, որ քեզ չէինք ուզում տեսնել...

– Չասկանալի է, հասկանալի: Մի խոսքով, ձեր նոր շերտավոր բարեկամը նախաճաշել է ուզում: Միանգամայն բնական է: Ասում եք, ո՞նց են նրան մեծարում:

– Վազր:

– Արի մի տեսնեմ, Վազր:

Իան Վազրին առաջնորդեց տատասկափշի ամենափշոտ թփի մոտ:

– Այս թուփը ես ինամքով պահում էի ծննդյանս օրվա համար, – ասաց նա, – բայց վերջ ի վերջո ի՞նչ բան է ծննդյան օրը. այսօր կա, իսկ վաղը՝ հետքն էլ չես գտնի: Խնդրեմ, Վագր, հյուրասիրվիր:

Վագրը շնորհակալություն հայտնեց ու անվճռական նայեց Թուփին:

– Տատասկափուշը սա՞ է, – շնջաց նա:

– Այո, – ասաց Թուփը:

– Այն, որ Վագրերն աշխարհում ամենից շատ են սիրո՞ւմ:

– Միանգամայն ճիշտ է, – ասաց Թուփը:

– Պարզ է, – ասաց Վագրը:

Եվ նա խիզախորեն մի հաստ ճյուղ պոկեց, զցեց ատամի տակ ու բարձրաձայն խրթխրթացրեց: Բայց անմիջապես էլ նստեց տեղում և թաթը բերանը տարավ:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – ասաց նա:

– Ի՞նչ պատահեց, – հարցրեց Թուփը:

– Մրմռո՞ւմ է, – փնթփնթաց Վագրը:

– Ձեր բարեկամը, – ասաց Իան, – երևի մեղու է կուլ տվել:

Թուփի բարեկամը մի պահ դադարեցրեց զլուխը թափ տալը (նա փորձում էր փշերը հանել) և բացատրեց, որ Վագրերը տատասկափուշ չեն սիրում:

– Այդ դեպքում միտք ունե՞ր փչացնել այս հոյակապ նմուշը, – խստորեն հարցրեց Իան:

– Ախր դու ինքդ էիր ասում, – սկսեց Թուփը, – ինքդ էիր ասում, որ Վագրերը սիրում են ամեն ինչ, բացի մեղրից ու կաղինից:

– Եվ տատասկափշի՞ց, – բացականչեց Վագրը, լեզուն դուրս գցած, հսկայական պտույտներ գործելով նրա շուրջը:

Թուփը տխուր նրան նայեց:

– Չիմա ի՞նչ պիտի անենք, – հարցրեց նա Դնչիկին:

Դնչիկը գիտեր, թե ինչ պիտի անեն:

Առանց երկար-բարակ մտածելու նա ասաց, որ հարկավոր է գնալ Զրիստոֆեր Ռոբինսի մոտ:

– Նրան դուք կգտնեք Կենզուի տանը, – ասաց Իան, հետո զլուխը մոտեցրեց Թուփի ականջին ու բարձրաձայն շնջաց. – Արդյոք չե՞ք կարող խնդրել ձեր բարեկամին, որ նա իր սպորտային վարժությունները մեկ այլ վայր տեղափոխի: Այսօր ես մտադիր եմ ճաշել և ամենևին չեմ ուզում, որ իմ ճաշը տրորեն ոտքերով: Սա, իհարկե, չնչին բան է, կարելի է ասել՝ քմահաճույք, բայց մեզնից ով կարող է հպարտանալ, որ ինքը զերծ է այդ փոքրիկ թուլությունից:

Թուփը լուրջ տեսքով գլխով արեց ու կանչեց Վագրին:

– Գնացի՞նք: Մենք գնում ենք Կենզուի մոտ: Նրա տանը քեզ համար ինչպիսի նախաճաշ ասես կգտնվի:

Վագրը ավարտեց վերջին պտույտը և վազեց Թուփի մոտ:

– Մրմռո՞ւմ է, – բացականչեց նա, լայն ու բարեհամբույր ժպտալով: – Գնացի՞նք, – և առաջ վազեց:

Դնչիկն ու Թուփը դանդաղ քայլում էին նրա հետևից: Ճանապարհին Դնչիկը չէր խոսում, որովհետև ոչ մի բան էլ չէր կարողանում մտածել, իսկ Թուփը լուռ էր, որովհետև նոր բանաստեղծություն էր հորինում, և երբ վերջապես բանաստեղծությունը պատրաստ էր, նա սկսեց.

Խեղճ Վագրի հետ ո՞նց վարվենք,

Ինչպե՞ս փրկենք նրան,

Չի՞ մեծանում, չի՞ աճում,

Չի՞ ուտում ոչ մի բան:

Ոչ քաղցր մեղր է ուտում,

Ոչ էլ համեղ կաղին,

Մի խոսքով՝ ոչի՛նչ, ոչի՛նչ,

Ինչ որ՝ մարդիկ կարգին:

Չրաժարվեց նույնիսկ

Տատասկափուշ ծամել,

Տեսե՛ք, տեսե՛ք, թե ո՞նց են
Բոլորն իրար անցել:

Ինչպե՞ս վարվենք Վագրի հետ,
Պետք է նրան փրկել,
Վագրին շատ է անհրաժեշտ,
Մի քիչ հասակ առնել:

– Բայց նա առանց այդ էլ շա՛տ խոշոր է, – բացականչեց Դնչիկը:

– Իսկ իրականում դեռ այդքան մեծ չի:

– Բայց նա շատ մեծ է թվում: Պարզապես հսկայական:

Այս լսելուց հետո Թուխը մտքի մեջ ընկավ ու մոթմոթաց ինքն իրեն.

Չգիտեմ, նա քանի Մետր է,

Քանի Լիտր ու Կիլոգրամ,

Բայց Վագրերը, երբ ցատկում են,

Մեզ թվում են ՀՍԿԱՅԱԿԱՆ:

– Ահա մի բանաստեղծություն ևս, – ասաց Թուխը: – Հավանեցի՞ր, Դնչիկ:

– Այո, – ասաց Դնչիկը, – բացի Լիտրից: Իմ կարծիքով, դա ավելորդ է:

– Ես մեղք չունեմ, – ասաց Թուխը, – ինքը ուզեց անպայման Կիլոգրամի կողքին լինել: Ես էլ թողեցի, որ ինձնից ձեռք քաշի: Եվ ընդհանրապես, սա բանաստեղծություն գրելու ամենալավ ձևն է՝ թողնել, որ իրերը իրենք գտնեն իրենց տեղը, գնան այնտեղ, ուր ուզում են:

– Ես այդ չգիտեի, – խոստովանեց Դնչիկը:

Իսկ Վագրը ամբողջ ժամանակ ամենաուրախ տեսքով թռչկոտում էր առջևում, ընդմեջ մեկ հետ դառնալով, որպեսզի հարցնի. «Այս կողմը գնա՞մ»: Վերջապես երևաց Կենգուլի տունը, և Զրիստոֆեր Ռոբինն էլ այնտեղ էր: Վագրը չորս ոտք էլ փոխ առած իրեն զգեց նրա մոտ:

– Ախ այդ դո՞ւ ես, Վա՛գր, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Ես գիտեի, որ դու այս կողմերում ես:

– Ես այնքան բան եմ գտել Անտառում, – հպարտ-հպարտ հայտարարեց Վագրը: – Եվ թուխ եմ գտել, և դնչիկ, և Նույնիսկ իա եմ գտել: Միայն նախաճաշ ոչ մի տեղ չգտա:

Թուխն ու Դնչիկը մոտեցան Զրիստոֆեր Ռոբինին, ողջագուրվեցին նրա հետ և ամեն ինչ բացատրեցին:

– Դու երևի կիմանաս, թե Վագրերը ինչ են սիրում, – ասաց Թուխը:

– Եթե շատ չարչարվեմ, երևի հիշեմ, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը, – բայց կարծում եմ Վագրն ինքն էլ գիտի:

– Ես գիտեմ, – ասաց Վագրը, – նրանք սիրում են ամեն ինչ, բացի մեղրից, կաղինից և մեկ էլ... այդ ծակող բաները ո՞նց էին կոչվում:

– Տատասկափուշ:

– Այո, մեկ էլ բացի դրանից:

– Դե լավ, ոչինչ: Կենգուլն քեզ նախաճաշ կտա:

Նրանք մտան տուն, և երբ ճատիկ Ռուն ասաց՝ «Բարև, Թո՛ւխ», և «Բարև, Դնչի՛կ» (մեկական անգամ), և «Բարև, Վա՛գր» (երկու անգամ, որովհետև նախ, դա շատ լավ էր ինչու և հետո, չէ՞ որ նա առաջին անգամ էր այդպես բարևում), Նրանք պատմեցին Կենգուլին, թե ինչու են եկել, և Կենգուլն շատ քնքուշ ասաց. «Հապա, սիրելի Վագր, նայիր պահարանում, տես ինչը քեզ դուր կգա»: Որովհետև Կենգուլն իսկույն հասկացավ, որ թեև արտաքինից Վագրը շատ խոշոր է, բայց նույնքան կարիք ունի քնքշանքի ու հոգատարության, որքան ճատիկ Ռուն:

– Ես էլ կարո՞ղ եմ նայել, – հարցրեց Թուխը, որ արդեն զգում էր ժամը տասնմեկի մոտիկությունը, և, համաձայնություն ստանալով, նա խտացրած կաթի մի ոչ մեծ տուփ գտավ: Ինչ-որ բան երևի նրան հուշեց, որ Վագրերը խտացրած կաթ չեն սիրում, և տուփը առած նա սուսուփուս մի անկյուն քաշվեց:

Բայց ինչքան շատ էր Վագրը մեկ քիթը, մեկ թաթը մտցնում մեկ այս, մեկ այն ամանի մեջ, այնքան նորանոր բաներ էր հայտնագործում, որ Վագրերը չեն սիրում: Եվ երբ նա տակնուվրա արեց ամբողջ պահարանը և գտավ այն բոլորը, ինչ վագրերը չեն սիրում ու հասկացավ, որ դրանցից և ոչ մեկը չի կարող ուտել, հարցրեց.

– Հիմա ես ի՞նչ պիտի անեմ:

Բայց և՛ Կենգուն, և՛ Քրիստոֆեր Ռոբինը, և՛ Դնչիկը, հավաքված ճստիկ Ռուի գլխին, նրան համոզում էին ձկան յուղ խմել: Ռուն ասում էր. «Գուցե պետք չի, հը՞», իսկ Կենգուն ասում էր. «Դե, դե, թանկագին Ռու, հիշիր, թե ինչ ես ինձ խոստացել»:

– Այդ ի՞նչ են անում, – Դնչիկի ականջին փսփսաց Վագրը:

– Նրան դեղ են տալիս, – ասաց Դնչիկը, – վիտամիններ: Իսկ նա ատում է դեղը:

Վագրը ավելի մոտեցավ և հետևից խոնարհվեց Ռուի բազկաթոռին: Եվ հանկարծ նա հանեց լեզուն, լսվեց բարձրաձայն չփչփոց, և, զարմանքից վեր թռչելով, Կենգուն բացականչեց՝ «Ա՛խ» ու հասցրեց բռնել գդալի պոչից ճիշտ այն պահին, երբ վերջինս անհետանում էր Վագրի երախում: Գդալը նա փրկեց, բայց ձկան յուղը չքացավ:

– Աստված իմ, Վա՛գր, սիրելի՛ս, – շշնջաց Կենգուն:

– Նա իմ դե՛ղը խմեց, նա իմ դե՛ղը խմեց, նա խմեց իմ դե՛ղը, – հիացած ծվծվում էր Ռուն, կարծելով, որ դա ճարպիկ կատակ է:

Իսկ Վագրը նայեց առաստաղին, փակեց աչքերը, նրա լեզուն պտույտներ գործեց դնչի շուրջը, որպեսզի ոչ մի կաթիլ հանկարծ չկորչի, և երանավետ ժպիտով ասաց.

– Ահա թե ի՞նչ են Վագրերը իսկապես սիրում:

Եվ զարմանալի չէ, որ Վագրը սկսեց ապրել Կենգուի մոտ: Հիմա ամեն օր նախաճաշին, ճաշին ու ընթրիքին նա մեծ բավականությամբ ձկան յուղ է խմում, իսկ երբեմն էլ կազդուրվելու համար ուտում է մեկ-երկու գդալ շիլա, ինչ սովորաբար նախաճաշին ուտում է Ռուն: Կենգուն գտնում է, որ Վագրին կազդուրվել է պետք, թեև Դնչիկն այլ կարծիքի է:

– Անձամբ ես գտնում եմ, – նման դեպքերում ասում է նա Թուխին, – անձամբ ես գտնում եմ, որ նա առանց այդ էլ չափազանց ամրակազմ է:



ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Որտեղ ճագարը խիստ սքաղված է, և մենք առաջին անգամ հանդիպում ենք Բճավոր Շուտովգամին

Ամեն ինչից երևում էր, որ ճագարը դարձյալ խիստ զբաղված է լինելու: Հագիվ էր աչքերը բացել, երբ զգաց, որ այսօր ամեն ինչ կախված է իրենից, և բոլորն իր վրա են հույս դնում: Դա այնպիսի օր էր, երբ անհրաժեշտ էր, ասենք, նամակ գրել (ստորագրությունը՝ ճագար), երբ պետք էր ամեն ինչ ստուգել, ամեն ինչ պարզաբանել, ամեն ինչ բացատրել և, վերջապես, ամենակարևորը՝ ինչ-որ բան կազմակերպել:

Նման մի առավոտ անպայման հարկավոր էր գոնե մեկ րոպեով մտնել Թուխի մոտ և ասել. «Դե ինչ արած, հիանալի է, ես դա կհայտնեմ Դեչիկին», իսկ հետո անցնել Դեչիկի մոտ և հայտնել. «Թուխը գտնում է, որ... Բայց, ավելի լավ է, նախ Բուին տեսնեմ»: Սկսվում էր այնպիսի օր, երբ բոլորն ասում են. «Այո՛, ճագար», Շա՛տ լավ, ճագար», «Կատարված կլինի, ճագար» և ընդհանրապես սպասում են հետագա կարգադրությունների: Գագարը դուրս եկավ տնից և, քիթը գարնանային տաք քամուն պահած, մտածում էր, թե ինչից սկսի:

Ամենից մոտիկ Կենգուի տունն էր, իսկ Կենգուի տանը ապրում էր ճատիկ Ռուն, որը Անտառում, թերևս, բոլորից լավ էր ասում՝ «Այո՛, ճագար» կամ «Շա՛տ լավ, ճագար», բայց, ավարդ, վերջերս այնտեղ մշտական բնակություն էր հաստատել անհնազանդ ու երես առած Վագրը: Իսկ նա, ինչպես գիտեք, այնպիսի Վագր էր, որ միշտ էլ ամեն ինչ ձեզանից լավ գիտի, և եթե ասում էք նրան, որ հարկավոր է այսինչ տեղը գնալ, նա միշտ առաջինն է տեղ հասնում: Եվ երբ վերջապես դուք հասնում եք, նրա հետքն անգամ չէք գտնում, և չի լինում մեկը, որին կարողանայիք հպարտությամբ ասել՝ «Դե ահա, մենք տեղ հասանք»:

– Չէ, Կենգուի մոտ չարժե գնալ, – ուրբելով բեղերը, մտահոգ ասաց ճագարը: Եվ որպեսզի վերջնականապես համոզվի, որ այնտեղ չի գնում, շրջվեց դեպի ձախ և կարճ ճանապարհով վազեց Քրիստոֆեր Ռոբինի տան ուղղությամբ:

«Ինչ ուզում ես ասա, – համոզում էր իրեն ճագարը, – Քրիստոֆեր Ռոբինը միայն ինձ վրա է հույս դնում: Նա, իհարկե, սիրում է Թուխին, Դեչիկին էլ, Իային նույնպես. ես էլ եմ նրանց սիրում, բայց, ախր, նրանց գլխում թեկի է: Դա հայտնի բան է: Նա հարգում է Բուին, որովհետև չի կարելի չհարգել նրան, ով կարողանում է գրել «Շաբաթ» բառը, թեկուզև սխալ՝ «Շափաթ», բայց ուղղագրություն իմանալը կամ չիմանալը դեռ ոչինչ չի նշանակում: Լինում են օրեր, երբ «Շաբաթ» գրելը պարզապես կարևոր չի: Իսկ Կենգուն շատ է զբաղված ճատիկ Ռույով, իսկ ճատիկ Ռուն շատ է փոքր, իսկ Վագրը շատ է անհնազանդ, այնպես որ, երբ գալիս է

պատասխանատու թույլ, միայն ինձ վրա կարելի է հույս դնել: Ես կգնամ ու կիմանամ, թե ինչով է պետք օգնել Զրիստոֆեր Ռոբինին, և ես, իհարկե, կօգնեմ նրան: Այսօր հենց նման զբաղմունքների օր է»:

Նա անցավ գետակի մյուս ափը և շուտով հայտնվեց այն շրջանում, որտեղ ապրում էին իր Ազգականներն ու Ծանոթները. այսօր նրանք սովորականից շատ էին թվում: Գլխի հագիվ նկատելի շարժումով բարևելով ողկիներից մի քանիսին (ձեռք տալու համար, հասկանալի է, նա ժամանակ չունեի), մի երկուսին էլ անփութորեն «Բարի լո՛ւյս, բարի լո՛ւյս» նետելով և ներողամտորեն ողջունելով ամենափոքրիկներին՝ «Ախ, այդ դուք եք», ճագարը հրաժեշտ տվեց բոլորին՝ թափահարեց թաթիկը և անհետացավ: Այս ամենը այնպիսի հուզմունք ու հիացմունք առաջացրեց նրա Ազգականների ու Ծանոթների մեջ, որ Բզեզիկների ընտանիքի որոշ ներկայացուցիչներ, ներառյալ Ամենափոքրիկին, անմիջապես Թավուտ Անտառ գնացին և սկսեցին ծառերը մազվցել, հուսալով, կատարին հասնել, նախքան Այդ Բանը կկատարվի, և վերևից ամեն ինչ տեսնել: Գագարը սլանում էր Թավուտ Անտառով, զգալով, որ ամեն ինչ իր առաջադրանքի կարևորությունը մեծանում է և, վերջապես, նա մոտեցավ այն ծառին, որտեղ ապրում էր Զրիստոֆեր Ռոբինը:

Գագարը թակեց դուռը:

Մի երկու անգամ կանչեց Զրիստոֆեր Ռոբինին:

Հետո մի քիչ հետ գնաց, թաթիկով աչքերը ծածկեց արևից և, նայելով ծառի կատարին, նորից կանչեց: Հետո մոտեցավ մյուս կողմից ու նորից ձայն տվեց. «Հե՛յ» և «Լսի՛ր» և «այդ ես եմ՝ Գագարը», բայց նորից ոչինչ տեղի չունեցավ: Դրանից հետո նա լռեց ու սկսեց ականջ դնել, նրա հետ միասին լռեց ամեն ինչ, խոր լռություն տիրեց արևով ողողված Անտառում, և այդ անհավատալի լռության մեջ քիչ հետո ինչ-որ տեղ հանկարծ երգեց ճնճողակը:

– Ափսո՛ւ, – ասաց Գագարը, – նա գնացել է:

Հիանալի սկսված օրը փչացել էր: Գագարը պատրաստվում էր հեռանալ և հեռանալուց առաջ հենց այնպես, մի վերջին անգամ, նայեց կանաչ դռանը ու հանկարծ գետնին թղթի մի կտոր տեսավ: Թղթին քորոց կար. երևի ընկել էր դռան վրայից:

– Օհո՛, – ասաց Գագարը, որի տրամադրությունը կրկին բարձրացել էր: – Ես նամակ ունեմ:

Իսկ թղթի վրա ահա թե ինչ էր գրված:

ԳՆԱՑԻ

ՇՈՒՏՈՎԳԱՄ

ՉԲԱՂԱԾԵՄ

ՇՈՒՏՈՎԳԱՄ

Ը.Ռ.

– Օհո՛, – կրկնեց Գագարը: – Պետք է անհապաղ հայտնել մյուսներին:

Ամենից մոտ Բուն էր ապրում, և Գագարը քայլերն ուղղեց նրա տան կողմը: Գագարը մոտեցավ Բուի դռանը և քաշեց զանգի պարանն ու բախեց. հետո նորից բախեց ու նորից զանգահարեց: Մի խոսքով, նա զանգահարում էր ու բախում, բախում էր ու զանգահարում այնքան ժամանակ, մինչև, վերջապես, երևաց Բուի գլուխն ու ասաց.

– Կորի՛ր այստեղից, ես մտորում եմ: Ա՛խ, այդ դո՛ւ ես:

Բուն միշտ այդպես էր դիմավորում հյուրերին:

– Բու, – գործարար տեսքով ասաց Գագարը, – ես և դու ուղեղ ունենք, մյուսների գլխում թեփ է: Եթե այս Անտառում որևէ մեկը պարտավոր է մտածել, իսկ «մտածել» ասելով, ես հասկանում եմ իսկապես մտածելը, ապա դա մեր երկուսի գործն է:

– Այո, – ասաց Բուն, – հենց դրանով էլ զբաղվում եմ:

– Խնդրում եմ, կարդա ահա այս:

Բուն Գագարից վերցրեց Զրիստոֆեր Ռոբինի գրությունը և փոքր-ինչ շփոթված նայեց թղթին: Նա, իհարկե, կարողանում էր ստորագրել՝ «Փու» և կարողանում էր գրել «Շափաթ» այնպես, որպեսզի հասկանալիք, որ դա երեքշաբթի չէ, և վատ էլ չէր կարդում, եթե, իհարկե, նրա ուսի վրայից աչքերը չէին չռում ու թույլ տեսնել հարցնում. «Դե, ի՞նչ կասես»: Այո, նա կարողանում էր. բայց...

– Դե, ի՞նչ կասես, – հարցրեց Գագարը:

– Այո, – ասաց Բուն շատ խելացի ձայնով: – Ես հասկանում եմ, թե դու ինչ նկատի ունես: Անտարակո՛ւյս:

– Դե, ի՞նչ կասես:

– Միանգամայն ճիշտ է, – ասաց Բուև և քիչ մտածելուց հետո ավելացրեց: – Եթե դու չգայիր, ստիպված պիտի լինեի ինքս քեզ մոտ գալ:

– Ինչո՞ւ, – հարցրեց ճագարը:

– Այս նույն պատճառով, – ասաց Բուև, հուսալով, որ վերջապես կկարողանա պարզել, թե խոսքն ինչի մասին է:

– Երեկ առավոտյան, – հանդիսավորությամբ հայտարարեց ճագարը, – ես այցելեցի Քրիստոֆեր Ռոբինին: Նա տանը չէր: Եվ նրա դռանը գրություն էր փակցված:

– Հենց այս գրությո՞ւնը:

– Ոչ, ուրիշը: Բայց նույն բովանդակությամբ: Այս ամենը շատ տարօրինակ է:

– Ապշեցուցիչ է, – ասաց Բուև, աչքը չկտրելով գրությունից: Մի պահ, չգիտես ինչու, նրան թվաց, որ ինչ-որ մեկը կծել է Քրիստոֆեր Ռոբինին: – Եվ դու ի՞նչ արեցիր:

– Ոչինչ:

– Դա լավ է, – պատասխանեց իմաստուն Բուև: Նա սարսափով սպասում էր նոր հարցի, և այդ հարցը իրեն սպասել չտվեց:

– Դե, ի՞նչ կասես, – կրկնեց համառ ճագարը:

– Իհարկե, սա միանգամայն անվիճելի է, – մռթմռթաց Բուև: Մի րոպեի չափ նա անօգնական բացուխուփ էր անում կտուցը, ի վիճակի չլինելով որևէ բան հորինել: Եվ հանկարծ նրա միտքը պայծառացավ:

– Ասա ինձ, ճագար, ինչ էր գրված առաջին գրության մեջ: Միայն թե բառ առ բառ: Դա շատ կարևոր է: Դրանից է կախված ամեն ինչ:

– Նույնը, ինչ որ այստեղ, ազնիվ խոսք:

Բուև նայեց ճագարին, հազիվ զսպելով իրեն, որ նրան ծառից ցած չգցի, բայց մտածեց, որ երբ էլ ասես կհասցնի այդ անել, ուստի մի անգամ էլ փորձեց պարզել, թե ինչի մասին է խոսքը:

– Խնդրում եմ կրկնել ճիշտ տեքստը, – ասաց նա, ուշադրություն չդարձնելով ճագարի խոսքերին:

– Նույնը, ինչ որ այստեղ. «Գնացի շուտովգամ»: Միայն թե այստեղ ավելացված է՝ «Չբաղածեմ շուտովգամ»: Բուև թեթևացած շունչ քաշեց:

– Դե ահա, – ասաց նա, – հիմա մեր վիճակը պարզվեց:

– Այո, բայց ինչպիսին է Քրիստոֆեր Ռոբինի վիճակը, – ասաց ճագարը: – Որտե՞ղ է նա: Սա՞ է հարցը: Բուև նորից գրությանը նայեց: Նրա պես կրթված անձնավորության համար, իհարկե, դժվար չէր գրությունը կարդալ. «Գնացի շուտովգամ: Չբաղածեմ շուտովգամ»: Ուրիշ էլ ի՞նչ կարող էր գրված լինել:

– Իմ կարծիքով, սիրելի ճագար, ամեն ինչ շատ պարզ է, – ասաց նա: – Քրիստոֆեր Ռոբինը ինչ-որ տեղ է գնացել Շուտովգամի հետ: Նա և այդ... Շուտովգամը հիմա ինչ-որ բանով են զբաղված: Դու վերջերս Անտառում չե՞ս հանդիպել որևէ Շուտովգամի:

– Ը-ը-ը, – ասաց ճագարը, – ես էլ նույնը քեզ էի ուզում հարցնել: Դրանք ի՞նչ տեսք ունեն:

– Դե, – ասաց Բուև, – բծավոր կամ խոտակեր Շուտովգամը, կարելի է ասել ծայրահեղ դեպքում, – ասաց նա, – նրանք ավելի շուտ նման են... Դե, իհարկե, – շարունակեց նա, – դա խիստ կախված է այն բանից... Դե... – ասաց Բուև: – Մի խոսքով, ես վատ եմ պատկերացնում նրանց արտաքին տեսքը, – վերջապես անկեղծորեն խոստովանեց նա:

– Շատ շնորհակալ եմ, – ասաց ճագարը: Եվ ճագարը վազեց Վինի-Թուխի մոտ: Դեռ հեռվից նա հանելուկային աղմուկ լսեց: Կանգ առավ ու սկսեց ականջ դնել: Այդ աղմուկը Վինի-Թուխն էր բարձրացրել, իսկ աղմուկը այսպիսին էր.

ՀԱՆԵԼՈՒԿԱՅԻՆ ԱՂՄՈՒԿ

Դարձյալ ոչ մի բան ես չեմ հասկանում,
Գլխումս ամեն ինչ իրար է խառնվել,
Ամեն քայլափոխ և ամեն ինչում,
Շրջապատում են ինձ հանելուկներ:

Չենց թեկուզ բառում այս յոթանասուն,
Մի հարցնող լինի, ինչ ենք մենք տեսել,
Իսկ վեցանասուն կամ հինգանասուն,
Չենք ասում, թեև կարող ենք ասել:

Լուռ է դռնակը, լուռ է դանակը,
Նրանք քեզ երբեք պատասխան չեն տա՝
Ինչու մեկ դրոշ ենք մենք կոչում նակը,
Իսկ մյուս դեպքում անվանում ենք դա:

Չաճախ եմ լսում՝ մեղրոտ, հա մեղրոտ,
Սակայն եթե նա՝ մեղրը, սիրելիս,
Իսկապես ունի թեկուզ և կարճ ոտ,
Ինչո՞ւ իր ոտքով ինձ մոտ չի գալիս:

Թե հասկանայի, ինչ լավ կլիներ,
Եվ այս ամենը, չէի տանջի ինձ:
Ա՛յ քեզ հանելուկ, ուզում եմ քնել,
Չոգնած այս Դժվար Չանելուկներից:

- Ողջույն, Թո՛ւխ, – ասաց ճագարը: – Չիանալի՛ էր:
 - Բարև, ճագար, – քնկոտ պատասխանեց Թուխը:
 - Այդ բոլորը քո՞ մտքերն են:
 - Կարծես թե այո, – պատասխանեց Թուխը: – Չեմ ուզում ասել, թե ես մտածել գիտեմ, – համեստորեն շարունակեց նա, – դու լավ գիտես, որ երբեմն վրաս նման բան է գալիս:
 - Ըհը, – ասաց ճագարը, որ երբեք թույլ չէր տալիս ինչ-որ բան գա իր վրա, այլ ինքն էր միշտ գտնում ու բռնում ամեն ինչ: – Ուրեմն, այսպես: Ասա ինձ, Թուխ, երբևիցե մեր Անտառում դու հանդիպե՞լ ես Բծավոր կամ Խոտակեր Շուտովգամին:
 - Չէ, – ասաց Թուխը, – չեմ հանդիպել: Բայց Վագրին քիչ առաջ տեսա:
 - Նա մեզ պետք չի:
 - Այո, – ասաց Թուխը, – ես էլ եմ այդպես կարծում:
 - Իսկ Դնչիկին տեսե՞լ ես:
 - Այո, – ասաց Թուխը, – բայց, կարծում եմ, հիմա նա էլ մեզ պետք չի, – շարունակեց նա քնկոտ:
 - Դա կախված է նրանից, որևէ մեկին նա տեսե՞լ է թե՞ ոչ:
 - Ինձ տեսել է, – ասաց Թուխը:
- Ճագարը նստեց Թուխի կողքին, բայց, զգալով, որ դա իր արժանապատվությունից ցածր է, նորից ոտքի կանգնեց ու ասաց.
- Եթե մեր խնդիրը ձևակերպենք, ապա կարելի է արտահայտել այսպես. «Ինչո՞վ է զբաղված Քրիստոֆեր Ռոբինը առավոտյան ժամերին»:
 - Ինչո՞վ է նա զբաղված:
 - Այո, այո: Կարո՞ղ ես ինձ պատմել, թե վերջին ժամանակները առավոտյան նա ինչ է անում: Ինձ պետք է վերջին մի քանի օրվա ականատեսի վկայությունը:
 - Այո, – ասաց Թուխը, – երեկ մենք նախաճաշեցինք միասին: Վեց Սոճիների մոտ: Ես մի փոքրիկ զամբյուղ հյուսեցի, շատ փոքրիկ, բայց հարմար զամբյուղ, շատ սիրուն, կարգին զամբյուղ, լիքը...
 - Այո, այո, – ասաց ճագարը, – հասկանալի է: Բայց ես ուրիշ բան եմ հարցնում: Դու երբևիցե տեսե՞լ ես նրան առավոտյան ժամը տասնմեկի ու տասներկուսի արանքում:
 - Ժամը տասնմեկին... Տասնմեկին, հասկանում ես, ես սովորաբար տուն եմ գնում: Այդ ժամին որոշ գործեր ունեմ...
 - Իսկ տասնմեկն անց տասնհինգի՞ն:

– Ուց ասեմ...– սկսեց Թուխը:

– Իսկ տասնմեկն անց կեսին:

– Այո, – ասաց Թուխը, – տասնմեկն անց կեսին կամ մի քիչ ավելի ուշ ես սովորաբար տեսնվում եմ՝ նրա հետ: Եվ այդտեղ Թուխը հանկարծ հիշեց, որ իսկապես, արդեն վաղուց այդ ժամին չի տեսնում Քրիստոֆեր Ռոբինին: Ճաշից հետո՝ այո, երեկոյան՝ այո, Նախաճաշից առաջ՝ այո, Նախաճաշից անմիջապես հետո՝ Նույնպես, իսկ դրանից հետո Քրիստոֆեր Ռոբինը իսկապես որ ասում է. «Դե, Թուխ, շուտով կտեսնվենք», և իսկույն հեռանում է:

– Բանն էլ հենց այդ է, – ասաց ճագարը, – ո՞ր է գնում:

– Գուցե ինչ-որ բա՞ն է փնտրում:

– Ի՞նչ:

– Ես էլ դա էի ուզում ասել, – ասաց Թուխը, ապա ավելացրեց. – Գուցե փնտրում է այդ... այդ...

– Բծավոր կամ խոտակեր Շուտովգամի՞ն:

– Այո, – ասաց Թուխը, – նրանցից մեկին: Եթե նա տեղում չի...

Ճագարը խստությամբ Վինի-Թուխին նայեց:

– Տեսնում եմ քեզնից օգուտ չկա, – ասաց նա:

– Չկա, – ասաց Թուխը: – Բայց ես ճգնում եմ, – համեստորեն ավելացրեց նա:

Ճագարը նրան շնորհակալություն հայտնեց ճգնելու համար և ասաց, որ ինքը պետք է Իային այցելի և եթե Թուխն ուզում է, կարող է գալ իր հետ: Բայց Թուխը, որի գլխում ծնվում էր Աղմուկիկի նոր քառատողը, ասաց, որ ինքը Դնչիկին կսպասի:

– Հաջողություն, ճագար, – ասաց նա:

Եվ ճագարը գնաց:

Բայց պատահեց այնպես, որ Դնչիկին առաջինը ճագարը տեսավ: Այդ օրը Դնչիկը շատ-շատ վաղ էր արթնացել ու գնացել էր մանուշակներ հավաքելու: Երբ նա մի մեծ փունջ էր կազմել, բերել տուն և դրել ծաղկամանի մեջ, չգիտես ինչու հանկարծ մտածեց, որ երբեք Իային մանուշակներ չի նվիրել: Եվ որքան շատ էր այդ մասին մտածում, այնքան շատ էր զգում, թե ինչքան տխուր բան է իշուկ լինելը, այն էլ այնպիսի իշուկ, որին ոչ ոք ոչ մի անգամ մանուշակ չի նվիրել: Եվ նա նորից մարգագետին վազեց, մտքում շարունակ կրկնելով՝ «Իա, մանուշակներ», իսկ հետո՝ «Մանուշակներ, Իա-Իա», որպեսզի հանկարծ չմոռանա: Ահա թե ինչպիսի օր էր Դնչիկի համար:

Դնչիկը մի մեծ փունջ կազմեց և վազեց այնտեղ, որտեղ սովորաբար արածում էր Իան: Ճանապարհին նա փնջից հոտ էր քաշում և իրեն անսահման երջանիկ էր զգում:

– Բարև, Իա, – անվստահ սկսեց Դնչիկը, որովհետև նրան թվաց, որ Իան զբաղված է:

Իան բարձրացրեց ոտքը և թափահարելով հասկացրեց, որ հեռանա:

– Վաղը արի, – ասաց նա, – կամ մյուս օրը:

Բայց Դնչիկը հետաքրքրությունից մոտ եկավ: Իայի առջև դրված էին երեք փայտիկներ, որոնցից նա աչքը չէր կտրում: Փայտիկներից երկուսը զուգահեռ էին դրված, իսկ երրորդը տակից միացնում էր նրանց: Դնչիկը մտածեց, որ դա, երևի, ինչ-որ ճուղակ է:

– Իա, – նորից ասաց նա, – ես ուզում եմ...

– Դա փոքրիկ Դնչի՞կն է, – հայացքը փայտիկներից չկտրելով, հարցրեց Իան:

– Այո, Իա, ես...

– Դու գիտե՞ս, թե սա ի՞նչ բան է:

– Ոչ:

– Սա «Ա» է:

– Օ՛, – ասաց Դնչիկը:

– Ի՞նչ «Օ»: Սա «Ա» է, «Ա՛», – խիստ ձայնով ասաց Իան: – Վատ ես լսում, ի՞նչ է: Թե կարծում ես ավելի կրթված ես, քան Քրիստոֆեր Ռոբինը:

– Այո, – ասաց Դնչիկը: – Ո՛չ, ո՛չ, – շտապեց սխալն ուղղել նա և ավելի մոտեցավ:

– Քրիստոֆեր Ռոբինն ասաց, որ սա «Ա» է, և նշանակում է, սա կլինի «Ա»: Համենայն դեպս, այնքան ժամանակ, քանի դեռ ոչ ոք չի տրորել, – մռայլ ասաց Իան:

Դնչիկը շտապեց հետ ցատկել ու հոտոտեց իր մանուշակները:

- Իսկ դու գիտե՞ս, թե ի՞նչ է նշանակում «Ա»-ն, փոքրիկ Դնչի՛կ:
- Չէ, Իա, չգիտե՛մ:
- Նշանակում է Ուսո՛ւմ, նշանակում է Կրթությո՛ւն, Գետությո՛ւն և նման ուրիշ բաներ, որոնց մասին ոչ Թուխը, ոչ էլ դու գաղափար անգամ չունե՛ք: Ահա թե ինչ է նշանակում «Ա»-ն:
- Օ՛, – նորից ասաց Դնչիկը, – ես ուզում էի ասել՝ մի՞թե, – նա շտապեց ուղղել իր սխալը:
- Լսիր ինձ, փոքրիկ Դնչիկ: Այս Անտառում հազար ու մի տեսակ խաժամուժ կա, և Նրանք սիրում են կրկնել «Դե, Իան, ընդամենը Իան է, Նրան բանի տեղ դնող չկա»: Նրանք թրև են գալիս այս կողմերում և ասում են՝ «Հա-հա՛»: Բայց ի՞նչ գիտեն Նրանք «Ա» տառի մասին: Ոչինչ: Նրանց համար սրանք սովորական փայտիկներ են և ուրիշ ոչինչ: Բայց կրթվածների համար, սա ականջիդ օղ արա, փոքրիկ Դնչի՛կ, կրթվածների համար, ես չեմ խոսում Թուխերի ու Դնչիկների մասին, սա նշանավոր ու հզոր «Ա» տառն է: Այո, սա այնպիսի բան չէ, – ավելացրեց նա, որից ով ասես կարողանա հոտ քաշել:
- Դնչիկը շփոթված շուրջը նայեց և մանուշակները թաքցրեց հետևում: Հենց այդ պահին էլ երևաց ճագարը:
- Ահա և ճագարը, – ուրախացավ Դնչիկը, որ սկսել էր օգնության կարիք զգալ: – Բարև, ճագա՛ր: ճագարը մեծամտորեն գլուխ տվեց Դնչիկին և ասաց՝ «Ողջոյն, Իա», այնպիսի տեսքով, որից զգացվում էր, որ ընդամենը երկու թուփե հետո նա ասելու է՝ «Ցտեսություն»:
- Իա, ես քեզ միայն մի հարց ունեմ տալու: Վերջին ժամանակներս Քրիստոֆեր Ռոբինը առավոտյան ինչո՞վ է զբաղվում:
- Իմ առջև ի՞նչ եմ տեսնում, – հայացքը գետնից չկտրելով, հարցրեց Իան:
- Երեք փայտիկ, – առանց մտածելու պատասխանեց ճագարը:
- Ահա տեսնո՞ւմ ես, – ասաց Իան Դնչիկին: Հետո ճագարին նայեց: – Այ, հիմա ես կպատասխանեմ քո հարցին, – հաղթական ավելացրեց նա:
- Շնորհակալություն, – ասաց ճագարը:
- Քրիստոֆեր Ռոբինը առավոտյան ինչո՞վ է զբաղվում: Նա սովորում է: Նա կրթություն է ստանում: Նա տարեպետում է... իմ կարծիքով, նա օգտագործեց հենց այս բառը, բայց հնարավոր է, որ սխալվում եմ... մի խոսքով, նա տարեպետում է գիտելիքներին: Իմ համեստ ուժերի չափով ես նույնպես... եթե ճիշտ եմ յուրացրել այս բառը՝ տարե... անում եմ նույնը, ինչ նա: Օրինակ այս տառը...
- Դա «Ա» է, – ասաց ճագարը, – բայց մի քիչ անհաջող է ստացվել: Դե լավ, ես պետք է զնամ ու հայտնեմ մյուսներին: Ցտեսությո՛ւն:
- Իան նայեց իր փայտիկներին, հետո Դնչիկին:
- Ինչպե՞ս ասաց ճագարը: Ի՞նչ է սա, – հարցրեց նա:
- «Ա», – ասաց Դնչիկը:
- Այդ դո՞ւ նրան հուշեցիր:
- Ոչ, Իա, ես չեմ հուշել: Ես կարծում եմ, ինքը գիտեր:
- Ի՞նքը գիտեր: Ուզում ես ասել, որ մի ինչ-որ ճագար ճանաչում է «Ա» տա՛ռը:
- Այո, Իա: Գիտե՞ս, նա շատ խելացի ճագար է:
- Խելացի՛, – արհամարհանքով ասաց Իան և ինչքան ուժ ուներ սմբակով խփեց երեք փայտիկներին:
- Կրթությո՛ւն, – վշտացած բացականչեց Իան, ցատկելով իր փայտիկների վրա (նրանք արդեն վեց հատ էին):
- Ի՞նչ բան է Գետությունը, – հարցրեց Իան և այնպես քացահարեց փայտիկները (որոնք արդեն տասներկու հատ էին), որ սրանք օղ թռան: – Մի ինչ-որ ճագարը գիտե այդ բոլո՛րը: Հա-հա՛:
- Ես կարծում եմ... – վարանելով ասաց Դնչիկը:
- Պետք չի՛, – ասաց Իա-Իան:
- Ես կարծում եմ, որ մանուշակները շատ լավն են, – ասաց Դնչիկը: Նա փունջը դրեց Իայի առաջ ու փախավ: Հաջորդ առավոտյան Քրիստոֆեր Ռոբինի դռանը փակցված գրությունը ազդարարում էր.

ԵՍ ԳՆԱՑԻ
 ՇՈՒՏՈՎ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՄ
 Զ.Ռ.

Ահա թե ինչու Անտառում բոլոր բնակիչները, բացառությամբ, իհարկե, Բժավոր կամ Խոտակեր Շուտովգամի, այսուհետև գիտեն, թե ինչո՞վ է զբաղվում Քրիստոֆեր Ռոբինը առավոտյան:



ՎՆՈՒՄ ՏՎԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Որտեղ պարզվում է, որ Վագրերը ծառ մագլցել չգիտեն

Մի անգամ այնպես պատահեց, որ Վինի-Թուխը ինչ-որ բան էր մտածում: Եվ ահա նա մտածեց, որ վատ չի լինի, եթե այցելի Իային, որովհետև երեկվանից չի տեսել նրան:

Նա գնում էր երգելով, երբ հանկարծ հիշեց, որ Բուին չի տեսել երեկ չէ մյուս օրվանից ու որոշեց ճանապարհին մտնել Թավուտ Անտառ ու տեսնել՝ Բուև տա՞նն է, թե՞ ոչ:

Քթի տակ դարձյալ նույն երգը մոմռալով, նա սկսեց քարից քար ցատկելով անցնել Գետը, բայց երբ հասել էր երրորդ քարին, հանկարծ անհանգստացավ. տեսնես ինչպե՞ս են Կենգուն, Ռուն և Վագրը: Թուխը մտածեց. «Ես շատ վաղուց չեմ տեսել ճստիկ Ռուին, և եթե այսօր էլ չտեսնեմ, ապա դա կլինի շա՛տ-շատ վաղուց»:

Եվ նա նստեց քարերից մեկին, հենց Գետի մեջտեղում և, մտածելով թե հիմա ո՞ր գնա, նույն երգից երգեց ևս մի կտոր:

Այդ կտորը, որ նա երգեց, մոտավորապես այսպիսին էր.

Ինչո՞վ զբաղվեմ առավոտյան,

Ասե՛ք ինձ:

Գուցե ցատկե՞լ ես սովորեմ

ճստիկից:

Թե մեջքս շուտ կբարակի,

Իսկ դա պիտի որ ինձ սագի,

Ու բացի այդ, վատ չեմ ցատկի

Կեն,

գու-

ի՛ց:

Արևն այնպես քնքուշ ու տաք էր, այնպես տաք էր նաև նրա շողերի տակ վաղուց պառկած քարը, որ Թուխը համարյա որոշեց առավոտը նրա վրա անցկացնել: Բայց հանկարծ նա հիշեց ճագարին:

«Այո, ճագարը, — ինքն իրեն ասաց Թուխը: — Ես սիրում եմ նրա հետ զրուցել: Նա հասկանալի է խոսում: Նա չի սիրում երկար, անհասկանալի բառեր, Բուփ նման չի: Նա պարզ, հասարակ բառեր է սիրում, օրինակ. «Ուտենք» կամ «Հյուրասիրվիր, Թուխ»: Այո, իմ կարծիքով, նախ և առաջ պետք է ճագարին այցելել»: Այստեղ երգին նոր կտոր ավելացավ: Ահա դա.

Սիրալիր է ճագարն այնքան
Դեպքից դեպք,
Հաճելի է նստել սեղան
Նրա հետ:
Նա, որ ուտել շատ է ուզում,
Նրա հետ է լեզու գտնում,
Եթե միայն չի շտապում
Ոչ
մի
տե՛ղ:

Եվ երբ Թուխը երգեց-վերջացրեց, վեր կացավ քարից, վերադարձավ ափ ու վճռական քայլերով դեպի ճագարի տունը շարժվեց: Բայց մի քանի քայլ չէր արել, երբ սկսեց հարցեր տալ, իհարկե, ինքն իրեն, քանի որ նրա կողքին ոչ ոք չկար.

«Իսկ եթե ճագարը հանկարծ տանը չլինի՞»:

«Կամ դուրս գալիս հանկարծ նորից մնամ նրա դռան մեջ, ինչպես մի անգամ արդեն եղել է, որովհետև նրա դուռը շատ է նեղ»:

«ԶԷ՞ որ ես չեմ հաստացել, բայց նրա դուռը, միանգամայն հնարավոր է, նիհարած կլինի»:

«Այո, թերևս, այդպես լինի...»

Սեփական հարցերին այնքան համոզիչ պատասխաններ տալով, Թուխն իր համար էլ աննկատելի շարունակ դեպի ձախ էր թեքվում, մինչև որ հանկարծ հայտնվեց սեփական դռան առջև: Ժամը տասնմեկն էր և, հասկանալի է, միանգամայն հարմար, որպեսզի նա մի քիչ...

Մի խոսքով, կես ժամ անց Թուխը ճանապարհեց այնտեղ, ուր իսկապես ուզում էր գնալ, այսինքն՝ Դնչիկի մոտ, և ճանապարհին թաթով սրբում էր շրթունքները ու երգում բավականին թմբիկ մի երգ: Ահա սա.

Լավ է ապրում Վինի-Թուխը
Աշխարհում:
Դրա համար էլ միշտ ուրախ է
Նա երգում:
Ոչ, նա երբեք չի նեղանա,
Ինչ էլ ուտի, չի հաստանա,
Վինի-Թուխը ուտելուց է
Նի-
հա
րո՞ւմ:

Գուցե ձեզ այս տողերը այնքան էլ լավ չթվան, բայց Թուխը այս երգը երգում էր շատ արևոտ առավոտյան, շատ առատ նախաճաշից հետո, ուստի համոզված էր, որ այն երբևիցե իր հորինած լավագույն երգերից մեկն է: Եվ նա երգում էր ու երգում, իրեն մեծ բավականություն պատճառելով:

Դնչիկը փոս էր փորում իր տան առաջ, անմիջապես դռան մոտ:

— Բարև, Դնչի՛կ, — գոռաց Վինի-Թուխը:

— Օ՛յ, բարև, Թո՛ւխ, — պատասխանեց Դնչիկը, հանկարծակիի եկած վեր թռչելով: — Ես իմացա, որ դու ես:

— Ես նույնպես, — ասաց Թուխը: — ինչո՞վ ես զբաղված:

— Կաղին եմ տնկում, Թուխ, թող նրանից մեծ կաղնի աճի: Անմիջապես տանս մոտ ինչքան ասես կաղին ունենամ, թե չէ, գիտես, ստիպված եմ լինում մինչև ո՛ր գնալ:

— Իսկ եթե չաճի՞:

— Կաճի, որովհետև Զրիստոֆեր Ռոբինը ասաց, որ կաճի: Դրա համար էլ տնկում եմ:

— Հը՛մ, — ասաց Թուխը: — Իսկ ես... Իսկ ես մեղրահաց կտնկեմ իմ այգում, թող հետո փեթակներ աճեն:

Դնչիկն այնքան էլ համոզված չէր դրանում:

– Կամ ավելի լավ է մեղրահացի կտորներ, – ասաց Թուխը: – Մեղրահացը մի քիչ պետք է ինչպես: Միայն վախենում եմ, այդ դեպքում ոչ թե լրիվ փեթակ աճի, այլ մի մասը, այն էլ՝ հանկարծ սխալ կտոր, որտեղ մեղուները միայն բզզում են, իսկ մեղր չեն սարքում: Տխո՛ւր բան կլինի:

Դնչիկը համաձայնեց, որ դա իրոք բավականին տխուր բան կլինի:

– Իմիջիայրոց, Թուխ, տնկելը հեշտ չի, – ասաց Նա, – պետք է կարողանալ: – Եվ Նա կաղինը դրեց փոսի մեջ, ծածկեց հողով ու սկսեց վրան թռչկոտել:

– Ես տնկել գիտեմ, – ասաց Վինի-Թուխը, – որովհետև Քրիստոֆեր Ռոբինը ինձ ծաղիկների սերմեր տվեց՝ ընկալիչներ ու պտուտակիկներ: Ոչ, մեխիկներ: Ես այդ սերմերը ցանել եմ և շուտով իմ դռան առաջ իսկական ծաղկանոց կլինի՝ ընկալիչներ ու մեխիկներ: Կամ պտուտակիկներ:

– Ես կարծում էի դրանք նարգիզ են կոչվում, – շարունակելով տեղում թռչկոտել, անվճռական ասաց Դնչիկը, – իսկ մեխիկները... մեխիկներ... Դրանք երևի մեխակներ են:

– Ոչ, – ասաց Թուխը, – իմ ծաղիկները կոչվում են ընկալիչներ ու պտուտակիկներ:

Հողը ամուր պնդացնելուց հետո Դնչիկը տոտիկները քսեց փորին ու ասաց. «Հիմա ի՞նչ ենք անելու», իսկ Թուխը պատասխանեց. «Տեսության գնանք Կենդույին, Ռուին և Վագրին», և Դնչիկը ասաց. «Ա-ա-այո, գ-գ-գնանք», որովհետև Նա դեռևս մի քիչ վախենում էր Վագրից: Վագրը ոչ մի վայրկյան հանգիստ չէր կարողանում կանգնել, և եթե բարևում էր ձեզ, ձեր ականջներում լիքը ավագ էր լինում նույնիսկ այն բանից հետո, երբ Կենդուն ասում էր. «Վագր, մանկիկս, զգո՛ւյ՛ջ», և ձեզ օգնում էր ոտքի կանգնել:

Թուխն ու Դնչիկը ճանապարհ ընկան:

Հենց այդ նույն օրը Կենդուն խիստ տնարար տրամադրության մեջ էր: Նա որոշել էր կարգի բերել բնակարանը, հաշվել սպիտակեղենը, պարզել, թե քանի կտոր օճառ է մնացել, քանի մաքուր անձեռնոցիկ է մնացել Վագրին և քանի մաքուր գոզնոց՝ Ռուին, այնպես, որ Նա երկուսին էլ հանեց տնից, Ռուի համար սալաթով, իսկ Վագրի համար ձկան յուղով բուստերբորոններ պատրաստելով, որպեսզի նրանք ուրախ ժամանակ անցկացնեն անտառում և իրենց լավ պահեն:

Ճանապարհին Վագրը պատմում էր Ռուին (որին այդ բոլորը շատ էր հետաքրքրում) այն ամենի մասին, ինչ կարողանում են անել Վագրերը:

– Իսկ թռչել նրանք կարողանո՞ւմ են, – հարցրեց Ռուին:

– Վագրե՞րը, – ասաց Վագրը: – Թռչե՞լ: Բան գտար հարցնելու: Նրանք գիտես ո՞նց են թռչում:

– Օ՛, – ասաց Ռուին: – Նրանք թռչում են Բուկի նմա՞ն:

– Բուկից էլ լավ, – ասաց Վագրը: – Միայն թե չեն ուզում:

– Իսկ ինչո՞ւ չեն ուզում:

– Չգիտես ինչու այդ բանը նրանց դուր չի գալիս:

Բայց Ռուին դա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որովհետև շատ էր երազում թռչել, և Վագրը նրան բացատրեց, որ պետք է Վագր լինել այդ հասկանալու համար:

– Իսկ ցատկե՞լ, – հարցրեց Ռուին: – Կարո՞ղ են Վագրերը Կենդուների նման ցատկել:

– Էլի բան գտա՞ր հարցնելու, – ասաց Վագրը: – Այն էլ ո՞նց: Երբ ուզում են, իհարկե՛:

– Իսկ ես ինչքա՞ն եմ սիրում ցատկել, – ասաց Ռուին: – Արի տեսնենք ով հեռու կցատկի, ե՞ս, թե դո՞ւ:

– Իհարկե, ես, – ասաց Վագրը, – բայց հիմա ժամանակ չկորցնենք, թե չէ կուշանանք:

– Ինչի՞ց կուշանանք:

– Այնտեղից, ուր պետք է ժամանակին հասնենք, – ասաց Վագրը քայլերն արագացնելով:

Շուտով նրանք հասան Վեց Սոճիներին:

– Իսկ ես լողալ գիտեմ, – հայտնեց Ռուին, – մի անգամ ընկա գետը ու լողացի: Իսկ Վագրերը լողալ գիտե՞ն:

– Իհարկե, գիտեն: Վագրերը ամեն ինչ գիտեն:

– Իսկ Թուխի նման մազլցե՞լ, – հարցրեց Ռուին, կանգնելով Վեց Սոճիներից ամենաբարձրի մոտ և վերև նայելով:

– Աշխարհում բոլորից լավ Վագրերն են մազլցում, – ասաց Վագրը, – հազար անգամ լավ ամեն տեսակի Թուխերի՛ց:

– Նույնիսկ այս ծա՞ռը:

– Նրանք հենց այսպիսի ծառեր են մազլցում, – ասաց Վագրը: – Ամբողջ օրը մազլցում են՝ մեկ վեր, մեկ վար:

– Օ՛յ, Վագր, իսկապե՞ս:

– Հիմա կտեսնես, – վճռական ասաց Վագրը: – Նստիր մեջքիս և կտեսնես:

Զգիտես ինչու նա հանկարծ զգաց, որ ծառ բարձրանալը Վագրերի միակ տաղանդն է, որում ինքը համոզված է:

– Օ՛յ, Վագր: Օ՛յ Վագր: Օ՛յ Վագր, – հիացմունքից ծվծվում էր ճստիկ Ռուս: Նա նստեց Վագրի մեջքին, և նրանք մագլցեցին:

Մինչև առաջին ճյուղին հասնելը Վագրը կրկնում էր (ինքն իրեն). «Մենք մագլցում ենք»: Հասնելով հաջորդ ճյուղին, նա հպարտությամբ ասաց (ինքն իրեն). «Իզո՞ւր էի ասում, որ Վագրերը կարող են մագլցել»: Մի քիչ էլ բարձրանալով, նա ասաց (ինքն իրեն). «Իհարկե, սա այնքան էլ հեշտ բան չի...»

Ավելի վեր բարձրանալով, նա ասաց.

– Չէ՞ որ իջնել էլ կա:

Իսկ ավելի-ավելի վեր.

– Եվ դա դժվար կլինի...

– Եթե չընկնենք...

– Բայց դա արդեն կլինի բոլորովին...

– Հե՛շտ:

Եվ հենց որ նա ասաց՝ «հե՛շտ», ճյուղը, որի վրա նա կանգնած էր, հանկարծ կոտրվեց, և, զգալով, որ ընկնում է, Վագրը հագիվ հասցրեց կառչել վերևի ճյուղից... Հետո նա դանդաղ, շատ դանդաղ բարձրացրեց գլուխը և դունչը դրեց ճյուղին... Հետո բարձրացրեց հետևի թաթերից մեկը... Հետո մյուսը... Եվ, վերջապես, նա տեղավորվեց ճյուղի վրա, ծանր շնչելով ու ափսոսալով, որ մագլցելու փոխարեն չփորձեց լողորդությամբ զբաղվել:

Ռուսն իջավ Վագրի մեջքից ու նստեց կողքին:

– Օ՛յ, Վագր, – ուրախ ասաց նա, – մենք արդեն կատարի՞ն ենք:

– Ոչ, – ասաց Վագրը:

– Իսկ մենք կբարձրանա՞նք կատարը:

– Ո-ո-ո՛չ, – փնթփնթաց Վագրը:

– Է՛-է-է՛, – տխրեց Ռուս, բայց նույն պահին էլ զվարթ շարունակեց: – Ի՛նչ լավ ստացվեց, երբ դու ձևացրեցիր, թե ընկնում ես, բայց հետո չընկար: Մի անգամ էլ փորձենք:

– Ո-ո-ո՛չ, – գոմռաց Վագրը:

Ռուսն լռեց, բայց քիչ հետո հարցրեց.

– Իսկ կարելի՞ է բուտերբրոդները ուտել:

– Ուտե՛նք, – համաձայնեց Վագրը, – ո՞ւր է:

– Ներքևում է, ծառի տակ:

Վագրը ասաց.

– Ես կարծում եմ, լավ կլինի, եթե մի քիչ համբերենք:

Նրանք այդպես էլ արեցին:

Իսկ մինչ այդ Թուփն ու Դնչիկը շարունակում էին իրենց զբոսանքը: Թուփը, բանաստեղծության միջոցով հայտնում էր Դնչիկին, որ ինքը «երբեք չի չաղանա, ինչ էլ ուտի չի հաստանա, որովհետև ուտելուց է նիհարում», իսկ Դնչիկը մտածում էր, թե արդյո՞ք շուտ կաճի իր տնկած կաղինը:

– Թո՛ւփ, նայի՛ր, – հանկարծ ճղճղաց Դնչիկը, – Սոճու վրա ինչ-որ մեկը նստած է:

– Ճիշտ է, – ուշադիր նայելուց հետո ասաց Թուփը: – Այնտեղ ինչ-որ գազան կա:

Դնչիկը բռնեց Թուփի թաթը, հավանաբար, որպեսզի Թուփը չվախենա:

– Դա որևէ Գիշատիչ գազա՞ն է, – հարցրեց նա, աշխատելով ուրիշ կողմ նայել:

Թուփը գլխով արեց:

– Դա Յագույյար է, – ասաց նա:

– Իսկ ի՞նչ են անում Յագույյարները, – հարցրեց Դնչիկը, սրտի խորքում հուսալով, որ հիմա նրանք այդ բանը չեն անի:

– Նրանք թաքնվում են ծառի ճյուղերի մեջ և այնտեղից նետվում վրադ, երբ կանգնում են ծառի տակ, – ասաց Թուխը: – Զրիստոֆեր Ռոբինը նրանց մասին ամեն ինչ պատմել է:

– Ուրեմն, արի չմոտենանք ծառին, Թուխ, թե չէ մեկ էլ տեսար նա նետվեց այնտեղից ու ոտքերը կոտրեց:

– Նրանց ոչինչ էլ չի պատահում, – ասաց Թուխը, – նրանք շատ ճարպիկ են:

Բայց, չգիտես ինչու, դա չմխիթարեց Դնչիկին: Նա այնուամենայնիվ զգում էր, որ չպետք է մոտենալ ծառին, որտեղից, մեկ էլ տեսար, ինչ-որ մեկը ցած նետվեց, թեկուզև շատ ճարպկորեն: Նա արդեն պատրաստվում էր մի շտապ գործով տուն վազել, երբ Յագույարը կանչեց ծառի վրայից.

– Օգնեցե՛ք, օգնեցե՛ք:

– Յագույարներն ունեն այդպիսի սովորություն, – ասաց Թուխը, շատ գոհ, որ կարող է պարծենալ իր գիտելիքներով: – Նրանք գոռում են՝ «օգնեցե՛ք, օգնեցե՛ք», և հենց որ վերև նայեցիր, նետվում են վրադ:

– Ես ներքև՝ եմ նայում, ներքև՝, – ամբողջ կոկորդով մեկ ճղճղաց Դնչիկը, որպեսզի հանկարծ Յագույարը սխալմամբ չանի այն, ինչ չպետք է անել:

Այդ նույն ճյուղից, որտեղ նստած էր Յագույարը, հիացական ծվծվոց լսվեց.

– Թո՛ւխն ու Դնչի՛կը: Թո՛ւխն ու Դնչի՛կը:

Եվ Դնչիկը հանկարծ հիշեց, որ տանը ոչ մի շտապ գործ չունի և զգաց, որ սթանչելի օր է՝ արևոտ ու տաք, շատ ավելի լավ, քան մինչև հիմա թվում էր իրեն:

– Թո՛ւխ, – կանչեց նա, – իմ կարծիքով, այդ Վագրն ու Ռո՛ւն են:

– Իմ կարծիքով նույնպես, – ասաց Թուխը: – Իսկ ես կարծում էի, որ դա Յագույար է և... և էլի մի Յագույար:

– Յե՛՛յ, Ռո՛ւ, – կանչեց Դնչիկը, – ի՞նչ եք անում այդտեղ:

– Մենք չե՛նք կարողանում ցած իջնել: Մենք չե՛նք կարողանում ցած իջնել, – հիացմունքով ծվծվում էր Ռուն:

– Լավ է, չե՛: Թո՛ւխ: Ես ու Վագրը ապրում ենք ծառի վրա, Բուհի նման: Մենք սրանից հետո Մի՛շտ այստեղ ենք ապրելու: Իսկ ես տեսնում եմ Դնչիկի տո՛ւնը: Դնչի՛կ: Ես այստեղից տեսնում եմ քո տո՛ւնը: Շատ ենք բարձրացել, չե՛: Բուն մեզանից ցած է ապրում: – Ո՞նց ես այդտեղ ընկել, Ռո՛ւ, – հացոցեց Դնչիկը:

– Ինձ Վագրը բերեց: Իսկ Վագրերը չեն կարող ներքև մագլցել, որովհետև նրանց պոչը ընկնում է ոտքերի արանքը: Նրանք միայն վերև են մագլցում: Երբ մենք բարձրանում էինք, Վագրը այդ մոռացել էր, իսկ հիմա հիշել է, և մենք արդեն միշտ այստեղ ենք ապրելու: Գուցե նույնիսկ ավելի վեր մագլցենք: Ի՞նչ ասացիր, Վագր: Ա-ա-ա՛: Վագրն ասում է, որ եթե մենք ավելի վեր բարձրանանք, Դնչիկի տունն այսքան լավ չի երևա, այնպես որ մենք կմնանք այստեղ:

Այս բոլորը լսելուց հետո Թուխը ասաց.

– Դնչի՛կ, ի՞նչ կարող ենք ձեռնարկել, – և ձեռքը զցեց Վագրի բուտերբրոդներին:

– Նրանք ծուղակն են ընկե՞լ, – անհանգստացած հարցրեց Դնչիկը:

Թուխը գլխով արեց:

– Իսկ դու չե՞ս կարող իջեցնել նրանց:

– Բարձրանալ կարող եմ, Դնչի՛կ: Կարող եմ իջեցնել Ռուհին, բայց Վագրին չեմ կարող իջեցնել, գիտես թե նա ինչքա՛ն ծանր է: Չարկավոր է ուրիշ բան մտածել:

Եվ մտքի մեջ ընկած՝ նա սկսեց ծամել Ռուհի բուտերբրոդները:

Վերջին բուտերբրոդն ուտելուց հետո Թուխը երևի մի հնար գտներ, բայց նա հագիվ էր վերջին բուտերբրոդը ձեռքին առել, երբ թփերի մեջ ինչ-որ ճյուղ կոտրվեց և այնտեղից դուրս եկան Զրիստոֆեր Ռոբինը և Իան:

– Բոլորովին չեմ զարմանա, եթե հանկարծ վաղը կարկուտ գա, – ասում էր Իան: – Կարող է նույնիսկ մրրիկ, բուք ու բորան լինել: Այսօր, իհարկե, լավ եղանակ է, բայց դա դեռևս ոչինչ չի նշանակում. ոչ մի երաշխ... ինչպես են ասում: Երաշխ... մի խոսքով, հասկանում ես, այդ բանից չկա, թե լավ եղանակները կշարունակվեն: Սա պարզապես պատահականություն է և ուրիշ ոչինչ:

– Ահա և Թո՛ւխը, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: Նրան երևի չէր հետաքրքրում՝ լավ եղանակը պատահական է, թե ոչ, միայն թե լավը լիներ: – Բարև, Թո՛ւխ:

– Զրիստոֆեր Ռոբինը կիմանա, թե ինչ պետք է անել, – ուրախացավ Դնչիկը:

Նա ու Թուխը վազեցին Զրիստոֆեր Ռոբինին ընդառաջ:

– Զրիստոֆեր Ռոբին... – սկսեց Թուխը:

– Եվ Իա, – ասաց Իան:

– Վագրն ու Ռուն բարձրացել են Սոճու վրա և չեն կարողանում իջնել...

– Իսկ ես հենց նոր ասում էի: – ընդհատեց Դևիդը, – որ միայն Քրիստոֆեր Ռոբինսն է կարող:

– Իա-իան նույնպես, – ասաց Իան, նորից հիշեցնելով, որ մոռացել են իրար բարևել:

– Եթե դուք երկուսով այստեղ լինեիք, մենք կկարողանայինք որևէ հնար գտնել, – ասացին Թուփսն ու Դևիդը: Քրիստոֆեր Ռոբինը նայեց վեր, տեսավ Վագրին ու Ռուին և փորձեց որևէ հնար գտնել:

– Ես կարծում եմ, – խորիմաստ ասաց Դևիդը, – որ եթե Իան կանգնի ծառի տակ, Թուփսը բարձրանա նրա մեջքին, իսկ ես կանգնեմ Թուփսի ուսերին...

– Եվ եթե Իայի մեջքը հանկարծ կոտրվի, մենք մի կուշտ կծիծաղենք. հա-հա-հա, – ասաց Իան: – Շատ հաճելի զբաղմունք է, խոսք չկա, չափազանց զվարճալի, բայց, վախենում եմ, քիչ օգտակար:

– Ես... – խեղճացած ասաց Դևիդը, – ես միայն մտածում էի...

– Դու իսկապես կարծում ես, որ քո մեջքը կջարդվի՞, – զարմացած հարցրեց Թուփսը:

– Առանց փորձելու դժվար է որևէ բան ասել, սիրելի Վինի: Ամբողջ հետաքրքրությունն էլ հենց դրա մեջ է: Թուփսը հոգոց հանեց, և նրանք կրկին սկսեցին մտածել:

– Ուռա՛, ես գտա, – հանկարծ բացականչեց Քրիստոֆեր Ռոբինը:

– Լսիր ուշադիր, փոքրիկ Դևիդ, – ասաց Իան, – և դու շուտով կիմանաս, թե մենք ինչ ենք ձեռնարկելու:

– Ես կհանեմ վերնաշապիկս, մենք կբռնենք չորս ծայրերից, իսկ Ռուին ու Վագրը կցատկեն վրան: Նրանց ոչինչ չի պատահի, պարզապես մի քիչ կճոճվեն:

– Ինչպես Վագրին իջեցնենք ծառից, որ ոչ ոք չվնասվի, – ասաց Իա-Իան: – Այս օրենքը ականջիդ օղ արա, հարգելի Դևիդ, և ամեն ինչ լավ կլինի:

Բայց հարգելի Դևիդը ոչինչ չէր լսում, այնքան որ հուզվել էր Քրիստոֆեր Ռոբինի երկնագույն շավարակապերը նորից տեսնելու մտքից: Նա դրանք մի անգամ արդեն տեսել էր, երբ շատ փոքր էր եղել և այն ժամանակ այնպես էր հուզվել, որ ստիպված էին եղել նրան սովորականից կես ժամ շուտ պառկեցնել քնելու:

Եվ այդ օրվանից Դևիդը երազում էր ստուգել, արդյոք դրանք այդքան երկնագույն են ու օգտակար, ինչպես իրեն թվացել էր:

Եվ երբ Քրիստոֆեր Ռոբինը հանեց վերնաշապիկն, ու Դևիդի բոլոր սպասելիքները լիովին իրականացան, ուրախությունից նա ներեց Իային, ժպտաց նրան և նույնիսկ բռնեց վերնաշապիկի նույն ծայրից: Իսկ Իան փսփսաց նրա ականջին.

– Նույնիսկ հիմա չի կարելի երաշխավորել, որ դժբախտ պատահար չի լինի: Դժբախտ պատահարները շատ տարօրինակ բաներ են: Նրանք սովորաբար պատահում են բոլորովին պատահաբար:

Երբ ճստիկ Ռուին հասկացավ, թե ինչ պետք է անի, այնպես հուզվեց, այնպես ուրախացավ, որ ծվծվաց.

– Վա՛գր, Վա՛գր, մենք հիմա ցատկելու՞ ենք: Տես, թե ո՞նց եմ ցատկելու: Պարզապես թռչելու՞ եմ, այ, կտեսնե՛ս: Իսկ Վագրերը կարո՞ղ են: Քրիստոֆեր Ռոբին: Ես եկա՛, – կանչեց նա ու իրեն նետեց փրկարար վերնաշապիկի ճիշտ մեջտեղը:

Նա այնքան թափով էր ցատկել, որ վերնաշապիկը նրան հետ շարժեց, և Ռուին դեռ երկար ժամանակ ճախրում էր օդում, շարունակելով հիացած ծվծվալ՝ «ո՛, ո՛»:

Վերջապես նա վայրէջք կատարեց ու ասաց. «Ինչ լավ էր, ինչ լավ էր, լավ էր, չէ՞» և նրան ցած իջեցրին:

– Թռի՛ր, Վա՛գր, – կանչում էր նա: – Շատ հե՛շտ է:

Բայց Վագրը կպել էր ճյուղից և չէր էլ մտածում թռչել: Նա ասում էր ինքն իրեն. «Իհարկե, ցատկող կենդանիների համար, ինչպիսիք են Կենգուները, դա հասարակ բան է, իսկ լողացող կենդանիների համար, ինչպիսիք ենք մենք՝ Վագրերս, այնքան էլ հեշտ չի, ինչպես թվում է ոմանց»:

Եվ նա, չգիտես ինչու, հանկարծ պատկերացրեց, որ մեջքի վրա պառկած լողում է գետում, ուրախ սուզվում սառը ջրի մեջ, և զգաց, որ դա Վագրերի իսկական տարերքն է:

– Թռի՛ր, թռի՛ր, – կանչում էր Քրիստոֆեր Ռոբինը: – Մի՛ վախեցիր:

– Մ-մ-մի թոպե, – ասաց Վագրը, – ինչ-որ բան է ընկել աչքս:

Եվ նա դանդաղ, շատ դանդաղ, սողաց դեպի ճյուղի ծայրը:

– Թռի՛ր, թռի՛ր, շատ հե՛շտ է, – ծվծվում էր ճստիկ Ռուին:

Եվ հանկարծ Վագրը, իր կամքից անկախ, զգաց որ դա իսկապես շատ հեշտ է:

– Վա՛յ, – գոռաց նա, սարսափած զգալով, որ ծառը կայծակի արագությամբ սլանում է իր կողքով:

– Չգուշացե՛ք, – գոռաց Քրիստոֆեր Ռոբինը փրկիչներին:

Լսվեց թրխկոց, վերնաշապիկը պատռվեց, և բարեկամներն իրար գլխի թափվեցին:
Առաջինը ոտքի կանգնեցին Քրիստոֆեր Ռոբինը, Թուխը և Դնչիկը, հետո ոտքի կանգնեցրին Վագրին, իսկ բոլորից ներքևում, իհարկե, Իան էր:

– Իա, սիրելի՛ս, հո չե՞ս վնասվել, – բացականչեց Քրիստոֆեր Ռոբինը: – Ոչ մի տեղդ չի՞ ցավում, – նա իշուկին օգնեց ոտքի կանգնել ու մեջքից թափ տվեց փոշին:

Իան երկար ժամանակ չէր խոսում:

Չետո նա հարցրեց.

– Վագրն այստե՞ր է:

Վագրը այստեղ էր և նորից՝ բարձր տրամադրության մեջ:

– Այստեղ է, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – ողջ ու առողջ:

– Դե ի՞նչ, – ասաց Իան, այդ դեպքում նրան շնորհակալություն հայտնեք իմ անունից:



ԳՆՈՒՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Որտեղ Վիկի-Թուխը նոր խաղ է հնարում, իսկ Իան մասնակցում է խաղին

Չասնելով Անտառի ծայրին, Գետակը մեծացավ-մեծացավ ու դարձավ իսկական Գետ: Եվ մեծանալով, նա այլևս գժություն չէր անում, չէր թռչկոտում ու զլուխկոնծի տալիս, ինչպես սկզբում, փոքր ժամանակ, այլ հոսում էր լրջացած, հանդարտ ու անշտապ: Չիմա նա գիտեր, թե ուր է գնում և ասում է ինքն իրեն. «Շտապելու բան չկա: Երբևիցե բոլորս էլ այնտեղ կլինենք»: Իսկ նրա մեջ թափվող փոքրիկ առվակները զլուխները կորցրած վագրում էին Անտառով, փայլատակում էին մեկ այստեղ, մեկ այնտեղ, մեկ այնտեղ. չէ՞ որ նրանք դեռ այնքա՛ն շատ բան պիտի հասցնեին տեսնել ու իմանալ:

Լայն արահետը, որը, թերևս, կարելի էր ճանապարհ անվանել, Անտառ էր գալիս Արտաքին Աշխարհից, բայց նախքան Անտառ մտնելը պետք է անցներ Գետի վրայով: Եվ այնտեղ, ուր ճանապարհն ու Գետը հանդիպում էին, փայտե կամրջակ կար, համարյա նույնքան լայն, որքան ճանապարհը, և երկու կողմից փայտե ճաղաշարք ուներ: Քրիստոֆեր Ռոբինը, եթե ուզենար, կարող էր ծնոտը հենել վերին ճաղաշարին. բայց շատ ավելի հետաքրքիր էր կանգնել ներքևի ճաղաշարի վրա ու կռացած նայել առանց շտապելու ինչ-որ տեղ գնացող գետին: Վիկի-Թուխը, եթե ուզենար, կարող էր ծնոտը հասցնել ներքևի ճաղաշարին, բայց շատ ավելի հետաքրքիր էր զլուխը մտցնել ճաղաշարի տակ և փորին պառկած նայել դանդաղ հոսող Գետին: Իսկ Դնչիկի

ու Ռուի համար դա Գետով սքանչանալու միակ հնարավոր ձևն էր, որովհետև նրանք այնքան փոքրիկ էին, որ ոչ մի կերպ չէին կարող հասնել Լույսիսկ ներքևի ճաղաշարին: Նրանք պառկում էին ճաղաշարի տակ և Գետին նայում... Իսկ Գետը հոսում էր, դանդաղ ու հանդարտ՝ չէ՛ որ շտապելու բան չուներ:

Մի անգամ կամրջակի ճանապարհին Վինի-Թուխը փորձում էր որևէ երգ հորինել եղևնու կոների մասին, որովհետև չորս կողմը կոներ էին թափված, իսկ Վինի-Թուխը բանաստեղծական տրամադրության մեջ էր: Նա մի կոն վերցրեց, նայեց ու ասաց ինքն իրեն. «Սա շատ լավ կոն է և չի կարող պատահել, որ ինչ-որ բանի հետ չհանգավորվի»: Սկզբում նա ոչինչ չէր կարողանում հորինել, իսկ հետո նրա մտքով ահա թե ինչ անցավ.

Եղևնու վրա աճում են կոներ,
Նրանցից մեկն էլ, Վինի-Թուխ, բռնն էր:

– Բայց սա այնքան ճիշտ չի, – ասաց նա, – որովհետև միշտ էլ ինչքան ասես կարող եմ կոն հավաքել: Բայց մենք իրար հետ շատ լավ ենք հանգավորվում «կոներ-բռնն էր»:

Այստեղ նրա մտքով նոր երկտող անցավ.

Չարմանալի է, որ չար Գայլերին
Համով չի թվում կանաչ եղևնին:

– Գայլերն ու եղևնին այնքան էլ լավ չեն հանգավորվում, – բացատրեց Թուխը, – «Գայլերին-եղևնին», – և շարունակեց.

Իսկ Սկյուռիկն ու այդ Լույս եղևնին
Բարեկամներ են անբաժան ու հին:

Վինի-Թուխը արդեն մոտեցել էր կամրջակին: Եվ քանի որ ոտքի տակ չէր նայում, սայթաքեց, և կոնը դուրս պրծավ նրա թաթերից ու ընկավ ջուրը:

– Ափսո՛ս, – ասաց Թուխը, նայելով, թե ինչպես է կոնը կամրջակի կողմը լողում: Նա ուզում էր գնալ նոր կոնի հետևից, որը Լույսպես կարելի կլիներ հանգավորել, բայց մտածեց, որ ավելի լավ կլիներ, եթե պարզապես նայի Գետին, սքանչելի օր էր. Վինի-Թուխը պառկեց փորին և սկսեց նայել Գետին, որ դանդաղ ու անշտապ գլորվում էր հեռուն...

Եվ հանկարծ կամրջի տակից հայտնվեց նրա կոնը:

– Ա՛յ բեզ բա՛ն, – զարմացավ Թուխը: – Չուրն ընկավ մյուս կողմում, բայց այս կողմից է դուրս գալիս: Տեսնես բոլոր կոնե՞րն են այդպես անում:

Թուխը գնաց ու նոր կոներ հավաքեց:

Այո՛, դրանք էլ Լույսն արեցին:

Այդ ժամանակ Թուխը միանգամից երկու կոն գցեց ու սկսեց սպասել, թե որը առաջինը կերևա: Նրանցից մեկը առաջինը դուրս լողաց կամրջի տակից, բայց քանի որ կոները շատ միանման էին, Թուխը չիմացավ, թե դա որ մեկն է. այն, որ մտքում պահե՞լ էր, թե՞ մյուսը: Ուստի հաջորդ անգամ նա գցեց մի շատ մեծ ու մի շատ փոքր կոն և ինչպես էլ կարծում էր՝ մեծը առաջինը երևաց, իսկ փոքրը կամրջի տակից դուրս լողաց վերջինը: Այնպես որ Թուխը շահեց միանգամից երկու անգամ, որովհետև մտածել էր, որ փոքրը վերջինը կերևա:

Եվ երբ Վինի-Թուխը գնաց տուն թեյ խմելու, նա արդեն հաղթել էր երեսունվեց, իսկ պարտվել քսանութ անգամ: Մի խոսքով, հաղթել էր: Երեսունվեցից հանք քսանութ և կիմանաք, թե նա քանի անգամ էր հաղթել: Ահա այսպես ծնվեց այդ նոր խաղը: Միայն թե հետո սկսեցին խաղալ փայտիկներով, որովհետև փայտիկներն ավելի հեշտ էր տարբերել մեկը մյուսից:

Եվ ահա մի անգամ Վինի-Թուխը, Դնչիկը, ճագարն ու ճստիկ Ռուն առավոտից տարված էին այդ խաղով: Ճագարի ազդանշանով նրանք փայտիկները ջուրն էին գցում, իսկ հետո գլխապատառ սլանում էին կամրջակի մյուս կողմը ու ներքև նայում, սպասելով, թե ում փայտիկը կերևա առաջինը: Ստիպված էին լինում երկար սպասել, որովհետև Գետն այդ օրը այնքան ալարկոտ էր, որ թվում էր, ընդհանրապես մտադիր չէ տեղից շարժվել:

– Իմը երևա՛ց, – ճչաց Ռուն: – Չէ՛, իմը չի՛, սա ուրիշինն է: Սա քոնը չի՞, Դնչի՛կ: Ես կարծում էի իմն է, բայց իմը չի: Ահա՛ իմը: Չէ, իմը չի՛: Դա քոնը չի՞, Թո՛ւխ:

– Չէ, – պատասխանում էր Թուխը:

– Երևի իմ փայտիկը կորել է, – ասաց Ռուն: – Ճագար, քո փայտիկը կորե՞լ է: Դնչիկ, իսկ քո փայտիկը կորե՞լ է:

– Նրանք միշտ էլ իրենց սպասեցնել են տալիս ավելի շատ, քան դուք կարծում եք, – ասաց ճագարը:

– Հիմա նրանք ինչքա՞ն սպասեցնել կտան, – հարցրեց Ռուս:

– Քոնը երևաց, Դնչիկ, – հանկարծ ասաց Թուխը:

– Իմը մոխրագույն էր, – ասաց Դնչիկը, չհամարձակվելով շատ կախվել, որովհետև Գետն ընկնելուց սարսափում էր:

– Այո, այո, արդեն տեսնում եմ, իմ կողմն է լողում:

Ամենից շատ ճագարն էր առաջ կախվել և խիստ զարմանում էր, որ իր փայտիկն էլի չի երևում: Ճաստիկ Ռուս թռչկոտում էր տեղում ու լարած տիկնիկի նման անդադար ծվծվում էր. «Փայտի՛կ, փայտի՛կ, շուտ արի՛: Փայտի՛կ, փայտի՛կ, շուտ արի՛»: Իսկ Դնչիկը սոսկալի հուզվում էր. չէ որ առայժմ միայն նրա փայտիկն էր երևացել (Թուխի ասելով), իսկ դա նշանակում էր որ նա հաղթելու է:

– Հիմա դուրս կլողա, – ասաց Թուխը, – ուշադրություն: – Համոզվա՞ծ ես, որ իմն է, – հուզված ճղճղաց Դնչիկը:

– Այո, որովհետև շատ մեծ է ու մոխրագույն: Ահա, ահա դո՛ւրս է գալիս: Շատ մեծ, մոխրագույն... Վա՛յ չէ, փայտիկ չի՛: Սա Իա-Իան է:

Եվ իրոք: Կամրջի տակից դուրս լողաց Իա-Իան:

– Իա՛, – միաբերան կանչեցին բոլորը:

Այո, հանգիստ ու հանդիսավոր, չորս ոտքերը արժանապատվությամբ երկինք տնկած, Գետում լողում էր Իա-Իան:

– Սա Իան է, – հուզմունքից իրեն կորցրած, ծվծված Ճաստիկ Ռուս:

– Մի՞թե, – պատասխանեց Իան: Նա ընկավ մի ոչ մեծ ջրապտույտի մեջ և երեք անգամ պտտվեց իր առանցքի շուրջը: – Ես էլ մտածում էի. «Տեսես սա ո՞վ է»:

– Ես չգիտեի, որ դու էլ ես խաղում, – ասաց Ռուս:

– Ես չեմ խաղում, – պատասխանեց Իան, – մտադիր էլ չեմ:

– Ուրեմն, ի՞նչ ես անում, – հարցրեց ճագարը:

– Փորձիր գուշակել, ճագար: Հո՞ղ եմ փորում: Սխա՛լ է: Թռչկոտում եմ կաղնու ճյուղերի վրա՛: Դարձյա՛լ սխալվեցիր: Սպասում եմ, որ ինձ օգնեն դուրս գամ Գետի՞ց: Հիմա ճի՛շտ է: Ճագարին մտածելու ժամանակ տվեք, և նա իսկույն գլխի կընկնի:

– Իա, – շփոթված ասաց Թուխը: – Իսկ մենք ինչ... Ուզում եմ ասել՝ մենք ինչպես... Դու կարծում ես, եթե մենք...

– Այո, – ասաց Իան, – իհարկե: Քո ենթադրություններից մեկը բացարձակ ճիշտ է: Շնորհակալություն, Թու՛խ:

– Նա անընդհատ պտտվո՞ւմ է տեղում, – ասաց Ճաստիկ Ռուս, կլանված այդ տեսարանով:

– Իսկ ինչո՞ւ չէ, – սառը պատասխանեց Իան:

– Ես էլ լողալ գիտեմ, – հպարտությամբ ասաց Ռուս:

– Բայց ոչ շրջանաձև, – ասաց Իան, – Շրջանաձևը լողի ամենաբարդ ձևն է: Ճիշտն ասած, ես այսօր մտադիր չեի լողորդությամբ զբաղվել, – շարունակեց նա, դանդաղ պտտվելով, – բայց քանի որ առիթ է եղել, ապա, կարծում եմ, որ պտուտակաձև թեթև շարժումը աջից ձախ... Կամ, ավելի շուտ, – ավելացրեց նա, ընկնելով հաջորդ ջրապտույտի մեջ, – ձախից աջ: Բոլոր հանգամանքներում, սա իմ անձնական գո՛րծն է:

Լռություն տիրեց: Բոլորը մտածում էին:

– Ես, կարծես թե, մի բան մտածել եմ, – ասաց վերջապես Թուխը: – Բայց համոզված չեմ, որ լավ բան եմ մտածել:

– Ես նույնպես, – ասաց Իան:

– Դուրս տուր, Թուխ, – ասաց ճագարը: – Խոսի՛ր:

– Եթե մենք քարեր գցենք գետը, Իայի մի կողմում այիքներ կբարձրանան, և այդ այիքները Իային ափ կհանեն:

– Դա շատ լավ Գաղափար է, – ասաց ճագարը:

Վինի-Թուխը զվարթացավ:

– Չափազանց, – ասաց Իան: – Երբ ես ցանկանամ, որ ինձ քարկոծեն, Վինի-Թուխ, կհայտնեմ ձեզ:

– Իսկ եթե հանկարծ քարերը պատահաբար կպչեն Իայի՞ն, – անհանգստացավ Դնչիկը:

– Կամ էլ պատահաբար չկպչեն ինձ, – ասաց Իան: – Ծանր ու թեթև արա բոլոր հնարավորությունները, Դնչի՛կ, նախքան կսկսենք զվարճանալ:

Բայց Վիկի-Թուխը արդեն բերել էր ամենամեծ քարը, որ կարողացել էր բարձրացնել և թաթերի մեջ առած, կռացել էր ջրի վրա:

– Ես չեմ խփի, Իա, ես պարզապես կզցեմ, – բացատրեց նա: – Այդ դեպքում ես արդեն չեմ վրիպի, այսինքն՝ ուզում եմ ասել, թեզ չեմ դիպչի: Չես կարող գոնե մի վայրկյան չպտտվել, որ կարողանամ նշան բռնել:

– Ոչ, ասաց Իան, – պտտվել ինձ դուր է գալիս:

Ճագարը զգաց, որ արդեն ժամանակն է դեկավարությունը իր ձեռքն առնելու:

– Թուխ, – ասաց նա, – երբ ես կասեմ «զցիր», դու քարը կզցես: Իա-Իա, երբ ես ասեմ «զցիր», Թուխը բաց է թողնելու քարը:

– Շատ շնորհակալ եմ, ճագար: Բայց, կարծում եմ, առանց թոօգնության էլ այդ կիմանամ:

– Թուխ, պատրա՞ստ ես, Դեյվիդ, հեռացիր Թուխից, դու նրան խանգարում ես: Ռու, մի քիչ հետ գնա: Բոլորը պատրա՞ստ են՝

– Ոչ, – ասաց Իան:

– Գցի՛ր, – գոռաց ճագարը:

Թուխը բաց թողեց քարը: Լսվեց ուժեղ ճողփյուն, և Իա-Իան անհետացավ...

Շատ հուզիչ պահ էր, հատկապես դիտողների համար: Նրանք նայում էին աչքերը չռած: Նույնիսկ Դեյվիդ փայտիկը, որ երևաց կամրջակի տակից, ճագարի փայտիկից առաջ ընկած, նրանց այնպես չուրախացրեց, ինչպես կարելի էր սպասել: Իսկ հետո, ճիշտ այն պահին, երբ Թուխն արդեն սկսել էր մտածել, որ, հավանորեն, ինքը սխալ քար է ընտրել կամ սխալ գետ, կամ էլ ոչ ճիշտ օր՝ իր Գաղափարի համար, առափնյա ծանծաղուտում ինչ-որ մոխրագույն բան երևաց: Կամաց-կամաց այդ բանը ավելի ու ավելի էր մեծանում... և, վերջապես, պարզ դարձավ, որ դա Իան է դուրս գալիս ջրից:

Համերաշխ աղմուկով՝ բարեկամները վազեցին Իայի մոտ: Նրան հիում էին ու քաշում, քաշում էին ու հրում, և վերջապես Իան չորս ոտքով կանգնեց ամուր հողի վրա:

– Օ՛յ, Իա՛, ո՞նց ես թրջվել, – տոտիկի ծայրով դիպչելով նրան, ասաց Դեյվիդ:

Իան թափ տվեց իրեն ու խնդրեց, որ Դեյվիդն օգնություն չտրուի, թե ինչ է տեղի ունենում, երբ ջրի մեջ են գտնվում բավականին երկար ժամանակ:

– Կեցցե՛ս, Թուխ, – մեծահոգաբար ասաց ճագարը: – Խոստովանում եմ, որ իմ ու թո գլխում իրոք հրաշալի Գաղափար ծնվեց:

– Ի՞նչ Գաղափար, – հարցրեց Իան:

– Զեզ այսպես ասի հանել:

– Ափ հանե՛լ, – զարմացավ Իան: – Ինձ ա՛փ հանել: Ինչ է, դուք մտածում եք, որ ինձ ա՛փ եք հանել: Այո՞: Ես պարզապես սուզվեցի: Թուխը վիթխարի քարը նետեց վրաս, և, որպեսզի խուսափեմ ծանր հարվածից, ես սուզվեցի ու դեպի ասի լողացի:

– Ճիշտ չի, – Թուխին մխիթարելու համար նրա ականջին շշնջաց Դեյվիդը:

– Ես էլ եմ կարծում, – անվստահ ասաց Թուխը:

– Իան միշտ այդպես նեղացկոտ է, – շարունակեց Դեյվիդը: – Անձամբ ես գտնում եմ, որ դու շատ լավ էիր մտածել:

Թուխը մի քիչ մխիթարվեց: Եվ իսկապես, եթե Արջի գլխում (որտեղ, ի միջի այլոց, ուղեղի փոխարեն թեփ է լցված) միտք է ծնվում, ապա շատ հնարավոր է, որ այդ միտքը գործնական թվա, քանի դեռ գլխում է, և բոլորովին ոչ այդպիսին, երբ դուրս է գալիս այնտեղից ու այն բոլորն են տեսնում: Բայց ինչ էլ որ լիներ, Իան եղել էր գետի մեջ, իսկ հիմա այնտեղ չէր, ուրեմն, Թուխը ոչ մի վատ բան չէր արել:

– Ինչպե՞ս եղավ, որ ընկար ջուրը, Իա, – հարցրեց ճագարը, Դեյվիդ թաշկինակով սրբելով նրան:

– Ես չեմ ընկել...

– Ուրեմն, ինչպե՞ս...

– Ինձ վրա ՀԱՐՁԱԿՎԵՑԻՆ, – ասաց Իան:

– Օ՛յ, – ծվծվաց Ռուն, – թեզ հրե՛լ են:

– Ինչ-որ մեկը ՀԱՐՁԱԿՎԵՑ վրաս: Գետափում կանգնած ես մտորում էի, մտորում էի, հույս ունեմ ձեզանից գոնե մեկին այս բառը ծանոթ կլինի, երբ հանկարծ ՈՒԺԵՂ ՀԱՐՎԱԾ զգացի:

– Իա՛, – հառաչեցին բոլորը:

– Դու համոզվա՛ծ ես, որ չես սայթաթել, – խոհեմաբար հարցրեց ճագարը:

– Իհարկե՛, սայթաթել եմ: Եթե դուք կանգնած եք Գետի թեք ափին և ինչ-որ մեկը հետևից անսպասելի ՅԱՐՁԱԿՎՈՒՄ է ձեզ վրա, դուք կսայթաթեք: Ուրիշ էլ ի՞նչ կառաջարկեիք:

– Բայց ո՞վ էր, – հարցրեց Ռուս:

Իան չպատասխանեց:

– Երևի, Վազրը, – անհանգստացած ասաց Ղևշիկը:

– Լսիր, Իա, – հարցրեց Թուխը, – նա կատա՞կ էր անում, թե դիտավորյալ: Ես ուզում եմ ասել...

– Ամբողջ ժամանակ ինքս եմ այդ հարցը տալիս ինձ, արջուկ Թուխ: Նույնիսկ Գետի հատակին գտնվելիս, շարունակում էի մտածել. «Ի՞նչ է սա՝ բարեկամական կատակ, թե մտածված հարձակում»: Եվ երբ բարձրացա ջրի երես, պատասխանեցի ինձ. «Մուգ գործ է»: Յուրով եմ, հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ:

– Իսկ որտե՞ղ է Վազրը, – հարցրեց ճագարը:

Բայց մինչ Իան կհասցնե՛ր պատասխանել, եղեգնուտում աղմուկ լսվեց, և եղեգների միջից դուրս եկավ ինքը՝ Վազրը:

– Ողջույն բոլորի՛ն, – ուրախ ասաց նա:

– Բարև, Վազր, – պատասխանեց ճագարի Ռուս:

Ճագարը հանկարծ սաստիկ փախեց:

– Վազր, – ասաց նա, – բարի եղիր, խնդրում եմ, բացատրիր մեզ, թե ի՞նչ է տեղի ունեցել:

– Ե՛րբ, – հարցրեց Վազրը, փոքր-ինչ շփոթված:

– Երբ դու հարձակվեցիր Իայի վրա ու նրան գցեցիր Գետը:

– Ես նրա վրա չեմ հարձակվել:

– Յարձակվե՛լ ես, – մռայլ պատասխանեց Իան:

– Չէ, չեմ հարձակվել: Ես պարզապես հազում էի: Ես պատահաբար կանգնած էի Իայի հետևը և ասացի. «ՅՈՒՈՒՈՒ – ՕՓՓ – ՓՇՇՇՇՇՇՇ»:

– Ի՞նչ պատահեց, Ղևշիկ, – հարցրեց ճագարը, օգնելով նրան ոտքի կանգնել: – Ամեն ինչ կարգի՞ն է:

– Ես հանկարծակիի եկա, – դողացող ձայնով ասաց Ղևշիկը:

– Այ, հենց սա էլ ես անվանում եմ ՅԱՐՁԱԿՎԵԼ, – ասաց Իան, – երբ անսպասելի ոստնում եմ սրա-նրա վրա: Խիստ անհաճո սովորություն է: Ես առարկություն չունեմ, թող Վազրը ապրի Անտառում, – շարունակեց նա, – որովհետև Անտառը մեծ է, և ցատկելու ու վազվզելու համար տեղ ինչքան ասես կա: Բայց ես չեմ հասկանում, թե ինչու նա պիտի Անտառի իմ փոքրիկ անկյունը գա ու ՅԱՐՁԱԿՎԻ վրաս: Մի բան, որ իմ անկյունում առանձնապես տեսարժան բան էլ չկա: Իհարկե, նրանց համար, ովքեր սիրում են ցուրտ, խոնավություն ու փշեր, այդ վայրը իր հմայքը ունի, բայց մնացած առումներով դա շատ սովորական անկյուն է: Եվ եթե որևէ մեկի խելքին փչում է հարձակ...

– Ես չեմ հարձակվել, ես հազացել եմ, – համառորեն ասաց Վազրը:

– Գետի հատակը սուզվողի համար դա միևնույն բանն է, – նկատեց Իան:

– Ուրեմն, այսպես, – ասաց ճագարը, – այս առիթով ես միայն հետևյալը կասեմ... Ախ, ահա և Քրիստոֆեր Ռոբինը, ավելի լավ է թող նա ասի:

Քրիստոֆեր Ռոբինը քայլում էր արահետով այնպիսի արևոտ ու անամպ տրամադրությամբ, որ կարելի էր կարծել, թե տասնինն անգամ երկուսի պատասխանը գտնելը դատարկ բան է, և մտածում էր, որ եթե այս սթանչելի օրով բարձրանա ներքևի ճաղաշարի վրա ու կռացած Գետին նայի՝ ամեն ինչ-ամեն ինչ կիմանա աշխարհի մասին, իսկ հետո կպատմի Թուխին, որը դեռևս ոչ բոլորը գիտե: Բայց երբ մոտեցավ կամրջին ու տեսավ իր բարեկամներին, հասկացավ, որ սա բոլորովին ուրիշ օր է, այնպիսի օր, երբ հարկավոր է ինչ-որ բան անել:

– Ահա թե ինչ է եղել, Քրիստոֆեր Ռոբին, – սկսեց ճագարը: Վազրը...

– Այդպիսի բան չի եղել, – ասաց Վազրը:

– Նա չէր ուզում, իհարկե, հո չէ՞ր ուզում այդ անել, – ասաց Թուխը:

– Նա պարզապես անհանգիստ է ստեղծված, – ասաց Ղևշիկը:

– Վա՛զր, հապա փորձիր հարձակվել վրաս, – տաքացած հայտարարեց ճագարի Ռուս: – Իա՛, հիմա Վազրը կփորձի հարձակվել վրաս: Ղևշի՛կ, ի՞նչ ես կարծում, ով...

– Դե՛, դե՛, – ասաց ճագարը, – ես կարծում եմ, մենք կիրաժարվենք բոլորս միաժամանակ խոսելու մտքից: Յիմա էլ հետաքրքրում է, թե ինչ կասի Քրիստոֆեր Ռոբինը:

- Ես պարզապես հազացել եմ, – ասաց Վազրը:
 - Նա հարձակվել է, – ասաց Իան:
 - Դե, գուցե մի քիչ հազակվել եմ, – ասաց Վազրը:
 - Լռությո՛ւն, – թաթիկը տնկելով պահանջեց ճագարը: – Ի՞նչ է մտածում Զրիստոֆեր Ռոբինը: Սա՛ է հարցը:
 - Դե, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը, լավ չհասկանալով, թե ինչի մասին է խոսք գնում: – Ես կարծում եմ...
 - Դե՛-դե՛, – ասացին մյուսները:
 - Ես կարծում եմ, որ հիմա բոլորս կգնանք խաղալու Թուխի հնարած խաղը:
- Այդպես էլ արեցին:
- Եվ պատկերացնում եք, Իան, որ առաջ երբեք չէր խաղացել, բոլորից շատ էր հաղթում:
- Իսկ ճստիկ Ռուն երկու անգամ Գետն ընկավ: Առաջին անգամ պատահաբար, իսկ երկրորդ անգամ դիտավորյալ, որովհետև տեսավ, որ Անտառից դուրս է գալիս Կենգուռն, և հասկացավ, որ միևնույն է, ստիպված է լինելու քնելու գնալ: ճագարն ասաց, որ կգնա նրանց հետ, իսկ Վազրն ու Իան գնացին միասին, որովհետև այդ խաղում («Չարկավոր է փայտիկը պտտացնելով գցել, եթե դու հասկանում ես, թե ինչ եմ ուզում ասել»), իսկ Զրիստոֆեր Ռոբինը, Դեչիկը և Թուխը մնացին կամրջի վրա:
- Երկար ժամանակ նրանք անխոս նայում էին ցած, Գետին, և Գետը նույնպես չէր խոսում, որովհետև շատ խաղաղ ու արևոտ կեսօր էր:
- Վազրը, ընդհանուր առմամբ, հիանալի տղա է, – ծուլորեն ասաց Դեչիկը:
 - Իհարկե, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:
 - Ընդհանրապես, բոլորս էլ հիանալի տղաներ ենք, – ասաց Թուխը: – Ես այդպես եմ մտածում, – ավելացրեց նա: – Բայց ես համոզված չեմ, որ ճիշտ եմ մտածում:
 - Իհարկե, դու ճիշտ ես, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:



ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅԻՆԳԵՐՈՐԴ

Որտեղ հնազանդեցնում են Վագրին

Ճագարն ու Դնչիկը նստել էին Վինի-Թուխի տան շքամուտքի մոտ և լսում էին ճագարին: Վինի-Թուխը նույնպես նրանց հետ էր: Ամառային ալարկոտ կեսօր էր, և Անտառը լիքն էր խաղաղ ու քնկոտ հնչյուններով, որոնք կարծես ասում էին Թուխին. «Մի լսիր ճագարին: Լսիր մեզ»: Եվ Թուխը ճագարին չլսելու ամենահարմար դիրքն ընդունեց ու փակեց աչքերը: Երբեմն նա աչքերը բացում էր ու ասում. «Ա՛յ-ա՛յ-ա՛յ», իսկ հետո նորից փակում էր, ասելով. «Ճի՛շտ է, ճի՛շտ է»: Ինքը՝ ճագարը, ամենալուրջ տեսքով շարունակ հարցնում էր. «Դու հասկանո՞ւմ ես, թե ես ինչը նկատի ունեմ, Դնչիկ», իսկ Դնչիկը ոչ պակաս լռությամբ գլխով էր անում, որպեսզի ցույց տա, թե ինքն ամեն ինչ-ամեն ինչ հասկանում է:

– Մի խոսքով, – վերջապես իր միտքն ավարտեց ճագարը, – վերջերս Վագրն այնքան երեսառած է դարձել, որ ժամանակն է մտածել նրան հնազանդեցնելու մասին: Իսկ դու ի՞նչ կարծիքի ես, Դնչիկ:

Դնչիկն ասաց, որ վագրը իսկապես սարսափելի երեսառած է, և եթե գտնեն նրան հնազանդեցնելու ձևը, ապա դա կլինի Շատ Լավ Միտք:

– Ես էլ եմ այդ կարծիքին, – ասաց ճագարը: – Իսկ դու ի՞նչ կասես, Թո՛ւխ:

Թուխը ցնցվելով բացեց աչքերն ու ասաց.

– Անպայման:

– Ի՞նչը անպայման, – հարցրեց ճագարը:

– Ինչ որ դու էիր ասում, – ասաց Թուխը: – Բացարձակապես:

Դնչիկն արմունկներով խփեց Թուխի կողքին, և Թուխը, որին ինչ-որ բան ավելի ու ավելի համառորեն էր ինչ-որ տեղ տանում, ոտքի ելավ ու սկսեց ուշքի գալ:

– Բայց ինչպե՞ս այդ անենք, – հարցրեց Դնչիկը:

– Նրան պետք է լավ դաս տալ, – վճռականորեն ասաց ճագարը:

«Դաս» բառը Վինի-Թուխի մեջ անորոշ հիշողություններ արթնացրեց:

– Այնտեղ մի այսպիսի բան կար, որ կոչվում էր «Բազապատման» և մեկ էլ «Աղյուսիկ», – ասաց նա: – Քրիստոֆեր Ռոբինը փորձում էր ինձ ծանոթացնել նրանց հետ, բայց դուրս չեկավ:

– Ի՞նչը դուրս չեկավ, – հարցրեց ճագարը:

– Ո՞վ դուրս չեկավ, – հարցրեց Դնչիկը:

Թուխը գլուխն օրորեց:

– Չգիտեմ, – ասաց նա: – Ոչինչ դուրս չեկավ: Իսկ ինչի՞ մասին ենք խոսում:

– Թուխ, – հանդիմանեց Դնչիկը: – Ուրեմն դու չէ՞իր լսում ճագարին:

– Ես լսում էի, բայց ականջիս մեջ ինչ-որ բան ընկավ: Կրկնիր, ինդրում եմ, ճագար:

ճագարը պատրաստ էր տասն անգամ էլ կրկնելու իր հրաշալի մտքերը, բայց հարցրեց, թե որտեղից սկսի, իսկ Վինի-Թուխը պատասխանեց, որ, իհարկե, այնտեղից, երբ իր ականջը ինչ-որ բան ընկավ: Այդ ժամանակ ճագարը հարցրեց, թե այդ երբ է եղել:

Թուխը պատասխանեց, որ լավ չի հիշում, որովհետև այնքան էլ ուշադիր չէր լսում: Բայց Դնչիկը հարթեց դրոթյունը, ասելով, որ իրենք պարզապես մտածում էին, թե ինչպես խելքի բերեն Վագրին, որովհետև, չնայած բոլորն էլ նրան սիրում են, բայց չի կարելի ժխտել, որ սարսափելի Երեսառած է:

– Հիմա հասկացա, – ասաց Թուխը:

– Նա չափազանց շատ է թռչկոտում, – ասաց ճագարը, – և մեր առջև էլ կթռչկոտի: Հա-հա-հա՛:

Թուխը փորձեց մտածել, բայց այն բոլորը, ինչ անցնում էր նրա մտքով, միանգամայն անօգուտ էր: Եվ նա կամացուկ երգեց ահա սա.

Եթե ճագարը
Քիչ խոշոր լիներ,
Ու եթե Վագրը
Մի քիչ հեզ լիներ,
Հիմար խաղերը
Սիրելի Վագրի
ճագարին այդքան
Չէին վախեցնի:
Եթե միայն թե,
Եթե միայն թե,
Եթե միայն թե
ճագարը մի քիչ,
Մի քիչ բոյ քաշի:

– Ի՞նչ է Թուխը ֆսֆսացնում, – հարցրեց ճագարը: – Որևէ խելացի բա՛ն:

– Չէ, – տխուր ասաց Թուխը:

– Իսկ ես Գաղափար ունեմ, – ասաց ճագարը, – ահա թե ինչպիսին. Վագրին մեզ հետ արշավի կտանենք մի այնպիսի տեղ, որտեղ նա երբեք չի եղել, և իբր թե կկորցնենք այնտեղ: Հաջորդ առավոտյան մենք կգնանք նրան կգտնենք, և այն ժամանակ, հիշեցեք իմ խոսքերը, այն ժամանակ Վագրն արդեն բոլորովին ուրիշ կլինի...

– Ինչո՞ւ, – հարցրեց Վինի-Թուխը:

– Որովհետև նա դարձած կլինի Համեստ Վագր: Որովհետև նա կդառնա Տխուր Վագր, Փոքրիկ Վագր, Խաղաղ ու Հարգալից Վագր, Հեզ Վագր, Վագր, որ ասում է. «Սիրելի ճագար, որքան ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ»: Ահա՛ թե ինչու:

– Իսկ նա ուրախ կլինի՞, եթե ինձ՝ Դնչիկիս տեսնի:

– Իհա՛րկե:

– Դա լավ է, – ասաց Թուխը:

– Բայց ես չեի ուզենա, որ նա միշտ Տխուր լինի, – անվստահ ասաց Դնչիկը:

– Վագրերը երբեք միշտ տխուր չեն լինում, – հանգստացրեց նրան ճագարը: – Նրանց տրամադրությունը զարմանալի կերպով արագ է բարձրանում: Ես այդ մասին հարցրել եմ Բուհին, պարզապես ճշտելու համար, և նա հաստատեց, որ Վագրերի տրամադրությունը իրոք շատ փոփոխական է, իհարկե, վատից դեպի լավը: Բայց եթե մեզ հաջողվի ստիպել, որ Վագրը Փոքր ու Տխուր լինի գոնե հինգ րոպե, մենք արդեն բարի գործ կատարած կլինենք:

– Իսկ ի՞նչ կասեր Զրիստոֆեր Ռոբինը, եթե իմանար, – հարցրեց Դնչիկը:

– Ահա թե ինչ, – ասաց ճագարը: – Նա կասեր. «Դնչի՛կ, դու բարի գործ ես կատարել: Ես ինքս այդ կանեի, եթե այսքան զբաղված չլինեի: Շնորհակալություն, Դնչի՛կ: Թուխից նո՛յնպես շնորհակալ եմ»: Ահա թե ինչ կասեր Զրիստոֆեր Ռոբինը:

Դնչիկը սարսափելի ուրախացավ և վերջնականապես հավատաց, որ իրենք բարի գործ են սկսում, իսկ քանի որ Վինի-Թուխն ու ճագարը նույնպես պիտի մասնակցեն այդ գործին, ուրեմն նրան կարող էր մասնակցել և Շատ Փոքրիկ Արարածը և դրանից առաջ հանգիստ սրտով քնել:

Միայն մի հարց էր մնացել չլուծված, որտե՞ղ էին կորցնելու Վագրին:

– Մենք նրան Յոուսիսային Բևեռ կտանենք, – ասաց ճագարը, – որովհետև Յոուսիսային Բևեռը մենք շատ երկար էինք գտնում, նշանակում է, Վագրը ստիպված կլինի այն շատ, շատ, շատ երկար կորցնել: Հա-հա-հա: Հիմա էլ ուրախանալու հերթը Թուխին է: Չէ՞ որ Յոուսիսային Բևեռը նա էր գտել, և երբ գնային այնտեղ, Վագրը կտեսներ այն մակագրությունը, որ ազդարարում էր:

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵԼ Ե ՎԻՆԻ-ԹՈՒՒՆԸ

ԹՈՒՒՆԸ ԳՏԱՎ

Եվ Վագրը կիմանա այն, ինչ հիմա, երևի, չգիտի, այսինքն՝ թե ինչպիսի արջի հետ գործ ունի՝ ԱՅ-Քեզ Արջի: Որոշվեց, որ արշավի կզնան վաղն առավոտյան, և ճագարը, որ Կենգուի տնից հեռու չի ապրում, հիմա կզնա ու կհարցնի Վագրին, թե նա ինչ է մտադիր վաղն անել. եթե զբաղված չի, գուցե միասին զբոսանքի գնան, Թուխին ու Դնչիկին էլ վերցնեն հետները: Եվ եթե Վագրը ասի՝ «Լավ», ապա ամեն ինչ կարգին է, իսկ եթե ասի՝ «Ոչ»...

– Չի ասի, – հանգստացրեց ճագարը, – հույսներդ ինձ վրա դրեք և չեք սխալվի:

Եվ նա առանց ժամանակ կորցնելու գնաց Վագրի մոտ:

Առավոտյան եղանակը վատացավ: Արևի ու ջերմության փոխարեն Անտառում մառախուղ էր ու ցուրտ:

Վինի-Թուխը ոչ ցրտից էր վախենում, ոչ էլ մառախուղից, բայց երբ պատկերացրեց այն ամբողջ մեղրը, որ մեղուներն այդ օրը չէին սարքելու, սաստիկ խղճաց նրանց: Նա այդ մասին ասաց Դնչիկին, որ եկել էր իր հետևից, իսկ Դնչիկն ասաց, որ ինքն ավելի շատ մտածում է այն մասին, թե ինչքան ցուրտ ու տխուր է լինելու նրա համար, ում իրենք այսօր կորցնելու են Անտառի թավուտում:

Բայց երբ նրանք մոտեցան ճագարի տանը, ճագարն ասաց, որ եղանակը պարզապես օգնում է իրենց, որովհետև Վագրը միշտ առաջ է վազում, և հենց որ նա ծածկվի աչքից, իրենք մի կողմ կփախչեն ու այլևս երբեք նրան չեն տեսնի:

– Բոլորովի՞ն երբեք, – հարցրեց Դնչիկը:

– Դե չէ, այնքան ժամանակ, մինչև որ կգտնեն նրան, Դնչիկը: Մինչև վաղը կամ էլ մինչև մի այլ ժամանակ: Գնացինք: Նա սպասում է մեզ:

Երբ մոտեցան Կենգուի տանը, պարզվեց, որ Վագրի լավագույն բարեկամը՝ ճատիկ Ռուն, նույնպես սպասում է իրենց, իսկ դա փչացնում էր ամբողջ գործը: Բայց ճագարը, թաթիկով բերանը ծածկած, շշնջաց Թուխին. «Հույսներդ ինձ վրա դրեք», և մոտեցավ Կենգուին:

– Ես կարծում եմ, լավ կլինի, եթե Ռուն չգա, – ասաց նա: – Այսօր չարժե:

– Ինչո՞ւ, – հարցրեց Ռուն, թեև ենթադրվում էր, որ նա չի լսում:

– Սարսափելի օր է, – ասաց ճագարը, զլուխն օրորելով: – Չորս կողմը խոնավ է ու ցուրտ: Իսկ դու այսօր առավոտյան հագում էիր:

– Դու որտեղի՞ց գիտես, – վրդովված հարցրեց Ռուն:

– Թանկագինս, դու ինձ ոչինչ չես ասել, – հանդիմանանքով ասաց Կենգուն:

– Դա ուրիշ հագ էր, – ասաց Ռուն: – Դա այնպիսի հագ չէր, որի մասին պատմում են մայրիկներին:

– Այնուամենայնիվ լավ կլինի, եթե այսօր չգնաս, թանկագինս: Մի ուրիշ անգամ:

– Վա՞րը, – հարցրեց Ռուն:

– Տեսնե՞ք, – ասաց Կենգուն:

– Դու միշտ ասում ես տեսնե՞ք, իսկ հետո ոչինչ էլ չի լինում, – տխուր ասաց ճատիկ Ռուն:

– Այսպիսի օրը ոչինչ հնարավոր չէ տեսնել, – ասաց ճագարը: – Ես կարծում եմ, որ մենք հեռու չենք գնա և ճաշին բոլորս էլ... Մենք բոլորս... Մենք... Ա՛խ, Վագր, այդ դո՞ւ ես: Գնացինք: Շուտ առողջացիր, Ռուն: Գնացի՞նք հետո մենք... Գնացի՞նք, Թուխ: Բոլորը պատրա՞ստ են: Հիանալի է, գնացի՞նք:

Եվ նրանք գնացին: Սկզբում Թուխը, ճագարը և Դնչիկը քայլում էին կողք-կողքի, իսկ Վագրը հսկայական պտույտներ գործելով սլանում էր նրանց շուրջը: Հետո, երբ արահետը նեղացավ, ճագարը, Դնչիկը ու Թուխը գնում էին իծաշարուկ, իսկ Վագրը պտույտներ էր գործում նրանց շուրջը: Եվ վերջապես, երբ արահետի երկու կողմում տատասկափչի փշոտ պատերը բարձրացան, Վագրը մեկ շատ առաջ էր վազում, մեկ

վերադառնում, երբեմն ընկնելով ճագարի վրա, երբեմն էլ ոչ: Եվ ինչքան հեռու էին գնում, մառախուղն այնքան թանձրանում էր, այնպես որ Վազրը ժամանակ առ ժամանակ պարզապես կորչում էր աչքից, և այն պահին, երբ մտածում էին, որ այլևս չկա, նա հանկարծ ձեր քթի տակ դուրս էր թռչում մառախուղի միջից, ասելով՝ «Ի՞նչ պատահեց ձեզ, մի քիչ արագ շարժվե՞ք» ու մինչև կհասցնեին որևէ բան պատասխանել, նորից անհետանում էր:

Ճագարը հետ նայեց ու հրեց Դնչիկին:

– Չաջորդ անգամ, – ասաց նա: – Չայտնիր Թուփին:

– Չաջորդ անգամ, – ասաց Դնչիկը Թուփին:

– Չաջորդ անգամ ի՞նչ, – հարցրեց Թուփը Դնչիկին:

Վազրը դուրս թռավ մառախուղի միջից, քիչ մնաց գետին գլորեր ճագարին, ու նորից անհետացավ:

– Ժամանակն է, – ասաց ճագարը:

Նա դուրս թռավ արահետից ու վազեց մի կողմ: Դնչիկն ու Թուփը սլացան նրա հետևից: Նրանք թաքնվեցին ձարխոտի բարձր թփի մեջ ու ականջ դրեցին: Անտառում լռություն էր տիրում: Նրանք ոչինչ չէին տեսնում ու ոչինչ չէին լսում:

– Սը՛սս... – ասաց ճագարը:

– Ես առանց այդ էլ... – ասաց Թուփը:

Ոտնաձայներ լսվեցին... Եվ նորից լռություն տիրեց:

– Չէ՛յ, – կանչեց Վազրը այնքան մոտիկից և այնքան անսպասելի, որ Դնչիկը երևի վեր կթռչեր, եթե չպարզվեր, որ նրա մեծ մասի վրա նստած է Թուփը:

– Որտե՞ղ եք, առ՛ւ, – կանչում էր Վազրը:

Ճագարն արմունկով հրեց Թուփին, իսկ Թուփը շրջվեց, փնտրելով Դնչիկին, որպեսզի իր հերթին արմունկով հրի, բայց չգտավ, իսկ Դնչիկը շարունակում էր շնչել խոնավ ձարխոտի բուրմունքը և աշխատում էր շնչել ինչքան հնարավոր է անաղմուկ և իրեն չափազանց քաջ էր զգում:

– Այ քեզ հրա՛շք, – ասաց Վազրը:

Լռություն տիրեց, և մի քանի վայրկյան անց նրանք լսեցին Վազրի հեռացող ոտնաձայները: Նրանք մի քիչ էլ սպասեցին, և Անտառն այնքան լուռ դարձավ, այնքան լուռ, որ եթե մի քիչ էլ սպասեին, երևի սկսեին վախենալ:

Ճագարը ոտքի կանգնեց ու թափ տվեց իրեն:

– Դե, – հպարտությամբ շնչաց նա: – Տեսա՞ք: Եղավ այնպես, ինչպես ասում էի:

– Ես հենց նոր մտածում էի, – ասաց Թուփը: – Եվ ես մտածեցի...

– Ոչ, – ասաց ճագարը, – դրա ժամանակը չէ: Վազենք: Գնացինք:

Եվ նրանք ճագարի գլխավորությամբ փախուստի դիմեցին:

– Իսկ հիմա, – ասաց ճագարը, – երբ բավականին վազել էին, – կարող ենք հանգստանալ ու խոսել: Դու ինչ-որ բա՛ն էիր ուզում ասել, Թո՛ւփ:

– Չէ, առանձնապես ոչինչ: Իսկ ինչո՞ւ ենք այս կողմ գնում:

– Որովհետև սա տան ճանապարհն է:

– Ա-ա՛, – ասաց Թուփը:

– Իսկ իմ կարծիքով պետք է մի քիչ աջ թեքվել, – անհանգիստ ասաց Դնչիկը, – Իսկ թո կարծիքո՞ւմ, Թո՛ւփ:

Թուփը նայեց իր առջևի թաթերին: Նա գիտեր, որ դրանցից մեկը աջն է, գիտեր նաև, որ եթե որոշի, թե որ մեկն է աջը, ապա մյուսը կլինի ձախը: Բայց նա ոչ մի կերպ չկարողացավ հիշել, թե որից պիտի սկսի:

– Դե... – անվճռական սկսեց նա:

– Գնացինք, – ասաց ճագարը: – Ես ճանապարհը հիանալի գիտեմ:

Եվ գնացին: Տասը րոպե անց նորից կանգ առան:

– Նույնիսկ ծիծաղելի է, – ասաց ճագարը, – մի րոպե ինձ թվաց... Դե, իհարկե: Գնացի՛նք:

Եվս տաս րոպե անց ճագարն ասաց.

– Չիմա, իմ կարծիքով, մենք պետք է լինեինք... երևի մի քիչ ավելի ենք աջ թեքվել, քան պետք էր:

– Դե, ահա և հասանք, – ևս մի տասը րոպե անց ասաց ճագարը: – Ինչո՞ւ է մառախուղի ժամանակ ամեն ինչ այսքան նման իրար: Ծիծաղելի է: Դու այդ նկատե՞լ ես, Թո՛ւփ:

Թուփն ասաց, որ նկատել է:

– Փառք աստճո, որ մենք լավ գիտենք մեր Անտառը, թե չէ կարող էինք մոլորվել, – ասաց ճագարը ևս մի կես ժամ անց: Եվ նա ծիծաղեց այնքան անհոգ, ինչպես կարող է ծիծաղել միայն նա, ով այնքան լավ գիտե Անտառը, որ չի կարող այնտեղ մոլորվել:

Դնչիկը հետ էր մնացել և վազելով հասավ Թուխին:

– Թուխ, – շշտաց նա:

– Ի՞նչ, Դնչի՛կ:

– Ոչինչ, – ասաց Դնչիկն ու բռնեց Թուխի թաթից: – Ես միայն ուզում եմ մոտ լինել քեզ:

Երբ Վագրը հոգնեց, սպասելով, որ իրեն կգտնեն, և ձանձրացավ մենակությանից, որովհետև ոչ մեկը չկար, որին կարողանար ասել՝ «Հը, գուցե գնա՞նք», նա շուռ եկավ ու վազեց տուն:

Նրան տեսելով, Կենգուն ասաց. «Ահա և մեր սիրելի Վագրը: Ձկան յուղ խմելու ճիշտ ժամանակն է»: Եվ նա Վագրին մի լիքը գավաթ ձկան յուղ տվեց: Ճստիկ Ռուն հպարտ-հպարտ ասաց. «Իսկ ես արդեն խմել եմ»: Վագրը կուլ տվեց գավաթի պարունակությունը, մինչև վերջին կաթիլը և ասաց. «Ես նույնպես»: Հետո նրանք սկսեցին խաղալ ու բարեկամաբար հրմշտել իրար, և Վագրը պատահաբար երկու աթոռ շուռ տվեց՝ սակայն դիտավորյալ, և Կենգուն ասաց. «Հապա մի դուրս եկեք: Շուտ, շուտ, այնտեղ կվազվզեք»:

– Ո՞րտեղ – հարցրեց Ռուն:

– Գնացեք սոճու կոներ բերեք վառարանի համար, – ասաց Կենգուն, զամբյուղը տալով նրանց:

Նրանք գնացին Վեց Սոճիների մոտ, իսկ այնտեղ սկսեցին կոներով իրար խփել և այնքան տարվեցին այդ խաղով, որ մոռացան, թե ինչու են Անտառ եկել: Վերջում նրանք զամբյուղն էլ մոռացան ծառի տակ ու գնացին տուն ճաշելու:

Ճաշն արդեն մոտենում էր ավարտին, երբ Քրիստոֆեր Ռոբինը դռնից ներս նայեց:

– Ո՞րտեղ է Թուխը, – հարցրեց նա:

– Վագր, մանկիկս, որտե՞ղ է Թուխը, – հարցրեց Կենգուն:

Վագրը սկսեց բացատրել, թե ինչ է պատահել իրենց Անտառի թավուտում, Ճստիկ Ռուն սկսեց պատմել իր չարաբաստիկ հազի մասին, իսկ Կենգուն փորձում էր համոզել նրանց, որ միասին չխոսեն: Այնպես որ բավականին ժամանակ անցավ, մինչև որ Քրիստոֆեր Ռոբինը հասկացավ, որ Թուխը, Դնչիկը, ճագարը մոլորվել են Անտառի թավուտում և թափառում են մառախուղի մեջ:

– Ծիծաղելի է, – շշտաց Վագրը Ռուի ականջին: – Վագրերը երբե՛ք չեն մոլորվում:

– Իսկ ինչո՞ւ չեն մոլորվում, հը՞, Վագր:

– Չեն կարողանում և վերջ, – բացատրեց Վագրը: – Այդպես են նրանք ստեղծված:

– Պետք է գտնել նրանց, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը: – Գնացի՞նք, Վագր:

– Կարելի՞ է, ես էլ գնամ նրանց փնտրելու, – հուզված ասաց Ճստիկ Ռուն:

– Ես կարծում եմ, որ ոչ այսօր, սիրելիս, – ասաց Կենգուն: – Մի ուրիշ անգամ:

– Եթե նրանք վաղը նորից մոլորվեն, այն ժամանակ կարելի՞ է գնալ նրանց փնտրելու:

– Տեսնենք, – ասաց Կենգուն, և Ճստիկ Ռուն, որ հիանալի գիտեր, թե դա ինչ է նշանակում, սուսուփուս սենյակի անկյունը քաշվեց և սկսեց ցատկերի վարժություններ կատարել, որովհետև մի կողմից ցատկել էր ուզում, մյուս կողմից էլ չէր ուզում, որ Քրիստոֆեր Ռոբինն ու Վագրը նկատեն, որ վշտացել է:

– Եվ այսպես, – ասաց ճագարը, – մենք կարողացանք մոլորվել: Այսպիսին են փաստերը:

Նրանք երեքով հանգստանում էին ավազով լցված մի փոքր փոսի մեջ: Այդ փոսն արդեն սոսկալի ձանձրացրել էր Թուխին, և նա լրջորեն կասկածում էր, որ փոսը պարզապես հետապնդում է իրենց, որովհետև ինչ ուղղությամբ էլ գնում էին, վերջ ի վերջո ընկնում էին նրա մեջ: Ամեն անգամ ընկնելով փոսի մեջ, ճագարը հանդիսավոր ծայնով հայտարարում էր. «Հիմա ես գիտեմ, թե մենք որտեղ ենք», իսկ Թուխը տխուր ասում էր. «Ես նույնպես»: Միայն Դնչիկն էր լուռ: Նա շարունակ մտածում էր, թե ինչ ասի, բայց «փրկեցե՛ք, օգնեցե՛ք» բացականչությունից բացի, նրա մտքով ուրիշ բան չէր անցնում, իսկ այդ ասելը, հավանորեն, հիմարություն կլիներ, որովհետև իր հետ էին Թուխն ու ճագարը:

Երկար ժամանակ լուռ էին:

– Դե ինչ արած, – վերջապես խոսեց ճագարը, որն այդքան ժամանակ երևի ապարդյուն սպասում էր, թե իրեն շնորհակալություն կհայտնեն հաճելի զբոսանքի համար: – Գուցե գնա՞նք:

– Իսկ ինչ կլինի եթե... – առանց շտապելու սկսեց Թուխը, – եթե մենք, հենց որ կորցնենք այս փոսը, սկսենք նորից փնտրել:

– Չետո ի՞նչ, – հարցրեց ճագարը:

– Ուզում եմ ասել, – շարունակեց Թուխը, – որ մենք ամբողջ ժամանակ Տուն ենք փնտրում և չենք գտնում: Եվ ահա մտածում եմ, որ եթե մենք սկսենք փնտրել այս Փոսը, ապա անապաման չենք գտնի, որովհետև մենք այդ ժամանակ գուցե գտնենք, ինչը կարծես թե չենք փնտրում, և դա կարող է լինել այն, ինչը մենք իսկապես փնտրում ենք:

– Այդտեղ առանձնապես խելոք բան չեմ տեսնում, – ասաց ճագարը:

– Ոչ, – ասաց Թուխը համեստորեն, – այն չկա էլ: Բայց երբ սկսեցի խոսել, կարծես թե կար, այսինքն՝ ուզում էր լինել: Հավանորեն, նրա հետ ինչ-որ բան պատահեց ճանապարհին:

– Եթե ես հեռանամ այս Փոսից, իսկ հետո հետ գամ, ապա, ինչ խոսք, կգտնեմ, – ասաց ճագարը:

– Իսկ ես մտածում էի, որ չես գտնի, – ասաց Թուխը: – Չգիտեմ ինչու այդպես եմ մտածում:

– Իսկ դու փորձից, – անսպասելի ասաց Ղեչիկը: – Մենք թեզ կսպասենք այստեղ:

Ճագարը փռթկացրեց, որպեսզի ցույց տա, թե որքան հիմար է Ղեչիկը և անհետացավ մառախուղում: Հարյուր քայլ հեռանալով, նա շրջվեց ու հետ քայլեց... Եվ այն բանից հետո, երբ Թուխն ու Ղեչիկը քսան րոպե սպասեցին նրան, Թուխը ոտքի կանգնեց:

– Չգիտեմ ինչու ես այդպես էլ կարծում էի, – ասաց նա: – Իսկ հիմա, Ղեչիկ, տուն գնանք:

– Թո՛ւխ, – հուզմունքից դողալով ճղճղած Ղեչիկը: – Մի՞թե դու գիտես ճանապարհը:

– Ոչ, – ասաց Թուխը, – չգիտեմ: Բայց տանը, պահարանում ես տասներկու կճուճ մեղր ունեմ, և նրանք վաղուց կանչում են ինձ: Ես չեի կարողանում կարգին լսել նրանց, որովհետև ճագարը ամբողջ ժամանակ կարկուտի պես խոսում էր: Բայց եթե բոլորը, բացի այդ տասներկու կճուճների, լռեն, ապա կարծում եմ, Ղեչիկ, որ ես կիմանամ, թե որտեղից են նրանք կանչում: Գնա՛նք:

Նրանք գնացին, և Ղեչիկը երկար ժամանակ լռում էր, որպեսզի չխանգարի կճուճներին, երբ հանկարծ թեթևակի ծվծած... իսկ հետո ասաց՝ «ո՛, ո՛», որովհետև նրան թվաց, որ արդեն գիտե, թե որտեղ են գտնվում: Բայց նա դեռևս չէր համարձակվում բարձրաձայն ասել այդ մասին, որ հանկարծ չփչացնի գործը:

Եվ արդեն այն պահին, երբ նա այնքան համոզված էր, որ գիտե, թե որտեղ են գտնվում, որ այլևս կարևոր չէր՝ Թուխը լսում է իր կճուճներին, թե ոչ, լսվեց մի շատ ծանոթ ձայն, և մառախուղի միջից դուրս լողաց Քրիստոֆեր Ռոբինը:

– Ա՛խ, դուք այստե՞ղ եք, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը որքան կարող էր անփույթ, աշխատելով ցույց չտալ, թե որքան է հուզվել:

– Մենք այստեղ ենք, – ասաց Թուխը:

– Իսկ որտե՞ղ է ճագարը:

– Չգիտեմ, – ասաց Թուխը:

– Այո՞: Լավ, ես կարծում եմ, որ Վագրը կգտնի նրան: Նա նույնպես ձեզ է փնտրում:

– Դա լավ է, – ասաց Թուխը: – Ես պետք է տուն գնամ, որովհետև պետք է ուտեմ: Ղեչիկը նույնպես, որովհետև մինչև հիմա մենք ոչինչ ենք կերել և...

– Ես կուղեկցեմ ձեզ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը:

Նա Թուխին տուն ուղեկցեց և նրա մոտ մնաց բավական երկար:

Իսկ Վագրը բարձրաձայն մռնչալով տակնուվրա էր անում Անտառը, որպեսզի գտներ ճագարին:

Եվ վերջապես, շատ Փոքր ու շատ Տխուր ճագարը լսեց նրան: Եվ այդ Փոքր ու Տխուր ճագարը մառախուղի միջով գլխապատառ նետվեց դեպի ձայնը, որը անսպասելիորեն Վագր դարձավ: Բարի Վագր, Մեծ Վագր, Ազատարար ու Փրկիչ Վագր, Վագր, որ եթե նույնիսկ երեկ առած էր (եթե միայն նա ընդհանրապես երեսառած էր), ապա էլի ամենալավ Վագրն էր աշխարհում:

– Սիրելի Վա՛գր, ինչքան ուրա՛խ եմ, որ տեսնում եմ թեզ, – գոռաց ճագարը:



ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Որտեղ Դևչիկը մեծ սխրանք է գործում

Մտախոհ Վայրը գտնվում էր Վիկի-Թուխի և Դևչիկի տներից հավասար հեռավորության վրա, այսինքն՝ նրանց տների միջև ընկած ճանապարհի ճիշտ կեսին: Երբեմն, երբ ուզում էին տեսնել իրար, նրանք հանդիպում էին այստեղ, և Մտախոհ Վայրում այնքան տաք էր ու խաղաղ, որ նրանք սիրում էին մի քիչ նստել ու մտածել, թե ինչով զբաղվեն հիմա, երբ արդեն հանդիպել են: Իսկ մի անգամ, երբ նրանք որոշեցին ոչ մի բանով չզբաղվել, Թուխն այդ վայրի մասին նույնիսկ հատուկ ոտանավոր հորինեց, որպեսզի բոլորն իմանային, թե այն ինչի համար է նախատեսված:

Սիրում է Արջն այստեղ
Երբեմն նստել,
Ու մտածել՝

Լավ կլիներ զբաղվեի մի բանով:

Չէ՞ որ բարձր սարից
Նա չի թափ առել,
Որ կարողանա

Ողջ օրը անգործ թափառել:

Եվ ահա մի աշնանային առավոտ, երբ քամին ծառերից գիշերը պոկել էր բոլոր տերևները, իսկ հիմա փորձում էր ճյուղերը պոկել, Թուխն ու Դևչիկը նստել էին Մտախոհ Վայրում և դարձյալ մտածում էին, թե ինչով զբաղվեն:

– Ես մտածում եմ, – ասաց Թուխը, – որ ես մտածում եմ ահա թե ինչ. վատ չէր լինի, եթե հիմա Թուխի Սոճուտ գնայինք ու տեսնեինք Իային, որովհետև երևի քամին տարել է նրա տունը, և նա, երևի, շատ կուրախանա, եթե մենք տունը նորից սարքենք:

– Իսկ ես մտածում եմ, – ասաց Դևչիկը, – որ ես մտածում եմ ահա թե ինչ. վատ չէր լինի, եթե հիմա այցելենք Քրիստոֆեր Ռոբինին, միայն թե նրան տանը չենք գտնի, այնպես որ չենք կարող գնալ:

– Արի այցելենք բոլորին-բոլորին, – ասաց Թուխը, – որովհետև շատ հաճելի է, երբ դրսում սառելուց հետո հանկարծ մտնում ես մեկի տունը, և նա ասում է քեզ. «Ողջույն, Թուխ, ճիշտ ժամին եկար: Արդեն ժամանակն է, որ փորներս մի բանով լցնենք»:

Դնչիկն ասաց, որ բուրդին-բուրդին այցելելու համար շատ լուրջ պատրվակ է պետք, և Թուխը թող որևէ պատրվակ գտնի, եթե կարող է:

Թուխը իհարկե, ասաց.

– Մենք կայցելենք բուրդին, որովհետև այսօր հինգշաբթի է: Մենք կշնորհավորենք նրանց ու կմաղթենք Շատ Հաճելի Հինգշաբթի: Գնացինք, Դնչիկ:

Բարեկամները ոտքի կանգնեցին, բայց Դնչիկը տեղնուտեղը նորից նստեց, որովհետև չգիտեր, թե ի՞նչ ուժեղ քամի է:

Եվ երբ Թուխը նրան օգնեց ոտքի կանգնել, նրանք ճանապարհ ընկան:

Առաջինը նրանց Թուխի տնակը պատահեց, և պատկերացնում էք, երբ նրանք եկան, տանտերը՝ բուրդիդ լավ ծանոթ արջուկ Թուխը տանն էր, նրանց ներս հրավիրեց ու հյուրասիրեց ինչպես պետքն էր:

Հետո նրանք ուղևորվեցին Կենգուի մոտ, միմյանց ձեռքից բռնած ու շարունակ գոռալով. «Հը, ի՞նչ ասացիր», «Ի՞նչ, ի՞նչ», «Ես չեմ լսում»: Եվ մինչև տեղ հասան, այնպես էին հոգնել, որ ստիպված էին երկար մալ Կենգուի տանը ու մի անգամ էլ նախաճաշեցին:

Երբ բարեկամները նորից հայտնվեցին դրսում, նրանց թվաց, որ ավելի է ցրտել, և մեկական զույգ ոտք էլ փոխ առած, վազեցին ճագարի մոտ:

– Մենք եկել ենք մաղթելու քեզ Շատ Հաճելի Հինգշաբթի, – ասաց Թուխը մի երկու անգամ դուրս ու ներս անելուց և համոզվելուց հետո, որ ճագարի դուռը չի նիհարել:

– Իսկ ի՞նչ է տեղի ունենալու հինգշաբթի օրը, – հարցրեց ճագարը:

Երբ Թուխը բացատրեց, թե ինչ, ճագարը, որի կյանքը խիստ Կարևոր Գործերից էր բաղկացած, ասաց. «Ա՛հ, ես էլ կարծեցի իսկապես գործով եք եկել», և Թուխն ու Դնչիկը մեկ-երկու ընկալեցին... իսկ հետո շարունակեցին ճանապարհը: Հիմա քամին նրանց մեջքին էր փչում, այնպես, որ կարող էին խոսել առանց գոռալու:

– ճագարը խելացի է, – մտախոհ ասաց Թուխը:

– Այո, – ասաց Դնչիկը, – ճագարը խորամանկ է:

– Նրա Ուղեղը իսկական է:

– Այո, – ասաց Դնչիկը, – ճագարի Ուղեղը իսկական է:

Երկարատև լռություն տիրեց:

– Երևի դրա համար էլ, – վերջապես ասաց Թուխը, – երևի դրա համար էլ նա երբեք ոչինչ չի հասկանում:

Քրիստոֆեր Ռոբինը արդեն տանն էր, և իր բարեկամներին տեսնելով այնքան ուրախացավ, որ Թուխն ու Դնչիկը նրա մոտ մնացին համարյա մինչև ճաշի ժամը և համարյա ճաշեցին (այսինքն՝ այնպիսի ճաշ կերան, որը կարելի է հեշտությամբ մոռանալ) ու շտապեցին Թուխի Սոճուտ, որպեսզի հասցնեն տեսնել Իային և չուշանան Բուի Իսկական ճաշից:

– Բարև, Իա, ուրախ ձայն տվեցին նրանք իշուկին:

– Ա՛հ, – ասաց Իան, – մոլորվե՞լ եք:

– Ի՞նչ ես ասում: Պարզապես քեզ տեսնելու ենք եկել, – ասաց Դնչիկը, – որ իմանանք ինչպես է իրեն զգում տունը: Թուխ, նայի՛ր, Իայի տունը դեռ կանգուն է:

– Իսկապես, շատ տարօրինակ է, – ասաց Իան, – Այո, արդեն վաղուց ժամանակն է, որ որևէ մեկը գա ու քանդի: Ինչպես է, որ մինչև հիմա ոչ մեկի մտքով չի անցել:

– Մենք մտածում էինք, որ քամին տունդ տապալած կլինի, – ասաց Թուխը:

– Ախ այդպե՛ս: Դրա համար էլ ոչ ոք իրեն նեղություն չի տվել: Իսկ ես կարծում էի, որ տանս մասին պարզապես մոռացել են:

– Մենք շատ ուրախ ենք, որ տեսանք քեզ, Իա, իսկ հիմա պետք է Բուին այցելենք:

– Խնդրեմ: Բուն շատ սիրալիր է դարձել: Օրերս նա թռչում էր այստեղով և նկատեց ինձ: Նա, իհարկե, չխոսեց, հետս, բայց գիտեր, որ այդ ես եմ: Մեծ սիրալիրություն է նրա կողմից:

Սիրտ է ջերմացնում:

Թուխն ու Դնչիկը մի քիչ հետ-հետ գնացին ու ասացին. «Դե, ցտեսություն, Իա», աշխատելով չշտապել, բայց նրանք դեր երկար ճանապարհ ունեին գնալու և շատ էին ուզում ժամանակին տեղ հասնել:

– Ցտեսություն, – ասաց Իան: – Չգույշ եղիր, որ քամին քեզ չտանի, փոքրիկ Դնչիկ: Զո պակասությունը շատ կզգացվի: Շատերը հետաքրքրությամբ կհարցնեն. «Քամին ո՞ւր է քշել փոքրիկ Դնչիկին»: Դե, ցտեսություն: Շնորհակալ եմ ձեզանից, որ պատահաբար անցնում էիք այստեղով:

– Ցտեսություն, – վերջին անգամ ասացին Թուփն ու Դնչիկը և շարժվեցին դեպի Բուփ տունը: Հիմա քամին դիմացից էր փչում, և Դնչիկի ականջները փողփողում էին դրոշակների նման, աշխատելով ամեն կերպ պոկվել տիրոջից, որն առանց այդ էլ հերոսական ջանքերով էր առաջ շարժվում: Նրան թվում էր, ժամեր անցան, մինչև վերջապես իր ականջները ապահով թաքցրեց Թավուտ Անտառի խաղաղ կամարների տակ: Այստեղ նրա ականջները սովորական դիրք ընդունեցին և, իհարկե, ոչ առանց հուզմունքի, լսում էին, թե ծառերի կատարների մեջ ինչպես է ոռնում մրրիկը:

– Թուփ, ենթադրենք թե ծառը շուռ եկավ, երբ մենք կանգնած ենք նրա տակ, – ասաց Դնչիկը: – Ի՞նչ կպատահի, ի՞նչ ես կարծում:

– Ավելի լավ է ենթադրենք, որ շուռ չի գա, – մի քիչ մտածելուց հետո ասաց Թուփը: Այդ ենթադրությունը Դնչիկին մխիթարեց, և քիչ հետո բարեկամներն ուրախ ու զվարթ կանգնած էին Բուփ դռանը և միմյանց հերթ չտալով քաշում ու զանգահարում էին:

– Բարև, Բու, – ասաց Թուփը, – հույս ունեմ, որ մենք չենք ուշացել, հա... Ես ուզում եմ ասել՝ ո՞նց ես ապրում, Բու: Մենք Դնչիկի հետ որոշեցինք այցելել քեզ, որովհետև այսօր Հինգշաբթի է:

– Նստիր, Թուփ, նստիր, նստիր, Դնչիկ, – սիրալիր ասաց Բուն: – Ձեզ զգացե՛ք ինչպես տանը:

Նրանք շնորհակալություն հայտնեցին և տեղավորվեցին ինչպես կարող էին:

– Հասկանում ես, Բու, մենք շատ էինք շտապում, որ կարողանայինք հասնել ճա... Այսինքն՝ որ հասցնեինք տեսնել քեզ գնալուց առաջ:

Բուն արժանապատվությամբ գլխով արեց:

– Ուղղեցե՛ք ինձ, եթե ես սխալվում եմ, – ասաց Նա, – բայց մի՞թե ես իրավացի չեմ, ենթադրելով, որ դրսում խիստ փոթորկոտ օր է:

– Խիստ, – ասաց Դնչիկը, որ կրակի մոտ ականջներն էր տաքացնում, երազելով միայն մի բան, որ ողջ ու անվնաս տուն հասնի:

– Ես այդպես էլ կարծում էի, – ասաց Բուն: – Ես ահա, հենց մի այդպիսի փոթորկոտ օր իմ մորեղբայր Ռոբերտը, որի դիմանկարը, Դնչիկ, դու տեսնում ես քեզանից աջ, իմ մորեղբայր Ռոբերտը, ուշ ժամին վերադառնալով տուն... Սա ի՞նչ բան է:

Սարսափելի դրոյուն լսվեց:

– Չգուշացե՛ք, – գոռաց Թուփը: – Չգուշացե՛ք, ժամացույցը: Դնչի՛կ, մի կողմ փախի: Դնչի՛կ, ես ընկնում եմ քեզ վրա:

Թուփի կողմի պատը դանդաղ բարձրանում էր վեր, և Թուփի բազկաթոռը սահում էր Դնչիկի բազկաթոռի կողմը: Պատի ժամացույցը ցատկեց վառարանի վրա, հետո չմոռացավ սեղանից հավաքել բոլոր ծաղկամանները, իսկ ավելի հետո այդ բոլորը միասին համերաշխ թափվեցին այնտեղ, ինչը քիչ առաջ հատակ էր, իսկ հիմա փորձում էր հասկանալ, թե կկարողանա այսուհետև նույնքան էլ բարեխիղճ պատ լինել: Մորեղբայր Ռոբերտը երևի որոշել էր գորգ դառնալ ու չմոռացավ իր հետևից քարշ տալ նաև ծանոթ պատը, և Դնչիկի բազկաթոռի վրա հարձակվեց ճիշտ այն պահին, երբ Դնչիկը փորձում էր դուրս գալ այնտեղից:

Մի խոսքով, որոշ ժամանակ պարզապես անհնարին էր որոշել, թե որ կողմում է հյուսիսը... Հետո նորից սարսափելի դրոյուն լսվեց... սենյակը տենդագին ցնցվեց... և, վերջապես, լռություն տիրեց:

Անկյունում շարժվեց սփռոցը: Նա կծիկ դարձավ ու զլորվեց սենյակի երկարությամբ: Հետո մի քանի անգամ ցատկոտեց ու նրա միջից երկու ականջ երևացին: Սփռոցը նորից զլորվեց սենյակի երկարությամբ, այս անգամ՝ հակառակ ուղղությամբ, և բացվեց:

– Թո՛ւփ, – անհանգիստ ասաց Դնչիկը:

– Ի՞նչ, – ասաց բազկաթոռներից մեկը:

– Որտե՞ղ ենք մենք:

– Ես էլ չեմ հասկանում, – պատասխանեց բազկաթոռը:

– Մենք... Մենք Բուփ տա՞նն ենք:

– Երևի այո, որովհետև մենք հենց նոր պատրաստվում էինք թեյ խմել և այդպես էլ չիմեցինք:

– Թո՛ւփ, – բացականչեց Դնչիկը, – Բուփ փոստարկորդ առա՞ջ էլ առաստաղի վրա էր:

- Բայց մի՞թե այնտեղ է:
- Ինքդ նայիր:
- Չեմ կարող, – ասաց Թուխը, – ես պառկած եմ փորիս վրա, իսկ իմ վրա էլ ուրիշ բան է պառկած: Այս դիրքում, Դնչիկ, շատ դժվար է առաստաղին նայել:
- Մի խոսքով, առաստաղի վրա է:
- Երևի փոխադրվել է այնտեղ, – ենթադրեց Թուխը, – բազմազանության համար:
- Հակառակ անկյունում սեղանի տակ ինչ-որ քաշքշուկ բարձրացավ, և Բուն վերադարձավ հյուրերի մոտ:
- Դնչի՛կ, – խիստ բարկացած ասաց Բուն: – Որտե՞ղ է Թուխը:
- Ես ինքս էլ լավ չեմ հասկանում, – ասաց Թուխը:
- Բուն ձայնի վրա շրջվեց ու խստորեն նայեց Թուխի այն մասին, որը դեռ երևում էր:
- Թուխ, – հանդիմանանքով ասաց նա, – սա թո՞ արածն էր:
- Ոչ, – ասաց Թուխը, – չեմ կարծում:
- Այդ դեպքում ո՞ւմ:
- Կարծում եմ քամու, – ասաց Դնչիկը: – Կարծում եմ, որ քամին տունդ շուռ է տվել:
- Ախ, ահա թե ի՞նչ: Իսկ ես կարծում էի, որ դա Թուխի արածն է:
- Ոչ, – ասաց Թուխը:
- Եթե քամին է արել, – բարձրաձայն մտածեց Բուն, – ուրեմն Թուխը մեղավոր չի: Նշանակում է, պատասխանատվությունը չի կարող նրա վրա դրվել:
- Եվ Բուն թռավ վերև, երևի հիանալու իր նոր առաստաղով:
- Դնչի՛կ, Դնչի՛կ, – շշնջաց Թուխը:
- Դնչիկը կռացավ նրա վրա:
- Ի՞նչ, Թուխ:
- Բուն ասաց ի՞նչ է դրված վրաս:
- Նա ասաց, որ քեզ չի մեղադրում:
- Ա-ա՛, իսկ ես կարծեցի նկատի ունե՞ր այն... ինչ ինձ վրա է ընկել: Հիմա համաձայն եմ:
- Բու, – ասաց Դնչիկը, – խնդրում եմ, իջիր և օգնիր Թուխին դուրս գալու:
- Բուն, որ չէր կշտանում իր փոստարկղով հիանալուց (իսկ փոստարկղը մետաղալարից էր, դռան վրա էլ ճեղք կար «Թերթերի ու նամակների համար» մակագրությամբ, միայն թե մակագրությունը հիմա չէր երևում, որովհետև դրսի կողմից էր), թռավ ցած: Դնչիկն ու նա երկար ժամանակ քաշքշում ու հրում էին բազկաթոռը և, վերջապես, Թուխը դուրս եկավ նրա տակից ու կարողացավ շուրջը նայել:
- Այո, – ասաց Բուն, – աննախանձելի վիճակ է:
- Ի՞նչ ենք անելու, Թո՛ւխ: Դու կարո՞ղ ես որևէ բան մտածել, – հարցրեց Դնչիկը:
- Այո, ես հենց նոր ինչ-որ բան մտածում էի, – ասաց Թուխը: – Ես մտածում էի մի փոքր բանի մասին: – Եվ նա երգեց, ավելի ճիշտ՝ հևաց:

ՀԵՎՅԵՎԻԿ

Գլխիվայր շուռ եկած,
Ոտքերս վեր տնկած,
Դիմանում էի մի կերպ դողահար.
Ճաղրածուն կրկեսի
Նախանձեր ինձ պիտի,
Բայց Արջի բանը ուրիշ է, դժվար:
Իսկ հետո փռվեցի
Ու ձևեր թափեցի՝
Թե որոշել եմ ննջմնջել մի քիչ.

Ու պառկած խեղճ փորիս
Հիշեցի մուսայիս,
Բայց նա լքել էր իր Պոետին (ինձ):
Ի՞նչ արած,

Եթե մենք
Բազմոցում ընկողմած,
Միշտ չէ, որ տեր ենք հանգին ու վանկին.
Ի՞նչ երգի ձեզ Արջը,
Այդ խեղճ լայնականջը՝
Ծանր բազմոցը առած շալակին:

– Ահա և բոլորը, – ասաց Թուխը:

Դնչիկն ուզում էր ասել՝ «Թուխ, ոչ թե բազմոց, այլ բազկաթոռը», բայց Բուն կանխեց նրան: Նա մի քանի անգամ մեծամտորեն հազաց, ասելով, որ եթե Թուխը համոզված է, որ վերջացրել է, ապա իրենք կարող են իրենց մտավոր ընդունակությունները վերջապես ի սպաս դնել Ելք Գտնելու Խնդիրն:

– Որովհետև, – ասաց Բուն, – մենք չենք կարող այստեղից դուրս գալ այն ճանապարհով, որը սովորաբար կոչվում է Մուտքի կամ Ելքի Դուռ: Նրա վրա ինչ-որ բան է ընկել:

– Այդ դեպքում ուրիշ էլ ինչպե՞ս կարելի է դուրս գալ, – վախեցած հարցրեց Դնչիկը:

– Դա էլ հենց այն Խնդիրն է, Դնչիկ, որի լուծման համար ես Թուխին խնդրեցի ի սպաս դնել իր Մտավոր Ընդունակությունները:

Թուխը նստեց հատակին (որը մի ժամանակ պատ էր), հայացքը առաստաղին հառեց, (որը մի ժամանակ նույնպես պատ էր և մուտքի դուռ ուներ, որը մի ժամանակ մուտքի դուռ էր) և փորձեց ի սպաս դնել իր Մտավոր Ընդունակությունները:

– Բու, դու չե՞ս կարող Դնչիկին մեջքիդ առած թռչել մինչև փոստարկղը, – հարցրեց նա:

– Ոչ, – վրա տվեց Դնչիկը, – նա չի՛ կարող, չի՛ կարող:

Բուն սկսեց բացատրել, թե ինչ բան է Անհրաժեշտ կամ Համապատասխան Մկանային համակարգը: Արդեն մի անգամ նա այդ բանը բացատրել էր Թուխին ու Քրիստոֆեր Ռոբինսին և սպասում էր հարմար առիթի, որպեսզի կրկներ իր բացատրությունը, որովհետև դա մի այնպիսի բան է, որը դուք հանգիստ կարող եք բացատրել երկու անգամ, չվախենալով, որ ինչ-որ մեկը ձեզ կհասկանա:

– Որովհետև, հասկանո՞ւմ ես, Բու, եթե մեզ հաջողվի Դնչիկին փոստարկղի մեջ մտցնել, նա կկարողանա խցկվել ճեղքից, որով նամակներ են անցնում, կիջնի ծառից ու կվազի օգնություն կանչելու, – բացատրեց Թուխը:

Դնչիկն անմիջապես հայտարարեց, որ վերջերս ինքը Բավականին Մեծացել է, այնպես որ, ինչքան էլ չարչարվի, հազիվ թե կարողանա անցնել ճեղքից:

Բուն ասաց, որ վերջերս փոստարկղի ճեղքը Բավականին Մեծացել է, հատկապես այն դեպքի համար, եթե մեծ նամակներ գան, այնպես որ Դնչիկը, հավանաբար, կանցնի:

Դնչիկն ասաց.

– Բայց դու ասում էիր, որ Անհրաժեշտ կամ Համապատասխան այդ չգիտեմ ինչը չի դիմանա:

Բուն ասաց.

– Չի՛ դիմանա, դրա մասին ավելորդ է խոսել:

Իսկ Դնչիկն ասաց.

– Ավելի լավ է եկեք ուրիշ բան մտածենք, – և առաջինն ինքը օրինակ տվեց:

Իսկ Թուխը հիշեց այն օրը, երբ ինքը Դնչիկին փրկել էր Ջրհեղեղից, և բոլորը հիանում էին իրենով. և քանի որ նման առիթներ հաճախ չէին լինում, նա մտածեց, որ լավ կլիներ, եթե այդ ամենը կրկնվեր նորից, և սովորականի նման անսպասելիորեն, նրա գլխում միտք ծնվեց:

– Բու, – ասաց Թուխը, – ես կարծես թե գտա:

– Խելամիտ ու Հնարամիտ Արջ, – ասաց Բուն:

Այդ գովեստները լսելով, Թուխը լրջացավ ու ասաց համեստորեն, որ այդ միտքը, այո, պատահաբար իր գլուխը եկավ: Եվ նա բացատրեց իր միտքը:

– Մենք պարանը կկապենք Դնչիկի մեջքից, իսկ դու կտուճով կբռնես պարանի մյուս ծայրից ու կթռչես փոստարկղի մոտ: Պարանի այդ ծայրը կանցկացնես մետաղալարի միջով ու կիջեցնես ներքև, իսկ հետո մենք ինչքան ուժ ունենք կբաշենք այդ ծայրից, և Դնչիկը կամաց-կամաց կբարձրանա վերև, և գործը գլուխ կգա:

– Եվ Դնչիկը կհայտնվի արկղի մեջ, – ասաց Բուն: – Եթե, իհարկե, պարանը չկտրվի:

– Իսկ եթե կտրվի՞, – անկեղծ հետաքրքրությամբ հարցրեց Ղևշիկը:

– Այդ ժամանակ մենք ուրիշ պարան կվերցնենք, – մխիթարեց նրան Թուխը:

Բայց դա քիչ ուրախացրեց Ղևշիկին, որովհետև չնայած տարբեր պարաններ էին կտրվելու, ընկնելու էր դարձյալ նույն Ղևշիկը: Բայց, ավաղ, ոչ ոք նոր բան չկարողացավ մտածել:

Եվ ահա, մտովի հրաժեշտ տալով Անտառում ապրած այն երջանիկ ժամանակներին, երբ ոչ ոք Ղևշիկին չէր ստիպում պարանից կախված ճանապարհորդել առաստաղի տակ, նա քաջաբար գլխով արեց և ասաց, որ Յա-հա-հա-համաձայն է:

– Մի վախեցիր, չի կտրվի, – քաջալերեց նրան Թուխը, – որովհետև դու Փոքրիկ Արարած ես, իսկ ես կանգնած կլինեմ ներքևում, իսկ եթե դու փրկես մեզ, դա կլինի Մեծ Սխրանք, որի մասին բոլորը կխոսեն, և ես գուցե դրա մասին երգ հորինեմ, և բոլորը կասեն. «Ղևշիկն այնպիսի Մեծ Սխրանք է կատարել, որ Թուխը ստիպված է եղել Գովաբանական Երգ հորինել»:

Այստեղ Ղևշիկը, իհարկե, իրեն շատ ավելի լավ զգաց, իսկ երբ ամեն ինչ պատրաստ էր, և նա սկսեց իր ճանապարհորդությունը դեպի Բուհի նոր առաստաղը, նրան այնպիսի հպարտություն համակեց, որ, իհարկե, կգոռար. «Յապա մի ինձ նայեք», եթե չվախենար, որ Թուխն ու Բուն այնպես կհմայվեն իրենով, որ բաց կթողնեն պարանը:

– Զաշեցինք, – ուրախ ասաց Թուխը:

– Վերելքը ընթանում է համաձայն նախօրոք մշակված ծրագրի, – քաջալերեց Բուն:

Վերելքը շուտով ավարտվեց: Ղևշիկը բացեց արկղը ու ներս մտավ: Յետո նա արձակեց պարանը և սկսեց խցկվել այն ճեղքի մեջ, որով հին ու բարի ժամանակներում, երբ մուտքի դռները՝ մուտքի դռներ էին, ընկնում էին, պատահում էր, շատ անսպասելի նամակներ, որոնք տանտիրուհին ստանում էր ոմն Բուհից:

Ղևշիկը խցկվում էր ու խցկվում և, վերջապես, մի վերջին ճիգ գործադրելով հայտնվեց դրսում:

Երջանիկ ու հուզված, նա մի րոպե տվեց իրեն մնալ մուտքի մոտ, որպեսզի գերյալներին մխիթարանքի ու ողջույնի խոսքեր ճղճղա.

– Ամեն ինչ կարգին է, – բերանը ճեղքին մոտեցրած գոռաց նա: – Բո՛ւ, քո ծամը լրիվ շուռ է եկել, իսկ դռան վրա մի մեծ ոստ է ընկած, բայց ոչինչ, Զրիստոֆեր Ռոբինի հետ մենք դա հեշտությամբ կշարժենք տեղից: Թուխ, քեզ քաշելու համար մենք ճոպան կբերենք: Յիմա ես կգնամ ու կասեմ: Ներքև ես հեշտությամբ կիջնեմ, այսինքն՝ դա վտանգավոր է, բայց ես չեմ վախենում, և մենք Զրիստոֆեր Ռոբինի հետ կզանք մոտավորապես կես ժամից հետո: Առայժմ, Թո՛ւխ: – Եվ չսպասելով Թուխի պատասխանին. «Շնորհակալություն, Ղևշիկ, մինչև նոր հանդիպում», նա անհետացավ:

– Կես ժամ, – ասաց Բուն, հարմար տեղավորվելով, – դա միանգամայն բավական է, որպեսզի ավարտեմ այն պատմությունը, որը կիսատ մնաց՝ մորեղբայր Ռոբերտի մասին, որի դիմանկարը, սիրելի Վինի, դու տեսնում ես քեզանից ցած: Նախ հիշենք, թե որտեղ ես կանգ առա: Ախ այո: Յենց մի այսպիսի փոթորկոտ օր, երբ իմ մորեղբայր Ռոբերտը...

Թուխը փակեց աչքերը:



ՎՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

Որտեղ հա-հան բուանց է գտնում և Բուև տեղափոխվում է

Վինի-Թուխը Թավուտ Անտառ զնաց ու կանգնեց Բուի Տան առաջ: Հիմա դա բլրորովին տան նման չէր: Ավելի շատ շուռ եկած ծառի էր նման. իսկ երբ տունը սկսվում է այդպիսի տեսք ստանալ, նշանակում է, վաղուց ժամանակն է, որ նրա տերը փոխի իր հասցեն:

Առավոտյան Թուխը իր դռան վրա խորհրդավոր Գրություն էր գտել, որը ազդարարում էր.

ԵՍ ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ՆՈՐ ՀԱՍԾԵ ԲՈՒԻ ՀԱՄԱՐ ԴՈՒ ՆՈՒՅՆՊԵՍ ՃԱԳԱՐ

Եվ մինչ Թուխը մտածում էր, թե դա ինչ կարող է նշանակել, եկավ ճագարը ու բարձրաձայն կարդաց:

– Ես մյուսներին էլ եմ այսպիսի նամակներ ուղարկել, – ասաց ճագարը: – Բացատրում եմ, թե ինչի մասին է խոսքը, և նրանք լույսալույս պետք է Նոր հասժե, այսինքն՝ Բուի համար տուն փնտրեն: Ներիր, ես շատ եմ շտապում, ցտեսություն:

Եվ նա վազեց:

Թուխն առանց շտապելու քայլեց նրա հետևից: Նա ավելի լուրջ գործ ուներ, քան Բուի համար տուն փնտրելը: Նա պետք է Գովաբանական Երգ՝ ճշանկի, հորիներ նրա նախկին տան մասին: Չէ՞ որ շատ օրեր առաջ նա խոստացել էր Դնչիկին, և սկսած այդ օրվանից, երբ էլ հանդիպեին, Դնչիկը, ճիշտ է, ոչինչ չէր ասում, բայց իսկույն զգացվում էր, թե ինչի մասին նա ոչինչ չի ասում: Իսկ եթե որևէ մեկը Երգի (ճշանկի), Ծառի, Պարանի կամ Փոթորկի անուն էր տալիս, Դնչիկն իսկույն վարդագույն էր դառնում, սկսված քթի ծայրից, ու շտապում էր խոսել որևէ այլ բանի մասին:

– Բայց դա այնքան էլ հեշտ չի, – ասաց Վինի-Թուխը ինքն իրեն, շարունակելով նայել նրան, ինչը մի ժամանակ կոչվել էր Բուի Տուն: – Ախր Պոեզիան, ճշանկները այնպիսի բան չեն, որ գտնես, երբ ուզում ես, դրանք այնպիսի բան են, որ իրենք են գտնում քեզ: Եվ ես միայն մի բան կարող եմ անել՝ զնալ այնտեղ, որտեղ նրանք կարող են գտնել ինձ:

Եվ Վինի-Թուխը համբերությամբ սպասում էր...

– Դե, – ասաց նա երկարատև լռությունից հետո, – թերևս, կարող եմ սկսել. «Վիթխարի կաղնին ընկած է ահա», որովհետև այն իսկապես ընկած է, և տեսնե՞ք թե ինչ կստացվի:

Իսկ ստացվեց ահա թե ինչ.

ԳՈՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԳ

(Ճչանիկ)

Վիթխարի կաղնին ընկած է ահա:
Բայց կար ժամանակ, երբ կանգնուն էր նա՝
Որտեղ Արջուկը սիրում էր հաճախ
Տանտիրուհու հետ զրուցել խաղաղ:
Եվ նրանց մտքով երբեք չէր անցնում,
Որ սարսափելի աղետ է սպասվում:

Բայց մի երեկո, երբ իր դոյակում
Բուն մեզ մորեղբոր մասին էր պատմում,
Փոթորիկն, ավա՛ղ, հանկարծ կատաղեց,
Առավ ու կաղնին գետին տապալեց:
Եվ մեզ այդ ժամին ոչ ոք չէր փրկի,
Եթե չլիներ Դևչիկը Արի:

Դևչիկը գոչեց.— Յե՛յ, մի՛ վիատվեք,
Ինձ համար իսկույն հաստ ճուպան գտեք,
Այսինքն՝ բարակ, շատ բարակ պարան՝
Քաջերի համար ի՛նչ ահ ու ի՛նչ բան.
Ջրհեղեղ լինի, փոթորիկ պայթի՝
Քաջը իր գործը, մեկ է, լավ գիտի:

Եվ մեր հերոսը խոյացավ դեպ վեր,
Այնտեղ, ուր լույս էր ճառագում երեք՝
«Նամակների ու Թերթերի Յամար»
Ծեղքից նեղ, բարակ ու շատ անհարմար:
«Ախ» ու «վախ» էին ամենքը քաշում,
Միայն հերոսը ահ չէր ճանաչում:

Օ՛, Խիզա՛խ, Խիզա՛խ, Դևչիկ Դու համառ:
Վախենո՞ւմ էր նա, դողո՞ւմ էր, օ՛, ոչ՝
«Նամակների ու Թերթերի համար»
Ծեղքից նա անցավ առանց լաց ու կոծ:
Դժվար էր անչափ, սակայն նա անցավ
Ու նետի նման Անտառ սլացավ:

Այո, սլացավ նա նետի նման,
Գոռալով.— Փրկե՛ք, օգնեցե՛ք նրան:
Այսինքն՝ Թուխին: Վա՛յ, Բուին նո՛ւյնպես
Օգնեցե՛ք, փրկե՛ք: Դե՛սը եկեք, դե՛ս,
Ծուղակն են ընկել, գերի են նրանք
Բոլոր-բոլորդ հասե՛ք, շուտ, արա՛գ:

Եվ շուտով բոլոր-բոլորը եկան
(Ոչ թե դիտելու, այլ փրկելու մեզ)
Եվ տեղնուտեղը իսկույն ելք գտան
(Կամ էլ ելքն ինքը եկավ գտավ մեզ):
Ուրեմն, դարեր թող փառաբանվի
Անհուն Սխրանքը Խիզախ Դևչիկի:

– Ահա և վերջ, – ասաց Թուխը, երեք անգամ երգելուց հետո: – Ստացվեց բոլորովին ոչ այն, ինչ սպասում էի, բայց ինչ-որ բան ստացվեց: Հիմա հարկավոր է գտնել Դնչիկին ու երգել նրա համար:

ԵՍ ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ՆՈՐ ՀԱՍԾԵ ԲՈՒԻ ՀԱՄԱՐ
ԴՈՒ ՆՈՒՅՆՊԵՍ ԵՎԳԱՐ

– Ի՞նչ է նշանակում այս ամենը, – հարցրեց Իան: – Սա՛:

Ճագարը բացատրեց:

– Իսկ ի՞նչ է պատահել նրա հին տանը:

Ճագարը բացատրեց:

– Երբեք ինձ ոչինչ չեն պատմում, – ասաց Իան: – Ոչ ոք ինձ տեղյակ չի պահում: Հաջորդ ուրբաթ, իմ հաշվումներով, կլրանա տասնյոթերորդ օրը, երբ վերջին անգամ խոսել են հետս:

– Ասում ես՝ տասնյոթ... Երևի չափազանցում ես:

– Հաջորդ ուրբաթ, – պարզաբանեց Իան:

– Իսկ այսօր շաբաթ է, – ասաց Ճագարը, – նշանակում է, ընդամենը տասնմեկ օր: Եվ բացի այդ, անձամբ ես այստեղ եմ եղել մի շաբաթ առաջ:

– Բայց զրույց տեղի չի ունեցել, – ասաց Իան: – Մտքերի փոխանակություն չեղավ: Դու ասացիր՝ «Ողջույն» ու սլացար առաջ: Մինչև ես կմտածեի իմ պատասխանը, պոչդ երևաց այստեղից մի հարյուր քայլի վրա: Ես ուզում էի ասել՝ «Ի՞նչ, ի՞նչ», բայց հասկացա, որ արդեն ուշ է:

– Դե, ես շտապում էի:

– Նախ պետք է մեկը խոսի, հետո մյուսը, – շարունակեց Իան: – Հերթով: Այլապես դա չի կարելի զրույց համարել: «Ողջո՛ւյն: – Ի՞նչ, ի՞նչ»: Իմ կարծիքով բացականչությունների նման փոխանակությունը ոչինչ չի տալիս: Հատկապես, երբ գալիս է խոսելուդ հերթը, իսկ դու միայն խոսակցիդ պոչն ես տեսնում: Այն էլ՝ հազիվ:

– Դու ինքդ ես մեղավոր, Իա: Երբեք ոչ մեկիս մոտ չես գալիս: Նստել ես քո անկյունում ու սպասում ես, որ մյուսները քեզ այցելեն: Ինչո՞ւ երբեմն էլ ինքդ չես այցելում մեզ:

Իան մտքի մեջ ընկավ:

– Զո խոսքերում, ճագար, թերևս, ինչ-որ բան կա, – ասաց Նա վերջապես: – Ես իսկապես արհամարհել եմ հասարակության օրենքները: Ես պարտավոր եմ ավելի հաճախ երևալ հասարակության մեջ: Ես պարտավոր եմ պատասխանել այցելություններին:

– Ճիշտ է, Իա: Ես մեզից ում մոտ որ ուզում ես, ցանկացած ժամին:

– Շնորհակալություն, ճագար: Եվ եթե որևէ մեկը ասի բարձրաձայն. «Նորից այս Իան եկավ», ես կարող եմ գնալ:

Ճագարը անհամբեր ոտքից ոտք էր հենվում:

– Դե լավ, – ասաց Նա, – ես պետք է գնամ: Այսօր խիստ զբաղված եմ:

– Գնաս բարով, – ասաց Իան:

– Ինչպե՞ս: Ա՛խ, մնաս բարով: Եթե պատահաբար Բուհի համար լավ տուն գտնես, մեզ իսկույն հայտնիր:

– Խոստանում եմ, – ասաց Իան:

Եվ ճագարը գնաց:

Թուխը գտավ Դնչիկին, և նրանք միասին Նորից Թավուտ Անտառ մտան:

– Դնչիկ, – ամաչելով ասաց Թուխը, երբ նրանք արդեն երկար ժամանակ լուռ քայլել էին:

– Այո՞, Թուխ:

– Դու հիշո՞ւմ ես, ասում էի՝ հարկավոր է Գովաբանական Երգ (Ճչանիկ) հորինել: Դու Գիտե՞ս Թե Ինչի Մասին:

– Իսկապե՞ս, Թո՛ւխ, խռպոտ ձայնով հարցրեց Նա: – Այն... այն... այն... դեպքի մասի՞ն... Իսկապե՞ս պատրաստ է:

– Յոթը տնից է բաղկացած, Դնչի՛կ:

– Յո՞թ, – կրկնեց Դնչիկը աշխատելով խոսել որքան հնարավոր է անփոյթ ձայնով: – Կարծեմ դու այնքան էլ հաճախ չես յոթ տնանոց ճչանիկներ հորինում: Ճի՛շտ է, Թո՛ւխ:

– Երբեք, – ասաց Թուխը: – Ես կարծում եմ, որ այդպիսի դեպք երբեք չի եղել:

– Եվ բոլոր-բոլորը արդեն լսե՞լ են, – հարցրեց Դնչիկը:

– Ոչ, – ասաց Թուխը: – Ես չգիտեմ ինչպես քեզ ավելի հաճելի կլինի. եթե հիմա երգեմ, թե սպասենք, որ հանդիպենք բոլոր-բոլորին, և այն ժամանակ երգեմ: Միանգամից բոլորի համար:

Դնչիկը մի քիչ մտածեց:

– Ես մտածում եմ, որ ինձ հաճելի կլինի, Թուխ, եթե ինձ համար երգես հիմա... իսկ հետո երգես բոլոր-բոլորի համար, որովհետև այն ժամանակ, երբ բոլոր-բոլորը լսելիս կլինեն, ես կասեմ. «Այո՛, այո՛, Թուխն ինձ ասել է» ու կձևացնեմ, թե իբր չեմ լսում:

Եվ Թուխը երգեց Գովաբանական Երգը (Ճչանիկը) սկզբից մինչև վերջ: Դնչիկը ոչինչ չէր ասում. նա լուռ կանգնել ու կարմրում էր: Չէ՞ որ դեռևս ոչ ոք չէր ասել՝ «Դարեր թող փառաբանվի Անհուն Սխրանքը Խիզախ Դնչիկի»: Երբ երգը ավարտվեց, նա շատ էր ուզում խնդրել, որ Թուխը տներից մեկը մի անգամ էլ երգի, բայց ամաչեց: Դա այն տունն էր, որ սկսվում էր այս բառերով. «Օ, Խիզա՛խ, Խիզա՛խ, Դնչի՛կ, Դու Յամամ»: Դնչիկն զգում էր, որ այդ տան սկիզբը առանձնապես հաջող է ստացվել:

– Մի՞թե ես այդ բոլորն իսկապես արել եմ, – վերջապես հարցրեց նա Վինի-Թուխին:

– Ինչպես ասեմ, – ասաց Թուխը, – պոեզիայում՝ բանաստեղծություններում... Մի խոսքով, դու այդ արել ես, Դնչիկ, որովհետև բանաստեղծությունն ասում է, որ արել ես: Այսպես է ընդունված:

– Օ՛յ – ասաց Դնչիկը: – Ախր ես... ինձ թվում է, ես մի քիչ դողում էի: Իհարկե, միայն սկզբում: Իսկ այդտեղ ասվում է. «Վախենո՞ւմ էր նա, դողո՞ւմ էր, Օ՛, ո՛չ»: Ահա թե ինչու եմ հարցնում:

– Դու ինքդ քեզ էիր դողում, – ասաց Թուխը: – Իսկ քեզ նման Փոքրիկ Արարածի համար դա, թերևս, ավելի մեծ քաջություն է, քան բոլորովին չդողալը:

Դնչիկը երջանկությունից հառաչեց: Այսպես ուրեմն, նշանակում է նա քա՛ջ է եղել:

Բուհի նախկին տան մոտ նրանք տեսան բոլորին, բացի Իայից: Քրիստոֆեր Ռոբինը բացատրում էր, թե ինչ պետք է անել, ճազարը բացատրում էր, դարձյալ նույն բանը, երևի նրանց համար, ովքեր գուցե լավ լսած չլինեին, իսկ մյուսներն անում էին այդ բանը: Նրանք ինչ-որ տեղից ճոպան էին ճարել և հիմա Բուհի տնից աթոռներ, նկարներ ու ամեն տեսակի իրեր էին հանում, որպեսզի ամեն ինչ պատրաստ լիներ նոր տուն տեղափոխվելու համար: Կենգուն կապկպում էր իրերն ու հարցնում էր Բուհին. «Ես կարծում եմ, որ ամանեղեն լվանալու այս հին ու կեղտոտ սրբիչը քեզ այլևս պետք չի գա: Ուղեգորգը նույնպես, ամբողջովին ծածկվել է», իսկ Բուն վրդովված պատասխանում էր. «Իհարկե, պետք կգա, պետք է միայն ճիշտ դասավորել կահույքը: Իսկ դա ոչ թե ամանեղենի սրբիչ է, այլ իմ շա՛լը»:

Ճատիկ Ռուն րոպեն մեկ անհետանում էր տանը, շուտ-շուտ հայտնվում հեծած հերթական առարկայի վրա, որը բարձրացնում էին ճոպանով, և դա մի քիչ նյարդայնացնում էր Կենգուին, որովհետև նա չէր կարողանում ինչպես պետք է հետևել նրան: Նա նույնիսկ գոռաց Բուհի վրա, հայտարարելով, որ նրա տունը պարզապես ամոթ ու խայտառակություն է. այնքան կեղտոտ է, որ կարելի է զարմանալ, թե ինչպես ավելի շուտ շուտ չի եկել: Մի այստե՛ղ նայեք, այս անկյունը պարզապես բորբոսնել է: Այստեղ սո՛ւնկ է բուսել, թունավոր սունկից, Բուն խիստ զարմացավ: Նա նայեց, ապա կծու հեզնանքով ծիծաղելով բացատրեց, որ դա իր սպունգն է, և եթե չեն կարողանում ամենասովորական սպունգը տարբերել թունավոր սունկից, ապա լա՛վ ժամանակներում ենք ապրում...

Ճատիկ Ռուն ծվծվալով իրեն ներս գցեց.

– Ես ուզում եմ տեսնել Բուհի սպունգը: Ախ, ահա: Օ՛յ, Բո՛ւ, Բո՛ւ, սա սպունգ չի, այլ կեղտ: Դու գիտես ի՞նչ բան է կեղտը, Բո՛ւ: Քո սպունգը կեղտից բոլորովին...

Կենգուն շտապ-շտապ ասաց. «Ռո՛ւ, սիրելի՛ս, չի կարելի այդ տոնով խոսել նրա հետ, ով կարողանում է գրել «շափաթ» բառը:

Եվ ամենքն էլ շատ ուրախացան, երբ եկան Թուխն ու Դնչիկը: Նրանք աշխատանքը դադարեցրին, որպեսզի մի քիչ հանգստանան և լսեն Թուխի նոր ճչանիկը (Գովաբանական Երգը): Եվ ահա, երբ բոլոր-բոլորը ասացին, որ դա շատ լավ Գովաբանական երգ է (Ճչանիկ), Դնչիկն անփութորեն հարցրեց.

– Իսկապե՞ս, լավ երգ է:

– Իսկ որտե՞ղ է նոր տունը, – հարցրեց Թուխը: – Դու տուն գտե՞լ ես, Բու:

– Նա անուն է գտել նոր տան համար, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, ծուլորեն խոսի բարակ ցողուն ծամելով:

– Այնպես որ մնացել է միայն տուն գտնելը:

– Տունս ես այսպես կանվանեմ, – լուրջ տեսքով ասաց Բուն և ցույց տվեց այն, ինչի վրա չարչարվում էր՝ մի բառակուսի տախտակ, որի վրա քսմսված էր.

ՓՈՒԱՆՈՑ

Յենց այդ հետաքրքիր պահին էլ Թավուտից դուրս թռավ ինչ-որ մեկը և թռավ Բուի վրա: Տախտակը գետին ընկավ, և դեպի տախտակը վազեցին Դնչիկն ու Ռուս:

– Ա՛խ, այդ դո՛ւ ես, – բարկացած ասաց Բուս:

– Բարև, Իս, – ասաց ճագարը, – վերջապե՛ս: Որտե՞ղ էիր մինչև հիմա:

Իսն ոչ մեկի վրա ուշադրություն չդարձրեց:

– Բարի լույս, Քրիստոֆեր Ռոբին, – ասաց Նա, հրեց Ռուին ու Դնչիկին և Նստեց «Փուանոցի» վրա: – Մենք մենա՞կ ենք:

– Այո, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, ժպիտը հագիվ զսպելով:

– Ինձ հայտնեցին, թե ավոր լուրը հասավ Նաև Անտառի իմ անկյունը՝ խոնավ հովիտը, որը ոչ մեկին պետք չէ, որ մի Ոմն Տիկին տուն է փնտրում: Ես Նրա համար տուն եմ գտել:

– Կեցցե՛ս, – մեծահոգաբար ասաց ճագարը:

Իսն ուսի վրայից չափեց Նրան ու կրկին Քրիստոֆեր Ռոբինին դարձավ:

– Մեր միջև որոշ բաներ եղել են, – շարունակեց բարձր շշնջոցով, – բայց դա կարևոր չէ: Մոռանանք հին վիրավորանքներն ու գողացված պոչերը: Մի խոսքով, եթե ուզում ես, Քրիստոֆեր Ռոբին, գնանք ինձ հետ, և ես ցույց կտամ տունը:

Քրիստոֆեր Ռոբինը ոտքի թռավ:

– Գնանք, Թո՛ւխ, – ասաց Նա:

– Գնանք, Վա՛գր, – կանչեց ճագարը Ռուս:

– Գուցե մե՞նք էլ գնանք, – ասաց ճագարը Բուին:

– Մի ըստե՛ս, – ասաց Բուս, բարձրացնելով իր հասցեատախտակը, որը հենց Նոր ազատվել էր:

Իսն բացասաբար առջևի ոտքը թափահարեց:

– Մենք Քրիստոֆեր Ռոբինի հետ գնում ենք զբոսանքի, – ասաց Նա: – Չբոսանքի՛ և ոչ թե հրմշտվելո՛ւ: Եթե Նա ուզում է, որ Թուխը և Դնչիկը Նույնպես գան, ես դեմ չեմ, ուրախ եմ Նույնիսկ. բայց մենք պետք է շնչել կարողանանք:

– Դե լավ, թող այդպես լինի, – ասաց ճագարը, գլխի ընկնելով, որ վերջապես առիթ է ստեղծվում մյուսներին հրամայելու: – Իսկ մենք կշարունակենք իրերի տեղափոխումը: Գործի անցնենք, բարեկամներ: Յե՛յ, Վա՛գր, որտե՞ղ է ճոպանը: Ի՞նչ է պատահել, Բո՛ւ:

Բուս, որ հենց Նոր հայտնաբերել էր, որ իր Նոր հասցեն՝ «Փուանոցը», իր սպունգի Նման կեղտոտվել է, բարկացած ֆշշացրեց Իսի կողմը, բայց ոչինչ չասաց, և Իշուկը, «Փուանոցի» մեծ մասը իր հետույքին առած, բարշ եկավ բարեկամների հետևից:

Շուտով Նրանք մոտենում էին այն տանը, որը գտել էր Իսն: Բայց Նախքան տունը կերևար, Դնչիկն արմունկով արդեն հրել էր Թուխին, իսկ Թուխը՝ Դնչիկին, և Նրանք հրիրում էին իրար ու ասում. «Յենց դա՛ է»:

– «Չի՛ կարող պատահել»: – «Քեզ բան եմ ասում»:

Իսկ երբ Նրանք տեղ հասան, դա իսկապես հենց դա՛ էր:

– Ահա, – հպարտ ասաց Իսն, կանգնելով Դնչիկի տան առաջ: – Եվ տուն, և ցուցատախտակ: Ամեն ինչ տեղում է:

– Վա՛յ-վա՛յ-վա՛յ, – բացականչեց Քրիստոֆեր Ռոբինը, չիմանալով ինչ անել՝ ծիծաղել, թե լաց լինել:

– Ավելի հարմար տուն Բուի համար դժվար է Նույնիսկ գտնել: Յո՛ւ, ի՞նչ կարծիքի ես, Փոքրիկ Դնչիկ, – հարցրեց Իսն:

Եվ այստեղ Դնչիկը Վեհանձն Արարք կատարեց: Նա այդ կատարեց ասես երագում, հիշելով բոլոր այն հրաշալի բառերը, որ Նրա մասին գրել էր Թուխը:

– Այո, ավելի հարմար տուն Բուի համար դժվար է գտնել, – մեծահոգաբար ասաց Նա: – Ես հույս ունեմ, որ Նա այստեղ իրեն երջանիկ կզգա, – և Դնչիկը երկու անգամ իրար հետևից թուք կուլ տվեց, որովհետև ախր ինքը այստեղ Նույնպես երջանիկ էր եղել:

– Իսկ դու ի՞նչ կարծիքի ես, Քրիստոֆեր Ռոբին, – անհանգստացած հարցրեց Իսն, զգալով, որ ինչ-որ բան կարգին չէ:

Քրիստոֆեր Ռոբինը մի հարց պետք է տար, և Նա չգիտեր, թե ինչպես տա այդ հարցը:

– Դե, – ասաց Նա վերջապես, – սա շատ լավ տուն է, և եթե քամին մեկի տունը շուռ է տվել, Նա ստիպված է տեղափոխվել ուրիշ տեղ: Ճի՞շտ է, Դնչիկ: Ի՞նչ կանեիր դու, եթե քամին քո տունը ավերած լիներ:

Եվ նախքան Դնչիկը գլխի կընկներ, թե ինչ պատասխանի, նրա փոխարեն պատասխանեց Թուխը:
 – Նա կտեղափոխվեր ապրելու ինձ մոտ, – ասաց Թուխը: – Եհ՞շտ է, Դնչիկ:
 Դնչիկը սեղմեց նրա թաթը:
 – Շնորհակալություն, Թուխ, – ասաց նա: – Մեծ ուրախությամբ:



ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Որտեղ կախարդված վայրում մենք բաժանվում ենք Վիկի-Թուխից և Զրիստոֆեր Ռոբինից

Զրիստոֆեր Ռոբինը ինչ-որ տեղ էր գնում: Ընդմիջտ: Ոչ ոք չգիտեր ինչու է գնում. ոչ ոք չգիտեր՝ ուր է գնում. այո, այո՝ ոչ ոք նույնիսկ չգիտեր, թե ինչու ինքը գիտե, որ Զրիստոֆեր Ռոբինը գնում է:
 Բայց այս կամ այն պատճառով Անտառում բոլորն էլ գգում էին, որ վերջ ի վերջո դա կատարվելու է: Նույնիսկ ճագարի Ազգականներից ու Ծանոթներից ամենափոքրիկը, նա, որը մտածում էր, որ ինքը մի անգամ տեսել էր Զրիստոֆեր Ռոբինի ոտքը, բայց այնքան էլ համոզված չէր դրանում, որովհետև հեշտությամբ կարող էր սխալված լինել նույնիսկ նա՝ այդ ամենափոքրիկը ասաց ինքն իրեն, որ Դրությունը փոխվում է, իսկ Վաղը և Ուշը (Ազգականներից ու Ծանոթներից ևս երկուսը) ասացին միմյանց. «Հը՞, Վաղ» և «Հը՞, Ուշ» այնպիսի անհույս ձայնով, որ իսկույն պարզ դարձավ՝ ավելորդ էր պատասխանի սպասել:
 Եվ մի անգամ, զգալով, որ ինքն այլևս չի կարող սպասել, ճագարը մի Հայտարարություն կազմեց, որտեղ ահա թե ինչ էր ասվում.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Բոլոր-բոլորս հանդիպում ենք Թուխի Սոճուտում
 Իա-Իայի տան մոտ ընդունում ենք բանազև
 ձախից աջ ըստ համարների
 ստորագրություն՝ ճագար**

Նա ստիպված եղավ Հայտարարությունը արտագրել երկու թե երեք անգամ, մինչև որ կարողացավ ստիպել «բանազևին» ընդունելու այն տեսքը, որ նա պարտավոր էր ունենալ ճագարի կարծիքով: Բայց դրա փոխարեն, երբ այդ ծանր աշխատանքն ավարտվել էր, ճագարը հերթով վազեց բոլորի մոտ ու բարձրաձայն կարդաց իմ ստեղծագործությունը: Բոլոր-բոլորը ասացին, որ կգան:

– Ի՛նչ եմ տեսնում, – ասաց Իա-Իան, երբ հանդիսավոր թափորը մոտեցավ նրա տանը, – սա իսկապես որ անակնկալ է: Ես նույնպե՛ս հրավիրված եմ: Չի՛ կարող պատահել:

– Ուշադրություն մի դարձրու Իային, – Թուխի ականջին շշջաց ճագարը: – Ես նրան դեռ առավոտյան եմ հայտնել:

Բոլորը հետաքրքրվեցին Իայի որպիսությամբ, և նա ասաց, որ ոչ մի կերպ էլ չի զգում իրեն, այնպես որ հետաքրքրվելու բան չկա, և դրանից հետո բոլորը նստեցին: Եվ հենց բոլորը նստեցին, ճագարը նորից կանգնեց:

– Բոլորս էլ գիտենք, թե ինչու ենք հավաքվել, – ասաց նա: – Բայց ես խնդրել եմ բարեկա Իային...

– Այդ ես եմ, – ասաց Իան: – Վատ չի հնչում:

– Ես նրան խնդրել եմ հրապարակել բանագևը:

Եվ ճագարը նստեց:

– Դե սկսիր, Իա, – ասաց նա:

– Խնդրում եմ չշտապեցնել ինձ, – ասաց Իա-Իան, դանդաղ բարձրանալով տեղից: Խնդրում եմ, դեսկսիրով չճնշել ինձ:

Նա ականջի հետևից խողովակաձև փաթաթված մի թուղթ հանեց ու առանց շտապելու սկսեց բացել:

– Սրա մասին ոչ ոք ոչինչ չգիտե, – ասաց նա: – Սա անակնկալ է:

Նա արժանապատվությամբ հազաց ու նորից խոսեց:

– Մի խոսքով, մասնավորապես և ընդհանուր առմամբ, այսպես, ուրեմն և նմանապես նախքան սկսելը, կամ, թերևս, ավելի ճիշտ կլինի ասել՝ նախքան վերջացնելը, ես պետք է մի Պոետական Ստեղծագործություն կարդամ: Ցայսօր... ցայսօր՝ սա դժվար բառ է, որը նշանակում է... Դե հիմա դուք կհմանաք, թե ինչ է նշանակում: Ցայսօր, ինչպես արդեն ա ցայսօր պոեզիան Անտառում ստեղծվում է Թուխի՝ հաճելի բնավորությամբ- բայց ապշեցուցիչ անբավարար քանակի խելքի տեր Արջի կողմից: Սակայն Պոետը, որ ես հիմա պատրաստվում եմ ընթերցել ձեզ, ստեղծվել է Իա-Իայի, այսինքն՝ իմ կողմից, պարապ ժամերին, ու եթե որևէ մեկը մանկիկ Ռուից վերցնի ընկույզները, ինչպես նաև արթնացնի Բուին, մենք հնարավորություն կունենանք վայելելու այդ ստեղծագործությունը: Ես համարձակվում եմ այն մինչև անգամ Բանաստեղծություն անվանել:

ԲԱՆԱՆՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ: ԳՐԵՑ ԻՇՈՒԿ ԻԱ-ԻԱՆ:

Քրիստոֆեր Ռոբինը հեռանում է մեզնից:

Իմ կարծիքով սա փաստ է:

Գնում է նա,

Եվ չգիտենք, թե ուր:

Նա կգնա:

(Ահա ձեզ հանգ բառի համար «նա»):

Մենք տխուր ենք, տխուր:

(Սա էլ հանգ է բառի համար «ուր»):

Մեր վիշտը շատ է ծանր,

Մեր լեզուն շատ է համր:

(Սա լա՛վ է:)

(Այդպես էլ չկա հանգ բառի համար «փաստ է»: Ափսո՛ս):

(Հիմա եկ ու հանգ գտիր բառի համար

«Ափսոս»: Ափսո՛ս):

(Թող այս երկու «ափսոսները» հանգավորեն իրար):

Տեսնում եմ՝ հեշտ չէ ամենևին

Մի լավ տող թեկուզ գրել:

Գուցե պետք է սկզբից սկսել,

Իսկ ավելի հեշտ է դնել վերջակետ...

Բայց ոչ: Երբե՛ք:

Քրիստոֆեր Ռոբին՛ն,

Քո ընկերներն են այստեղ բոլորին...
(Չեղա՛վ):
Ռոբին Քրիստոֆեր,
Այստեղ բոլորը քո ընկերներ...
(ՉԷ, ևորի՛ց չեղավ):
Դե լա՛վ,
Թախծոտ պահին այս հրաժեշտի,
Քեզ ամենալավ բաներն ենք մաղթում սրտի...
(Չեղա՛վ)
Քեզ ամենալավ բաներն ենք մաղթում սրտանց,
Թախծոտ պահին այս հրաժեշտաց...
(Թյու, անշնորհք բառեր,
Իրենց տեղը չեն գտնում երբեք):
Մի խոսքով,
Քրիստոֆեր Ռոբին, կեցցե՛ս,
Քեզ մաղթում ենք ամենալավ բաները:
Դու միշտ կմնաս մեզ հետ,
Մեր սրտի մեջ:

Վե՛րջ:

– Եթե որևէ մեկը մտադիր է ծափահարել, – ասաց Իան, ավարտելով ընթերցումը, – արդեն ժամանակն է: Չետո ուշ կլինի:

Բոլորը ծափահարեցին:

– Շնորհակալ եմ բոլորից, – ասաց Իան, – ես անկեղծորեն հուզված եմ ու զարմացած, և, հնարավոր է, ծափահարությունները կարող էին և ավելի հնչել լինել:

– Այս բանաստեղծությունը ավելի լավն էր, քան իմ բոլոր հորինածները, – հիացմունքով ասաց Թուլսը: Նա իսկապես համոզված էր դրանում:

– Իհարկե, – համեստորեն բացատրեց Իան: – Այդպես էլ մտածված էր:

– Բանազևը այնպիսին է, որ մենք բոլորս էլ կստորագրենք ու կտանենք Քրիստոֆեր Ռոբինին, – ասաց Ճագարը:

Եվ բանաձևը ստորագրվեց. Թուլս, Բու, Դեյվի, Իա, Ճագար, Կենգու, Մեծ Թանաքաբիծ (դա Վագրի ստորագրությունն էր) և Երեք Փոքրիկ Թանաքաբծեր (Ռուկի ստորագրությունը):

Եվ բոլորը միասին գնացին Քրիստոֆեր Ռոբինի մոտ:

– Ողջո՛ւյն, բարեկամներ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – Ողջո՛ւյն, Թո՛ւլս:

Բոլորը պատասխանեցին՝ «Ողջույն» և հանկարծ զգացին, որ իրենք տխուր են, շատ տխուր, չէ՞ որ եկել են հրաժեշտ տալու, իսկ այդ մասին մտածել բոլորովին չէին ուզում: Նրանք անօգնական իրար գլխի հավաքվեցին, սպասելով, որ մեկնումեկը խոսի, և հրիրում էին իրար ու փսփսում. «Դե, դու ասա», և կամաց-կամաց առաջ հրեցին Իային, իսկ իրենք հավաքվեցին նրա հետևում:

– Ի՞նչ է պատահել, Իա՛, – հարցրեց Քրիստոֆեր Ռոբինը:

Իան թափահարեց պոչը, երևի իրեն քաջալերելու համար, և սկսեց.

– Քրիստոֆեր Ռոբին, – ասաց նա, – մենք եկել ենք, որպեսզի ասենք... որպեսզի բացատրենք... ինչպե՞ս են ասում... գրել է մեկը... բայց մենք բոլորս՝ որովհետև մենք լսեցինք... ես ուզում եմ ասել, որ մենք գիտենք, դե, ինքդ էլ ես հասկանում... Մենք... Դու... Կարճ ասած, որպեսզի բառեր շատ չվատնեմ, ահա՛: – Եվ նա բարկացած նայեց մյուսներին ու ասաց: – Ողջ Անտա՛ռն է այստեղ հավաքվել: Օդ չի՛ մնացել շնչելու: Կյանքումս կենդանիների ավելի անմիտ ամբոխ չեմ տեսել, և, ամենազխաժողովրդ, ոչ մեկն իր տեղում չէ: Մի՞թե չեք հասկանում, որ Քրիստոֆեր Ռոբինը ուզում է մենակ մնալ: Ես գնացի՛:

Եվ նա փախավ հեռու:

Լավ չհասկանալով թե ինչու, մյուսներն էլ սկսեցին ցրվել, և երբ Քրիստոֆեր Ռոբինը բանաստեղծության ընթերցումն ավարտեց ու բարձրացրեց աչքերը, որպեսզի շնորհակալություն հայտնի, նրա առջև կանգնած էր միայն Վինի-Թուխը:

– Սա շատ հուզիչ է, – ասաց նա, թուղթը ծալեց ու գրպանը դրեց: – Գնանք, Թո՛ւխ, – և նա արագ քայլեց ճանապարհով:

– Ո՞ր ենք գնում, – հարցրեց Թուխը, աշխատելով հետ չմնալ ու միաժամանակ հասկանալ, թե ինչ է սպասվում Արշավախո՞ւմ, թե ուրիշ ինչ-որ Ես-չգիտեմ-ինչ:

– Ոչ մի տեղ, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը:

Եվ նրանք գնացին այդտեղ, և այն բանից հետո, երբ քայլել էին բավականին երկար, Քրիստոֆեր Ռոբինը հարցրեց.

– Թուխ, աշխարհում ամենից շատ դու ի՞նչ ես սիրում:

– Դե, – ասաց Թուխը, – ամենից շատ ես սիրում եմ...

Եվ այստեղ նա ստիպված եղավ կանգնել ու մտածել, որովհետև թեև մեղր ուտելը շատ հաճելի զբաղմունք է, բայց կա մի այնպիսի բան, որն անմիջապես նախորդում է ուտելուն, երբ շատ ավելի հաճելի է, քան հետո, երբ արդեն ուտում ես, բայց միայն թե Թուխը չգիտեր, թե այդ բանն ինչպես է կոչվում:

Եվ բացի դրանից նա մտածեց, որ Քրիստոֆեր Ռոբինի հետ խաղալը նույնպես շատ հաճելի է, և ահա, երբ այս բոլորը մտածել էր, նա ասաց.

– Աշխարհում ամեն ինչից շատ ես սիրում եմ, երբ Դնչիկի հետ քեզ հյուր ենք գալիս և դու ասում ես. «Դե, ի՞նչ կասեք, մի բան ուտելու ժամանակը չէ՞», իսկ ես պատասխանում եմ. «Դեմ չեմ, իսկ դո՞ւ, Դնչի՛կ», և օրն էլ այնքան ուրախ է, թռչունները երգում են: Իսկ դու ամենից շատ ի՞նչ ես սիրում:

– Այդ բոլորը ես էլ եմ սիրում, – ասաց Քրիստոֆեր Ռոբինը, – բայց ամենից շատ ես սիրում եմ...

– Դե՞, դե՞:

– Ոչի՛նչը:

– Իսկ դու այդ ինչպե՞ս ես անում, – շատ երկար մտորումներից հետո հարցրեց Թուխը:

– Դե, ասենք, երբ մտադիր ես այսինք բանը անել, իսկ քեզ հարցնում են. «Ի՞նչ ես մտադիր անել, Քրիստոֆեր Ռոբին»: Դու պատասխանում ես. «Ոչինչ», իսկ հետո գնում ես և անում:

– Ա՛, հասկանո՞ւմ եմ, – ասաց Թուխը:

– Այ, օրինակ, հենց հիմա էլ մենք մի այդպիսի «ոչինչ» ենք անում:

– Հասկանում եմ, – կրկնեց Թուխը:

– Օրինակ, երբ պարզապես զբոսնում ես, լսում ես այն, ինչ ոչ ոք չի լսում և ոչ մի բանով չես մտահոգվում:

– Ա-ա՛, – ասաց Թուխը:

Նրանք քայլում էին, մտածելով Այս ու Այն բաների մասին և շուտով մոտեցան Կախարդված Վայրին, որը կոչվում էր Նավապետի Կամրջակ, որովհետև բլուրի ամենաբարձր մասում էր: Այստեղ վաթսուն և էլի մի քանի հատ ծառեր էին կանգնած, և Քրիստոֆեր Ռոբինը գիտեր, որ այդ վայրը կախարդված է, որովհետև ոչ ոք չէր կարողանում հաշվել, թե այնտեղ քանի ծառ կա՝ վաթսուներեք, թե վաթսունչորս, եթե անգամ յուրաքանչյուր ծառից թել էր կապում:

Եվ ինչպես վայել է Կախարդված Վայրին, այստեղ հողն էլ էր ուրիշ: Այնպիսին չէր, ինչպես մնացած Անտառում, որտեղ ամեն տեսակի փշեր ու ձարիտներ էին աճում: Այստեղ կանաչ, շատ կանաչ խոտ էր աճում, և այդ խոտը հարթ էր ու նման էր քնքուշ թավշի:

Սա միակ տեղն էր ամբողջ Անտառում, որտեղ կարելի էր հանգիստ նստել, և նստելուց հետո անմիջապես վեր չթռչել: Այստեղից՝ Նավապետի Կամրջակից, երևում էր ամբողջ աշխարհը, համենայն դեպս, մինչև այնտեղ, որտեղ, թվում էր, երկինքն ու երկիրը միանում են իրար:

Եվ հանկարծ Քրիստոֆեր Ռոբինը սկսեց Թուխին ամենատարբեր բաներ պատմել, և բոլորն էլ շատ հետաքրքիր: Նա պատմում էր մարդկանց մասին, որոնք կոչվում են Թագավորներ ու Թագուհիներ, և էլի ոմանց մասին, որոնք Վաճառականներ են կոչվում, և այն տեղի մասին, որը կոչվում է Եվրոպա, և ծովերում կորած կղզու մասին, որտեղ երբեք նավեր չեն գնում, և թե ինչպես կարելի է Պոմպ սարքել (եթե պետք է), և ինչպես են Ասպետ ձեռնադրվում, և թե ինչ ապրանքներ են բերում Բրազիլիայից: Վինի-Թուխը լսում էր, մեջքով հենված վաթսուն և էլի մի քանի ծառերից մեկին, թաթերը փորին խաչաձևած և ասում էր. «Ա՛յ-ա՛յ-

ա՛յ», և «Ա-ա՛, հասկանո՛ւմ եմ», և «Զի կարող պատահե՛լ», և մտածում էր, թե ի՛նչ լավ կլիներ, եթե իր գլխում թեփի փոխարեն լիներ իսկական ուղեղ:

Եվ կամաց-կամաց Զրիստոֆեր Ռոբինը պատմեց բոլորը, ինչ գիտեր, ապա լռեց և Նավապետի Կամրջակից Նայեց Ողջ Աշխարհին և ուզում էր, որ այդպես շարունակվի անվերջ:

Իսկ Թուխը շարունակում էր մտածել: Եվ հանկարծ նա հարցրեց Զրիստոֆեր Ռոբինին.

- Իսկ դա շա՛տ լավ բան է, երբ քեզ բեռնադրում են... Այդ... Դու ո՞նց ասացիր:
- Ի՞նչը, – հարցրեց Զրիստոֆեր Ռոբինը կարծես ականջ դնելով մեկ ուրիշ հեռավոր բանի:
- Դե, դրանք... որ ձիուկների վրա են նստում, – բացատրեց Թուխը:
- Ասպետ ձեռնադրվե՛լ:

– Ա՛խ, այդպե՛ս է կոչվում, – ասաց Թուխը: – Իսկ ինձ թվաց, որ դա բեռ... Դե լավ: Նրանք ավելի լա՛վն են, քան Թագավորը, Վաճառականը և մյուսները, որոնց մասին պատմում էիր:

– Դե, Թագավորից փոքր են, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը, բայց տեսնելով, որ Թուխը կարծես թե տխրեց, շտապեց ավելացնել. – Բայց Վաճառականից, իհարկե, մեծ են: Եվ ավելի լա՛վը:

- Իսկ Արջը կարող է բեռ... Մի խոսքով դառնալ դրանցից:
- Իհարկե, կարող է, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը: – Հիմա քեզ կձեռնադրեմ:

Նա մի ճյուղ վերցրեց և թեթևակի խփելով Թուխի ուսին, ասաց.

– Վեր կաց, սըր Վինի-Թուխ դը Արջ, հավատարիմդ իմ ասպետներից:
Հասկանալի է, որ Վինի-Թուխը վեր կացավ, իսկ հետո նորից նստեց ու ինչպես վայել է նորընծա Ասպետին, ասաց.

– Շնորհակալությո՛ւն:

Եվ իր համար էլ աննկատելի, նա նորից ննջեց, և երագում նա, Սըր Պոմպը, Սըր Կոզին և Վաճառականները բոլորը միասին էին ապրում, Ձիուկ ունեին, և բոլորն էլ բարի թագավոր Զրիստոֆեր Ռոբինի հավատարիմ Ասպետներ էին (իհարկե, բացի Վաճառականից, որը Ձիուկին էր ինսամում):

Եհիշտ է, ժամանակ առ ժամանակ նա օրորում էր գլուխն ու ինքն իրեն ասում. «Ես ինչ-որ բան շփոթում եմ»: Իսկ հետո սկսեց մտածել այն բաների մասին, որոնք Զրիստոֆեր Ռոբինը կուզենար իրեն պատմել, երբ կվերադառնա այնտեղից, ուր պատրաստվում է գնալ, և թե այն ժամանակ որքան դժվար կլինի թեփով լցված գլուխ ունեցող Արջի համար ոչինչ չշփոթել:

«Եվ այդ ժամանակ, երևի, – տխուր ասաց նա ինքն իրեն, – Զրիստոֆեր Ռոբինը այլևս ինձ ոչինչ չի պատմի: Հետաքրքիր է, եթե դու Հավատարիմ Ասպետ ես, մի՞թե պարտավոր ես միայն Հավատարիմ լինել և վերջ, իսկ քեզ կարող են ոչ մի բան չպատմել»:

Եվ այստեղ Զրիստոֆեր Ռոբինը, որ գլուխը բռունցքին հենած շարունակում էր դարձյալ հեռուն նայել, կանչեց նրան:

- Թո՛ւխ, – ասաց նա:
- Ի՞նչ, – հարցրեց Թուխը:
- Երբ ես արդեն չեմ անի... Թուխ, երբ ես...
- Ի՞նչ, Զրիստոֆեր Ռոբին:
- Ես այլևս երբեք չեմ կարողանա անել այն, ինչ ամենից շատ եմ սիրում:
- Երբե՞ք:
- Դե, գուցե երբեմն: Բայց ոչ ամբողջ ժամանակ: Նրանք չեն թողնում:

Թուխն սպասում էր, որ նա կշարունակի, բայց Զրիստոֆեր Ռոբինը նորից լռեց:

- Ասա, Զրիստոֆեր Ռոբին, – ասաց Թուխը, ցանկանալով օգնել նրան:
- Թուխ, երբ ես այլևս... դե դու հասկանում ես... երբ ես այլևս չեմ կարողանա ոչինչ չանել, դու երբեմն կգա՞ս այստեղ:

- Անպայման ե՞՞ս:
- Այո, Թո՛ւխ:
- Իսկ դու նույնպե՞ս կգաս:
- Այո, Թուխ, անպայման: Խոստանում եմ:
- Դա լավ է, – ասաց Թուխը:
- Թուխ, խոստացիր, որ ինձ երբեք չես մոռանա: Երբեք-երբեք: Երբ նույնիսկ հարյուր տարեկան դառնամ:

Թուխը մի քիչ մտածեց.

– Իսկ ես քանի՞ տարեկան կլինեմ:

– Իննսունինը:

Վինի-Թուխը գլխով արեց:

– Խոստանում եմ, – ասաց նա:

Եվ աչքը դարձյալ հեռուներին հառած, Զրիստոֆեր Ռոբինը պարզեց ձեռքն ու սեղմեց Թուխի թաթը:

– Թուխ, – լրջորեն ասաց Զրիստոֆեր Ռոբինը, – երբ ես... երբ ես այլևս չեմ լինի այսպիսին... – Նա լռեց ու փորձեց ուրիշ կերպ արտահայտվել: – Թուխ, ինչ էլ պատահի, չէ՞ որ միշտ կհասկանաս ինձ: Կհասկանա՞ս, ասա՛:

– Ի՞նչը կհասկանամ:

– Ոչինչ: – Տղան ծիծաղեց և թռավ ոտքի: – Գնացի՛նք:

– Ո՞ւր – հարցրեց Վինի-Թուխը:

– Ուր պատահի, – ասաց Զրիստոֆեր Ռոբինը:

Եվ նրանք գնացին: Բայց ուր էլ հասնեն նրանք, և ինչ էլ պատահի ճանապարհին, այստեղ՝ Կախարդված Վայրում, Անտառի բլրի բարձունքում, փոքրիկ տղան միշտ, միշտ խաղալու է իր արջուկի հետ: